

Հայաստանի Հանրապետություն  
Գիտությունների ազգային ակադեմիա  
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

# ԳԻՏԱԿԱՆ ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

VI  
2003

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

---

Գյումրի 2003

ԴՏՀ 008+902 / 904+800  
ԳՄԴ 71+63. 4+80  
Գ 602

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական  
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի  
որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝  
Ս. Հայրապետյան  
Ս. Պետրոսյան  
Հ. Խաչատրյան  
Կ. Բագելյան  
Լ. Եղանյան  
Կ. Սահակյան

Խմբագրությամբ Ս. Հայրապետյանի

Գիտական աշխատություններ. 6,  
Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատարակչություն,  
2003, 176 էջ:

Գ 4400000000  
63,4+80 703 (02) - 2003 2003

ԳՄԴ 71+

ISBN 5-8080-0504-3  
© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2003

*Республика Армения*  
*Национальная академия наук*  
*Ширакский центр арменоведческих исследований*

# НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК

VI

EDITION

# REASEARCH PAPERS

*Shirak Centre of Armenian Studies*  
*National Academy of Sciences*  
*Republic of Armenia*

Издательство "Гитутюн" НАН РА

"Guitutiun" Publishers NAS RA

---

ГЮМРИ 2003 GYUMRI

Публикуется по решению Ученого совета  
Ширакского центра арменоведческих исследований НАН РА

Редакционная коллегия:

*S. Hairapetyan  
S. Petrosyan  
H. Khachatryan  
K. Bazeyan  
L. Yeganyan  
K. Sahakyan*

*Под редакцией С. Айрапетяна*

*Published by arrangement of the Scientific Council  
of Shirak's Research Centre NAS RA*

*Editing stuff:*

*S. Hairapetyan  
S. Petrosyan  
H. Khachatryan  
K. Bazeyan  
L. Yeganyan  
K. Sahakyan*

*Edited by S. Hairapetyan*

## Մարզիս ՊԵՏՏՐՈՒՅՑԱՆ

### ՍԻՍԱԿ ԵՎ ՆՈՅ ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻ ՍԱՍԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՍԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Սովոր Խորենացու քերած հայկական հին ավանդությունների համաձայն՝ Սյունիքի իշխան տոհմը՝ կոչված Միլիկ կամ Միսական, սերում էր Հայկազն Միսակից:<sup>1</sup> Միսակի հայր Գեղամը «սահմանս հատանի ննա ժառանգութեան ի ծովէն ընդ արեւելս մինչեւ ցղաշտ մի, ուր զետն Երասի հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխոմս ծիզս եւ նեղս, ահազին դնդնչմամբ իջան: ի դաշտ: Աստ բնակեալ Միսակ՝ նու շինութեամբ զահման բնակութեան իրոյ եւ զախսարին կոչէ խրով անուամբն Սիւնիք. այլ պարսք յստակագոյնս ես Միսական կոչեն»:<sup>2</sup>

Ինչպես տեսնում ենք պատմահայրը տալիս է Միսական անվան ստուգարանության բանալին. Միսական <\*Միսակ - ան, կամ \*Միսակ-ական: Վերջինիս դեպքում հմնտ. Արտաշատ <\*Արտաշաշատ, Մանաղի <Մանաճ-աղի, Վասակերտ <Վասակակերտ: Ըստ այս, Միսական տեղանվան «Մի (ցեղից) սակա» ստուգարանությունը և դրա հիման վրա հենագոյն Սյունիքում սկյուրացի սակեր որոնելու փորձերը<sup>3</sup> քննադատության շեն դիմանում: Ինչպես ժամանակին Ն. Արդոնցն էր նկատել տալիս, Միսական (ուրեմն, նաև Միսակ) անվան մեջ արմատը ոչ թե Մի-է, այլ Միր: <sup>4</sup> Այս դեպքում, Միսակ <\*Միս-ակ, որտեղ -ակ-ը քաջ ծանոթ վերջածանցն է: Հայերենում կա նաև սիսակ բառ, որը նշանակում է «զինու խաղողի մի տեսակ, վարդագոյն բարակ կեղլով, կլոր ու խոշոր հատիկներով»:<sup>5</sup> Մեր կարծիքով, Միսակ անունը նույնական է այս բառի հետ և ունի «խաղողային» ստուգարանություն: Ընդ, որում, Միսակ անվան «քուսական» ստուգարանությունը զարմանալի չի բվա, եթե մի կողմից ի նկատի առնենք նույնային ստուգարանությամբ արական Բարուճակ և Բուղաղ անունները, իսկ մյուս կողմից այն փաստը, որ Միսակ անվան և սիսակ բառի \*սիս- արմատը իր կրկնորդն ունի ի դեմք սիսեռն (<\*սիս-եր-ն) բառի \*սիս- արմատի: Վերջինն է առկա նաև «զլոռ» նշանակող լատին. cicer, հուն. κειρός (<\*κικρος), մակեդ. κίκερροι (հոգն. թիվ) բառերում (< h. - ե. \*κικ'εր ոլոռ, սիսեռ):<sup>6</sup> Միսեռն և սիսակ բառերի նույնարնատ լինելը պետք է հետևանքն համարել սիսեռի, ոլոռի և վայրի խաղողի պատուին արտաքին նմանության, դրանց մասն և կլոր լինելու հանգամանքի:

Միսակ նահապեսի անունն իր «քուսական» ստուգարանությամբ մեկուսի չի կանգնած: Այդպիսի ստուգարանություն ունեն նաև նրա հետ սերտ առնչություն ունեցող առասպեկտարանական կերպարների անունները ևս: Միսակի երայրը Հարման էր:<sup>7</sup> Հարմայ <\*Հարմ-այ, որտեղ -այ-ը վերջածանց է (հմնտ. արքայ, մօրայ, յօրայ և այլն),<sup>8</sup> իսկ հարմ-ը՝ արմատ: Վերջինս նույնական է հայերեն արմ բառի հետ, որը նշանակում է «արմատ» և իր հնդեվրոպական ցեղակիցներն ունի ի դեմք հուն. ὄρμενος «ցողուն, ընձյուղ, ծիլ, կաղամբի կուրծ», օրամոն ««ճյուղ»,՝ էրոս «ծիլ, ճյուղ», իին իալ. renna

<sup>1</sup> Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Եր., 1981, Ա, ԺԲ, Բ, ը:

<sup>2</sup> Նոյն տեղում, Ա, ԺԲ:

<sup>3</sup> В. М и н о р с к и й, История Ширвана и Дербенга, М., 1963, стр. 35, пр.61.

<sup>4</sup> Н. А գ օ հ ս, Арmenia в эпоху Юстиниана, Еր., 1971, стр. 421, пр 2.

<sup>5</sup> Առ. Մալիս ա և ա ն ց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ԲԲ), հ. IV, Եր., 1945, էջ 216:

<sup>6</sup> Հ. Ա ծ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ԱԲ), հ. IV, Եր., 1979, էջ 218,

<sup>7</sup> Գ. Զահուկյան, Հայերենը և հնդեվրոպական իին լեզուները, Եր., 1970, էջ 36, 43:

<sup>8</sup> Խորեն լեզվի պատմական քերականություն (այսուհետև՝ ՀԼՊԸ), հ. II, Եր., 1975, էջ 88-89:

«ծեւ, ամեւ»<sup>9</sup> բառերի, որոնց շարքը պետք է դասել թերևս նաև պոնտ. armon «վայրի բռոկ» բառը:

Միասկի- «քրուսական-խաղողային» ստուգաբանությունը քոյլ է տախի նույն տեսանկյունից դիտարկելու նաև Սյունիք//Միասկան աշխարհի կոնտրուն հանդիսացած (և այդ նույն անունն էլ կրած) Ծղուկ զավառի<sup>10</sup> անունը: Ծղուկ տեղանունը Սյունիքի պատմիչ Ստեփանոս Օքբեյյանը բխեցնում է Միասկի զարմերից մեկի Ծղուկ անունից: «Ծղուկ զաւառ՝ անուանեալ ի Ծղկայ զաւառապետէ»:<sup>11</sup> Այս անունները ինչ-որ \*ծաղ- (իբրև թե «կրակ») արմատից բխեցնելը<sup>12</sup> չի համոզում, թեկուզ այն պատճառով, որ Ծղուկ զավառանունը տվասկ ձևով հայտնի էր դեռևս ուրարտական դարաշրջանում<sup>13</sup>: Ըստ Հ. Կարազյանի, Վերջին տեղանկան մեջ արտացղված է նրա սեռական հոլովաձևը, «անշուշտ, Ծովուկու հենչմանը, որի ուղիղ ձևը կիսի Ծովուկ»<sup>14</sup>, իսկ Ծովուկ // Ծովուկ > Ծղուկ.<sup>15</sup> Տեղանունը կազմված է ծով-//ծով- արմատից՝ ուկ Վերջածանցով: Ծով-ը տարրերակներից է հնդեւրոպական ծագումով այն արմատի, որի մյուս տարրերակներն են ծիլ-ը, ծիղ-ը և ծիւղ-ը՝ «քողօրոց, ծիլ, ընձյուղ, ծղոտ, խոիվ» նշանակություններով:<sup>16</sup>

Սիսակ նահապետի զարմերից էր նաև Քաղաքը, որի մասին գյուղյուն է ունեցել հետևյալ ավանդությունը. «Մի ոմն ի զարմից Սիսակայ Քաղակ անոն, առեալ զայ զաւառ ի մասն ժառանգութեամ շին զքարն Քաղակոյ յամբոց, որ կոչի Քաղակի Քար, եւ ամբացցամէ զբերդն եւ կոչ Քաղաքերդ, եւ զաւառն յիր անոն կոչեցա Քաղաց զաւառ».<sup>21</sup> Ապա՝ «Քաղը զաւառ, որ այժմ կոչի Աճեն, որ ի Քաղակայ անուանեցա»:<sup>22</sup> Քաղակի անոնը ուղղակի կապ ունի հիշյալ տեղանունների հետ թե ոչ դժվար է ասել: Դրանց կամ Վերագրել են էրենիկական հիմք, առնելով կովկասյան բաղասիճներին (բաղասականիներին):<sup>23</sup> և փորբասիական բալայացիներին (պայա կամ բա-

<sup>9</sup> *UF, h.I, Bp., 1971, t9 327:*

<sup>10</sup> U. Ե թ ե մ յ ա ն, Հայաստանի բառ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 56, 109:

<sup>11</sup> Ստեղանոսի Մինեաց եախւկոպոսի Պատմոթիւն Տաճար Ստեղան Ստեղան, Առողջական, 1861, էջ 6:

<sup>12</sup> U. Πιμωνία, Εγκύρως από την παρέα της Τελετής της Σταύρωσης, Βρ., 1981, τ. 9, 20:

<sup>13</sup> Н. Арутюнян, Новая урартская надпись из Сисиана, "Древний Восток", 4, Ер., 1983, стр. 205–220.

<sup>14</sup> Յառաջիկ տեղանուններ (Այրարաստմ և հարսկից նահանգներում), Եր., 1998, էջ 196-197:

<sup>15</sup> Ամերիկա:

<sup>16</sup> Եոր բարգիրը հայկացեան

<sup>17</sup> *PF*, h. II, 1944, 19.

**18 Նոյն սերու**

<sup>19</sup> *UF*, IV, 293:

<sup>20</sup> *PP*, IV, 442:

<sup>21</sup> *Un. J. n i 6 t g h, 6 y p. w y*

**22 Նոյն սեղում, էջ 6:**

23 H. A g o n

M. H. S. R.

լա),<sup>24</sup> կամ որպես տեղանուններ վերագրել «քարձը» խմատը<sup>25</sup>, չնայած Բաղրին հարևան զավաններից ավելի բարձր դիրք ունեցողները կային (Բաղրը հիմնականում համընկնում է ներկայի Կապանի շրջանի հետ):<sup>26</sup> Այսուհանդեռձ, կարծում ենք, որ Միսակի և Ծղուկի առասպեկտարանական կերպարների նման, Բաղրի հնագոյն բնակչության առասպեկտարանական անձնավորումը եղած Բաղրակի կերպարը ևս սերտ առնչություն ունի բուսապաշտության հետ, որի դիրքերից ել պետք է քննարկման առարկա դառնա Բաղրակ (<\*Բաղ-ակ) անունը:

Հնդկարապական նախալեզվի \*bhel- արմատը, որը բազմաթիվ և բազմապիսի դրսակրումներ ունի ժառանգ լեզուներում, վերաբերել է հենց բուսական աշխարհին:<sup>27</sup> Արմատի միջին ձայնդարձ \*bhol- արմատը պարզ տեսքով պահանջնված է բռող «քույս, ծիր» բառում, բայց նաև հիմքն է բռղիկ, բռղոջ, բռղ բառերի:<sup>28</sup> Տարօրինակ կիմենք, եթե արմատի վերին և ստորին ձայնդարձները (\*bhel- և bhł-) իրենց ժառանգորդները չունենային հայերենում: Եվ ունեն: Դրանցից առաջինի ժառանգորդներից կարելի է համարել բհկլ «խոտի փոքր խորձ»<sup>29</sup> բառը և բլ-//բղ (<\*բհկլ-//բիղ-) բաղադրիչով մի շաբթ բուսանուններ՝ օրինակ, բլանուկ-ը (նշանակում է «հնովանցավորների ընտանիքից բունավոր մի բույս»):<sup>30</sup> Հնմտ. «Բղեղ-եղանել, կամ շառախղել, կամ բուսենք»:<sup>31</sup> Արմատի ստորին ձայնդարձի ժառանգորդներից է լինելու բաղեղն բառը (<\* բաղ-եղ-ն), ինչպես նաև բայի//բաղ- բաղադրիչը պարունակող մի շաբթ բուսանուններ՝ օրինակ, բայախ-ը (նշանակում է «ճահճային անսպիտան խոտ», «գաշտային փափուկ խոտ՝ սազախոտների կարգից»):<sup>32</sup> Հնմտ. նաև «Բաղկանալ-ածել, կամ գոյանալ, կամ բազմանալ, կամ կենանանալ, կամ զարգանալ»:<sup>33</sup> Սննում է ավելացնելու, որ վերջիններին հեն սերտ ծագումնարանական կապի մեջ է Բաղակ անվան Բաղ- արմատը նրանց նման ծագած հ.-ն. \*bhel-արմատի ստորին բհլ- ձայնդարձից: Բաղակի կերպարի առնչությամբ հիշենք, որ հնդկարապական նախալեզվի նույն արմատից կազմված անուն էր կրում հռոմեական Flōra դիցուհին՝ ծաղիկների, այգիների և հասկերի հռվանավոր բուսականության աստվածությունը:<sup>34</sup> Որպես ենթադրություն ավելացնենք հետևյալը. ինչպես որ հնդկարապական արմատի բհ - տարբերակից կազմված անվանում էր տրվել փաթաթվող բույս բաղեղին (բաղեղ <\*բաղ- եղ-ն), այնպես էլ նույն արմատի նույն տարբերակից կազմված անվանում կարող էր տրված լինել խաղողի որդին, որը նույնպես փաթաթվող բույս է: Նախապես «խաղողի որը» նշանակող \*բաղակ բառը հետագայուն դարձել է նրան անձնավորող կերպարի Բաղակի անունը (հնմտ. սիսակ և Միսակ):

Հարավային Սյունիքի խաղողագործության բնագավառում ունեցած կարևոր ներդրման մասին է խոսում Շահուկ զավարի Ակորի զյուղի հիմնադրմանը Վերաբերող ավանդությունը։ Ըստ դրա, Նոյ նահապետը տապահեց դուրս զարու հետո այստեղ առաջին անգամ տնկել է խաղողի որբը («արկ ուսիի»), որտեղ և հետո Ակորի անունով զյուղ է հիմնվել։<sup>35</sup> Այս նոյն ավանդությունը պատճեն է նաև Մասսի հյուսիսային լանջին գտնված Ակորի զյուղի մասին, դատավորվ նոյնանուն զյուղերը իրար հետ շփորելու պատճառը։<sup>36</sup> Մասյացոտն զավարի Ակորին և Շահուկ զավարի (ոչ թե Վայոց ձորի)

<sup>24</sup> Гр. К а п а н ц я н, Историко-лингвистические работы к начальной истории армян, Еր., 1956, стр. 128—129, 250—251.

<sup>25</sup> У. П. І. К. в. іш. б. б?у. ж?и., т? 73:

<sup>26</sup> U. Ե ո ե մ լ ա ն կ ա ր ա ս, ի շ պ ա զ ա ւ ա ս, է շ 75:

<sup>27</sup> Т. Гамкрелидзе, В. Иванов, Индоевропейский язык и индоевропеицы, т. II, Тбилиси, 1984, стр. 468, 491.

<sup>28</sup> Уф. б. II. л. 464-465:

<sup>29</sup> *FF. h. I. Bn.*, 1944, fol. 370:

<sup>30</sup> *Iunius intonuſ. t. 372:*

<sup>31</sup> Բայց ապա, չ 57։ Քննական բնագիրը, առաջարանը և ծանոթագրությունները՝ Հ. Ամայյանի (այսուհետև՝ Բայց իր հայոց), Եր., 1975, էջ 57։

<sup>32</sup> *Eff h Lto 316.*

<sup>33</sup> FF, II, I, 12510.  
<sup>33</sup> *Gymnophora bujina* to 48.

<sup>34</sup> Г а м к р е а ц и е. В. И в а н о в. Աշխարհագիտություն. Եղիսաբետական պատմություն, էջ 48.

<sup>35</sup> Ц. Гамкреладзе, В. Иванов, арх. Шули, п. II, л. 408.

36 *l-nusin-*

Ակորին կոչվել են նաև *Աղուրի* (>*Ախուրի*) *Աշուրա<sup>37</sup>*(Աղուրա), իսկ *աղուրի*/աղուրա նշանակում է «որրի տաշտաքաղ անելու ճյուղը», «որրի, ուժի և այլ ծառերի ճյուղ, որ կտրում են ծառից և տնկում հողի մեջ՝ բուսելու համար»:<sup>38</sup> *Աղուրի* բարի արմատը \*աղ-ն է, իսկ -որ և -ի վերջածանցներ են. հմնաւ. մի կողմից՝ բյոր, բակոր, փշոր և այն, իսկ մյուս կողմից՝ այզի, բարի, ձրի, ուսի և այլն:<sup>39</sup> Հայերենում հնդեվրոպական ժառանգություն հանդիսացող այս ածանցները<sup>40</sup> կարող են վկայել *աղուրի* բարի \*աղ-արմատի և հնդեվրոպական ծագում ունենալու օգտին: Կարծում ենք, որ *աղուրի* բարի \*աղ- արմատը սերում է հնդեվրոպական նախալեզվի \*ալ- «աճել, աճեցնել», «սնել» արմատից, որին է բնկած նաև Միսակի *Աղու* մականվաճ հիմքում:

**Աղոյիք** բառը ինչպես կը արմատով, այնպէս էլ ամբողջությամբ հայտնի է դեռևս ուրարտական դարաշրջանի հատուկ անուններից: Նրա արմատակիցն է Ուրարտուի զիսավոր աստված, երկրագործության և խաղողագործության-զինեգործության հովանավոր Խալթիկ Երկրորդ՝ Aldi անունը,<sup>41</sup> որի -di բաղադրիչը հնդկալուսական ծագումով «աստված» նշանակող բառն է:<sup>42</sup> Իսկ աղոյիք-ն ամբողջությամբ արտացոլված է այնպիսի աշխարհագործական անվանումնում, ինչպիսին է Աստրուսանի քաջավոր Սարգսն Ա-ի (մ.թ.ա. 721-705թ.) իշխատակած Alluria լեռնանունը:<sup>43</sup> Այս իշխատակած է Խալթիկ զիսավոր սրբավայրի Մուծածիքի/Արդինի քաղաքի նուու: <sup>44</sup> Alluria (<\* Aluria <\* al-ur-ia) անվան -ia բաղադրիչը առնչությամբ նշենք, որ սեպազիր տեքստերում -ia տեսքով արտացոլված հնդկալուսական համապատասխան վերջածանը ինչպես աղոյիք բառում (և հայերեն քաղմաքիլ այլ բառերում), այնպէս էլ հայկական շատ տեղանուններում վերածվել է -ի -ի. հնմտ. Buzunia/**Բջնի**, Giarnia/**Գառնի**, Teria/**Տրի** և այլն:<sup>45</sup>

Նոյն մասին ավանդությունը և թերքած հասուկ անունների ստուգաբառությունները վկայություններ են Ծահովկ և Մասյացուն զավանների խաղողագործության հնագույն օջախներ լինելու վերաբերյալ։ Այդ իրողության արգասիքն է լինելու նաև Ծահովկ զավածի և նրա համանուն կենտրոնի անունը։ Ծահովկ <\*Ծահ-ուկ, որտեղ – ուկ վերջածանցը տեղանվանակերտի դեր է կատարում (հնմտ. Ծղուկ զավառանունը), իսկ Ծահ- արմատը նույնական է Ծախ բառի հետ (խ/հ համապատասխանության տեսանկյունից հնմտ. Խաղը // Խաղը, Խարրուխ // Խարրուխ, Խեղդ-ել // Խեղդ-ուկ և այլն):<sup>46</sup> Ծախ նշանակում է «ճիպոտ, որ տնկում են պատատվող բույսերի նոտ, որպեսզի նրա վրա պատասխին», որից է՝ ջախել // \*ճախել «պատատվող բույսերի մեջ սարի տնկել, որպեսզի բարձրանալիս նրա վրա փառարվի»:<sup>47</sup> Իսկ այդպիսի «պատատվող» բույս է խաղողի որթը, և՝ վայրին, և՝ մշակովին։

Դահովկա անոնիմ զավար ունենք նաև Հայկական լիտնաշխարհի հարավում՝ Կործայք նահանգում:<sup>48</sup> Ծահովիկի հարավային հարլանն էր Այգառք կոչված զավարը,<sup>49</sup> որի անվան մեջ հստակ կերպով առանձնանում է այն արմատը, -առ Վերջածանցը և -ո հոգանականութունը: Վերջածանցի համար հմնար խամճ-առ, խամճ-առ, ասաճ-առ և

<sup>37</sup> Թ. Հ ա կ ո ր յ ա ն, Ստ. Մ Ե լ ի թ - Ը ա խ 2 յ ա ն, Հ. Ը ա ր ս ե ղ յ ա ն, Հայաստանի և հարակից շրջանների տեղական ներքի բարպարան (այսուհետև՝ ՏԲ), հ. I, Եռ., 1986, էջ 125, 142:

<sup>38</sup> *UP, h. I, t<sub>9</sub> 135, LF, h. I, t<sub>9</sub> 48:*

<sup>39</sup> *L. T. L.*, *t. 89, 90:*

<sup>40</sup> Գ. Զահարյանը պատմություն. Ախիսազրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀՀ ՊՆԾ), Եր., 1987, էջ 231, 235:

<sup>41</sup> И. Мещанинов, *Аннотированный словарь урартского (биайнского) языка*, Л., 1978, стр. 347–349.

<sup>42</sup> U. Պետքնայն, Գնումի նախար

<sup>43</sup> «Պատմա-քանայիրական հանդես», թիվ 2-3, Եր., 1999, էջ 183:  
<sup>43</sup> Նոյն տեղում, էջ 181:

44 Н. Арутюнян

<sup>45</sup> З. Կարագենջանն Աշխարհական պատմության մեջ էլեկտրական առաջնահամար է հաղթել 1921 թվականի մայիսի 2-ին: Տարբերակը թիվ 87,132, 206:

<sup>46</sup> Г. Джукин. Очерки по истории дописа

<sup>47</sup> *БГ, б. III, бр. 1944, л. 190, б. IV, л. 132:*

<sup>48</sup> U. G. p. 651 w. q. 624., w. 21

<sup>49</sup> Յուլիա Անդրեյսկա, 108:

Омъжна, № 55, 100.

այլն,<sup>50</sup> իսկ տեղանվան արմատը նույնական է այզի բառի այգ արմատի հետ: *Այզի* բառի վերաբերյալ Հ. Աճառյանը գրում է. «Քիմնական նշանակությունն է «արք»: Ի դմելով իր բուսական մասնիկ (հնմտ. կաղնի, ծիրանի), արմատը կլինի \*այգ «խաղող», որ հետո կորել է: Այս բառի հետ հնմտ. լատ. նա «խաղող»... Նախաձևն է հելս. \*օնա «լեռնային մանր պտուղ՝ մոշի, ելակի պես. քոլապտուղ» ընդհանուր նշանակությամբ: Հայերենում օ տալիս է այ (հնմտ. *այտ* <oid->) և ըստ օրինի դառնում է գ»:<sup>51</sup> Կորճայքի ճահուկ զավարի արևայիան հարևան զավարը կոչվում էր Կորդրիք և ընդգրկում էր Արևելյան Խարուր գետի ավազանը:<sup>52</sup> Գավառանվան նախաձևը եղել \*Կորդիք և Կորդրիք-ի է վերածվել հարևան Կորդոք զավարի և Կործայք նախաճի անունների ազդեցությամբ: Անվան նախաձևը պահպանված է Սերենս Եպիսկոպոսի «Պատմության» մեջ, որտեղ նրա բնակիչները կոչվում են «ազգ Կորդեացն»: Խոսելով Իրանի հյուսիսարևելյան շրջաններ տարված հայերի մասին, Սերենսը ավելացնում է. «Կային անդ եւ ազգն Կորդեացն, որը գերեցան մերով արամբը» և շեշտում, <sup>53</sup> թե «էին ազգ Կորդեացն անհաւատը»:<sup>54</sup> Կորդեացների «անհավատ», այսինքն՝ քրիստոնյա հայերից, առանձին «ազգ» հանրում: Հիշենք, որ նոյն կերպ հայերից առանձին «ազգ» էին համարվում հետագայի համշենից մահմեդական հայերը ևս:<sup>55</sup>

Կորդեացի <\*կորդի-ացի, իսկ Կորդիք <\* կորդի-ք: Ընդ որում, \*կորդի-ում հիմքը \*կորդ-ն է, իսկ -ի-ն՝ հայտնի վերջածանցը: Հիմքի համար հնմտ. բարբառային կուլուսկ (<կուլուս-ակ), կուտրակ (<կուտր-ակ), կուտրակ (<կուտր-ակ) միևնույն բառի տարբերակները, որոնք նշանակում են «օքք, խաղողի տուներ, բունը, որ ճյուղեր է արձակում», «խաղողի վազի ստորին չոր ու հաստ մասը»:<sup>56</sup> Այս առքիվ նշենք, որ Կորդիքի և Կորդոքի սահմանագլխին գտնվող Արարատ (այժմ Չույի) լեռան վերաբերյալ ևս պատճեն է Նոյ նահապետի մասին ավանդագրույցը:<sup>57</sup>

Թե՛ աստվածաշունչը, թե՛ հայկական ավանդությունները Արարատյան աշխարհում հանգրկան գտած Նոյ նահապետին են վերագրում առաջին որքը տնկելու, առաջին գինին քամելու և այն առաջինն ըմպելու պատիվը, որովհետև խաղողագործության հիմքը Հայկական լեռնաշխարհում, դրվել է դեռև Պղնձաքարի դարաշրջանում (մ.թ.ա. V-IVհազարամյակներ):<sup>58</sup> Այլ կերպ չել էլ կարող լինել, որովհետև խաղողի որքը վայրի վիճակում այստեղ աճում է նաև այսօր: Ուշադրություն դարձնենք *Փարայի* տեղանվանը: Աշտարակի շրջանի համբահայտ ցյուղի այս անվան մեջ առանձնանում է: \*Փարա հիմքը և -ի տեղանվանակերտ վերջածանցը, որը որպես վերջածանց հանդիս է զալիս բազմաթիվ բուսանուններում, իսկ որպես տեղանվանակերտ՝ բազմաթիվ տեղանուններում: Նրա \*Փարա հիմքը նույնական է պարապուր բառի \*պարա հիմքի հետ (պարապուր բառարդի երկրորդ բառարդիչը ուր «որքի ոլկուզաքեր ճյուղ» բառն է): *Պարպուր* նշանակում է «վայրի որք, վազ», որից՝ պարապուրին «վայրի որք, որ բուսնում է Զեյթունի լեռներում»:<sup>59</sup> Փարայի տեղանվան և պարպուր բառի \*փարա//\*պարա բառադիքները արմատական բառեր չեն: Դրանցում առկա են հնդեվրոպական ծագումով \*փար-//\*պար- արմատը (-պ մասնիկի համար հնմտ. ամազ և ամպրոպ)<sup>60</sup> <հ-ն.-\*sper-«ոլոր (Ա) ել, փարաք (Ա) ել», «հյուս (Ա) ել»: Արանից մի կողմից ունենք փարիլ «փարաք-

<sup>50</sup> Հ. Պ. Բ. Ի. էջ 87:

<sup>51</sup> Ա. Պ. Ի. էջ 166:

<sup>52</sup> Ս. Ե թ ե մ յ ա ն, Աշվ., աշխ., էջ 60-61, 86, 108:

<sup>53</sup> Սերենսի Եպիսկոպոսի «Պատմութիւն», Եր., 1939, գլ. իր:

<sup>54</sup> Նոյնից:

<sup>55</sup> Հ. Մ ն ձ ո ր ի ն, Երկեր, Եր., 1986, էջ 369:

<sup>56</sup> Բ. Պ. Ի. էջ 475, 480, 486:

<sup>57</sup> Ս. Ե թ ե մ յ ա ն, Աշվ., աշխ., էջ 39:

<sup>58</sup> Ս. Ս ա ր դ ա ր յ ա ն ն, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր., 1967, էջ 235; Կ.

Կոսինարեա, Տ. Չубинշավուլի, *Древние культуры Южного Кавказа*, Л., 1970, стр. 170; Б. Пиотровский, *Ванское царство (Урарту)*, М., 1959, стр. 133—142.

<sup>59</sup> Ա. Պ. Ի. էջ 29-30; Բ. Պ. Ի. էջ 54:

<sup>60</sup> Ա. Պ. Ի. էջ 163:

Ինչպես Բրոնզի դարում, այնպէս էլ նրան հաջորդած հազարամյակներում խաղողն ու գինին կարևոր տեղ են ունեցել մեր նախնիների կենցաղում և պաշտամունքներում: Մեծամորի բրոնզիդարյան սրբարաններից մեկում կավածելի թիթ-հացերի, ծիսական հաց թիթեր օչախի ու սաջի հետ միասին հայտնաբերվել են երկրավիզ սափորներ, որոնք «վկայում են գինու հեղման արարողություններ»:<sup>63</sup> Պարզ է, որ որտեղ գինի կար, լինելու եր նաև զարգացած խաղողագործություն: Մեծամորը գտնվում է Արարատյան դաշտի ձախակինյակում, որի հնագույն անուններից մեկը առնչվում է հենց խաղողի որբին: Դա այս տարածքին ուրարտական սեպագիր արձանագրություններում տրված ‘Aza անունն է: Վերջինս Uaza//Vaza Անքերցունը Ն. Հարույրունյանին հիմք է տվել այստեղ տեսնելու վազ բառը և տեղանուն հասկանալու որպես «խաղողի որբերի երկիր»: Նա ավելացնում է. «Դրան հիմնավորում, ըստ Երևոյթին, կարող է ծառայել այս տարածքում խաղողագործության բարձր զարգացած լինելը՝ սկած առնվազն մ. թ. ա. VIII դարից»:<sup>64</sup> Բերենք ևս մեկ հիմնավորում՝ ‘Aza երկրում գտնվիղ Erebus-ni-ի հետնորդ Երևանի մասին պատմված ավանդության համաձայն. «Այստեղ... ընտանիքով ապրել է Նոյ նահասպետը, երբ դուրս է եկել Մասին իջած իր տապանից: Այստեղ էլ Նոյը առաջին անգամ տնկել է խաղողի որբը»:<sup>65</sup> Ընդ որում, եթե Նոյ նահապետի անունը անմիջական կազ չունի Մասին (Մեծ Արարատ) լեռան հետ, ապա այդպիսի կազ Մին (Փոքր Արարատ) լեռան հետ բացահայտում է Միասկի անունը. հմատ. Մին և Միասկ <\*Միս-ակ>:

Արարատյան ջաշտում խաղղղագործության և զինեգործության բարձր մակարդակի հասած լինելու վկայություններն են նաև Ծեյշերախինի (Կարմիր Բլուր) հսկայական 9 մասնաները, որոնց գետնաբաղ մեծ կարասները կարող էին մինչև կես միլիոն լիտր զիմի պարունակել։<sup>66</sup> Յուրաքանչյուր ուրարտական թագավոր, ուազմաշոնչ Մեծուայից (մ.թ.ա. 810-786թթ.) սկսած, ջանում էին այս ասպարեզում և Խալիֆին հաճող գործեր ծեռնարկել: Ուշագրավ է Գողրն զավառի առնչությամբ Հ. Կարաջոյանի հետևյալ դիտողությունը. «Եթե Մեծուան մ.թ.ա. 810-805թթ. անցել է Արաքսից հյուսին և ներխուժել Սյոմենիքի սահմանները, բնականաբար, առաջինը հենց Գողրն, ապա կարեի է եղանակացնել, որ հայ պատմագրության մեջ հայտնի գինեվետ Գողրն զավառի համբավի հիմքը դրվել է հենց հիշյալ արքայի կողմից, որը հայտնի է եղել ոչ միայն ուազմական փայլուն ունակություններով, այլ նաև որպես նշանավոր ջրանցքաշինարար... բայց հատկապես՝ խաղղողի այգիների անխոնց տնկարկող և հովանավոր»:<sup>67</sup>

Գործն պատմական զավառը «Աշխարհացոյն» համարվում է Վասպորական աշխարիի մասը,<sup>68</sup> բայց ավելի վաղ շրջանում համարվելու էր Սյունիքի իշխող տոհմի տիրույթներից մեկը: Պատմահայր Մելքոն Խորենացին Գողքնում իշխող Գողքնեցի կոչված նախարարական տոհմի ծագման առնչությամբ գրում է: «Իսկ զԱշուունիս եւ զԳողքնեցիս զսի պատմեալ ի Սիսականէն արդարեւ հատուած»:<sup>69</sup> Սա մի պարզ վկայություն է, որ Ժողովրդական պահեություններում Սյունիքի հետ միասին Գողքնը ևս համարվել է Սիսակ նախապետին պատկանեալ տարածը:

61 *UF*, h. IV, t. 9 487-488:

62 *LB, h. IV, t. 9* 77:

<sup>63</sup> Սեծամոր. Ուսումնասիրություն 1965-1966թ. պերումների տվյալներով, Եր., 1973, էջ 123:

<sup>64</sup> Н. Арутюнян, *Новые урартские надписи Кармир-Блура*, Ер., 1966, стр. 91, пр. 43.

<sup>65</sup> U. Ղանալանյան, Աշվ. աշխ., էջ 157:

<sup>66</sup> А. Мартиросян, Город Тейшебаини, Ер., 1961, стр. 96.

<sup>68</sup> *U. Br. p. 65 J. wa 6, 62 v. w2ju., t2 48, 109:*

<sup>69</sup> U. Iu n p b ū w g h, f, p:

Խսդրդագործություն-զինեգործության նշանավոր օջախն Գողբն զավառը իր տնտեսության առաջատար այդ ճյուղին պարտական էր ոչ միայն իր զինելու նակրի-րով,<sup>70</sup> այլև իր Գողբն (հուն. Γολνηνη) անվանք, որը նաև զավառի կենտրոն բնակա-վայրի անունն էր:<sup>71</sup> Գողբն (<\*Գող-ք-ն) տեղանվան մեջ առկա են Գող- արմատը, -ք-աճականը և -ն մասնիկը: Հնմտ. մի կողմից քերք, խայր, փերք,<sup>72</sup> մյուս կողմից՝ նզն, կարն, ձեռն և այլն:<sup>73</sup> Իսկ տեղանվան զող արմատը լինելու է հայերեն զող բառը, որը նշանակում է «տաքարի(հնձանի բռնրած հորի) հատակին շինված փոքր հոր, որի մեջ հավաքվում է քաղցովի պղտոր տականքը»:<sup>74</sup> Բացառված չէ, որ Գողբն զավառը ըն-կալված լինի որպես մի մեծ հնձան՝ խաղող ճնշելու և զինի քամելու ավագան, որի պատճառով է նաև (կամ նախապես նրա կենտրոն ավանը) ստացած լինի Գողբն անու-նը: Գողբնարերք բարի երկու նշանակությունները՝ «Գողբն զավառի բերք» և «զինի» (փոխարերությամբ),<sup>75</sup> դրա խոսուն վկաներն են: Հնմտ. պարսկեների կողմից Աշտա-րակի շրջանին և շրջակայքին տրված Շարասյաննե անունը,<sup>76</sup> որը պարսկենեն շա-րարիսանն «զինու մառան, զինետուն» բառն է:

Գողբն զավառի հայտնի բնակավայրերից էր Արգուիր >Արգուիս >Ազուիս կոչ-վածը: Անվան իին ձեզ՝ հայտնի XI դարից, Արգուիր է:<sup>77</sup> Տեղանվան հիմքում \*արգ-արմատն է՝ -ոլ և -ի վերջածանցների կցորդումով և-ը // -ս հոգնակիակերտի հավելու-մով: Վերջածանցներից առաջինի համար հնմտ. քարոյ, կափոյ,<sup>78</sup> իսկ երկրորդի հա-մար, որը «ծառ կամ բոյս նշանակող ի մասնիկն է»,<sup>79</sup> հնմտ. զիիի, այզի, քարոյի և այլն: \*Արգ- արմատը ուղղակի կապ ունի խաղողագործության հետ և առկա է արգաս բա-ռում «որբատունի հոտ, կտրված ավելորդ ճյուղերը»,<sup>80</sup> «ուռ»:<sup>81</sup> Այն կազմված է՝ -ատ վերջածանցով: Վերջինս կամ այն վերջածանցն է, որն առկա է հաւատ, հրատ, հաս-տատ, արմատ և այլ բառերում, կամ նրա համանունն է (-ատ <յատ//հատ) առկա կըր-ճատ, կըճատ, միջատ, պիճատ և այլ բառերում:<sup>82</sup> Նոյն արգաս բառն է, ամենայն հա-վականությամբ, ընկած նաև Սյունիքի Մյուս Քաղը (Քաշունիք) զավառի Ազատի գյու-դի:<sup>83</sup> Անվան հիմքում: Ազատի <\*Արգատի, այնպես ինչպես Ազուիս // Ազուիր < Արգու-իր: Ազատի տեղանվան վերջնաձայն՝ -ի -ն կամ բուանուններ կերտող հայտնի վեր-ջածանցն է, կամ նրա հնդեվրոպական արմատակիցը (սեպագորությամբ՝ -իա)՝ որպես տեղանվանակերտ առկա հայկական բազմարիվ այլ տեղանուններում:

Արգաս բարի արգ- արմատն ենք մենք տեսնում նաև Ուրարտոի արքաների կրած Argisti (կարդա՝ Argisti) անվան մեջ: Նրանցից առաջինը եղել է Արզիշտի Սե-նուապրդին (մ.թ.ա. 786-764թ.): Անվան Arg- արմատին կցորդված -isti//- esti վերջա-ծանցը հեղեւլրոպական ծագում ունի: Այն նոյն է հայերեն՝ իստ // -եստ վերջածանցի հետ, որը հանդիպում է հանգիստ, արտեստ // արհեստ, գովեստ, համեստ ուտեստ, պա-հեստ բառերում:<sup>84</sup> Հասովկ ուշաբնության է արժանի այս վերջածանցներով բառերի վերաբերյալ Հ. Աճառյանի արած այն դիտուրությունը, թե «այս բառերի մեծ մասը հետ-ևում են ի հոլովական»:<sup>85</sup> Ըստ այսմ, \* Argisti անվան վերջնաձայն՝ -ի -ն զախս է հաս-տատելու անվան երկրորդ բաղադրիչի հայերեն՝ իստ վերջածանցը լինելու իրողու-թյունը: Ուրարտոի թագավորական դինաստիայի հովանավոր աստված Խալդին,

<sup>70</sup> Մ. Խորենաց իշխան, մշկ. աշխ., էջ 109:

<sup>71</sup> Մ. Երեմյան, մշկ. աշխ., էջ 48, 109:

<sup>72</sup> Հ. Սուրեն իշխան, Աճառյանը հայերենում, Եր., 1986, էջ 87-88:

<sup>73</sup> ԱԲ, հ. Ա, Եր., 1973, էջ 480, ԲԲ, հ. Ա, էջ 149:

<sup>74</sup> ԲԲ, հ. Ա, էջ 456:

<sup>75</sup> Նոյն տեղում, էջ 457:

<sup>76</sup> Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիմեցոյ, Վաղարշապատ, 1896, էջ 53:

<sup>77</sup> ՏԲ, հ. Ա, էջ 27:

<sup>78</sup> ՀՀ ՊՆԾ, էջ 356:

<sup>79</sup> ԱԲ, հ. Ա, էջ 627:

<sup>80</sup> ՆՀԲ, հ. Ա, Եր., 1981, էջ 1060; ԱԲ, հ. Ա, էջ 304:

<sup>81</sup> Բաղզիրք հայոց, էջ 261:

<sup>82</sup> ՀՀ ՊՆԾ, հ. Ա, էջ 75, ՀՀ ՊՆԾ, էջ 355:

<sup>83</sup> Ստ. Սյունի նեցի, էջ 376:

<sup>84</sup> ԱԲ, հ. Ա, էջ 671, 672:

<sup>85</sup> Նոյն տեղում, էջ 673:

որպես խաղողագործության հովանակոր աստված, համարվելու էր խաղողի որքի ոգենեան դրսուրումը, որի պատճառով էլ նրա հովանավորյալ Արքիշտի Մեմուառորդն կրել է «խաղողային» ստուգաբանությամբ \*Argisti անունը (հմնտ. նույնային ստուգաբանություն ունեցող Սիսակ և Բարունակ արական անձնանունները):

Եթե «Աշխարհացոյցում» առանձին զավառներ են համարվում Գողբնը և Երրնակը, ապա Մտելիանոս Օքքեյանի երկու դրամք հանդես են զայխ միասնաբար և Երնջակ անվան տակ:<sup>86</sup> Սյունյաց պատմիչը զավատի և նրա անվանադիրի մասին բերում է հետևյալ ավանդությունը. «Իսկ մի ոմն ի կանանց նոյն նահապետացն Երնջիկ անուն, շինէ եւ զանհնարին ամուրն Երնջակայ եւ յիւր ամուն բերդն եւ զաւան կոչի Երնջակը»:<sup>87</sup> Թե՛ Երնջակ, թե՛ Երնջիկ անունների հիմքը Երնջ բառն է, իսկ -ակ - և -իջ ը հայտնի վերջածանցներն են: Երնջ նշանակում է թե՛ «երրորդ տարու մեջ մտած հորք», «եգ հորք», «վով», թե՛ «հարս» (փոխարերությամբ), թե՛ «նրեք տարեկան որքի մաս, որ առանձին տնկում են»:<sup>88</sup> Երնջ -ը լս հմտվարական ծագում ունեցող բառ է և իր հիմքում ունի հ. - ե. \*er(i) - արմատը: Վերջինից սերած բառերից են նաև հունարեն էրտօօս «ուլ», լատին. aries «ոչխար», պրուս. eristian «զառնուկ», իոլ. erb «վով» և այլն, որոնց ազգակիցներից են համարում նաև հայ. որոց «զառնուկ» բառը:<sup>89</sup> Երնջ (<\*Երիշ կամ \*Երի-ինջ) բառի -ինջ վերջածանցի համար հննտ. բաղլինջ (<\*բաղլի-ինջ) և կողինջ (<\* կող-ինջ): Երնջ բառի բերված երեք տարրեր իմաստները խոսում են Երջակ զավատի և համանուն բերդի անվանադիր Երնջիկի կերպարի նույնային դրսուումների մասին: Առասպեկտաբանական այս կերպարի մարդակերպ (որպես հարս՝ Սիսական նահապետներից մեկի կին) ընկալման կողքին, պահպանված էր լինելու այն նախնական պատկերացումը, համաձայն որի Երնջիկը կարող էր իրեն դրսորել թե՛ որպես երեք տարեկան եգ հորք, թե՛ որպես խաղողի որքի երեք տարեկան մատ (հմնտ. խաղողագործության և գինեգործության հունական աստված Դիոնիսոսի նույնային երեք դրսուրումները՝ մարդակերպ աստված, եղջերավոր կենդանի և խաղողի որք):<sup>90</sup>

Եղջերավոր էակների անունների նաև խաղողի վազին հատկացնելու նախնադարի մարդկանց առասպեկտաբանական պատկերացումների և լեզվամտածողության արգասիք ավանդագործության այդ բառերի փոխադարձ կապը բացատրում են նրանով, որ խաղողի վազն առաջացել է Նոյ նահապետի զոհաբերած կենդանու գետնի մեջ բարված ուսկորներից:<sup>91</sup> Մեկ որիշ ավանդագործույթի համաձայն, «Հրեշտակը հյուր է զայխ Աքրահամի (Աքրահամ նահապետի – Ս.Պ.) մոտ: Տանը ուտելու բան չի լինում: Աքրահամը նորքում է հորքը: Կովը երեկոյան տուն զալով, բառաշելով սկսում է փնտրել հորքին: Կովի ծայնն ընկնում է հյուրի սկանջը: Նա պատվիրում է տան տիրոջը՝ բերել մորքված հորքի կաշին ու ուսկորները: Աքրահամը կատարում է նրա պատվերը, միայն չի գտնում հորքի ազրովկը: Հրեշտակն օրինում է, և հորքը իսկովն ուսի է կանգնում: Քիչ անց Աքրահամը գտնում է նաև կորած ուսկորը և բերում հրեշտակի մոտ, որը պատվիրում է Աքրահամին այն քաղել այգում: Աքրահամը կատարում է հրեշտակի պատվերը: Մի տարի անց հորքի ուսկորից բուսում է խաղողի որքը»:<sup>92</sup> Հին հայերենում հորք բառը որք էր արտասանվում, այսինքն՝ ծիշտ այնպես, ինչպես «խաղողի վազ» նշանակող որք բառը: Այս վերջին բառն է առկա Գողբն զավատի Որբուատ (այժմ՝ Օրբուրադ) բնակավայրի անվան մեջ: Որբուատ (<\*Որբու-ատ) տեղանվան առաջին բառադրիչը հնդեվրապական ծագումով որք բառի սեռական հոլովաձևն է, իսկ երկրորդ բառադրիչը -ատ վերջածանցն է՝ բազմից կիրառված նաև որպես տեղանվանակերտ (հմնտ. բացատ, հրատ, խորխորատ և Այրարատ, Չաղատ, Տամրատ և այլն):

«Եղջերավոր անասուն» / «խաղող» (> «չամիչ») առասպեկտաբանական գուգորդ-ման արդյունքն են հայկական այն համելուկները, որոնցում չամիչը հանդես է զայխ ուլի և զատի (ալոջիկ) փոխարեն. «Սիկ ուլիկ, / Փետե պոչիկ» (Դիարբեքիր), «Ալոչիկ, /

<sup>86</sup> Ս. Ե թ ե մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 51, 109; Ստ. Սյունեցի, էջ 7, 378:

<sup>87</sup> Ստ. Ս յ ո ւ ն ե ց ի, նշվ. աշխ., էջ 7:

<sup>88</sup> ԲԲ, հ. I, էջ 585; ԱԲ, հ. I, էջ 56:

<sup>89</sup> Տ. Գ ա մ կ ր ե լ ս ց ե, Բ. Ի վ ա հ օ ւ., նշվ. աշխ., հ. II, էջ 584:

<sup>90</sup> Զ. Ֆ թ ե գ ե ր, Ըստե մ յուղ, Եր., 1989, էջ 454-455, 459, 461:

<sup>91</sup> Ե. Լ ա լ ա յ ա ն, Երկեր, հ. II, Եր., 1988, էջ 165:

<sup>92</sup> Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 116-117:

Փետե պոչիկ» (Սասուն):<sup>93</sup> Այս տեսանկյունից է հասկանալի դառնում թե ինչու է նոյն արմասի կիր և կոր տարրերակները կիրառվում թե՝ մեկ, թե՝ մյուս դեպքում: Կիր նշանակում է «անասուններից քաղված արդյունք. ինչ՝ կար, ձու, կարագ և այլն», բայց ունենք նաև այզեկուր -ի զուգահետ այզեկիրը ձևը, երբ կոր > կրել «խաղողը քաղել», «ասողու քաղել», կրոց «կրած խաղողը մեջը լցնելու կողով»:<sup>94</sup> Խաղողից քամվող գինին ևս նոյնային առասպելաբանական զուգորդումների առարկա է եղել: «Կարաս և գինի» պատասխանը պահանջող հանելուկները դրանց արգասիքն են. «Էն ի՞նչն ա ինչ. / Կարմիր բուղն գտնեն տակին գոռում ա» (Լոռի, Տավոշ), «Կարմիր եզր տափի տակին պրտանչում ա» (Լոռի, Սյունիք), «Կարմիր կովը հողեն տակեն» (Արցախ):<sup>95</sup> Առաջելաբանական նոյնային մտածողության արգասիքն են ինչպես եղջերավոր աճատուններ ներկայացնող պայակները, այնպես էլ նրանց նախատիպերը՝ գինի ըմպելու եղջյուրները: Ուշագրավ է, որ խաղողագործության և գինեգործության հովանավոր Խարիբին, Էրեբունի բերդավանի կառուցման առքիվ, Արգիշտի առաջինը ցուի նվիրական մի եղջյուր էր ծոնել, և նրա բրոնզե պատվանդանին փորագրել էր տվել հետևյալը. «Խալդիմ՝ տիրոջն իր, այս նվիրական եղջյուր ուղերձը (որպես) հասուցում, Արգիշտին Մինուայան պատրաստեց, երբ Էրեբունին կառուցեց»:<sup>96</sup>

Սյունիքի և Արցախի հարեւան գավառներից երկուար կրում էին միևնույն Հարանդանունը:<sup>97</sup> Սյունիքի Հարանդը հանապատասխանում է այժմյան Գորիսի շրջանին,<sup>98</sup> իսկ Արցախինը, որը կոչվում էր Սևս Հարանդ, Փոքր Հարանդ<sup>99</sup> և հայտնի էր նաև Սիսական -ի Կոտուկ («Փոքր Սիսական») և Սիսական -ի Ռստան անուններով<sup>100</sup> ընդգրրկում էր հետագա Դիզակի և Վարանդայի (մասամբ) մելիքությունների տարածքը: Ստեփանոս Օրբելյանի երկում այս անունը հանդիպում է նաև Համբանդ, Հանբանդ ձևերով:<sup>101</sup> Նրա տեղացի լինելու հանգամանքը բույլ է տախս տեղանվան նախաձևն համարելու Համբանդ -ը, որից էլ ծագում են Հարանդ (-մի անկումը) և Հանբանդ (- մը - > - նը - անցումը) ձևերը: Այս դեպքում տեղանունը կազմված է լինում \*համբ հիմքից՝ - անդ տեղանվանակերտի միջոցով (հմնտ. Մարանդ, Վանանդ, Վարանդա և այլն), իսկ «Համբ -տիկ»<sup>102</sup> բառի գոյությունը գալիս է հաստատելու այսպիսի մոտեցման իրավացիությունը:

Ինկատի առնելով, որ տիկը նախ և առաջ գինի պահելու համար էր գործածվում,<sup>103</sup> Հարանդ//Համբանդ // Հանբանդ տեղանունը կարելի է համարել Սյունիք- Արցախի խաղողագործական վաղենի ավանդների արգասիքը եղող տեղանում: Այսպիսի ստուգաբանության հավանականության մասին է խստամ Դիզակի մելիքների նատավայր գյուղի Տող անունը,<sup>104</sup> որը նոյնական է Տողի բառի \* առլ արմատի հետ (Վարչածանցի համար հմնտ. այզի, բարդի, ուղի): Տողի նշանակում է «խաղողի որբ»:<sup>105</sup> Նոյն էր նշանակելու նաև Տող տեղանունը: Դրա օգտին կարող են վկայել նոյն տարածքի Գինեթաղը<sup>106</sup> և Թաղլար<sup>107</sup> գյուղերի անունները: Գինեթաղը-ը (հետազայում՝ Գինեթաղլար) բաղկացած է \*զինի -ա-քաղ-ք բաղադրիչներից: Գինի-ն այստեղ առկա է «խաղողի որբ» նախնական նշանակությամբ, իսկ բաղ - ը՝ առկա նաև Թաղլար (<\*

<sup>93</sup> Ս. Հ ա ր բ ո ւ թ յ ո ւ ն յ ա ն ն, Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1965, էջ 112:

<sup>94</sup> ԱԲ, հ. II, էջ 585:

<sup>95</sup> Ս. Հ ա ր բ ո ւ թ յ ո ւ ն յ ա ն ն, նշան, էջ 114:

<sup>96</sup> Ս. Ի ս բ ա յ ե լ յ ա ն ն, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Եր., 1971, էջ 70:

<sup>97</sup> Ս. Ե ր ե մ յ ա ն ն, նշան, էջ 61, 70, 105, 109:

<sup>98</sup> Նոյն տեղում, էջ 61:

<sup>99</sup> Նոյն տեղում, էջ 105, 109:

<sup>100</sup> Նոյն տեղում, էջ 70, 109:

<sup>101</sup> Ստ. Ս յ ո ւ ն ն ե ց ի, նշան, էջ 167, 218, 224; Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն, բարգմաննությունը, մերածությունը և ծանոթագրությունները Ս. Արքանամյանի, Եր., 1986, էջ 482, ծանոթ. 845:

<sup>102</sup> Քաղիկը հայոց, էջ 177:

<sup>103</sup> ԲԲ, հ. IV, էջ 412:

<sup>104</sup> Լ ե ն Երկերի ժողովածու, հ. III, Եր., 1973, էջ 254-255, 270; Ս. Երեմյան, նշան, էջ 70, 89:

<sup>105</sup> ԱԲ, հ. IV, էջ 416:

<sup>106</sup> ՏԲ, հ. I, էջ 865:

<sup>107</sup> Նոյն տեղում, հ. II, Եր., 1988, էջ 403:

**թաղ-լար.** լար// հայ. -ք հոգմակիսակերտը) տեղանվան մեջ, նշանակում է «այգու որբերի ծմեռվա դեմ բաղելը»:<sup>108</sup> Գիճ- արմատի «խաղողի որք» նախնական նշանակությունն է առկա հետևյալ բառերում. զիմենժաղիկ «խաղողի ծաղիկը, որից հետո երևում է ազդիչը»,<sup>109</sup> զիճակ. «խաղողի մի տեսակ, դեղնականաչ զույնով, հաստ կեղևով, մեծ՝ կլոր հատիկներով, որից կախան են պատրաստում»,<sup>110</sup> զիճուկ «զինու խաղող, բարակ կեղևով, սալիսակ մանր հատիկներով»:<sup>111</sup> Գիճ (ի) բարի «խաղողի որք» նախնական նշանակությունն է պահել նաև Մասյացուն գավառի Ակոռի գյուղի գետի՝ Արաքսի աջակողմյան վտակի, Գիճոյ // Գիճոյ // Գիճայ գետ (Վերիմաստավորմանք՝ նաև Գիճեգոյճ գետ) անունը:<sup>112</sup> Հնմտ. նաև Գիճոյ բլուր և Գիճ բաղադրիչը պարունակող մյուս տեղանունները, որոնք ևս իրենց մեծամասնությամբ ունենալու են «խաղողային» ասուգաբանություն:

Այժմ անդրադառնանք Սիսակ նահապեսի Աղու մականվանը: Ինչպես ասվեց, այն ևս իր հիմքում ունի հ.-ե. \*al- «աճել, աճեցնել», «աճել» արմատը. Աղու <\*աղ-ու, որի -ու բաղադրիչի համար հմնտ. -ու վերջածանցով կազմված -ածու, ազդու, հասու և այլն:<sup>113</sup> Սովուս Խորենացին, ի նկատի ունենալով աղու «համեղ, քաղցր, անոյշ» բառի<sup>114</sup> զոյտքունը, այդ իմաստով է ընկալել Սիսակի Աղու մականունը և նրանից բխեցնել Աղուանք երկրանունը: Նա գրում է. «զգունին որ ի Սիսակայ, որ ժառանգեաց զրաշտըն Աղուանից եւ զիւռնակողմն նորին դաշտի, ի գտոյն Երախսայ մինչեւ ցամուն, որ ասի Հնարակերտ, եւ աշխարհն յանուն քաղրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք, զի Աղու ձայնելին զնա»:<sup>115</sup>

Սիսակի Աղու մականված հնությունը հաստատվում է ուրարտական սեպազրենով վկայված Aludiri/Aludire բնակավայրի անվան միջոցով: Այն գտնվել է Վանա լճից հյուսիս, Ազնավոր բենի կոչվող այն վայրում, որտեղ ուրարտական շինության շարվածքում հայտնաբերվել է Սենուա արքայի արձանագրությունը Aludiri «հոյսակապ բերդաբաղարի» կառուցման վերաբերյալ:<sup>116</sup> Սեր կարծիքով, Aludiri-<sup><\*</sup>Alu-dir- նշանակում է «Alu-ի դրածք», այսինքն՝ «Alu-ի շինածք», իսկ Alu կոչվել է կամ կառուցող անձ՝ այս դեպքում Մենուան, կամ իր հովանավոր աստված՝ այս դեպքում Խալդին. հնմտ. վերջինիս մյուս անունը՝ Aldi(<\*al-di, որտեղ -di «աստված»): Հայոնի է, որ ուրարտական թագավորները իրենց հիմնադրած բնակավայրերը, սովորաբար, կոչում էին կամ իրենց անուններով (օրինակ, Մենուախինիլ, Արգիշտիխինիլի, Օնուախինիլի), կամ աստվածների անուններով (օրինակ, «Խոալի աստծու քաղաք», Թեյշերախինի, «Ուսա աստծու քաղաք»): Aludiri տեղանվան -dir- բաղադրիչը հայերեն դիր (որից ունենք՝ դիրք, դնել) բառն է «շինել, կառուցել» իմաստով. հնմտ. որմնապիր և բարբառային պատ դմել «պատ շինել», դեղ դմել «խոտի դեղ շինել»:<sup>117</sup> «Դիր կազմված է \*դի արմատից՝ -ր մասնիկով. հնմտ. լու, լուր, լի, լիր, տալ, տուր», իսկ \*դի-հ.-ե. \*dhe-«դմել», որից են նաև իրն հնդկ., ճհա «դմել», լատին. con-do «հիմնել, հաստատել», ոու. ցեյտ «աճել, գործել» և այլն:<sup>118</sup> \*Aludir(i) տեղանվան կազմության տեսանկյունից. հնմտ. Զօրադիր:

Աղու հիմքի ուրարտական դարաշրջանում գործածական լինելու մասին է խոսում նաև Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի կողմից Վանա լճի ավազանում հիշատակված Aluarşa<Alu-Arsha տեղանունը,<sup>119</sup> որի երկրորդ բաղադրիչը, ըստ Ն. Հարությունյանի, կապ ունի ուրարտական Araşa աստվածության անկան և հայերեն Արածել

<sup>108</sup> ԲԲ, հ. II, էջ 78:

<sup>109</sup> ԲԲ, հ. I, էջ 436:

<sup>110</sup> ԲԲ, հ. I, էջ 435; ԱԲ, հ. I, էջ 558:

<sup>111</sup> ԲԲ, հ. I, էջ 437:

<sup>112</sup> ՏԲ, հ. I, էջ 864, 865:

<sup>113</sup> ՀՀ Պ. հ. II, էջ 89-90:

<sup>114</sup> ՆՀ Պ. հ. I, էջ 42:

<sup>115</sup> Խորենացի, Բ. թ.:

<sup>116</sup> H. A p y t o n յ ա ն, Տոպոնիմիկա Սրբարտու, ստր. 23—24.

<sup>117</sup> ԱԲ, հ. I, էջ 675:

<sup>118</sup> Նոյմել:

<sup>119</sup> H. A p y t o n յ ա ն, Բայնուլի (Սրբարտու), Եր., 1970, ստր. 305—306.

բառի հետ:<sup>120</sup> Որ տեղանվան առաջին բաղադրիչը՝ Ալւ-ն, նոյն Աղու-ն է, մեր մեջ կասկած չի հարուցում, իսկ երկրորդ բաղադրիչի՝ արշա-ի համար կարելի է ենթադրել, որ գործ ունենք արտ բառի առավել հին տարրերակի հետ: Հնդեվրոպական \*ag'-ro- նախամկից սերած այսու բառի վերաբերյալ Հ. Աճառյանը գրում է. ««Են..ag'-ro- տվել է հայերենում նախ \*ածր-, տեղափոխությանը \*ածր և հետո ծ-ու ձայների փոխանակությամբ արտ»:<sup>121</sup> Իսկ ածր հմնտ. ածեր «նորատունել այզի»<sup>122</sup> արմատակից բառը: Ալարշա տեղանվան տարրերակներն են Սյունիքի Ծղուկ և Հարանդ զավաների Աղուերծ/Աղուերծ և Ըղուերծ/Ըղուերծ տեղանունները,<sup>123</sup> որովհետու -արշա/-երծ գրում առկա է հայերենին բնորոշ մի օրինաչափություն՝ -ր- ից առաջ ա/է համապատասխանությունը. հմնտ. արագ/երագ, արագազ/երագազ, առասան/երասան(ակ) և այլն:<sup>124</sup> Աղուերծ/Ըղուերծ անոնք կրած զյուղերից ուշադրության է արժանի հատկապես Ծղուկ զավանենք, որովհետու «Ծղուկ զավառը կոչվել է նաև Սիսնիք կամ Սիսնկամ նեղ իմաստով»,<sup>125</sup> իսկ նրա կենտրոնը Սիսնիք (այժմ՝ Սիսիան) կոչված պահներ: <sup>126</sup> Եթե բերված տեղանուններից վերջինները առնչվում են Սիսակ Նահապետին և նրա անձնանվանը, ապա առաջինը՝ Աղուերծ-ը (<\* Աղու-երծ) ուղղակի կապի մեջ է նրա Աղու մականվան հետ:

Սեր պատմահայրը Սիսակի Աղու մականոնը տեսնելով Աղուանք երկրանվան հիմքում կարծես փաստում է, որ Սիսակ նահապետի մականոնը ունեցել է նաև \*Աղուան տարրերակը. Աղուան <\* Աղու -ան, որտեղ -ան-ը անձնանվանակերու վերջածանցն է: Այսպիսի \*Աղուան -ի երբեմնի գոյությունը ապացուցվում է Աղվան/ Աղուան անձնանվան միջոցով՝ Ալանի տեսքով վկայված դեռևս ուրարտական դարաշրջանում:<sup>127</sup> Բնականաբար, Վերջինս ծագումնաբանական որևէ կապ չի կարող ունենալ անդրկուրյան շրջանի հին բնակիների աղուան(ը) ցեղանվան և դրանց երկրի Աղուանք անվան հետ: Վերջիններս հայացած ճեղքն են հունա-հռոմեական աղբյուրներում alban-, Albania տեսքով վկայված անունների: Նման ճևափոխություններ հաճախ են պատահում ցեղանունների և երկրանունների մի լեզվից մյուսին անցնելու ժամանակ: Որպես օրինակ կարելի է բերել մեր մյուս հարևանի երկրանոնք: Վրացիների անվան պարսկերեն գործ (ի) ձևից են ծագում ոռուերեն Հրցա (փոխանակ՝ \*Гурзия) և անգլերեն Georgia (փոխանակ՝ \*Gorgia, \*Goorgia) «Վրաստան» երկրանունները: Դրանցից առաջինը ճևափոխվել է ոռուերեն ցրց «ქեთ», իսկ երկրորդը՝ Սուրբ Գևորգի George անվան աղբեցուրյանք (նույնպիսի ճևափոխության առկա է նաև եվրոպական մյուս յեզուներում):

Այսպիսով, թերված տեղանունների և մյուս հատուկ անունների ստուգաբանությունները ևս ցույց են տալիս, որ ինչպես աստվածաշնչային Նոյ նահապետի, այնպես էլ Հայկազն Սիսակի և նրա զարմերի շուրջ հյուպած ավանդությունների հեճրը եղել է արաքսամերձ Ղրանների (Արարատյան դաշտով, Նախիջևանի երկրամասով, հարավային Այրովնիքով և հարավային Արցախով) այգեզործության, մասնավորապես խաղողագործություն-զինվորական օջախներ լինելու պատմական իրողությունը: Ուշագրավ է, որ եթե Փոքր Արարատի ժողովրդական *Միս* անունը առնչվում է Սիսակ նահապետի անվանը, ապա հայկական ինն ավանդությունները Մեծ Արարատի *Մասիս* անունը բխեցրել են Սիսակի պապ Ամասիայի, իսկ նրա լանջին գտնված Փառախոտ և Ցոլակերտ բնակավայրերի անունները՝ Վերջինիս որդիների անուններց:<sup>128</sup> Ծփում է թե խաղողի որդի ծագումը Մասիս (Արարատ) լեռան առնչվող հայկա-

<sup>120</sup> H. A p y t ю н я н, 624. ш2fu., k9 356-357:

121 *UF*, h. I, t. 2 337:

<sup>122</sup> Ենիշն սեղում, էջ 102:

<sup>123</sup> *Un. J. n. i. ü. b. g. h., t. 9* 196, 371, 375; *SP. h. I., t. 9* 197:

<sup>124</sup> *UF*, h. II, tq 33, 35, 38:

<sup>125</sup> U. Երեմյան, Աշվ. աշխ., էջ 56.

126 Եռականություն, էջ 80:

<sup>127</sup> Д. Саркисян.

### *д. Саркисян социальными отно*

<sup>128</sup> *Izpriz*, 1908, No. 1.

կան ավանդությունների հնագույն օրինակները պատմվելիս են եղել Ամասիայի և նրա զարմերի՝ մանավանք Միսակի, մասին:

## **ИСТОРИЧЕСКАЯ ОСНОВА АРМЯНСКИХ ПРЕДАНИЙ О ПАТРИАРХАХ НОЕ И СИСАКЕ**

*Резюме*

*С. Петросян*

По сообщению Мовсеса Хоренаци (I,12; II, 8), родоначальником нахарарского рода Сюни//Сисакан и эпонимом древнеармянской области Сюник //Сисакан является Сисак—потомок этнарха армян Айка. Имя Сисака идентично со словом *sisak* (սիսակ) *вид виноградной лозы*, а его прозвище Алу (*Ալու*), по нашему мнению, происходит из и.-е. корня \**al-rasti*, *растить, питать*. *Растительные* этимологии имеют также имена брата Сисака Армая (*Հարմայ*) и сисаканских патриархов Цлука (*Ցլուկ*) и Балака (*Բալակ*). Последние, по Степаносу Орвеляну, являются эпонимами одноименных районов Сюника, т.е. Цлука (*Ցլուկ*, *Ցլուկը*, в урартских надписях *sulicqu*) и Балка (*Բալք*, *Բալք* *աշխարհ*). Эти антропонимы и топонимы также индоевропейского происхождения.

В армянских преданиях о библейском патриархе Ное говорится, что после потопа он начал возделывать землю и посадил первый виноградник именно в Армении. Эти предания, вместе с этимологией имен вышеупомянутых армянских патриархов и ряда местных топонимов, утверждают тот исторический факт, что Армения, в частности облассти Айрагат и Сюник //Сисакан, является одним из очагов формирования садоводства и, в особенности, виноградарства и виноделия.

## Գուրգեն ԽԱՉԱՏՐՅԱՆ

### ԳՐԱԲԱՐԻ ԱՌ ՆԱԽԴԻՐԸ ՊՐՈՖ. ՎԱՐՍՎ ԱՌԱՋԵԼՅԱՆԻ «ԳՐԱԲԱՐԻ ԿԱՊԵՐԸ» ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Քերականներից բացի՝ գրաբարի կապերի կապակցելիության հնարավորությունների քննությամբ զբաղվել եմ նաև անցյալ դարի հայ լեզվաբաններից Ս. Արեւյանը<sup>1</sup>, Հ. Աճառյանը<sup>2</sup>, Ա. Արքահամյանը<sup>3</sup>, Հ. Ավետիսյանն ու Ռ. Ղազարյանը<sup>4</sup> և որդիներ: Բնավ նպատակ չտնենարով ինչ-որ չափով նումացնելու նրանցից որևէ մեկի դերն այս հացում ծննծք, որ, այսուհետերձ, գրաբարի կապերը կարիք ունեն ավարտուն ու ամրողական ուսումնասիրության: Այս կարևոր խնդրին է նվիրված հայ լեզվաբանության երախտավորներից մեկի՝ պրոֆ. Վարազ Առաքելյանի «Գրաբարի կապերը» տակավին աճտիկ հսկայածավագ (20 մասնով) աշխատությունը<sup>5</sup>: Բրրա նրա երեսներ ասպիրանտ՝ այս ձևով մեծ գիտնականի հիշատակին մեր երախտիքի տուրք ենք բերում միաժամանակ հույս տածելով գտնելու հովանակոր՝ նշված արժեքավոր աշխատանքն ամբողջությամբ տպագրելու համար:

Այս հորվածը նշված անտիպ աշխատությունից մի հատված է գրաբարի նախնիքներից մեկի՝ առ նախդրի կապակցելիության բոլոր դրսերումների և հանդես բերած շարահյուսական գործառությների մասին՝ մեր կողմից կատարված մասնակի լրացումներով, վիճություններով ու ծանրագրություններով:

Գրաբարում առ նախդրին աշջի է ընկնում կապակցելիության մեծ հնարավորություններով: Նրա հետ հանդես եկող կապվող բառաձևը կարող է արտահայտվել բոլոր թեր հորվներով: Անշուշտ, պետք է նշել, որ տարբեր հորվների հետ առ նախդրը հանդես է բերում ոչ միայն կապակցման տարբեր աստիճանի հաճախականություն, այլև թերականական տարբեր իմաստներ: Այսպես՝ մեր հաշվարկներով գրաբարում առ նախդրին ավելի հաճախ կապակցվում է հայցական հորվի հետ, և ընդհակառակը, այդ նախդրը սեռական հորվի հետ հանդես է բերում թե՛ գործառական և թե՛ թերականական իմաստների արտահայտման նկատելի սահմանափակություն և այլն:

1. «Առ նախդր+սեռական հորվով կապվող բառաձև» մասնակաղապարը կարող է արտահայտել՝

1.1. պատճառի պարագայի թերականական իմաստ: Այս դեպքում կապվող բառաձևի դերով կարող են հանդես գալ վերացական գրյականներ, որոնք հիմնականում ցոյց են տալիս անձի ֆիզիկական, հոգեկան կամ այլ վիճակ, ինչպես՝ ահ, աղքատութիւն, ամբարտավանութիւն, ամօթ, անհնարութիւն, անմտութիւն, առատութիւն, բարերարութիւն, զազանութիւն, գեղեցկութիւն, դառնութիւն, երկիր, երկիրածութիւն, յարձակումն, նախանձ, վիշտ, վտանգ, տկարութիւն, ցաստմն, ցանկութիւն և այլն: Օրինակ՝ Առ նախանձու մատնեցին զնա (Մարկ., ԶԵ, 10): Եթ առ երկիրի և ամօթյ մարդկան յայտնիցն և կործանեցին (Առակ., ԽԹ, 25): Արկաներ զնոսա առ ցաման ի գեհեն (Եզնիկ, 246):

Որոշ լեզվաբաններ գտնում են, որ նշված կիրառության մեջ առ նախդրի հետ կապվող բառաձևն արտահայտված է ոչ թե սեռական, այլ տրական հորվով<sup>6</sup>: Մինչդեռ Հ. Աճառյանն, օրինակ, հակառակն է կարծում և առ նախդրի ու տրականի կապակցության բաժնում նշում է միայն այդ կապակցության տեղի պարագայական իմաստի մասին<sup>7</sup>: Իրականում լեզվական փաստերը ցոյց են տալիս, որ առ նախդրը պատճառահետևանքային իմաստ կարող է արտահայտել թե՛ սեռական և թե՛ տրական հորվների հետ: Ասկածի լավագույն վկայություններն այն նախադասություններն են, որոն-

<sup>1</sup> Ս. Ա բ ե ղ յ ա ն, Գրաբարի թերականություն, Եր., 1936, էջ 169-194:

<sup>2</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Լիակատար թերականություն հայոց լեզվի..., հ. V, Եր., 1965, էջ 60-190:

<sup>3</sup> Ա. Ա բ բ ա հ ա մ յ ա ն, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 227-260:

<sup>4</sup> Հ. Ա վ ե ս ի ս յ ա ն, Ռ. Ղ ա զ յ ա ն, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1975, էջ 214-235:

<sup>5</sup> Սրանց բացի՝ պրոֆ. Վարազ Առաքելյանն ունի ևս շուրջ քսան անտիպ գործեր, որոնք նոյնպես հայագիտության բնագավառում մեծ կարևորություն են ներկայացնում և արժանի են շուտափության:

<sup>6</sup> Տե՛ս, օրինակ, Ա. Արքահամյան, նշվ. աշխ., էջ 229; Հ. Ավետիսյան, Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 215; Ա. Արեւյան, նշվ. աշխ., էջ 182-183:

<sup>7</sup> Հ. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., էջ 86:

ցում կապվող բառաձևն ինքը լրացյալ է և տարբեր կիրառությունների մեջ ունի իրարից ձևաբանութեան տարբեր լրացումներ՝ արտահայտված մի դեպքում սեռական, մյուս դեպքում՝ տրական հոլովով։<sup>8</sup> Հնան. «Զի իմ առ բարերարութեան իմոյ արձակեալ լիցի զրեա» (Բուզ., 148) և «Դակ նա...զանձն չկամեր արժանի իրին առ յոյժ խոնարհութեան իրում» (Բուզ., 59) նախաղասությունները, որոնցից առաջինի մեջ սեռականով արտահայտված իմոյ անդամը վկայում է կապվող բառաձևի սեռական հոլովով, իսկ երկրորդի մեջ տրականով արտահայտված իրում անդամը՝ կապվող բառաձևի տրական հոլովով դրված լինելու մասին։ Այնպէս որ, եթէ այս կապակցությունները կիրառվում են քերականորեն համամուն սեռական-տրական հոլովներով արտահայտված հատկացուցի հետ [Առ ճեա տազնապի ստիպելոյ դահճացն՝ միանգամայն հատին ընկեցին զարանցու երանելոյն (Եղիշէ, 178)] և կամ էլ առանց հատկացուցչի [Եւ առ յոյժ յանդուզն յարձակմանն յորվագոյն այն եր, զոր գետամոյնս առնեին, քան զանկեալսն սրոյ ի ցամաքի (Եղիշէ, 77)], ասպական կապվող բառաձևը հավասարապես կարող է արտահայտված լինել կամ սեռական, կամ էլ տրական հոլովով։

1.2. Սակայ դեպքերում «առ նախդիր+սեռական հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարով կարող է արտահայտվել նաև հիմունքի պարագայական իմաստ։ Եւ առ վայրենի բարուցն իրոց...ութ հարիր այր ես ածել առաջի նորա (Բուզ., 21): Զի իմ, առ բարերարութեան իմոյ, արձակեալ լիցի զրեա (Բուզ., 203):

2. «Առ նախդիր+տրական հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարը կարող է արտահայտել՝

2.1. բում տեղի պարագայի քերականական իմաստ (այս դեպքում առ նախդիրն ունի «մոտ», «առջև», կամ «ներկայությամբ» նշանակություն), որ պահանջում են ազանիմ, առնել, քազմական արկանել, բանակիմ, գտանիմ, դիսիմ, դնել, եմ, թողով, լինիմ, կամ, հանգուցամել, մնայ, ուժիմն և քաղարձան իմաստ արտահայտող այլ բայեր։ Այժմ առ մեզ գտանին անբար զրուցաց մատեանք (Խոր., 11): Առ նմա թողու ոմն պարսիկ՝ զնտերիմն իր (Խոր., 194): Կէսք առ նմա իսկ էին (Եղիշէ, 43): Ուսեալ Տրդատէս առ կոմսի ումեմն Լիկիանէս անուն կոչեցելոյ (Ազար., 24): Մի՛ զոցի ուկոյ կամ արձարոյ զանակ առ ումնք (Բուզ., 85): Կայր առ բարձր զահուն քարին (Բուզ., 152):

Թե՛ անձ և թե՛ իր անվանող կապվող բառաձևերի հետ առ նախդիրը կարող է նշված քերականական իմաստն արտահայտել նաև կազմությամբ համադրական ու վերլուծական այլ բայերի (ամբաստան լինիմ, շարախօսիմ, քսիս մասուցամել և այլն) պահանջով, ինչպես՝ Ամբաստան եղեն առ արքայի (Բ Մակ., Գ, 9)<sup>9</sup>....հրաիրերով և զնա յօգնականութիւն ինքեանց՝ շարախօսել առ արքային Պարսից (Խոր., 346): Վասն այսորիկ սկան քսիս մասուցամել զննանեն առ քագաւորին Վարագրատայ՝ առ իրում սամուն (Բուզ., 198) և այլն։

Բնականարար բուն տեղի պարագայի քերականական իմաստի ձևափորմանը գերազանցապես մասնակցում են տեղ ցույց տվող հաստուկ ու հասարակ և այլ բանձուցական գոյականներ նույնպես։ Այս դեպքում մեծ մասամբ նկատելի է տեղանքի ոչ կոնկրետություն։ Ոչ ինչ կարացեալ առնել՝ սին առ ծովուն կանգնէ (Խոր., 277): «Իմնէ ի վերայ զօրացն Յունաց, որք առ Սծրճին» (Խոր., 355):

2. 2. Վերջնակետի (ուղևորման և ուղղության<sup>10</sup>, ուղևորության<sup>10</sup>) տեղի պարագայի քերականական իմաստ, որ գերազանցապես պահանջում են ընթացք ցույց տվող բայերը, ինչպես՝ զայ, զնայ, երբայ, խաղայ, չունել, չու առնել, փախչիմ և այլն։ Օրինակ՝ Գնաց և Խոսրով ի բանակէն իրմէ առ ծովուն Գեղամայ (Խոր., 315): Ցնծալից սրտի երթային առ նմա (Փարպ., 164): Զգոյշ լերուք ի սուս մարգարեիցն, որ զան առ ձեզ հանդերձիք ոչխարաց (Մատր., Է, 15)<sup>11</sup> և այլն։ Գրաբարում վերջնակետի տեղի պահագայի կիրառությունը բուն տեղի պարագայի համեմատությամբ հազվադեպ է։

<sup>8</sup> Ասովածաշնչյան օրինակները քաղել ենք Հայաստանի ասովածաշնչային ընկերության (1997թ.) հրատարակությունից բնդումնամատություններուն։

<sup>9</sup> Տերմինը Վ. Առաքելյանին է (տե՛ս Վ. Գ. Առաքելյան, Ժամանակակից հայերենի հոլովումների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Եր., 1957, էջ 103):

<sup>10</sup> Տերմինը Վ. Քոսյանին է (տե՛ս Վ. Ա. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Եր., 1975, էջ 234):

<sup>11</sup> Հնան. Զգոյշ լերուք ի սուս մարգարեիցն, որ զան առ ձեզ ի հանդերձս զամենիս (Լաստ., 144):

2. 3. *Հանգման խնդրի քերականական իմաստ, ինչպես՝ Եւ յոյժ մտերմութիւն ցուցեալ առ նմանի մի ի հաւատարմացն նորա ցուցանիլը (Լաստ., 149): Որք առ Արշակայի էին միամիտը (Խոր., 299):*

2. 4. *Սիասմուրյան խնդրի քերականական իմաստ, ինչպես՝ Աստ պատմի աստեն առ սմին (Բուզ., 5): Որպէս Հայոց մեծ աշխարհին պիտոյ է և օգտակար և առ նմին և Վրաց և Աղուանից (Փարաք., 42): Խորհեալ ենք նոյնպէս ծառայել քեզ մտերմութեամբ, եթէ հաստատեստես առ մեզ դաշամքք գերիսս զայս (Խոր., 318):*

2. 5. Ինչպես նշեցինք, «առ նախդիր+տրական հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարով կարող է արտահայտվել նաև պատճառի պարագայի քերականական իմաստ, որտեղ կապվող բառաձևի դեր են կատարում անմուռիմ, քաղց, այն և այլ վերացական գոյականներ ու դերանուններ. Վասն զի ի կնոջն Գնելոյ զանարժան սիրով հարաւ Տիրիքն, առ այն զարիսն նիւրեաց զբարին (Բուզ., 103): Դոք առ ձերում անմուռիմ հաղորդեցայք Հրեհցն (Բուզ., 34): Այր, ասէ, առ քաղցի իրում շրջեսցի և կերիցտ զկէս անձին իրոյ (Եղիշէ, 8) և այլն:

2. 6. Բացառիկ դեպքերում նշված մասնակաղապարով կարող է արտահայտվել ժամանակի պարագայի (այս դեպքում կապվող բառաձևը ժամանականից գոյական է), բաղդատուրյան խնդրի և այլ քերականական իմաստներ ևս, ինչպես՝ Վասն այսորիկ զնեսիլ հանդերձելոցն երևեցոյ ինձ պատմել ձեզ՝ առ ժամանակին զիր կամսն առ ձեզ կատարելով (Ազաք., 393): Փոքր Աղեքսանդրի և Դարեհի պատերազմն առ Արտաշիսի բաղդատեալ (Խոր., 124) և այլն:

3. «Առ նախդիր+հայցական հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարով գրաբարում արտահայտվում են քերականական մի շաքր իմաստներ: Այսպես՝

3. 1. *Մատուցանել, մատչիմ, մերձենալ, մօտիմ, յուսապ և այլ բայերի պահանջով «աս+հայց. հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարն արտահայտում է հանգման խնդրի քերականական իմաստ. Մատուցեալ առ նա ունաց ի հերձուածորոց աղանդրյն Արիստի՝ ասեն (Խոր., 294): Եւ մօտեալ առ միմեանս երիվարացն՝ բուռն հարեալ զմիմեանց հերաց և կոռուին (Փարաք., 129): Ոչ այլ իւիք է հնար մատչել առ ասսուածորդին (Ազաք., 208): Եւ տքա հասին անկան ի վերայ բանակին՝ յուսացեալք առ Ասսուած (Բուզ., 19): Առ նա դոք ոչ մարթայցեք մերձենալ (Ազաք., 37) և այլն: Նշված մասնակաղապարով հանգման խնդրի կարող են պահանջել նաև մերձ, մօտ և այլ բայանուններ՝ Զվարսածն բոյս....մօտ առ կարծինսն այրեցուցան (Ազաք., 119):*

Քերկած հատկապես առաջին նախադասության ընդգծված լեզվական փաստը լսավորում ցոյց է տալիս, թե ինչպես է քերականական իմաստի մքագնման հետևանքով գրաբարի նախդրային համակարգը տեղը զիջում նախադրությունների համակարգին: Հման. Պատուի ննա տեղի օրաբանին մօտ առ դիլս սրբոյ Առաքելոյ (Խոր., 212):

Նշված մասնակաղապարով հանգման խնդրի կարող են պահանջել նաև կանչի, գրավոր կամ բանակիր դիմումի, աղոթքի իմաստ արտահայտող այնախի բայեր, ինչպիսիք են՝ աղաղակել, աղօթել, գչչել, խնդրուածս առնել, կարդալ, կռչել և այլն. Առ ասսուածապաշտուն գրէ նարգարէն (Ազաք., 268): Իսկ ոմանք,...զԱնտարանն ի ձեռն առեալ, աղօթիք առ Ասսուած կարդային (Եղիշէ, 59): Եսու տանելի ի Գաղղիուս հանդերձ երկարի կապանօք, դնել ի մետաղս, զի աղօթեսցէ առ Ասսուած (Խոր., 237): Զողջոյն ամիսն քաղոց պահօն և աղօթիք առնել խնդրուածս առ Ասսուած (Եղիշէ, 81): Գրեաց առ գործակալս Հռոմայեցոց զպատճառս երթալոյն իրոյ ի Պարսս (Խոր., 147): Առ իր աշակերտեալսն Յեփեսոս գրեք (Փարաք., 200): Առներ աղօթս առ Տէր (Բուզ., 20) և այլն: Նկատվում է, որ կապվող բառաձևի գործառույթով այսուեղ հանդիս են զալիս անձ անվանող գրյականներ, առավելապես՝ Ասսուած և Տէր բառերը:

Այսպիսի նախդրավոր կապակցություններ են հանդիպում նաև երկկազմ և անվանական միակազմ այն նախադասությունների մեջ, որոնցում գերադաս անդամի դեր են կատարում խնդրուածք, ողջոյն և այլ բայանուններ. Զի իր խնդրուածքն առ Ասսուած այսպէս էին լեալ (Բուզ., 186): Առ այլ մարդիկդ, որ ընդ ինով իշխանութեամբ էք, ողջոյն (Ազաք., 73): Բազում խաղաղասէր մտօր բազմասցի ողջոյն առ քեզ և ամենայն մեծիս պահիդ (Եղիշէ, 28) և այլն: Նկատեին է, որ այս դեպքում ևս կապվող բառաձևը, իբրև կանոն, անձ ցոյց տվող գոյական է կամ դերանուն:

Հանգման խնդրի քերականական իմաստ է ձևակրվում նաև գործողության կատարման բաշխման, ընդդիմության, հաջորդականության և այլ զաղափարներ արտահայտող կապակցությունների միջոցով, որոնց մի մասն արդեն գրաքարում վերածվել է կայուն կապակցության կամ վերլուծական բարդության: Օրինակ՝ Երիս ընդ միոյ պատրաստեցէ առ մի մի ի նոցան (Եղիշէ, 96): Եւ առ մի մի ի նոցանէ փոխեցաւ վեց վեց այր ի դահճացն (Եղիշէ, 186): Նկանակ մի առ այր: Պատերազմել առ անզգամն<sup>12</sup>: Կանանց գործ է արգելով փակել զինքեամս յերկիւլէ առ հանդերձեալ կրիսան (Խոր., 290): Մէն մի բռնաքար առ այր հրամայէին, զի բերիցեն ընկեցն շեղ կուտել (Քուզ., 14): Եւ ըստ հողոյն բռողյը երկու երկու առ գեղ մի երեց և սարկաւագ (Քուզ., 184): Ամենայն այր առ այր և մարդ զարմացումն յաճախէր (Ազար., 90): Բան առ բան ելոյծ և իմացոյց ձեզ գօրէնս ծեր (Եղիշէ, 29): Սատեան ճակատ առ ճակատ (Խոր., 303) և այլն:

3. 2. «Առ նախդիր+հայց. հոլովով կապվող բառած» մասնակաղապարը կարող է արտահայտել նաև մասուցման և հաղորդման խնդրի քերականական իմաստ, որն, իրը կանոն, առնչվում է, համապատասխանաքար, դարձուցանել, մատնել, մասուցանել, տալ և ազդ առնել, ասել, լոր առնել, լու լինիմ, պատասխանի տալ ու այլ բայերի հետ: Օրինակ՝ Միսիքարութիւն առ արարածն մասուցան (Ազար., 54): Ետուն առ ճա զգաւակս իրեանց (Խոր., 282): Սա դարձուցէ առ ճա զաշխարհս Հայոց (Խոր., 309): Հարկ անաշխատ առ քեզ ոչ եկեցն (Խոր., 185): Բայց ոչ բռողյ, եթէ ոչ տեղի մեր առ մեզ եկեցն (Քուզ., 142): Եւ բազարեաց Արշակ քաջ....առ ի հաստատել բանին Տեառն՝ առ Արքահամ, թէ. «Թազաւորք ազգաց ի քէն ելցեն» (Խոր., 102): Որպէս ասաց Գարրիէլ առ կոյսմ տորք, թէ ոչ տկարացի յԱստուծոյ ամենայն բան (Ազար., 208): Լոր առնելով առ որդին իր Պապ յուսայր ապրել ի ճետաց Շափեյ (Խոր., 209):

3. 3. Ասացական բայերի պահանջով «առ նախդիր+հայց. հոլովով կապվող բառած» մասնակաղապարով կարող է արտահայտվել վերակերպության խնդրի քերականական իմաստ ևս. Առ այս ետ պատասխանի Յովսէկ և ասէ (Եղիշէ, 170): Առ որ այսի միայն ասացից (Խոր., 12): Գրեաց և գիր մի առ այժ: Եւ ըստ մարգարեական բանին առ նոսս ասելոյ....գրան սուրբ արհամարհէին (Քուզ., 30):

3. 4. «Առ նախդիր+հայց. հոլովով կապվող բառած» մասնակաղապարով արտահայտվում է նաև ներգործող խնդրի քերականական իմաստ: Այս դեպքում, բնական է, նշանակած խնդիր ենթադրում և պահանջում են կրավորական սերի բայերը: Օրինակ՝ Այլ այս եթէ առ այլս այլազգարար պատմի, մի՛ ինչ սքանչանար (Խոր., 66): Քանզի պատուեալ է առ Ալանս մոռք կարմիր (Խոր., 179):

Անշուշտ, ընդգծված կապակցությունների միջոցով միաժամանակ արտահայտվում է տեղի պարագայի քերականական իմաստ, որն առավել ընկալելի է այն դեպքում, երբ տվյալ նախադասության բայ-ստորոշյալ կրավորական սերի չէ, ինչպես՝ Այլ ինձ քուի որպէս այժմ և առ հիմն Հայաստանեացս լեալ անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանաւորաց (Խոր., 11):

3. 5. Նշված մասնակաղապարը կարող է արտահայտել նաև սահմանափակման խնդրի քերականական իմաստ, որ պահանջվում է հիմնականում բայանունների ու անդեմ բայածների կողմից: Դրանցից են՝ կարող, ազճող, վատ, տաղտոկ և այլն: Օրինակ՝ Առ ամենայն կարող է Աստուած (Եզնիկ, 232): Զարեհ էր այր սէզ և յորս երեց նահատակ, իսկ առ պատերազմուն վատ և տաղտոկ (Խոր., 184): Էր պճնող առ հանդերձս (Ազար., 71) և այլն:

3. 6. Հայցական հոլովի հետ առ նախդիրը հազվադեալ ձևակրում է նաև միասնության խնդրի քերականական իմաստ՝ Սամակ և այլը ոչ գիտելով գիամբաւ պատերազմին Արշակայ՝ առ Մակերոնացոց պետութիւնն զմիաբանութիւն դաշանցն հաստատուն պահէին (Խոր., 106):

3. 7. Նշված կապակցությամբ երբեմն արտահայտվում է բաղդաստության խնդրի քերականական իմաստ, ինչպես՝ Արդ փոքր համարիմք մեք զարչարանս զայս առ սէր փոխարինին, զոր էարկ առ ազգս մարդկան (Եղիշէ, 148): Փոքր համարիմք զանարգանս

<sup>12</sup> Օրինակը քաղել ենք Գ. Ավետիքյանի Քերականութիւն հայկական (Վեճետիկ, 1815թ.) աշխատությունից (էջ 111):

զայս և առ ոչինչ զբաւս մարմնոյս առ մեծ սէրմ Աստուծոյ (Եղիշէ, 186): Որպէս լոյս առ խաւար<sup>13</sup>:

3. 8. Սերի խնդրառությամբ երկարժույթ ունիմ (կալայ) բայի պահանջով «առ նախդիր+հայց հոլովով կապվող բառած» մասնակաղապարը հանդես է թերում երկրորդական ուղիղ խնդրի շարահյուսական դեր: Այս դեպքում կապվող բառածեր, իբրև կանոն, արտահայտվում է հոգնակի թվով. Սովոր են Յոյնք և Արիք և ամենայն ազգը հերանուաց զբաջ առ դիցազուն ունել (Եզնիկ, 122): Չծերս ի նոցանէ առ հարս ուներ (Եղիշէ, 196): Ոչ առ սուսու ունիմ զձեզ (Խոր., 357): Ոչ ինչ առ լուս կալեալ մնձարեաց զնա (Բուգ., 106) և այլն:

3. 9. Առաքել, զաւ, զնայ, երթար, կոչել, հասուցանել, յեկ, յուղարկիմ և այլ բայերի հետ առ նախդիրը անձ նանիշ բառերի հայցականով կապվող բառածեր հետ արտահայտում է վերջնակեսի տեղի պարագայի քերականական իմաստ<sup>14</sup>, ինչպես՝ Ես երթամ և Զմիշիքարիչն առաքեմ առ ձեզ (Ազար., 342): Ոչ կապանք, այլ արձակ ուղիք և արձակ ձեռօր հրամայեաց առ ինքն կոչել (Եղիշէ, 132): Եւ տակառապետին դաւով խրատ տուեալ Հիրկանու, զի առ Քարզափրամ երթցէ վասն աւերածոյ աշխարհին (Խոր., 133): Ահաւաիկ յուղարկիմը մեր ի ձենց առ Աստուած (Փարավ., 90) և այլն:

3. 10. Բնակիմ, եմ, ընկենույ, ժողովել, կազմել, կամ, կարգել, կոտել և այլ բայերի հետ նշված մասնակաղապարի միջոցով զբարարում արտահայտվում է բուն տեղի պարագայի քերականական իմաստ<sup>15</sup>: Այս դեպքում կապվող բառածեն արտահայտվում է թե՛ անձ և թե՛ բանձրացական իր ցույց տվող գոյականով կամ դերանունով: Օրինակ՝ Կարգէր և կազմէր զճակատն....առ ափն Տոմուս գետոյն (Եղիշէ, 116): Ես հրաման վասն երկուցն, որ անդէն ի կարաւանին առ իրն էին (Եղիշէ, 143): Ելեալ ի Հայս՝ զտին ժողովեալ առ մեծն Սահակ և Սեպուս զամենայն եպիսկոպոսուն (Խոր., 325): Կուտեալ էին առ դուրս (Ազար., 359): Կեցի առ Կասնայրականդ (Փարավ., 187) և այլն:

3. 11. «Առ նախդիր+հայց հոլովով կապվող բառած» մասնակաղապարով արտահայտվում է ժամանակի պարագայի քերականական իմաստ, որտեղ կապվող բառածերի դեր են կատարում ժամանակ ցույց տվող գոյականեր, դերանուններ ու այլ բառեր (երր, երեկո, ժամ, ժամանակ/ս, յապա, վաղի, օր և այլն), այլև անորոշ դերբայներ: Օրինակ՝ Օրն տարաժամեր և մօս առ երեկո կարճատեր (Եղիշէ, 118): Երբ զամենայն եղեալսն յաշտարակագործութենէ մինչև առ մեզ ի հաստորին քեզ ի մերումս ածել ջանասուք պատմութեան (Խոր., 28): Եւ մեծն Գրիգոր առ շրջել ընդ աշակերտեալսն հաստատէր զնոսա ի ճշմարիտ վարդապետութեանն (Ազար., 465): Առ ե՞րբ արարից աղօրս վասն քո (Ել., Ը, 9): Բայց զնոգուցն բազմութիւն պահել առ օրն հրամայեցին զգուշութեամբ (Փարավ., 63): Առ իմանալ առ վաղի անցելոց իրացն ահաւորութեան նշանակ (Բուգ., 16): Անձանօր ևս լիներ առ յասյա մարդկան Աստուծոյ բարերարութիւնն (Եզնիկ, 56) և այլն:

3. 12. Նշված մասնակաղապարով արտահայտվում է նաև պատճառի պարագայի քերականական իմաստ: Այս դեպքում կապվող բառածերի դեր են կատարում վերացական առարկա ցույց տվող բառեր՝ գուր, ինչ, նախանձ, սէր, ցաւ և այլն. Խսկ նորա առ սէրն Քրիստոսի յոյժ խնդրանմբ ընդունեին զամենայն շարչաբան վասն մնձի յուսոյն (Եղիշէ, 21): Առ ի՞նչ է քո այդ մեծ տրտութիւն (Եղիշէ, 42): Առ նախանձ թշնամույն բանսարկութիւն հրապոյք ցոփացուցիչը մտին յաշխարի (Ազար., 44): Առ ցաւս իւր ճշիցէ (Ազար., 321): Առ ձեռօր կորովութիւնն զնիզակն ընդ բերան արկաներ զօրավարին Մանուկի (Բուգ., 204) և այլն:

Նշված քերականական իմաստն արտահայտվում է նաև առ նախդիր և անորոշ դերբայի կապակցությամբ, ինչպես՝ Առ ժժուժալ սրտիցն բարկութեան քակեալ որոշեցան ի նախարարացն (Եղիշէ, 57): Եւ արդ, պատմեցի ձեզ ոչ միայն առ մերել սրտին (Փարավ., 37):

3. 13. «Առ նախդիր + հայց հոլովով կապվող բառած» մասնակաղապարով արտահայտվում է նաև նպատակի պարագայի քերականական իմաստ: Ընդ որում՝ ա) կապ-

<sup>13</sup> Օրինակ քաղել ենք Ա. Քազբասունու Տարեք հայերէն քերականութեան դպրատանց տղայոց համար (Վեմետիկ, 1846թ.) աշխատությունից (Եղ 51):

<sup>14</sup> Հմմտ. Ա. Արքահամյան, ճշկ. աշխ., Եղ 230:

<sup>15</sup> Հմմտ. անդ, Եղ 230-231:

վող բառածիկ դերով հաճախ հանդես են զալիս անրոշ դերբայներ, հազվադեմ՝ վերացական գոյականներ, բ) նշված քերականական իմաստն արդեմ V դ. գրաբարում գեռազանցապես արտահայտվում է առև և ի նախդիմների միաժամանակ կիրառությամբ։ Օր.՝ *Առ փո՞ք ինչ եկեալ հարցանես ցմեզ* (Եղիշ, 195): Այնու երևացի նշանակ բազմութեանն՝ առ իմանալ առ վատի անցելոց իրացն ահաւորութեան նշանակ (Բուզ., 14):

3.14. Նշեցինք, որ գրաբարում առ նախդիմ են ավելի հաճախ կիրառվելու և լրացյալի պահանջով քերականական բազմաթիվ իմաստներ արտահայտելու տեսանկյունից աշքի է ընկնում հայցական հոլովը։ Նշված գործընթացի արդյունքում, որը, անշուշտ, սկսվել է դեռ Վ դարից էլ առաջ, արդեն V դարում վկայվում են «առ+ հայցական» մասնակաղապարով բազմաթիվ կապակցություններ, որոնք հարստացնում են գրաբարը վերլուծական բարդությունների և կայուն արտահայտությունների մի մեծ խմբով<sup>16</sup>։ Վերջինիս մի մասը անփոփոխ կամ մասնակի փոփոխություն կրած հասել է մինչև մեր օրերը, մյուսները լեզվի պատմության հետագա ընթացքում դրւու են մնացել բառապաշտրից՝ պայմանավորված այս կամ այն հանգանանքով։ Ավածը հիմնավորվում է նրանով, որ «առ+կապիող բառած» կապակցությունները, ներունակ լինելով կատարելու առաջին հերթին բայցական անդամի լրացման շարահյուսական գործառույթ, ինչ խոսք, հիմնականում պետք է լրացնեին հենց բայի հետ անմիջականորեն կապված խոսքի մասի՝ մակրայի շարքերը։ Այդպիսի նախդրավոր կապակցություններ են՝ առ ժամ մի, առ ժամայն, առ ժամանակ մի, առ ժամանակս, առ հասարակ<sup>17</sup>, առ ծեռն, առ (յ)ապայն, առ յապա, առ ի յապա, առ յապայն, առ սակաւ սակաւ, առ այս նուազ, առ մի նուազ, առ այժմ, առ երի («զուզընթաց», «առընթեր»), առ երեկո, առ աշս, առ արուր, առ անգամ մի, առ ընթեր, առ զամ (մի), առ ի՞ն, առ ի քաւալ, առ դիպան, առ մի, առ վաղին, առ հարկի, առ վայր մի, առ ուսու, առ յանձնման, առ փոքր փոքր, առ կուռն և այլն։ Օրինակ՝ Քանիթը կամակորացն վարիմք առ ժամ մի (ՆԲՀԼ, հ. Ա-Կ, էջ 826, ԺԱՄ բառահոդվածում): Են առ ժամայն ամենայն քեզ եղիցին ասացեալ (Խոր., 88): Քուսանին մարմինք նոցա առ ժամանակ մի (Ազար., 68): *Առ ժամանակ մի* վասն այսց երկուց պատճառանաց ընդ մահուամք անկանիցի (Եզնիկ, 75): *Առ ժամանակս* վայելեն ի դարմանոյ ցորենոյն (Բուզ., 116): Գիտելութիւն իրաց առ ի յապա եղելոյս (Փարազ., 28): Շատ աւելի առ ի յապայն քերէ քեզ շահ (Փարազ., 14): *Առ սակաւ սակաւ* ածէ ի նա լոյսն (Եզնիկ, 201): Քայց առ այս նուազ կամ էր, բէ ներեկը ինձ (Փարազ., 175): Որպեսզի առ մի նուազ հորդորեալ իցի այս սրբոյն (Ազար., 396): Սեք առ այժմ ոչ ընդ այս եմք զարմացեալ միայն (Եղիշ, 194): Պարտի առ երի ընթանալ եօթանասնիցն աւանդութեան (ՆԲՀԼ, հ. Ա-Կ, էջ 683, ԵՐԻ բառահոդվածում): *Առ երեկո* բաշխեսցէ կերակուրու (Ծննդ., ԽԹ, 27): Ծառայք, հպատակ լերուք տերանց ձերոց մարմնաւոաց-մի՝ սուտակասապար և առ աշս աշառելով, այլ սրտի մոտօք ծառայեցէ՛ք (Եղիշ, 11): *Առ արուր* կոխսան ատնէիր զգեսու քո (Եզնիկ., ԼԲ, 2): Պատառուուն հանդերձին պատեր զսուրբսն առ անգամ մի (Ազար., 117): *Առ ընթեր* նմա զիրոն դնեն (Եզնիկ, 25): Զպատուիրազանցութիւնն զործեցի առ զամ մի (Բուզ., 85): Զի առ զամ միայն աքսորելով ապրեսցի (Բուզ., 90): Եթէ ի տանջանաց կասկած չիցէ, ապաշխարութիւն առ ի՞ն իցէ (Եզնիկ, 289): Ի կողման դոյցն եթ էին առ ի քաւալ (Խոր., 314): Երկու խարիսխ առ մի սիս (Ել., հԶ, 19): Ոչ բոյլ տայր նոցա խօսել առ վայր մի առանց զայր ոստիսին ի դումնն (Փարազ., 23): Քերեալ դնէին առ ուսու երանելեացն (Փարազ., 106):

3.15. Մի շաբթ դեպքերում «առ նախդիմ+հայցական հոլովով կապվող բառած» մասնակաղապարի են մի կայուն կապակցություն է ձևակորում նրանց՝ բայով արտահայտված լրացյալը։ Այդպիսի կապակցություններ են, օրինակ, առ ոչինչ համարիմ, առ ուսու հարկանել և այլն։ Մի զուստ Աստուծոյ առ ուսու կոլիցետն (Բուզ., 265): *Առ ուսու հարին* զմեծ քահանայութեան զԱստուծոյ պատիսն (Բուզ., 3): Զլուսաւորացդ զօրութիւնն առ ոչինչ համարին (Ազար., 87) և այլն։

<sup>16</sup> Ա. Այտրմայնը և ուրիշ քերականներ ու լեզվաբաններ դրամք անվանում են ոժեր։

<sup>17</sup> Քուսանդի երկում, օրինակ, «առ հասարակ» կապակցությունն հանդիպում է 71 անգամ, Ազարանգելուսի երկում՝ 47 անգամ։

3.16. Տասնյակ դեպքերում էլ առ նախդիրը հանդես է գալիս կրկնավոր բարդությունների կազմում, ինչպես՝ բամ առ բամ, իշխու առ իշխու, մէտ առ մէտ, մքեր առ մքեր, յապա առ յապա և այլն: Օրինակ՝ Բան առ բան եղյօն և իմացոյց ձեզ օրէնս ձեր (Եղիշէ, 29): Իշխու առ իշխու բանձրացոյց անդուլութեամբ զպաշտօն պղծութեան իրոյ (Եղիշէ, 12): Ի բանձրութենէտ անկեալ դիականց մօտ առ մօտ խոսցեալ իբրև զիայտահարս մայրաւորաց (Եղիշէ, 118): Յապա առ յապա յորժամ գայցէ, բերիցէ ինքն տալ մեզ զիւրոց փառացն զաննահութիւնն և զանեղծութիւնն (Բուզ., 72) և այլն:

4. «Առ նախդիր+բացառական հոլովով կապվող բառաձև» նասնակաղապարով գրաբարում առանձնանում է թե՛ կիրառական և թե՛ քերականական իմաստների սահմանափակությամբ: Բավական է նշել, որ V դ. հայ պատմիների և Եզնիկ Կողբացու երկերում դրանց ընդհանուր բիլը մեկ ու կես հարյուրից չի անցնում: Այսուհանդերձ «առ նախդիր + բացառական հոլովով կապող բառաձև» նասնակաղապարով գրաբարում կարող է արտահայտվել:

4.1. անջատման խնդրի քերականական իմաստ, որ ենթադրվում է համապատասխան իմաստակիր բայերի ու բայանունների կողմից: Օրինակ՝ Եւ ընդէ՞ու սա զիտակ իրոյ և կամ Պրոմեթեոս գողացեալ առ ի յասոռուածոցն զիուր և շնորհեալ մարդկան (Խոր., 27): Ոչ տկարասցի առ ի յԱսոռուծոյ ամենայն բան (Ազար., 208): Հաւատամք և ի սուրբ Հոգին....բլիսումն վշտնչենաւոր առ ի Հօրէ (Ազար., 473): Եւ յայտնեալ նոցա զելսն առ ի Հօրէ և գրաքն ի նոյն (Ազար., 227) և այլն:

Նկատենք, որ անջատման խնդրի քերականական իմաստի ձևավորման համար կապվող բառաձևի դերով հանդես են զալիս հիմնականում անձ ցույց տվող գոյականներ, իսկ իր ցույց տվող (գերազանցապես՝ տեղանիշ) գոյականները նման դեպքում առ նախդրի հետ ձևավորում են սկզբնակետի տեղի պարագա: Հմնտ. «Զի որոց եկեալ առ ի կոսէէն ոչ ծանուցեալ քերևս յորժամ առ ի գերեզմանէն զայցէ, դիմնացեն անկանել յարքայութիւնն» (Ազար., 239) նախաղասության ընդգծված անդամները, որոնցից առաջինը անջատման խնդրի քերականական իմաստ է արտահայտում, իսկ երկրորդը՝ տեղի պարագայական:

4.2. Ներգործող խնդրի քերականական իմաստ, որտեղ լրացյալը կրավորական, մասնակի դեպքում՝ չեզոք սենի բայ է՝ Առ ի մէնջ կախեցաւ (Ազար., 323): Գրելոց առ ի մէնջ տեղեկացեալը (Ազար., 11): Զիրաման....կալ....ի հաստատութիւն հաւատոցն, զոր առ ի Տեսանէտ տարածաներ (Ազար., 457): Պարզևարաշխութիւն....առ ի մէնջ՝ կացցէ (Ազար., 431): Կամսարականն Արշակիր,...վաղվաղակի հաւատեալ առ ի նմանէ: Իրամանին, զկնի նաւակարացն և փախստէիցն նետածիկ լիներ (Փարա., 66): Վերահասու եղաք գրելոյս առ ի քէն (Խոր., 335) և այլն:

Քերված նախաղասություններից մի քանիքի կազմում ներգործող խնդրի պահանջող բայը ավելի քան հասկանալի լինելու պատճառով գեղշվել է: Նմանատիպ կառույցների մեջ «առ նախդիր+բացառական հոլովով կապվող բառաձև» նասնակաղապարն ունի նաև հատկացուցիչ քերականական նրբիմաստ, ինչպես՝ Զայս արձան բազում ժամանակ պատուեցին Պոնտացիք որպէս զառ ի յասոռուածոցն զործ (աստվածների կողմից ստեղծված զործ=աստվածների զործ) (Խոր., 119): Եւ չև ևս զիտելով զառ ի նմանէ դավաճանութիւնն (նրա կողմից կատարված դավաճանությունը=նրա դավաճանությունը)...(Խոր., 79):

4.3. Տեղ ցույց տվող, ինչպես նաև բանձրացական գոյականների և այլ բառերի հետ առ նախդիրն արտահայտում է սկզբանակետի տեղի պարագայի քերականական իմաստ: Օրինակ՝ Թերևս յորժամ առ ի գերեզմանէն զայցէ, դիմնացեն անկանել յարքայութիւնն (Ազար., 239): Հանցոր առ ի ծառոյմ կենաց, զի մի կեցցէ յահունան (Ազար., 148): Զի երէ ամաքն....առ ի ներքոյս մատուռակեն....(Ազար., 284):

4.4. «Առ նախդիր+բացառական հոլովով կապվող բառաձև» նասնակաղապարով կարող է արտահայտվել պատճառի պարագայական իմաստ, որտեղ կապվող բառաձևի դերով հանդես են զալիս մի շարք գոյականներ և անորոշ դերքայներ: Հատկանշական է, որ պատճառի պարագայի ձևավորմանն այս դեպքում կարող են մասնակցել նաև բանձրացական գոյականներ: Օրիակ՝ Առ ի յոյժ բանձր անկեալ դիականցն իբրև քարակոյսու դերքեաց երևէին (Եղիշէ, 118): Նոյնպէս և պոռնկութիւնը առ ի չկայոյ ի սահմանս ամուսնութեանն (Եզնիկ, 81): Անդ էր տեսանել....զաղէտս անբաւ տարակու-

սանացն երկողունց կողմանցն՝ *առ ի յանդուզն յարձակմանեն զմիմեանս բախելով* (Եղիշէ, 117) և այլն:

4.5. Նշված մասնակաղապարով ավելի հաճախ արտահայտվում է *նպատակի պարագայի քերականական իմաստ*: Այս դեպքում կապվող բառաձևի դերով հիմնականում հանդես են զայխ ամորոց դերբայների թեր ձևեր՝ առանց իմաստային և քերականական առանձնահատկությունների սահմանափակման: Օրինակ՝ Արարեալ նշանս *առ ի հաստատելոյ զնոսա* (Ազար., 245): Յերկարակեաց արարեալ *առ ի պատմելոյ ազգացն* եկելոց զհամաշխարհական բարկութեանն պայման (Ազար., 155): Չի մի մեծ ինչ նախ-ժիրս որոյ կոտորել *առ ի ցոյցս առնելոյ* (Բուզ., 44) և այլն:

4.6. «Առ նախտիր+բացառական հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարը մի շարք դեպքերում ունի դարձվածքային արժեք, ինչպես՝ *առ ականէ* («առերես»), *առ օրինակէ*, *առ առակէ*, *առ յիշատակէ*, *առ պատճառէ* և այլն: Օրինակ՝ իսկ նաև *առ նորա ականէ* զնաց ընդ նոսա (Բուզ., 260): Եթ զիւտ մտաներով զօրացն Պարսից *առ պատ-ճառէ*, որպէս թէ փախստական վարելով զնաց ընդ Ասորեստան (Խոր., 211) և այլն: Այս պիսի դեպքերում *ի նախտիրը* տվյալքարար դուրս է մնում:

5. «Առ նախտիր+գործիական հոլովով կապվող բառաձև» մասնակաղապարով ար-տահայտվում են թէ՝ խնդրային, թէ՝ պարագայական իմաստներ, որոնցից գործառական ակտիվությամբ և քերականական իմաստների բազմազանությամբ աշքի են ընկառու տեղի պարագաները: Նշված մասնակաղապարով կարող է արտահայտվել՝

5.1. *բարդաստության խնդրի քերականական իմաստ*, ինչպես՝ Սակայն *առ համար-ձակապէսն յանդութեամբն...*իրքն զոյին թուին ի մեզ կողմն թշնամանք մեր անձանց և քերալութիւն (Փարա., 98): Չի՞նչ է յարդ *առ ցորենով* (Երեմ., իջ., 28): Ոչ *առ այլով* վատրարօն վեհ երկի, այլ ի վերուստ՝ յերկնուտ ունի զանաստ օրէնտրութիւնն (Եղիշէ, 29) և այլն:

5.2. *Միասնության խնդրի*, այլև *պարագայի քերականական իմաստներ*: Օրինակ՝ *Առ որով տեսանեն և զայս* (Խոր., 6): *Առ այսորիք և փափազիցնեմք ևս արդեօր իմաստու-թեան արանցն այնոցիկ*, որ զայսիսի փոյք յանձին կալան (Խոր., 10): Իսկ *առ այսո-րիք և առասպեկտ աշխարհիսն մերոյ զրազմահմուտ Ասորին արդարացուցանենն* (Խոր., 56): *Պարզէն ննա Արտաշէս զման արքունիք...և զմուդու ակունսն և առ այսորիք և զաւարն ամենայն ննա թողու* (Խոր., 183) և այլն:

### 5.3. *Տեղի պարագայի զանազան նրբիմաստներ՝ դառնալով՝*

5.3.1. *բուն տեղի պարագա*, որ պահանջում են դադարի իմաստ արտահայտող և այլ բայեր: Այս դեպքում կապվող բառաձևի դեր են կատարում թէ՝ անձ և թէ՝ թանձրացական իր ցույց տվող գոյականներ: Օրինակ՝ Եւ եղին զնա *առ եկեղեցեաւն* (Բուզ., 15): Յաղեր ախտյանին *առ եափուղուսին Եւսերի* (Բուզ., 60): *Առ եզերք Ղեկովը գետոյ արարեալ զիս զօրու բանակատես* (Փարա., 3): Զորդիս իրեանց և զմատերս պատուիրէին ստէպ դաստիարակացն չանցուցանել երբեք *առ նորօք մօս* (Փարա., 60): Եւ անտառ *առ Ազատ գետովն տնկէ* (Խոր., 265): Սայորդացն տեսեալ ուկերս մարդկան զազանակուր եղելոց, ցրտեալս *առ եզերք փոտոյն* (Խ. 296): *Առ սահմանօքն նոցա.... պատանիք ումանք իրը առ երիտասարդունեօր ճնմէին* (Խոր., 39) և այլն.

5.3.2 Նշված մասնակաղապարով արտահայտվում է նաև *անցման տեղի պարագա-յի քերականական իմաստ*: Այս դեպքում լրացյալի դերով հանդես են զայխ անցանել, զայ, զնալ, դատնալ, երթալ, շահատակէլ և բազմաթիվ այլ բայեր: Օրինակ՝ Արեգակն.... ցերեկ առ հարավակողմամբ զնայ ընդ արևմուտս (Եզնիկ, 189): Ինքն ծագեալ անդ զնայ *առ հարավով* և պատի *առ հիսկիսեաւ* (Եզնիկ, 189): *Դառնայ առ ստորտովն Պար-խարայ ընդ մէջ Տայոց* (Խոր., 108): Երբեմն սոյն Յոհան անցաներ առ այգեօր ուրումն (Բուզ., 276):

5.3.3. Մի շարք բայերի պահանջով (ինչպես՝ *համել, հասանել, փախստական առնել* և այլն) *առ նախտիրը գործիականի հետ արտահայտում է վերջնակենսի տեղի պարա-գայի քերականական իմաստ*: Օրինակ՝ *Փախստական առնէին մինչև յանոր տեղիս մայրեացն առ խորագոյն դարիւքն Լոկնաս գետոյ* (Ազար., 76): *Հասանէ առ սահմա-նօքն Խաղտեաց* (Խոր., 106): *Գայր հասաներ առ ստորտովն Նպատական լերինն* (Ա-զար., 427): *Եկեալ հասաներ... առ սահմանօք Նոր Քաղաքին* (Կոր., 50) և այլն:

5.3.4. Բացատիկ դեսպրում նշված մասնակաղապարով արտահայտվում է նաև *սկզբնակետի տեղի պարագայի քերականական իմաստ*, որ կարող են ենթադրել գործողության սկիզբ անվանող բայերը: Օրինակ՝ Քարոզեաց ի Կողարջաց՝ սկսեալ *առ դրամքը Ալանաց և Կասրից մինչև ի սահման Մասքքաց* (Խոր., 234):

5.4. «*Առ նախդիր+գործիական հոլովով կապվող բառաձև*» մասնակաղապարով արտահայտվում է նաև *ժամանակի պարագայի քերականական իմաստ*: Այս դեսպրում կապվող բառաձևի դեր են կատարում ժամանակ, իրադարձություն կամ անձ անվանող վերացական և քանձրացական գոյականեր, այլև որոշ դերանուններ: Օրինակ՝ Ահա որ ինչ *առ մերով ժամանակասու եղեալ կամ դոյզս ինչ հետի՝ զրուցեցից քեզ անսխալ* (Խոր., 257): *Առ որով նախնին մեր Հայկ* (Խոր., 27): Հարկ աշխարհին բազմագոյն քան *առ հարրն նորա երթայր յարքունիս* (Եղիշէ, 58) և այլն:

5.5. «*Առ նախդիր+գործիականով կապվող բառաձև*» մասնակաղապարը որոշ դեպքում վերածվել է դարձվածքային միավորի, ինչպես՝ *առ ոտիկը, առ աչօք և այլն*: Օր՝ *Առ աչօք ինչ իցէ* (Սատր., ԺԳ, 26): Կինն նեցէր *առ ոտիկը նորա (Հռութ, Գ, 8)* և այլն:

*Առ նախդիրի ուստիմնափրությունը ցույց է տալիս, որ այն, կարողանալով կապակցվել բոլոր թեք հոլովների հետ, աշխի է ընկնում խնդրային ու պարագայական ամենատարբեր քերականական իմաստներ ձևավորելու օժտվածությամբ: 5-րդ դարում այն ավելի հաճախ հանդես է գալիս հայցական հոլովի հետ՝ հենց վերջինիս հետ միասին էլ արտահայտելով ամենաշատ քերականական իմաստները: Գրաբարյան առ նախդիրը այնքան է ակտիվ, որ զուգահեռաբար կարող է արտահայտել այլ նախդիրների մասնակցությամբ ձևավորվող քերականական իմաստներ ևս: Քերականական որոշ իմաստներ էլ առ նախդիրը ձևավորում է ի (j) նախդիրի հետ միասին: Նկատելի է, որ առ նախդիրն արդին V դարում մասնակցում է նաև բառակազմական գործընթացին՝ բազմարիվ բառային միավորների կազմում կատարելով բառաբաղդրիչի դեր:*

#### Համառոտագրություններ

*Ազար. – Ազարամգեղայ Պատմութիմ Հայոց, Տիգրիս, 1909:*

*Բուզ. – Փաստոսի Բուզանձացոյ Պատմութիմ Հայոց, Ա. Պետերովոց, 1883:*

*Եղիշէ – Եղիշէայ Կողրացոյ Եղիշ աղամոց, Վենետիկի, 1826:*

*Եղիշէ – Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:*

*Լաստ. – Պատմութիմ Արխանկեայ Վարդապետի Լաստիվերոցոյ, Թիֆլիս, 1912:*

*Խոր. – Սովորի Խորենացոյ Պատմութիմ Հայոց, Տիգրիս, 1913:*

*Կոյր. – Կոյրուն, Վարդ Սաշտացի, Երևան, 1941:*

*ՆԲՀՀ – Նոր բատգիր հայկագեան լեզուի, հ.Ա-Կ, Վենետիկ, 1836, հ.Հ-Ֆ, Վենետիկ, 1837:*

*Փարա. – Ղազարի Փարպեցոյ Պատմութիմ Հայոց և Թուր առ Վահան Մամիկոնեան, Տիգրիս, 1904:*

## ПРЕДЛОГ ԱՌ. ГРАБАРА В НЕОПУБЛИКОВАННОЙ РАБОТЕ ПРОФ. ВАРАГА АРАКЕЛЯНА “ПРЕДЛОГИ ГРАБАРА”

Резюме

Г. Хачатрян

Изучение предлога *առ* свидетельствует о том, что ему свойственно в сочетании со всеми косвенными падежами выражать разнообразные грамматические значения дополнения и обстоятельства. В V веке чаще всего для выражения этих значений предлог *առ* выступал в сочетании с винительным падежом. Данный предлог в граваре был чрезвычайно активен, и, наряду с указанными значениями, мог также участвовать в формировании грамматических значений, выражаемых другими предлогами. Некоторые грамматические значения предлог *առ* выражал в сочетании с предлогом *ի (j)*:

В V веке предлог *առ* выявляет способность участвовать в процессе словообразования, выполняя функцию словообразовательного аффикса.

## Սերգո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

### ՀԱՐՑԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՐԱԴԱՍԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Դասական գրաբարի հարցական նախադասություններում ևս, հրամայական-ների նման,<sup>1</sup> շարադասական բաղադրիչների հաջորդականությունը մեծ չափով ենթակա է հնչերանգային գործոնի ազդեցությանը, ավելին, հաճախ գերազանցապես պայմանավորված է դրանով: Միևնույն ժամանակ քննարկվող հարցի տեսակետից հարցական նախադասությունները նաև նկատելիորեն տարրերվում են հրամայականներից: Վերջիններիս մեջ ստորոգյալն ունի եղանակային (հրամայական) գրեթե միաձև և դիմային (երկրորդ) բացարձակապես միօրինակ արտահայտություն, մինչդեռ հարցական երանգի նախադասություններում ստորոգյալը կարող է արտահայտվել բայի բոլոր եղանակային և դիմային ձևերով: Դայմանավորված վերոհիշյալ հանգամանքով՝ հրամայական երկլազմ նախադասությունները ստվորաբար կառուցվածքայնորեն քերի են:<sup>2</sup> Հրամայական եղանակի բայաձևով արտահայտված գործողության առանձնահատկությունն այն է, որ դրա կատարողը հիմնականում խոսակիցն է, նրան է ուղղված լինում հրամանը: Խոչ խոսակիցն՝ իբրև նախադասության ենթակա, կարող է դրսերվել միայն անձնական դերանվան երկրորդ դեմքով: Եվ քանի որ հրամայական նախադասություններում բայաձև ստորոգյալն իր դեմքով ու թվով պարզորոշ ընկալելի է դարձնում ենթական, վերջինս դառնում է միանգամայն ձևական, ուրեմն նաև՝ ավելորդ: Այս է պատճառը, որ նույնիսկ ժամանակակից հայերենի համեմատությամբ «ենթակայի ավելցուկայնությամբ» բնութագրվող գրաբարում հրամայական երկլազմ նախադասությունների գերակշիռ մասը (գրեթե 85%-ը) արտահայտության պլանում ենթակայացուրկ է: Դրան մեծապես նպաստում է նաև այդպիսի կառույցներուն ենթական անվանող կոչականի գրեթե սովորական գործածությունը: Թեև հանդիպում են դերանուն ենթակայի և կոչականի միաժամանակյա գործածության դեպքեր («Դու, Տե՛ր, պահեն՝ զանձինս մեր յանարժան խայտառականց»: «Ե՛տ դու, որդի՛ մարդոյ, մարզարեա՛ց ի վերայ լեռանցն Իսրայիլ»), այնուամենայնիվ ակնհայտ է, որ կոչականի առկայությունը սովորաբար բացառում է առանց այն էլ ձևական ենթակայի անհրաժեշտությունը հրամայական նախադասություններում («Արքա՛յ քաջ, ունկն դիր սակա բանից մերոց»: «Կեղծաւո՛ր, հա՛ն նախ զգերանդ յականե՛ քումնե՛» և այլն):

Մինչդեռ վիճակագրական տվյալների համաձայն՝ երկլազմ հարցական նախադասություններում պատվերն այլ է. այստեղ ենթակայի գեղման դեպքերը կազմում են ընդամենը 51%, համարյա այնքան, որքան պատմողական նախադասություններում է (47%), գրեթե երեք անգամ պակաս է նրանցուն նաև ենթական անվանող կոչականի գործածությունը: Չափ հաճախ սրանցուն ենթական կամ նրա միջուկի որևէ բաղադրիչն է հարցական հնչերանգի, որեմն նաև նախադասության տրամարանական շեշտի կրողը, ինչպես՝ «Ո՞վ ուրախասից ընդ յառաջադիմութիւն աշակերտիս», «Ո՞վ խոնդրեաց զայդ ի ծեռաց ծերոց», «Ա՞յս հատուցումն եղել ինձ», «Ո՞յր քանից պարտ էր հաստատուն լինել» և այլն: Մինչդեռ հրամայական կառույցներում հրամանն արտահայտողը և տրամարանորեն շեշտվածը գերազանցապես ստորոգյալն է կամ լավագույն դեպքում նաև կոչականը, իսկ ենթական եղակի դեպքերում է շեշտի տակ: Ավելին, սրանցուն ենթակայի՝ միայն անձնական դերանվանմբ արտահայտվելու գրկում է նրան որոշիչ կամ հատկացնոցիշ լրացում ունենալու ենթավորությունից, իսկ դրանց կամ ամբողջապես ենթակայի միջուկի բացակայությունը հրամայական նախադասությունների մեծ մասում, անշուշտ, սահմանափակում է շարադասական բաղադրիչների փոխասավորության տարրերակային բազմազանությունը:

<sup>1</sup> Տե՛ս Ս. Հայրապետյան, «Հատուկ հնչերանգով նախադասությունների շարադասական կաղղապարները դասական գրաբարում, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ 5, Գյումրի, 2002, էջ 40:

<sup>2</sup> Նույնը:

Մյուս կողմից է, քանի որ հրամայական նախադասությունների մեջ հնչերանգային բարձրակետում ստորոգյան է, որովհետև նրանով է արտահայտվում հրամանը («Ապաշտեա՛ դու ի շարեացդ քոց յայդցանէ», «Պատմեցէ՛ ի հեթանոս զգործս նոր»), ապա այն իրք տրամաբանական շեշտի կրող, սովորաբար ձգտում է դեպի նախադասության սկիզբ, որտեղ հրամանի ուժն ամենաբարձրն է, մանականդ կոչականի բացակայության դեպքում։ Սրան հակառակ՝ հարցական նախադասություններում հարցական հնչերանգը կարող է իր վրա կրել նախադասության անդամ կամ ոչ անդամ յուրաքանչյուր շարադասական բաղադրիչ, ինչպես օրինակ՝

Ինքն իսկ իրովի չկարէ՞ց զերկին և զերկիր...առնել /Եզն., 116/: *Օրէ՞նքն մեր պատճառք իցեն անվաստակ լինելոյ առաջի քո /Եղ., 92/:* *Ա՞յս հատուցումն եղեւ ինձ /Բուզ., 224/:* Կատարեալն յումնէ՞ կարօտանայր խնդրել զորդի /Եզն., 117/: ...արդ զտարերս աստուա՞ծու խոստովանիք /Եղ., 110/: Եւ արդ ո՞չ արդեօք առաւել աստանօր զարմացին ի վերայ մերոյ ճշմարտութեանս /ՄԽՊՀ, 85/: *Մի՞նչ իրեկ միայն Աստուած իցէ եւ հեթանոսաց ոչ /ն. տ., 169/ և այլն։*

Ընդ որում, հարցում արտահայտող միավորն առաջադասվելու ընդգծված միտում ունի, իսկ քանի որ այդ դերով կարող է հանդես գալ, ինչպես նախադասություն կազմող բառերից յուրաքանչյուրը, բնականաբար հարցական նախադասություններում շարադասական բաղադրիչների փոխադասվորությունը զգալի չափով կախված է հարցում արտահայտող բառի ինչպես դիրքից, այնպես էլ նախադասության մեջ նրա շարահյուսական գործառությունից։ Այսպես, եթե ստորոգյալի լրացումներից մեկն հարցական հնչերանգի կրողն է և այդ պատճառով տեղափոխվել է նախադասության սկիզբը, ապա ստորոգյալն իր միջուկի ամբողջականության պահպանման թեկադրանքով սովորաբար հարցում է նրան, ինչը կարող է առաջ բերել նախադասության գլխավոր անդամների շարադասության սովորական կարգի {SP}շրջում։ Հնան. «Արծուի վերանայ քով հրամանաւ» և «*Չո՞վ հրամանաւ վերանայ արծուի*» կամ «Որդիքն Խորայիլի առ Տէր աղաղակեցին» և «*Առ Տէ՞՞ր աղաղակեցին որդիքն Խորայիլի*»։ Այսպես է՝ հարցում արտահայտող առաջադաս ստորոգյալը ենթակայից սովորաբար ընդմիջարկվում է իր միջուկի բաղադրիչներով, ինչպես օրինակ՝ Գուցէ *շոշափիցէ՞ զիս հայր իմ /Ծնունդ., ԻԷ, 12/:* *Լինիցի՞ ինձ որդի Որմիզդ /Եզն., 92/ և այլն։*

Մեկ այլ իրողորդյան մասին ևս. Ինչպես հրամայական, այնպես էլ հարցական նախադասություններում հնչերանգային բարձրակետը սովորաբար մեկն է, այն լինում է հրաման կամ հարցում արտահայտող բաղադրիչի վրա։ Եվ միայն այն դեպքերում, եթե հրամայական կառույցի մեջ հրամայական բայից զատ առկա է նաև ենթական անվանող տրամարանորեն ընդգծուն կրչականը (երկրորդ դեմքի դերանուն ենթակայի հետ կամ առանց նրա), նախադասության մեջ առաջանում են զույգ հնչերանգային բարձրակետեր («Այլ դու, որդեակ իմ, զօրացի՛ր շնորհօք»։ «Փրկեա՛ զիս ի քշնամեաց իմոց, Աստուա՞ծ»։ «Երթա՛յր յինեն, ամիծեայր ի հուրմ յախտենական»։)։ Հարցական նախադասություններում միաժամանակ կարող են հանդես գալ հարցում արտահայտող մեկից ավելի բաղադրիչներ՝ պայմանավորելով երկու և ավելի արտասանական բարձրակետերի միաժամանակյա առկայությունը խնդրում առարկա կառույցներում։

Օրինակներ՝ *Որպիսի՞ համարձակութեանք և ո՞յր հրամանաւ իշխեցէք զործել զայդայի մահապարտութեան զործ/ՂՓՊՀ, 78/:* *Ո՞յր աստուած ո՞յր աստուծոյ արարածոց խնամակալ լիներ /Եզն., 214/:* Իսկ այդպիսի վաճառաց ո՞յր ուրուք զի՞նչ գին բարից /Ազար., 14/։ Զի՞ ելիք յանապատն տեսանել՝ զեղե՞զմ շարժուն ի հողմոյ /Լուկ., Է, 24/ և այլն։

Համամիտ լիներով այն մտքին, որ հարցական նախադասությունների շարադասությունն էականորեն տարրելովում է պատմողական նախադասությունների շարադասությունից, քանի որ կառուցվում է ըստ հարցում արտահայտող բառի,<sup>3</sup> տարրերակում և առանձին - առանձին ենք ներկայացնում հարցական բառով և առանց հարցական բառի նախադասությունները՝ նկատի ունենալով, որ դրանք դրասորում են շարադասական նկատելի յուրահատկություններ։

<sup>3</sup> Վ. Առաք Ելլա Ա, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Եր., 1975, էջ 91-92։

1. Գրաբարի ամենագործուն հարցական բառերն են՝ *զիս՞րդ, ընդէ՞ր, զի՞, արդէ՞ք, իցէ՞, իցէ՞ արդեօք, ո՞վ, ո՞վ ոք, զի՞նչ, որպէ՞ս, ի՞որ, որքա՞ն, ու՞ր, ուստի՞ն* և այլն: Ի դեպ, շարադասության տեսակետից կարևոր նշանակություն ունի հարցական բառերի խոսքիմասային պատկանելությունը: Դերանուն կամ մակրայ հարցական բառերն իրենց խոսքիմասային իմաստների շնորհիվ նախադասության մեջ կարող են հանդես գալ ամենատարբեր շարադյուսական պաշտոններով (ներակա, ստորգելի, ոռոշիչ, հատկացուցիչ, խնդիր, պարագա և այլն): Հետևաբար, փոքրաքանակ բացառություններով հանդերձ, գորեք միշտ դրվելով հարցական նախադասությունների սկզբում, դրանք՝ իրեն որոշիչներ, սովորաբար դեպի իրենց են ճգում որոշյալներին (Զի՞նչ ինչ վճառ գործեալ է իմ /Եղ.,166/: Տե՛ր, զի՞նչ երաման տացես ծառայի քում /Եթու,Ե, 15/), իրեն հատկացուցիչներ՝ իրենց հատկացյալներին (Ո՞յր գուստը եւ դու /Ծննդ.,Ի-Դ, 47/: Ո՞յր ասսուած ո՞յր ասսուածոյ արարածոց խնամակալ լիներ/Եզմ.,214/), իրեն խընդիմներ կամ պարագաներ՝ իրենց լրացյամերին (Հնդէ՞ր ենյժ զնոսա ի կրիս ընդ միմեան /Եզմ.,62/: Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս..../ՄԽՊՀ, Բ, ծ/): Զի՞նչ հասուցուր մեր աստուածոցն փոխանակ այս մեծի յարթութեանս/Եղ.,36/), իրեն ենթականեր՝ իրենց ստորոգյաներին (Ո՞վ է Ասսուած յերկինս կամ յերկրի /Բ.Օրէն.,Գ,24 /: Ո՞ ծնաւ զիքս անձքի /Եզմ.,172/) և այլն: Խսկ այս հանգամանքը, հանողված կարելի է անդել, քիչ կարևորություն չի ներկայացնում նման նախադասությունների ամբողջական շառադասական պատկերի ձևավորման առումնվ:

1.1 Կան հարցական բառեր, որոնք նախադասության անդամ չեն, որովհետև վերաբերականներ են կամ շաղկապներ, այսինքն քուն հարցական բառեր են: Դասական գրաբարում վկայված են քուն հարցական բառով նախադասությունների մի քանի շարադասական մասնակաղապարներ: Նախ նշենք, որ քուն հարցական բառը գերազանցական դրվում է նախադասության սկզբում: Այն տպավորությունը, թե սովորաբար նրան հաջորդում է ստորոգյալը,<sup>4</sup> կարծում ենք՝ թվացյալ է և ստեղծվել է առավելապես զեղչված ենթակայով երկկազմ և բայական անդեն միակազմ կառույցների հիման վրա: Մինչդեռ քուն հարցական բառով երկկազմ լրիվ նախադասություններում, որոնք բավականին շատ են գրաբարում, մեր մանրազնին դիտարկումներով՝ ամենահաճախադապն հանդիպող շարադասական մասնակաղապարի մեջ հարցական բառին անմիջապես հաջորդող ենթական է, ապա նոր միայն ստորոգյալն իր լրացումներով, եթե այդպիսի առկա են նախադասության մեջ ({Հարց. բառ→Տ→Պ→ՕկամԱ}):

Օրինակներ՝ Ո՞չ ապարէն ինքն տեսցէ զճանապարհ իմ /Յօր,ԼԱ,4/: Ո՞չ ապարէն արհավիրը նորա զարդութեցուցանեն զձեզ /ն. տ.,Ժ-Գ,11/: Ո՞չ ահաւադիկ երկիրը ամենայն առաջի քո է /Ծննդ.,Ժ-Գ,9/: Ո՞չ ապարէն նա ասաց ցիս /ն.տ.,Ի,5/: Սի՞թէ ես յուցայ զամենայն ժողովուրու զայս /Ժուլի,ԺԱ,12/: Սի՞թէ դարձեալ որդիր իցեն յորովայնի իմում /Հոռոր.,Ա,11/: Սի՞թէ օրէնքն մեր դատեն զմարդ /Յօհ.,Է,53/: Ո՞չ ապարէն ոգի առաւել է քան զերակուր /Մատք.,Ջ,25/: Սի՞թէ նա որ իցէ շահապետ գերեզմանաց /Ազար.,42/ և այլն:

Զիչ չեն այն դեպքերը, երբ վերոհիշյալ շարադասական մասնակաղապարում ենթական իրեն հարադրվող և, նաև, իսկ և այլ բառերի օգնությամբ տրամարանորեն լընդզված վիճակում է, ինչպես Սի՞թէ և դուք կամիր աշակերտի նմա /Յօհ.,Թ,27/, Սի՞թէ և մեր կոյըր իցեմք /ն.տ.,41/, Ո՞չ ես իսկ տեսի զեզ ի պարտիզի անդ ընդ նմա /ն.տ.,Ժ-Ը,26/: Ո՞չ ապարէն և մաքսաւոր զնոյն գործեն /Մատք.,Ե,46/ և այլն:

1.2 Թեև համեմատաբար սակավ, սակայն հանդիպում է նաև այն շարադասական մասնակաղապարը, ({Հարց. բառ→Տ→ՕկամԱ→Պ}), որում ստորոգյալը ընդմիջարկված է ենթակայից իր լրացումներով և եզրափակում է նախադասությունը, ինչի շնորհիվ նկատելի տրամարանական ընդգծվածություն են ստանում նախադաս խընդիմները կամ պարագաները ի հաշիվ նախադասությունը եզրափակող ստորոգյալի (Զիս՞րդ թերակատար զիսրիդուրդն հայրենի իմացաւ /Եզմ.,108/: Ո՞չ ապարէն ինքն ծագք երկուց դանգաց վաճառիմ /Շուկ.,Ժ-Բ,6/): Սա առավել նկատելի է մանականդ ենթակայի զեղչման դեպքում (Հնդէ՞ր ի գործելեաց չարեացն վրէժս պահանջէ /Եզմ.,30/: Ո՞չ ապարէն իրեն զօտարուիս համարեալ եմք /Ծննդ.,ԼԱ,15/ և այլն):

<sup>4</sup> Առ առ քելլա և, նշվ. աշխա, էջ 92:

Մեր հիմ գրականության մեջ նախադասության ամենավերջում ընկած ստորագյալ՝ իքրև խոսքին վայելչություն հաղորդող շարադասական հնար, ոճական ինքնատիպ միջոց, որին պարտավոր էին տիրապետել քերթության արվեստին քաջատեղյակները, հիմնականում զախս է քարգմանական գործերից, թեև վկայված է նաև ինքնուրույն երկերում (Եզնիկ, Բուզանճ) և հատկապես Խորենացու մոտ: Ընկենելով նախադասության վերջը՝ ստորոգյալը մի տեսակ դրւու է մնում ուշադրությունից:

Օրինակներ՝ Զի՞՞ արդեօք և մեղադրություն մեր այնպիսնեացն ի ճահ պատահից /ՄԽՊՀ,Ա,Գ/: Սի՞՞ պատճառ շարեաց զՏքն պարտ ից իմանալ /Եզն.,38/: Ո՞չ ապարէն իքրև զօտարութիս համարեալ եմք նմա /Ծննդ.,ԼԱ,15/: Ո՞չ ապարէն ի վերայ աշտանակի դմիցի /Մարկ.,Դ,21/: Ո՞չ ապարէն երկոքին ի խորխորատ ամկանիցին /Ղուկ.,Զ,39/:

1.3 Երբ բուն հարցական բառին հաջորդող ստորոգյալն է, այդպիսի հարցական նախադասությունների համար հիմնականն այն շարադասական նախադասության է, որում ստորոգյալի շորջն իր միջուկի բաղադրիչներն են՝ նախադաս կամ հետադաս, և հետո միայն ենթական, որն համախ եղբափակում է նախադասությունը՝ մնալով տրամարանորեն աննկատելի (Հարց. բառ→ՕկամԱ→Պ→ՕկամԱ→Տ):

Օրինակներ՝ Սի՞՞ ի Գաղլիել զարց ից Քրիստո /Յօհ.,Է,41/: Սի՞՞ առ տէրն քռ և առ քեզ առաքեաց զիս տէրն իմ /Դ.Թագ.,ԺԸ,27/: Սի՞՞ փրկեցին զնոսա աստուածք ազգաց /Ա.Ա.,ԺԸ,12/: Ո՞չ ապարէն իքրև զփորձութիւն են վարք մարդոյ ի վերայ երկրի /Յօհ.,Գ,1/: Սի՞՞ տևարանայցէ առ յԱստծոյ բան /Ծննդ.,ԺԸ,14/: Սի՞՞ ընդ Մովսիսի միայն խօսեցաւ տէր /Թիգ,ԺԸ,2/: Սի՞՞ յաւիտենից մերժեացէ զիս Տէր /Սաղմ.,ՀԶ,8/: Ո՞չ ապարէն ի սրտնուրեան նորա արգելաւ արեգակն /Էկղ.,ԽԶ,5/: Ո՞չ իմն լի են երկինք և երկիր /Ազար.,281/ և այլն:

1.4 Եվ համեմատարար քիչ են համափում այսպիսի նախադասությունների այն շարադասական տարրերակները, որոնցում ենթական անմիջապես հաջորդում է ստորոգյալին՝ ընկենելով նրա միջուկի մեջ (Հարց. բառ→Պ→Տ→ՕկամԱ). ինչպես օրինակ՝ Սի՞՞ պահապան իցեմ եւ եղբօրն իմոյ /Ծննդ.,Դ,9/: Ո՞չ ապարէն իքրև զփորձութիւն են վարք մարդոյ ի վերայ երկրի /Ա.Ա.,Է,1/: Սի՞՞ կարիցէ կոյր կուրի առաջնորդել /Ղուկ.,Զ,39/: Սի՞՞ վերանայցէ վայստատ առանց փայտատ առանց փայտահատի /Շաայի,Ժ,16/: Սի՞՞ հանիցտ ոք զկորուատած սկայի /Ա.Ա.,ԽԸ,24/ և այլն:

1.5 Իսկ ենթակայի զեղչնան դեպքերում բուն հարցական բառով նախադասությունները գրեթե հավասարաշափ դրսուրկում են «Հարց. բառ→Ստորոգյալ→Խնդիր կամ պարագա» (Հարց. բառ→Պ→ՕկամԱ) մասնակաղապարով (ինչպես՝ Սի՞՞ սպանանել կամիցին զիս /Գործք,Է,28/): կամ «Հարց. բառ→Խնդիր կամ պարագա→Ստորոգյալ» (Հարց. բառ→ՕկամԱ→Պ) մասնակաղապարով, որում ստորոգյալին նախորդող խնդիրը կամ պարագան տրամարանորեն ընդգծված են, նաև ավանդն նախադասությունը եղբափակող նույնատիպ այլ լրացումների առկայության դեպքում:

Օրինակներ՝ Ո՞չ ապարէն ի վերայ աշտանակի դմիցի /Մարկ.,Դ,21/: Ո՞չ ապարէն և ընդ մեզ խօսեցաւ /Թիգ,ԺԸ,2/: Սի՞՞ զայմ եւս կարիցեն ասել /Եզն.,161/: Սի՞՞ ի սփիտու հերանուաց երբայցէ /Յօհ.,Է,35/: Եւ արդ ո՞չ արդեօք առաւել աստանօր զարմացիս ի վերայ մերոյ ծշմարտութեան /ՄԽՊՀ,Բ,իա/ և այլն:

1.6 Եվ վերջապես, բուն հարցական բառով նախադասությունների՝ դասական գրաբարում վկայված մեկ այլ շարադասական մասնակաղապարի մասին. նկատի ունենք այն թերի նախադասությունները, որոնց մեջ ենթակայից բացի զեղչված է նաև ստորոգյալը, իսկ նրա միջուկի խնդիր կամ պարագա լրացումներն առկա են: Այսպիսի կառույցներն ունեն շարադասական բաղադրիչների բացարձակ կայուն և անխախտ հաջորդականություն՝ «Հարց. բառ→Խնդիր կամ պարագա» (Հարց. բառ→ՕկամԱ): Օրինակ՝ Ո՞չ ապարէն (դմիցին) վասն կարծելոյ շարեացն /Եզն.,59/:

1.7 Եզակի են նաև այն դեպքերը, երբ բուն հարցական բառը ոչ թե զիսավորում է նախադասությունը, այլ գտնվում է նրա միջնամասում: Կարելի է կարծել, որ պատճառը մեկ այլ շարադասական բաղադրիչը տրամարանորեն շեշտելու նպատակով նախադասության սկիզբ տանելու է, ինչպես՝ Եւ ինչք նոցա եւ անասունք նոցա եւ շորքուտանիք նոցա ոչ ապարէն մեր լինիցի /Ծննդ.,ԼԴ,23/: Իսկ փողոց մի՞՞ եղջիւր ինչ զոյիցէ /Ազար.,406/ և այլն:

1.8 Մեր հաշվումներով՝ բուն հարցական բառով նախադասություններին գրաքարում քանակապես գրեթե տասն անգամ գերազանցում են այն հարցական նախադասությունները, որոնցում հարցում արտահայտող բաղադրիչի դերում հանդես են զալիս հարցական դերանուններ կամ մակրայներ: Վերջիններս, ի տարրերություն բուն հարցական բառերի, ոչ միայն նախադասության անդամ հանդիսացող շարադասական բաղադրիչներ են, այլև, որ քննվող հարցի տեսակետից էական նշանակություն ունի, առաջադասվելու ընդգծված միտումով հանդերձ՝ համեմատաբար ավելի շարժունակ են: Դասական գրաքարում բազմարիվ են այն նախադասությունները, որոնցում հարցական դերանունները կամ մակրայները հանդես են զալիս կառույցի միջնամասում կամ նույնիսկ վերջում, ինչպես օրինակ՝ Այլ դու, ով մեծով ի գիտութեանն Աստուծոյ, առ ինչ արդեօք երանայեսես /Եղ., 8/: Զայլ արարածոցն ընդէ՞՞ մաղթէ գերկրպագորիխն հերանութեան /Եզմ., 88/: Եւ ատամունքն հնդիկին ուստի՞ իցեն այնչափ սպիտակ /Ա.տ., 126/: Եւ զինրինուրդս քո ո՞վ զիտեաց /Խնաստ., Թ., 15/: Եւ գորութիւն բանից քո ո՞ հանդարտեսցէ /Յօր, Դ, 2/: Իսկ սա ո՞վ իցէ /Ղուկ., Թ., 9/ և այլն:

Մի կողմից սա, մյուս կողմից էլ՝ նախադասության ամենատարբեր անդամների շարադասական դերով այդ բառերի գործածվելը նման կառույցներում բաղադրիչների վոխդասավորության տարբերակային բազմազանության իմնական պատճառն են:

1.9 Հարցական դերանվամբ արտահայտված ենթական գրաքարում տպորաքար նախադասության սկզբում է: Այսպիսի նախադասությունները գերազանցապես հանդես են զալիս «Ենթակա→ստորոգյալ» ({S→P}) կամ ավելի ծավալուն «Ենթակա→ստորոգյալ→խնդիր կամ պարագա» ({S→P→ՕկամԱ}) շարադասական մասնակադապարներով:

Օրինակներ՝

*Ո՞ ներեաց պնդեաց դարձուցանել ի մի օրէնս մոգութեան /Եղ., 166/:* *Ո՞ ծնաւ զշիքս անձընի /Եզմ., 172/:* *Ո՞ եհան զայսալիսի երկրական անուան՝ զգիշակերս զիստակերս յերկինս /Ա.տ., 126/:* *Ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից լերանց և դաշտաց և մայրեաց /Եղ., 46/:* *Ո՞վ կշտամբեացէ զեեզ յազգացն կորուսելոց /Խնաստ., ԺԲ., 12/:* *Ո՞վ ետ քեզ զիշխանութինս այդ /Մարկ., ԺԱ., 28/:* *Ո՞վ ոք ի ձենց կամիցի շինել աշտարակ /Ղուկ., ԺԴ., 28/:* *Ո՞ կարէ բիծ դնել ընտրելոց Աստուծոյ /Կոր., 30/:*

Երբեմն այսպիսի շարադասությամբ հարցական նախադասությունները անմիջապես հաջորդում են իրար՝ կազմելով ընդարձակ հարակրկնական շարքեր, խոսքին տպառվ հուզապատահայտչական մեծ լիք, այն դարձնելով ավելի ազդեցիկ: Սա ոճական հնարանք է, որ բնորդ է մասնավորապես ճարտասանական հարցական նախադասություններին, որտեղ հարցին կամ պատասխան չի ակնկալվում, կամ էլ հարցնորդ ինքը նաև պատասխանողն է, ինչպես՝ *Ո՞վ այսուետեւ զմերս յարգիսցէ զուսումն, ո՞վ ուրախասցի ընդ յառաջադիմութիւն աշակերտիս, ո՞վ զիայրականն բարբառեսցի զուարծութիւն...., ո՞վ կարկեսցէ զյանդգնութիւն ընդդեմ առողջ վարդապետութեան ...., ո՞վ զնոսա ըմբերանեսցէ ...., ո՞վ մեզ յայստիկ ճատակցէ /ՍևՊՀ, Ողբ/ և այլն:*

1.10 Հաճախ ոչ թե ենթական, այլ նրա որոշիչ կամ հատկացուցիչ լրացումն է արտահայտված լինում որևէ հարցական դերանվամբ. *Ո՞ր բազաւոր երբեալ տայցէ պատերազմ ընդ այլում բազաւորի /Ղուկ., ԺԴ., 31/:* *Զի՞նչ գոյացութիւններին մահու ի միջի /Եղ., 66/:* *Ո՞ր մարդ է յերկրի, եթէ կարող է ընդդեմ դատանալ քում հրամանիդ /Ա.տ., 84/:* *Զի՞նչ որոշմունք իցեն միոյ ինոցանէ /Ազար., 268/:*

Երբեմն էլ այս մասնակադասպարներում կա նաև ենթակային նախադասավոր կոչական բաղադրիչ, որի առկայությամբ շարադասական բաղադրիչների հաջորդականության վերոհիշյալ կարգը, գրեթե տասն բացառության, անփոփոխ է. ինչպես՝ *Այլ դու՝ ո՞ կացոյց զիս դատաւոր կամ բաժանարար ի վերայ ձեր /Ղուկ., ԺԴ., 14/:* *Ծնունդը հժից՝ ո՞ եցոյց ձեզ փախչիլ ի բարկութեմն որ գալոց է /Մատք., Գ., 7/:* *Տէ՛ր՝ ո՞ կայցէ ի խորանի բում /Սաղմ., ԺԴ., 1/:* *Տէ՛ր, ո՞ հաւատաց լրոյ մերում /Եսայի, ԾԳ., 1/:*

1.11 Համեմատաբար սակավարիվ են այն նախադասությունները, որտեղ հարցական դերանուն ենթակային անմիջապես հաջորդում է որևէ խնդիր կամ պարագա՝ ընդմիջարկելով զիսավոր անդամների կից շարադասությունը ({S→ՕկամԱ→P}) շահադասական մասնակադասպար), ինչպես՝ *Ո՞վ առաւել սիրեսցէ զնա /Ղուկ., Է., 42/:* *Ո՞վ ոք առաջի նորա այնպէս ընդդիմացաւ /Էլու., ԽԶ., 48/:*

1.12 Եթե այսպիսի դիրքը ստորոգյալի լրացմանը որոշակի շեշտվածություն է հաղորդում, ապա ((ՕկամԱ→Տ→Պ}) շարադասական մասնակաղապարում, որտեղ լրացումը նախադասության սկզբում է՝ նույնիսկ հարցական դերանուն ենթակայից առաջ, այն իսկապես տրամաբանական շեշտի կրողն է. Եթի զօրութիւն բանից *png* ո՞ հանդարտեսցէ /Յօր, Դ, 2/: Իսկ արդ եթե յանիրաւ մամօնային չեղեք հաւատարիմք, զճմարիտն ծեղ ո՞ հաւատասացէ: Եթի յօտարին չեղեք հաւատարիմք, զճերն ո՞ տայցէ ծեղ /Նուկ., ԺԶ, 11-12/:

Ի դեպ, «Խնդիր→հարց. դերանուն ենթակա→ստորոգյալ» մասնակաղապարը դասական հայերենում երեխն կարող է գործածվել ոճարտահայտչական նկատելի գունավորմամբ, երբ բարդ կառույցի մեջ հանդես է գալիս խոսքը միօրինակությունից ազատող դերով՝ բարդության առաջին եզրում առկա «Հարց. դերանուն ենթակա→ստորոգյալ→խնդիր» շարադասական մասնակաղապարի հետ ձևավորելով շարադասական պեսախություն, ինչի շնորհիվ բարդության սկիզբն ու վերջը հավասարակշռվում են հարցական հնչերանգի ուժով. ինչպես՝ Ո՞ ծնաւ զշիք անձրևի, զեղեամն յերկինս ո՞ ծնաւ /Եզն., 172/:

1.13 Դասական հայերենի երկկազմ հարցական նախադասությունները սովորաբար արտահայտվում են «Քաղադրյալ ստորոգյալ→ենթակա» ({Պ→Տ}) շարադասական մասնակաղապարով, եթե հարցական դերանունը կամ մակրայր հանդես է գալիս ստորոգելիի դերում:

Օրինակներ՝ *Առ ի՞նչ է քո մեծ տրտոնութիւնդ /Եղ., 84/*: Ո՞ այն ոք իցէ հատուցանող վաստակոցն *png* /Ազար., 61/: Զի՞նչ են այս եօթն որոքը ոչխարացդ /Ծննդ., ԻԱ, 29/: *Առ իմ՞ իցէն այն անդրանկութիւնք /Ա.տ., ԻԵ, 32/*: Ո՞ւր են հաւատը ձեր /Նուկ., Ը, 25/: Ո՞վ են լերինքն այնոքիկ /Բուզ., 175/: Ու՞մ է վայ, ո՞՞մ են խոռվութիւնք, ո՞՞մ դատաստանք, ո՞՞մ դժնակուրինք, ո՞՞մ վեր տարապարտոց, և ո՞յր են կապուտակ անկողինք /Առակ., ԺԳ, 29/: Եթ ո՞ւր իցէն արդեօք անպական ուրախութիւնքն /Ազար., 62/:

Ի դեպ, այս մասնակաղապարում հաճախ առկա է նաև կոչական, որը որպես կանոն, կամ նախադասության սկզբում է (Եղրանք, ուստի էք դուք /Ծննդ., ԻԾ, 4/), կամ վերջուն (Ո՞ւր է յաղբութիւնք, ման, կամ ո՞ւր են խայրոցք քո, դժոխք /Ազար., 594/): Ո՞վ ես դու, որդեակ /Ա.տ., ԻԵ, 19/), բայց ոչ զիսավոր անդրաների միջև. Նույնը չի կարելի ասել, երբ ենթական զեղչված է. այս դեպքում կոչականը գերազանցապես եզրափակում է նախադասությունը. ինչպես՝ Ո՞ւր ես, Արան /Եզն., 60/: Զի՞ է, որդեակ /Ծննդ., ԻԲ, 7/ և այլն:

Հակառակը, երբ զիսավոր անդրաների հաջորդականության վերոհիշյալ կարգը շրջված է ({Տ→Պ}), դիտվում է սակավադեպ. ինչպես՝ Իսկ սա ո՞վ իցէ /Նուկ., Ժ, 9/: Զարիքս .... ուստի՞ իցէն /Եզն., 27/: Ընդ որում, այս երկու մասնակաղապարները երթևնըն միևնույն պարբերության մեջ ուղղակի հերթազայում են իրար՝ պատումն ազատելով շարադրանքի միապաղպարությունից (տես Յօհ., Ա, 20-22 և այլն): Հանդիպում են նաև դեպքեր, երբ ենթական ընկած է բաղադրյալ ստորոգյալի երկու բաղադրիչների արանքում. Զի՞ն այն բանը իցեն /Բուզ., 173/: Ո՞ւր աներկիլութիւնք քաջ հովուի է /ՂՓՊՀ, 199/: Իցէ՞ ոք ի ժամանակս նմանող մարգարեին Երեմիայի /Ա.տ., 200/:

1.14 Քազմաթիվ են այն դեպքերը, երբ հարցական դերանունները կամ մակրայները նախադասության մեջ հանդես են գալիս ստորոգյալի միջուկի խնդիր կամ պարագա լրացումների շարադրյասկան գործառույթով: Թվում է՝ նման խոսքիմասային արտահայտությունը, ինչպես նախորդ դեպքերում, այսուղեղ էլ նախադասության մեջ պիտի ապահովեր բայական անդրանի լրացման գերազանցապես սկզբնային դիրք: Թերևս իրոք այրախն է բայական միակազմ և զեղչված ենթականը երկկազմ նախադասություններում, որտեղ «Խնդիր/պարագա→ստորոգյալ» ({ՕկամԱ→Պ}) շարադասական մասնակաղապարը գրեթե բացարձակ դրսւորում ունի. ինչպես՝ Զի՞ գործես: Յո՞ երբաս: Չատ ավելի հաճախադեպ են այս կաղապարի ծավալուն տարբերակները՝ ստորոգյալի նախադաս և ենտադաս այլ լրացումներով:

Օրինակներ՝ Զիա՞րդ զնա նենգութեամք կախալ սպամանիցէն /Մարկ., ԺԴ, 1/: Զի՞ տեսանես զշիւ յական եղբօք քո /Նուկ., Զ, 41/: Ե՞րբ ի քնոյ զարքիցէն /Առակ., Զ, 9/: Ե՞րբ ուսանիցից զրազմութիւն անուանս աստուածոցն նոցա /Եղ., 112/: Զի՞նչ ասացից ցնոսա /Ելից., Դ, 1/: Ընդէ՞ր հարկանես զընկերդ /Ա.տ., 13/: Ընդէ՞ր եմոյժ զնոսա ի կոիս

լնդ միմեանս /Եզն.,62/: Ընդէ՞ր և յանձնանց իսկ ոչ ընտրէք զարժանն /Ղուկ.,ԺԲ,51/: Ո՞ւմ նմանեցուցոք զարքայորին Աստուծոյ, կամ որո՞վ առակաւ առակեցոք զնա /Մարկ.,Դ,30/: Եւ արդ զո՞ր հիմ առ ձեռն դմիցեն Աստուծոյ /Եզն.,22/: Զիա՞րդ իշխես պաշտել զԱստուծն այն /Ազար.,38/:

1.15 Ի դեպ, նկատեի է, որ այսպիսի երկկազմ հարցական նախադասություններում ենթակայի գեղջնան դեպքում համարյա կրկնակի չափով մեծանում է ենթական անվանող կոչականի գործածության հաճախականությունը: Ընդ որում, վերջինս, մեր հաշվումներով, գրեթե հավասարաշափ հանդես է զախս ինչպես նախադասության սկզբում՝ հարցական հնչերանզը կրող բայական լրացումից առաջ (Տէր, յո՞վ երթա /Յօվ.,ԺԳ,36/; Ո՞վ ազգ անհաւատ և թիւր, մինչև ցե՞րք անսայցեն ձեզ /Սատր.,ԺԵ,16/; Այդ իսրաէլացիք զի՞ զարմացեալ եք ի վերայ այսորիկ /Գործք,Բ,12/; Այր դու, զի՞ կաս զարմացեալ /Ազար.,741/), այնպես էլ նրանից անմիջապես հետո (Մինչև ցե՞րք, Տէր, մոռանաս զիս խապա /Սարմ.,ԺԲ,2/; Ընդէ՞ր, արքայ, ցայդ վայր միայն եսուր ընթեռնուլ /Եղ.,26/), իսկ համեմատարա սակավ դեպքերում՝ նաև ստորոգյալից հետո (Ընդէ՞ր հատուցանիցես ինձ, արքայ, զիստուցումն զայդ /Բ.Թագ.,ԺԹ,36/) կամ նույնիսկ նախադասության վերջում ինչպես՝ Մինչև յե՞րք անկեալ կաս, ո՞վ վաս /Առակ.,Զ,9/; Ընդէ՞ր եղեք ինձ թշնամի, Արշակ արքայ Հայոց /Բուզ.,217/:

1.16 Ակնհայտորեն եզակի են այս դեպքերը, երբ զեղչված ենթակայով երկկազմ հարցական նախադասություններում հարցական դերանուններով կամ մակրայներով արտահայտված բայական լրացումը թողնում է իր սկզբնային դիրքը՝ հայտնվելով նախադասության միջնամասում: Դա տեղի է ունենում տրամարանական շեշտն իր վրա կրող բայական մեկ այլ լրացման՝ նախադասության սկիզբ տեղաշարժվելու պատճառով. օրինակ՝ Յայս արքաստոցն ընդէ՞ր մատրէ զերկպապորիին հերանուութեան /Եզն.,88/։ Վասն այլցն զի՞ հոգայք /Ղուկ.,ԺԲ,26/։ Իսկ զժամանակս զայս զիա՞րդ ոչ փորձէք /Ա.Ա.,56/։ Մեօրակերպ զԱստուծ ի՞ն քարոզեցոք յօդապատ անդամովքս զանգեալ ի հողոյ /Ազար.,367/։

1.17 Եթե զեղչված ենթակայով երկկազմ հարցական նախադասություններում «Հարց. դերանվամք խնդիր/պարագա—ստորոգյալ» ({ՕկամԱ→Պ}) հաջորդականությունը գրեթե բացարձակ դրսւում ունի, ապա երկկազմ լրիվ նախադասությունների մի զգակի մասում (մոտ 35%) այդպիսի բայական լրացումը միջադաս է՝ դրված հիմնականում սկզբնային ենթակայի և ստորոգյալ արանքում: Նմանատիպ նախադասություններն ունեն «Ենթակա—հարց. դերանվամք խնդիր կամ պարագա—ստորոգյալ» ({Տ→ՕկամԱ→Պ}) շարադասական մասնականապարը:

Օրինակներ Դու ուստի՞ զաս /Յօր,Բ,2/։ Եւ բազուկ Տէառն ո՞ւմ հայտնեցան /Եսայի,ԺԳ,1/։ Որոքը ձեր ի՞ն հանհցեն /Ղուկ.,ԺԱ,19/։ Այլ դու, ո՞վ մնձո՞ւ ի զիսուրեան Աստուծոյ, առ ի՞նչ արդեօր հրամայեսցես /Եղ.,8/։ Ինքն յո՞ւ մարքէր ամփոփել /Եզն.,20/։ Հազար ամն ուստի՞ երևէր /Ա.Ա.,96/ և այլն:

Ավելի հաճախ այս մասնակալապարը կարող է ընդարձակվել ստորոգյալի այլ լրացումներով ևս, որոնք ստվրաբար եօրափակում են կառույցը ինչպես՝ Դուք ընդէ՞ր անցանէք զպատուիրանաւն Աստուծոյ՝ վասն ձերոյ առանդութեան /Սատր.,ԺԵ,3/։ Եւ արդ դուք զի՞ լուալ կայիք ի դարձուցանելոյ զարքայ /Բ.Թագ.,ԺԹ,10/։ Դուք լուսազենասք ընդէ՞ր յուղարկեցայք ընդ նոսա ի նոյն խառար /Եղ.,110/։ Փառքն յումերէ յացողեալ էին նման /Եզն.,96/։

Սակավ դեպքերում դրանք կարող են ընդգծման նպատակով առաջադասվել ստորոգյալին (Դուք զիա՞րդ զկնիք կուրացն կուրացարուք /Եղ.,110/։ Զրուանն զկարիճն Արիմն զիա՞րդ ծնամեր /Եզն.,98/։ Նա զիա՞րդ յառաջ քան զծնամելն դմեր նման ամուս Որմիզդ /Ա.Ա.,/։ Ես աւերակացս ո՞ւմ քազաւորեն /ՄԽՊՀ,Բ,կա/ կամ, նույնիսկ առաջ անցնելով ենթակայից, դրեւ նախադասության սկզբում (Յերեսաց քոց ես յո՞ւ փախեաց /Յօհ.,ԺԳ,36/):

1.18 Այնուհանդերձ դասական հայերենի երկկազմ լրիվ հարցական նախադասությունների գերակշիռ նասում հարցական դերանվամք կամ մակրայով արտահայտված բայական լրացումը սկզբնային դիրք ունի: Այսպիսի նախադասությունները գիսավոր անդամների փոխարարական վորության տեսակետից բաժանվում են գրեթե հավասարաբանակ երկու խմբերի:

Առաջինն այն շարադասական մասնակադապարն է, որում վերոհիշյալ բայական լրացմանը հաջորդում է ստորոգյալը, իսկ վերջինիս՝ ենթական: Ընդ որում, ենթական կարող է եզրափակել նախադասությունը: Կամ թէ քո՞վ հրամանաւ վերանայ արծուի /Յօր, ԼԺ, 27/: Ընդէ՞ր բնաւ գտանին ստացուածք անմտիճ /Առակ, ԺԵ, 16/: Ընդէ՞ր ընդ մարսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր /Մատր., Թ, 11/: Ո՞ւր դիտեաց եղորորդին քո /Երգ, Ե, 17/: Ի՞նչ զօրութիւն նորա /Եսան, ԺԶ, 5/: Վասն է՞՞ կարմիր են ձորձք քո /Եսայի, ԿԳ, 2/: Այնպիսի՞ արդեօք արար զնա Աստուած /Եզն., 42/: Յո՞ւրքայց դա /Յօհ., Է, 35/: Ուստի՞ ծնանիցին ողք ամպածիճը /Ազար., 269/: Չի՞նչ խնդրէ ի քէն Տէր, ո՞վ մարդ /Ա. Ա., 696/: Չի՞նչ գործեսցոր առք եղրարք /Գործք, Բ, 37/:

Այս շարադասական կադավարի ավելի ծավալուն տարրերակում ենթական նաև կարող է հայտնիկ ստորոգյալի միջուկի ներսում տրոնելով այդ միջուկի բաղադրիչների անմիջական կապը: Ինչպես օրինակ՝ Որո՞վ իշխանութեամբ գործես դու զայդ /Ղոկ., Բ, 2/: Որպէ՞ս մատնեցին զնա քահանայապետքն և իշխանքն մեր ի դատաստան մահու /Ա. Ա., ԽԴ, 20/: Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս հազարս ի հազարաց և թիւրս ի բիւրուց ընդ քաջազգոյ կոյս օրիորդիս Ալանաց /ՄԽՊՀ, Բ, ծ/։ Չի՞նչ հասուսցոր մեր աստուածոցն վիխանակ այս մեծի յաղութեանս /Եղ., 36/: Ո՞ւր զնաց եղորորդին քո գեղեցիկ ի կանայս /Երգ, Ե, 17/: Որո՞վ զօրութեամբ կամ որո՞վ անուամբ արարիք դուք զայս /Գործք, Դ, 7/: Յո՞ւր որովայնէ ելանիցեն գետք աղբերօն հանդերձ /Ազար., 269/ և այլն:

Չիչ չեն այն դեպքերը, երբ խոսքի ոճավորման նպատակով, ինչպես վերևում ասվեց, հաջորդող նախադասությունը շարադասորեն ներկայացնում է նախորդի շըզ-ված տարրերակը. ինչպես օրինակ՝ Յո՞ւրքայց ես յոգոյ քումն, կամ յերեսաց քոց ես յո՞ւ փախեայց /Ազար., 281/:

Երկրորդն այն շարադասական մասնակադապարն է, որում հարցական դերանվամբ կամ մակրայով արտահայտված բայական լրացմանը հաջորդում է ենթական, իսկ վերջինիս՝ ստորոգյալ՝ մենակ կամ իր խմբով. ինչպես օրինակ՝ Չի՞ Հերոնէս երկնչիր ի Յօհաննէ /Մարկ., Զ, 20/: Ընդէ՞ր սա զմեղաւորս ընդունի /Ղոկ., ԺԵ, 2/: Ընդէ՞ր դուք ընդ նոսա սոյրեցեալ տոշորեցայք /Եղ., 110/: Ուստի՞ օճն իմացաւ զիանգամանս չարին /Եզն., 38/: Չիա՞րդ բարույն արարած չարին արարածոց դայեակ մտեալ՝ սնուցիչ լինիցի /Ա. Ա., 52/: Կամ որպէ՞ս մարդ հողարեր՝ օրինակու Արարչին յաշխարի գայցէ /Ազար., 271/ և այլն:

Սակավ դեպքերում հարցական հնչերանգը կրող բայական լրացման և նրան հաջորդող ենթակայի միջև կարող է ընկած լինել մի այլ խնդիր կամ պարագա լրացում. Եւ ընդէ՞ր քստ նոցա քանիցն չարիքն ոչ լինէին աստուածք /Եզն., 26/: Ընդէ՞ր ի հնդիկս ոչ երբեք սպիտակ ծնաւ /Ա. Ա., 52/ և այլն:

2. Սուտավոր հաշվումներով՝ դասական հայերենում տասը հարցական նախադասություններից միայն երկուսն են առանց հասուկ հարցական բառի: Ընդ որում, ինչպես տեսանք, շարադասության առումով հարցական բառերով նախադասությունները ներկայացնում էին միանգամայն տարրեր պատկերներ: Նախադասության անդամ չիանդիսացող հարցական բառը՝ իրրև հարցական հնչերանգի կրող, գերազանցապես զրադեցնում էր նախադասության սկիզբը և հանարյա որևէ նշանակություն չուներ կառույցում շարադասական բաղադրիչների հաջորդականության կարգի ձևավորման տեսակետից: Մինչդեռ դերանուններով կամ մակրայններով արտահայտված հարցական բառերը, որ առաջադասվելու նոյն բացարձակ միտումը չունեն և համեմատաբար շարժունակ են, իրրև նախադասության անդամ շարադասական բաղադրիչներ, իրենց զրաված դիրքով էապես պայմանավորում էին կառույցի համապատասխան շարադասությունը: Այս տեսակետից ակնհայտ ընդհանրություն կա սրանց և ընդհանուր առմամբ փոքրաթիվ այն հարցական նախադասությունների միջև, որոնցում համապատասխան հնչերանգը դրստովում է ոչ թէ այդ նպատակին ծառայող հասուկ բառերով, այլ գոյականներով, ածականներով, թվականներով, բայերով և ոչ հարցական մակրայններով ու դերանուններով: Վերջիններս, նախադասության տարրեր անդամների դերում դամանալով հարցական հնչերանգի կրողներ, ամենևին էլ հակված չեն զրադեցնելու միայն նախադասության սկիզբը, և, ինչպես վկայում են բազմաթիվ բնագրային օրինակները, ունեն կառույցի մեջ ազատ տեղաշարժման բավականին մեծ հնարավորություններ: Ա-

վելին, եթե հարցական դերանուններն ընդհանրապես չեն դրվում նախադասությունը եզրափակող դիրքում, ապա նույնը չի կարելի ասել հարցումն արտահայտող գրյականների, բայց էրի կամ նյութական իմաստի տեր այլ բառերի մասին. ինչպես օրինակ՝ Գուշտ եկեալ յանկարծակի՝ գտանից գծեզ ի քո՞ն /Մարկ., ԺԳ, 36/: Տե՛ր, զազդ մի զանգես և զարդար կորուսանիցէ՞ն /Ծննդ., Ի, 4/ և այլն:

2.1 Առանց հասուկ հարցական բառի նախադասություններում յուրաքանչյուր անդամ կարող է կրել հարցական հնչերանգը, այնուհանդերձ այն, որեմն նաև տրամարանական շեշտը, մեծամասամբ ստորոգյալի վրա է: Թեև քիչ, բայց հանդիպում են այդպիսի ստորոգյալի՝ նախադասությունը եզրափակող գործառություններ՝ տրամաբանորեն չեղոր առաջարար ենթակայուլ ( {S→P} շարադասական մասնակալապար). Եւ դու վրկիցի՞ն /Դ. Ծագ., ԺԹ, 12/, Մերմն յառաջազոյն ցանիցի՞ /Եսայի, ԲԲ, 24/) կամ ավելի ծավալում ( {S→ՕկամԱ→P} ) մասնակալապարով, որում տրամաբանորեն շեշտակի ստորոգյալն ունի նաև յնձիք կամ պարագա լրացում. ինչպես օրինակ՝ Բայց իմքն երէ իցէ և երէ չիցէ՝ զայն ո՞չ զիտէ /Եզն., 12/, Չարիքն....անձի՞նք իմչ իցնմ /ն. տ., 24/, Ես գրագաւորդ ձեր ի խա՞չ հանիցեմ /Յօհ., ԹԺ, 15/:

2.2 Ավելի հաճախ այդպիսի ստորոգյալը նախադասության միջնամասում է: Այս դեպքում տրամաբանորեն աննշանակ են նախադասության ոչ միայն սկիզբը, այլև վերջը, որուեղ կարող են հայտնվել ինչպես ենթական, այնպես էլ ստորոգյալի որևէ լրացում ( {S→P→ՕկամԱ} և {ՕկամԱ→P→S} մասնակալապարներ): Օրինակներ՝ Դու զերիս աւտրու կանգնե՞ն սա /Յօհ., Բ, 20/: Դու հաւատու՞ն յՈրդի Աստուծոյ /ն. տ., Բ, 35/: Վարդապայտն ձեր ո՞չ տայ զերկդրանեանն /Մատր., ԺԴ, 7/: Իսկ որդի մարդոյ եկեալ գտանիցէ՝ արդեօր հաւատու յերկիք /Նուկ., ԺԸ, 8/: Դու արդեօր ո՞չ յիշեսցես զշարիսն /Ազար., 245/: Որ տացէ՞ք նուզ ձայն /Յօր., Է, 1/: Արդ զգիրս զիտէ՞ սա /Յօհ., Է, 15/:

Սրան հակառակ՝ նախադասության սկիզբը ուժին է հնչվում, եթե հարցումն իր վրա առնող միջադաս ստորոգյալին նախադասության ոչ միայն սկիզբը, այլև վերջը, որուեղ կարող են հայտնվել ինչպես ենթական. ինչպես՝ Ո՞վ ի ամենայն նենգութեամբ և խորամանկութեամբ, որդի՝ սատանայի, թշնամի՝ ամենայն արդադութեամ՝ ո՞չ լրես ի թիւրելոյ զանապարհ Տեան զուղիս /Գործք, ԺԳ, 10/: Կեղծաւորք՝ իրաքանչիւր ոք ի ձենց ի շարարու ո՞չ արձակէ զեզն իր կամ զէշ ի նարոյ /ն. տ., ԺԳ, 15/:

2.3 Սակայն հարցական հնչերանգը կրող ստորոգյալի համար նախընտրելին, անշուշտ, նախադասության սկիզբն է (ՄՇդ է ուրախութիւնն /Ազար., 105/, Գիտէ՞ր Աստուած /Եզն., 44/): Կառույցի ընդարձակման դեպքում ենթական կարող է ոչ միայն եզրափակել նախադասությունը, այլև հայտնվել ստորոգյալի միջուկի ներսում, նաև ստորոգյալի բաղադրիչների միջև ( {P→ՕկամԱ→S} և {P→S→ՕկամԱ} շարադասական մասնակալապարներ). ինչպես՝ Հայա՞նք ինչ ընդ միմեան էին ընտրինքն /Եզն., 28/: Մարմնաւո՞ր էին արդեօր դիրք /ն. տ., 82/: Գտանիցի՞ն իշացուք ի Բարիլնի /ն. տ., 80/: Եւ չիցէ՞ արդեօր հատեալ յոյս կենաց մերոց ի նամնեն /Ազար., 245/: Կամ թէ կեցցէ՞ արդեօր մարդ լոկ միօրեայ ժամանակի յանհնարին ի խոր վիրապի անդ /ն. տ., 239/: Ծրարիցէ՞ ոք զիուր ի գոզ /Մաղմ., Ղ, 6/: Ո՞չ երկիցես դու յերկիւլտ զիշերոյ /ն. տ., 6/: Մի՞ կոչեաց Տեր զերիս բագաւոր տալ զնոսա ի ձես Մովարայ /Դ. Ծագ., Գ, 14/: Չիցէ՞ն քովք դորա աստ առ նոզ /Մարկ., Զ, 3/: Իցն՞ն ի դիւաց կէսք մարմնաւորք /Եզն., 82/: Ո՞չ դու երախայ էիր /Բուզ., 276/: Ո՞չ դու ամրացուցէր զարտաքին նորա և զներքին տան նորա /Յօր., Ա, 10/: Ո՞չ ձեռն իմ արար զայս ամենայն /Գործք, Է, 50/: Ո՞չ այդ Մուշեղն է /Բուզ., 243/ և այլն:

Ինչպես վերևում արդեն ասվել է, հաճախ, հատկապես բարդ կառույցի եզրերի միջև հարցման հնչերանգի ուժը հավասարաշներու նպատակով այդ հնչերանգը կրող ստորոգյալները գրավում են տրամագծորեն հակառակ դիրքեր՝ գրալիցներով առաջին նախադասության սկիզբը և երկրորդի վերջը. ինչպես՝ Ծրարիցէ՞ ոք զիուր ի գոզ և զիանդերձն ո՞չ այրիցէ: Կամ զնայցէ՞ ոք ի վերայ կայծականաց իրոյ և զուս իր ո՞չ խարշիցէ /Մաղմ., Ղ, 6/:

2.4 Ենթակայի զեղչնան դեպքում հարցում արտահայտող ստորոգյալը հիմնականում նախադասության սկզբում է՝ իր լրացումներից առաջ. ինչպես օրինակ՝ Արդ ուսուցանիցէ՞ք զպատիր խարեւորին մոզաց /Եղ., 110/: Նայեցա՞ր նորօք քովք ընդ ծառայ իմ ընդ Յօր /Յօր., Ա, 8/: Անկանիցի՞ն ի ձեռն ամբլպատիր /Դատ., ԺԵ, 18/: Յաւեցո՞ք միւսանգամ ելանելի պատերազմի ընդ որդիսն Բենիամինի եղբօր մերում /ն. տ., 28/: Կա՞յ

յուստիք քո, պահե՞՞ղաշինս քո /Բուզ., 170/: *Տայցե՞՞ն մեզ գրողի վարդապետութիւն, և ո՞չ կալեալ ընդ մեզ ոհս, և ո՞չ արկածիցեալ զինզ յարդարն յուղի ճանապարհէն /Ազար., 245/:* *Տեսանե՞՞ն զաւետիս հրեշտակացն յօրեանս հովուացն /ն.տ., 393/:* Հակառակը, եթի հարցական հնչերանզը կրող ստորոգյալը նախադասության վերջում է՝ իր լրացումներից հետո ({{ՕկամԱ→P}}), քիչ է հանդիպում. ինչպես՝ Պատուիրանս զիտե՞՞ն /Մարկ., Ժ, 19/:

2.4 Բնագրերում հաճախ կարելի է հանդիպել բարդ կառույցների, որոնց առաջին եզրն ունի {P→ՕկամԱ}շարադասական մասնակադապարը՝ հարցում արտահայտող առաջադաս ստորոգյալի ուժեղ ընդգծմամբ, իսկ երկրորդ եզրը սկսվում է համեմատաբար բույլ հարցական հնչերանզ կրող երեկ կամ թէ շաղկապներով. *Լինե՞՞լ կցորդ կենաց իմոց, երեկ մեռանել տարապարսուց /Ազար., 100/:* *Առնե՞՞ն զկամս իմ, թէ ոչ պաշտեն զդիսն /ն.տ., 109/:* Ինչպես նկատվել է, երկրորդում ևս սովորաբար առկա է լինում նոյն մասնակադապարը, միայն թէ հարցական հնչերանզը ստորոգյալից փոխադրվում է շաղկապի վրա: Եթե առաջին եզրում վերոնշյալ հաջորդականությունը շրջվում է {ՕկամԱ→P}, ապա նույնը սովորաբար կատարվում է նաև երկրորդում. ինչպես՝ Դակի՞՞շ գործիցն արդեօք, եթե արձակ բանակեսցին. Շակատ առ ճակա՞՞տ գործիցն, եթե համագունդ ընդ մի տեղի դրդիցն /Եղ., 176/ և այլն:

2.5 Եթե հարցումն արտահայտվում է ստորոգյալի լրացմամբ, ապա նա սովորաբար նախադասության սկզբում է՝ իր լրացյալից առաջ (Տէ՞ր՝սո՞ մե՞՞զ ասացե՞ր զառակի այդ /Ղուկ., ԺԲ, 41/, Իսկ ի բռնաւորա՞ց արդեօք ի հարկէ մեռանիցի /Ազար., 460/), եզակի դեաբերում նաև՝ նախադասության վերջում (Գուցէ եկեալ յանկարծակի՝ զտա՞նից գծեզ ի քո՞ն /Մարկ., ԺԳ, 36/):

2.6 Եթե հարցման ուժը կենտրոնացած է ենթակայի վրա, ապա հարցական նախադասություններն իմմանկանում ունեն «Ենթակա→ստորոգյալ» և «Ենթակա→ստորոգյալ→խնդիր կամ պարագա» ({S→P} և {S→P→ՕկամԱ}) շարադասական մասնակադապարները: Օրինակներ՝ *Ա՞յս հասուցումնեղեն ինձ /Բուզ., 224/:* *Օրէ՞՞նք մեր պատճառք իցեն անվաստակ լինելոյ առաջի քո /Եղ., 92/:* *Արդ դո՞ւզ պարարիցէր զմարմինս ծեր ննա ի կերակուր /ն.տ., 110/:* *Դէ՞ ուրեմն հարաւ ի քեզ /Բուզ., 214/:* *Ե՞՞ս ծնայ զսոսա /Թուոց., ԺԱ, 12/:*

Հաճախ հարցում արտահայտող առաջադաս ենթական, որ առանց այդ էլ տրամարանորեն ընդգծված է, «գրաբարի վայելչություններից մեկի»<sup>5</sup> ավելացիր շրջման ոճական հնարանքի գործադրման շնորհիվ օժտվելով առանձնահատուկ արտահայտչականությամբ, այդ դիրքում վեր է ածկում նախադասությամբ հաղորդվող մտքի ամենակարևոր միավորի<sup>6</sup>, ինչպես՝ Դո՞ւ ես որ գալոցն ես /Ղուկ., Է, 19/: *Ո՞վ է որ մերձեցան յիս /ն.տ., Ը, 45/ և այլն:*

#### Համառոտագրություններ

**Ազար.** - *Ազարանգենայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914:*

**Բուզ.** - *Փաստակի Բիոգանձաւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:*

**Եզմ.** - *Եզմկայ վարդապետի Կողացոյ «Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914:*

**Եղ.** - *Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:*

**Կոր.** - *Կորյուն, Վարդ Սաշտոցի, Երևան, 1941:*

**ՂՓՊէ-** *Ղազարյա Փարսկացոյ Պատմութիւն Հայոց և Թուոց առ Վահան Սամկոննամ, Տփղիս, 1904:*

**ՄԽԴՀ-** *ՄԽԴՀի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:*

**Ս. Գրքի** (*Սատուածաշունչ մասնան Հնաց և Նորոց Կոտակարանաց, Կ. Պոլիս, 1895*) համառոտագրություններից՝ *Սուակը*. - *Սուակը Սողոմնի, Գործը - Գործը Սուաքեց, Դ. Թագ. - Գիրք չորրորդ Թագաւորաց, Դատ. - Գիրք Դատաւորաց, Ելից - Գիրք Ելից, Երգ. - Եղանց Երգոց, Եսայի - Մարգարեութիւն Եսայեայ, Եկղ. - Գիրք Եկղէսխասիկեայ, Թուոց - Գիրք Թուոց, Իմաստ. - Գիրք Իմաստութեան, Ծննդ. - Գիրք Ծննդոց, Ղուկ. - *Սրբոյ Անեսարանին Յիշասի Քրիստոսի ըստ Ղուկասու, Մատու. - Սրբոյ Անեսարանին Յիշասի Քրիստոսի ըստ Սաստրեսի, Մարկ. - Սրբոյ**

<sup>5</sup> Ա. Բ ա զ ր ա տ ո ն ի ի, Հայերէն քերականութիւն ի պէտու զարգացելոց, Վեճետիկ, 1852, էջ 444:

<sup>6</sup> Այդ մասին տես՝ Ս. Արենյան, Հայոց լեզվի տեսարյուն, Եր., 1965; Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերների պարզ նախադասության շարադասությունը, Եր., 1976, Ս. Հայրապետյան, Հայերների շարադասության ոճական հնարավորությունների շարք, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 3, 2000 և այլն:

*Աւետարանի Յիսուսի Քրիստոսի բառ Մարկոսի, Յեսու. - Գիրք Յեսուսի, Յօր - Գիրք Յօրայ, Յօհ.- Սրբոյ Աւետարանի Յիսուսի Քրիստոսի բառ Յօհաննու, Յաղմ. - Գիրք Սաղմոնաց:*

## **СЛОВОПОРЯДКОВЫЕ МОДЕЛИ ВОПРОСИТЕЛЬНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ КЛАССИЧЕСКОГО ГРАБАРА.**

*— Резюме —*

*— С. Айрапетян —*

В статье рассматриваются все словопорядковые модели вопросительных предложений в языке самостоятельных и переводных источников первой половины V века. Выявляются особенности порядка слов и взаимосвязь между вопросительной интонацией и словопорядковой организацией в данном типе предложений классического грабара.

Фиксируется частотность и активность применения в языке каждой из этих моделей порядка слов. Рассматриваются также характерные для грабара "плеонастическая инверсия" и некоторые другие стилистико-выразительные особенности словопорядка в вопросительных предложениях древнеармянского литературного языка.

## Խայիկ ԲԱԴԻԿՅԱՆ

### ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՌԱՋԱՅԱՄԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ<sup>1</sup>

Դարձվածաբանությունը՝ որպես լեզվաբանության առանձին գիտաճյուղ, այնքան էլ իին չէ: Թեև դարձվածքները՝ որպես լեզվական առանձնահատուկ երևոյթ, իրենց արմատներով գնում են դարերի խորքը, սակայն լեզվի զարգացման համեմատարար ուշ շրջանի արդյունք են՝ կապված մարդու լեզվանտածողության զարգացման ավելի բարձր մակարդակի հետ:

Տրամաբանությունն այն է, որ նախնական լեզվամտածողության շրջանում մարդու լեզուն խիստ աղքատիկ ու պարզունակ է եղել. արտաքին աշխարհն իր բազմարիվ կողմերով ու երևոյթներով արտացոլվել է լեզվի մեջ, յուրաքանչյուր առարկայի, գործողության ու հատկանիշի վերագրվել են համապատասխան բառեր: Մարդը նախ անվանել է իրեն շրջապատող առարկաներն ու երևոյթները, իր մարմնի մասերը (ծառ, քար, ջուր, արև, անձրև, ոտք, ձեռք, գլուխ և այլն), և լեզվի զարգացման սկզբնական փուլում հաղորդակցումը տեղի է ունեցել, այսպես կոչված, միաբառույթով, այսինքն՝ մի բառը մախսադասության դեր է կատարել. նույն բառի մեջ համատեղված է եղել ինչպես նրա հատկանիշը, այնպես էլ՝ գործողությունը:<sup>1</sup>

Բնականաբար, լեզվի այդ փուլում բառերը մենամասու են եղել: Հետազայում միայն, միանման (երբեմն էլ տարբեր) առարկաների ու երևոյթների միջև նմանություններ գտնելով, մարդը դրանք և նոյն բառերով է անվանել: Այսպիսով, աստիճանաբար բառերը ձեռք են բերել նաև տարբեր ինաստներ, որի հետևանքով էլ՝ բազմինասություն, ապա լեզվում հանդիս են եղել բառակապակցություններ, որոնք էլ հիմք են համուսացել դարձվածային կապակցությունների համար: Չափ հասկացություններ կողք-կողքի սկսել են հանդեն զալ ինչպես մենաբառույթով, այնպես էլ բառակապակցություններով. այսպես՝ դարմանել և դարման անել, երդվել և երդում ուտել (տալ), ծնրադմել և ծունը դմել (ծմկի վրա իջնել), արտասկել և արցունք բափել, ծեծվել և ծեծ ուտել, կամքջել և կամուրջ կապել և այլն: Ընդ որում, բառակապակցությանը արտահայտված տարբերակը, բառային հետ համեմատած, ավելի մեծ տարրունակություն և արտահայտչականություն ունի: Այսնիքն, եթե դարմանել-ը նշանակում է միայն բուժել, բժշկել, իսկ ծնրադմել-ը՝ միայն չորել, ապա դարման անել-ը բուժել ինասարդ հետ ձեռք է բերել նաև հարեւես լինել, սատար կանգնել, օգնել, հոգալ հոգալ, եթե ծնրադմել-ը նշանակում է ծմկի զալ, խոնարհվել մեկի կամ մի բանի առաջ, ապա ծունը դմել-ը նշանակում է նաև ծմկի զալով աղերսել, արտասկել, հնազանդվել, խնդրել և այլն: Այս ճանապարհով է բառակապակցությունները վերահսմասառավորվել են և ձեռք են բերել դարձվածի իմաստ:

Բնականաբար հասկանալի է, որ եթե դարձվածային բառակապակցությունների այս փուլում նրա կազմի մեջ եղած բառ-բաղադրիչները հիմնականում կամ մասնակիորեն պահպանում են իրենց իսկական իմաստները, ապա մարդու լեզվամտածողության ավելի բարձր փուլում նրանք նոր իմաստներ են ձեռք բերել, և ամբողջ բառակապակցությունը լինի կամ մասնակիորեն վերահսմասառավորվել է, այսինքն՝ նրա իմաստն այլև չի բնել իր բաղադրիչ բառերի իմաստների գումարից:

Դարձվածների առաջացման հարցում շափազանց մեծ է նաև մարդու կենսափորձը, բնությունն ու նրա երևոյթների ճանաչելը, կենդանական աշխարհը, տարբեր կենդանիների վարքագիծն ու նրանց յուրաքանչյուր տեսակի հատկանիշներն իմանալը: Մինչև մարդն իր կենսափորձով չիմանար, որ ձեռքով ձուկ բռնելիս անպայման պետք է նրան զիսից բռնի, չեր ստեղծվի ծուկը զիսից բռնել բառակապակցությունը, որը վերահսմասառավորվերով՝ այլև կապ չունի ծուկ բռնելու հետ, այլ նշանակում է

<sup>1</sup> Էդ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր. 1987, էջ 585:

**հիմնավոր, մտածված գործ բռնել:** Այդպես է՝ որևէ գործի անհնարին լինելը, որևէ հարցի չբուժելը պատկերավոր կերպով արտահայտելու համար ստեղծել է եղբ կրիան (ձուկը) ժամբ բարձրանա դարձվածը:

Եթե մարդը չխանար, որ կոկորդիլոսն իր մեջ կուտակված բունավոր նյութերը արտազատում է արցունքի տեսքով, չեր ստեղծի կոկորդիլոսի արցունքը բափել դարձվածը, որ նշանակում է կեղծ, ստու լաց լինել: Մարդը շատ լավ գիտեր կրակ առաջացնելու դժվարությունը և բնույթան մեջ ջրի առատ ու տարածված լինելը, որա համար էլ ստեղծել է կրակի զին (շատ բանկ) և ջրի զին (շատ էժան) դարձվածները: Կամ մարդն իր շրջապատում ու աղվեսի ու սպիտակ ազրավի չհանդիպելու հիմնավորումով է ստեղծել այդ դարձվածները, որ նշանակում են հազվադեպ, չճարվող բաներ:

Բնականարար, մարդու կողմից ստեղծված դարձվածները կազմվել են իրեն շրջապատող առարկաների ու իրեն ծանոթ երևոյթների հիմնան վրա. ննան դարձվածների կազմի մեջ մտնող բառերը (կամ նրանց մի մասը) իրենց խևական իմաստները գորեք չեն պահում, դրանք (կամ դրանց մի մասը) վերախմաստավորվում են ենթարկվելով լրիվ կամ մասնակի հմաստային փոխակերպման, ինչպես՝ կրակի զին, ջրի զին, բերանը ջուր առնել (յուել, չխոսել), բերանի գողի իմանալ (մեկի կարծիքը, մտադրությունը իմանալ), աչքին չերևալ (կորչել, հեռանալ), քիր ու մոռոր անել (մեկին արհամարիել, դեմքը ծոնել), ոտքը ոտքին գցել (հանգիստ, անհոգ վիճակում լինել, ոչ մի բանով չինտաքրքրվել), ականջին օդ անել (նշտապես հիշել, երբեք չնոռանալ) և այլն:

Լեզվամտածորթյան զարգացման ավելի բարձր մակարդակում, իր ավելի մեծացող կենսավորձի շնորհիվ մարդն իր բառապաշարը հարստացրել է՝ հասնելով վերացարկման ավելի բարձր աստիճանի: Դրա շնորհիվ ի հայտ են եկել արդեն բառակապակցություն-դարձվածներ, որոնց իմաստը բոլորովին չի բխել իրենց բաղադրիչ բառերի հմաստային գումարից: Այսպես օրինակ, ոչ մեկը չի կարող ասել, թե ինչ կապ կա հետևյալ դարձվածների և նրանց բաղադրիչների հմաստների միջև՝ մեկի բանցառունցը բար գցել, (ոչ ողղակի ճանապարհով մեկին ակնարկել, վիրավորել, հանդիմանել), գայի զիսին ավետարան կարդալ (մեկին ապարդյուն խորհուրդներ տալ, ջանալ ճիշտ ուղղությունը վրա բերել), ջրից չոր դուրս գալ (ասկում է ճարպիկ, խորամանկ, նեղ վիճակից, փորձանքից անվնաս դուրս ճողովորդ մարդկանց վերաբերյալ), փորորիկ մի բաժան ջրում (ոչ լուրջ պատճառով առաջացած իրարանցում, ոչնչից մեծ աղմուկ), մեկի փոխանքը կառու գցել (մեկին խիստ անհանգստացնել, տանջել) և այլն:

Նշենք մի հանգամանք ևս. ամբողջ դարձվածային կապակցության իմաստը կարող է այնքան հեռանալ իր բաղադրիչների հմաստների գումարից, որ մի կողմից անհանգստայի դառնա հասարակության լայն զանգվածների համար, մյուս կողմից՝ հասկանայի մնա մարդկանց մեղ շրջանակներում՝ որպես հարդրության միջոց: Լեզվում այսպես են առաջացել ծածկաբանությունները: Այսպես՝ կծիկը դնել դարձվածը լայն տարածում չունի, այն ստեղծվել է որպես նեղ դրույթունից, վտանգից ճողովորելու ծածկաբանություն (Տղենք, մեզ հետևում են՝ կծիկը դրինք, - շնչաց Հովհեկը): Պատը ծակ է ծածկաբանությունը նախսազուշացման բանաձն է (զգուշացիք, մեզ լսող կա, կամ մեր լեզուն հասկացող կա): Ծածկաբանություններ են նաև բարձր փոխել (երեխսա ունենալու նպատակով որիշ տղանարդու հետ կենացել), գլուխ ոտել (սպանել, նաև հելիությունը բնդիատել), եղանակը խառն է (ընտանիքում կամ հիմնարկում անհանդիսություն է տիրում) և այլն:

Լեզվաբանական գրականության մեջ դարձվածների առաջացման այս երևոյթը (երբ դարձվածային միավորի վերածվելով՝ բառակապակցությունը նոր իմաստ է ձեռք բերում բառերի վերահմաստավորման շնորհիվ) կոչվում է ֆրազեոլոգիческая де-ривация<sup>2</sup> դարձվածաբանական ածանցում,<sup>3</sup> որ չպետք է շփոթել բառակազմական ածանցման հետ:

<sup>2</sup> А. К у и и н, *Инверсия как явление фразеологической стилистики*, Л., 1975, А. Назарян, *Фразеология современного французского языка*, М., 1987.

<sup>3</sup> Ն. Մ ե լ ք ո ն յ ա ն, *Ֆրամսերենի դարձվածաբանության զարգացման վերլուծական միտումները*, «Քաներեր Երևանի համալսարանի», թիվ 2, Եր., 2002:

Այժմ տեսնենք, թե ինչպես են ստեղծվում դարձվածները. դրանք անհատակա՞ն, թե՞ կոլեկտիվ ստեղծագործություններ են: Այս խնդիրը սերտարձեն կապվում է բարի ծագման տեսությունների հետ:<sup>4</sup> Էդ. Աղայանը գրում է. «...նախնական արտադրողական կոլեկտիվի անդամները հավաքվել և միասին ստեղծել են այս կամ այն բառը: Ոչ, նրանք ստեղծագործել են բառեր այնպես, ինչպես ստեղծագործել ու ստեղծագործում են ժողովրդական երգերը, եասոր և այլն: Հայտնի է, որ ժողովրդական յուրաքանչյուր ստեղծագործություն իր ծագմանք կրում է անհատական բնույթ ... Մեկերը (ընդգծումներն իրենն են – ԽԲ) ստեղծագործում են, հասարակությունը յուրացնում է այն, մշակում ու զարգացնում է դարերի ընթացքում, դարձնում իր սեփականը.... ճիշտ այդպիսի պրոցես է ներկայացնում նաև բառերի (նախապես բառմտածությունների) ստեղծագործությունը» (ընդգծումները մերն են – ԽԲ):<sup>5</sup>

Բառերի նման՝ դարձվածներն ել ծագմանը անհատական բնույթ ունեն: Ծնվելով անհատների, մեկերի կողմից՝ դարձվածը ընդհանրանում է և դասենում ընդհանուրի սեփականությունը, և իր խոսքի ուժն ավելի սաստկացնելու, այն ավելի ազդեցիկ ու պատկերավոր դարձնելու, տվյալ անձնավորությանը կամ երևույթը ավելի դիպուկ գնահատելու նպատակով, ենթերև տվյալ իրավիճակից, խոսող վերիշշում ու վերարտադրում է արդեն պատրաստի լեզվական այդ միավորը՝ կամ բառակապակցության կամ նախադասության տեսքով:

Այսպիսով՝ դարձվածը գոյացել է մարդու՝ աշխարհաճաշողության և լեզվի զարգացման ավելի բարձր մակարդակում, երբ մարդն ի վիճակի էր վերացարկում կատարել, այսինքն՝ մտովի վերանալ առարկաների մի շաբթ հատկություններից ու հարաբերություններից և առանձնացնել դրանցից որևէ մեկը:<sup>6</sup>

Լեզվաբանների մեծ նասք դարձվածների առաջացումը պայմանավորված է համարում լեզվական նշանով. դարձվածը լեզվում հենց այնպես չի ստեղծվում, նրա ստեղծման համար անպայման հիմք ու նախադրյալներ են անհրաժեշտ. «Արտաքին աշխարհի առարկաների ու երևույթների (դեմուտանների) հետ ունեցած կապը ուղղակիորեն բխում է լեզվի նշանային բնույթից», - գրում է լեզվաբան Ս. Պոտերսյան:<sup>7</sup> «Ամեն մի դարձվածային միավոր, - գրում է Գ. Պերմյակովը, արտահայտում է մեկ միասնական հասկացություն, այսինքն իմշ-որ բանի նշան է ծառայում... Դարձվածային միավորի նշանային բնույթն առաջին հերթին այն հանգամանքն է, որով ապացուցվում է, որ դարձվածները առանձին առարկաների ու հարաբերությունների նշաններն են, և դա արտահայտվում է նրանց իմաստային և տրամարանական պահանջման»:<sup>8</sup>

Դարձվածի նշանային բնույթն է պատճառը, որ հաճախ համանման երևույթների վերաբերյալ տարրեր ժողովուրդներ դարձվածներ են ստեղծել՝ իրենց աշխարհագրական միջավայրի, կենցաղային պայմանների, ազգային սովորությունների, ինչպես նաև եղանական հաստուկ գործուների հանգույն: Այսպես, համանման երևույթը պատկերավոր ու տպավորիչ ներկայացնելու համար հայերենում ստեղծվել է մնացել եմ երկու բարի արանքում, իսկ ուստեղենում՝ մնացել եմ երկու կրակի արանքում (պատճառը ուստեղերի քար չունենալն է): Ուսիք մտածողությամբ սիրտը կարող է մինչև կը-բրունկներն ընկնել՝ սերծու ու պատճենու առաջնային գործունեությունը կամ լեղաճար է լինում, լեղին պատճենում է կամ հոգին կորեկի հատ է դառնում: Կամ ուսիք բանը կարող է ծխախոտ լինել՝ ծելո տաբակ, հայի բան՝ բուրդ ((բանս) (բանդ) բանը բուրդ է), ինչպես նաև՝ ուսիք համար՝ ծելո առևտությունը, հայի համար՝ բանը գլուխ բերել, բանը գլուխ զալ: Սասակի նիկար, հյուծված, տանջահար մարդուն ուստեղերը համեմատում են կատվի հետ՝ դրանակ կոտա, իսկ հայերը՝ ցամաք ձորի աղվեսի, կամ լղար բազու կամ ավելի պատկերավոր ատում են՝ քիրը բռնեն՝ հոգին կտա: Սովոր, կիսարարց, խիստ կարիքի մեջ եղած մարդու մասին ուստեղենում ստեղծվել է կլաստ (положить) զւել առ ու պոլկ դարձվածը, հայերենում՝ ատամի ժանգով ապրել, բերանը բանուն բռնել, պաղ

<sup>4</sup> Otto Eсперсен, Философия грамматики, М. 1958, А. Назарян, նշվ. աշխ.:

<sup>5</sup> Էդ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 595-596:

<sup>6</sup> Փիլիսոփայական բառարան (խմբ. Ս. Ռոգենտալի), Եր., 1975, էջ 404:

<sup>7</sup> Ա. Պօտենիայ, Ին լեկցիոն ու տեսությունների մասին, Խարկով, 1984, стр. 103.

<sup>8</sup> Г. Пермяков, От поговорки до сказки, М., 1970, стр. 34-35.

**թոնիք վրա նստել, շուն բակելով ապրել, քարին քացի տալով ապրել, օրվա հացի կառու լինել և այլն:**

Դարձվածի՝ որպես լեզվական նշանի հետ ամենից առաջ առնչվում են նրա ազգային բնույթն ու ազգային լեզվանուածողությունը: Ամեն մի դարձված կապված է այդ լեզուն կրող ժողովրդի ու նրա լեզվանուածողության հետ, պարունակում է տվյալ ազգի սովորույթներն ու ավանդույթներն և իննականում հարազատ է միայն այդ ազգին: «Ազգային առանձնահատկություններով է օժտված լեզուների դարձվածային համակարգը ամբողջությամբ», գրում է Վ. Գալր: <sup>9</sup>Հայտնի դարձվածարան Ա. Նազարյանն ավելացնում է՝ «Դարձվածարանության ազգային առանձնահատկությունները դրսորվել են նրա ուսումնասիրության բոլոր տեսանկյուններով»:<sup>10</sup>

Ծիծու է, հայոց լեզվի հարուստ դարձվածային ֆոնդի մեջ մտնում են նաև այլ լեզուներից կատարված փոխառություններ ու պատճենումներ, բայց դրանց տեսակառար կշիռը այնքան էլ մեծ չէ. կասկածից վեր է, որ հայերենի դարձվածների ճնշող մեծամասնությունը գոյացել է ազգային հիմքի վրա և հանդիսանում է հիմնավորց հայ ժողովրդի հոգևոր ու մշակութային, գիտական ու հասարակական կենսագործունեության պատուղ՝ նրա ստեղծագործական հանճարի արդյունքը:

Յուրաքանչյուր լեզվի դարձվածային միավորներում ամենից առաջ վճռական նշանակություն ունեն տվյալ լեզվի բառային կազմը, հատկապես նրա իմաստային հարուստությունն ու բառակազմական հնարավորությունները: Դարձվածները կազմվում են տվյալ լեզվի ներքին օրինաչափություններից բխող, այդ լեզվին հատուկ քերականական առանձնահատկություններով: Սակայն դարձվածների առաջացման ու տարածման գործում կարևոր նշանակություն ունեն նաև արտավեզվական գործուները: Ամեն մի լեզվում դարձվածների բովանդակության ձևակրոման համար հիմք են հանդիսացել տվյալ լեզուն կրող ժողովրդի պատճեռությունն ու ազգագրությունը, աշխարհագրությունը, կենդանական աշխարհն ու բնակիմայական պայմանները: Դարձվածներում ամենից առաջ արտացոլվում են տվյալ ժողովրդի հոգին ու հոգերանությունը, մտածելու և դատելու կարողությունները, նրա ինտելեկտը և այլն: Այսպես, Միքրիի ժողովուրդների լեզվում հարյուրավոր դարձվածներ կան՝ կապված ձյան տարբեր տեսակների, փոքրիկի ու սառուցի, ծառերի, անտառի ու փայտի, անտառային կենդանիների ու որսորդության հետ, իսկ հարավի ժողովուրդների մոտ դրանց մի մասը խպառ բացակայում է. սրանց մոտ էլ կան իրենց տարածքի, բնության ու կենդանական աշխարհի հետ կապված դարձվածներ, որոնք չկան հյուսիսի ժողովուրդների լեզվում:

Պայմանակրոված իրենց ազգային բնույթով՝ դարձվածների մեծ մասը անբարգմանելի է, որովհետո հասուն տվյալ ժողովրդի կյանքին ու լեզվանուածողությանը: Սակայն այդ անբարգմանելիությունը բացարձակորեն չի կարելի ընդունել, որովհետու ժողովուրդների լեզվանուածողությունների միջև չինական պարիսպ չկա: Դարձվածների մի մասը, իհարկե, բարգմանում է և պատճենվում, այլապես աշխարհի շատ ժողովուրդների սեփականությունը չին դառնա ին հունական ու լատինական, ինչպես նաև աստվածաշնչային բազմաթիվ դարձվածներ: Նույնիսկ որոշ դարձվածների մասին դժվար է ասել՝ դրանք պատճենումներով են անցել մի լեզվից մյուսին, թե տարբեր լեզուներում առաջացել են ինքնուրույնարար: Օրինակ՝ իրար հետ շուն ու կատու դառնալ (լինել) դարձվածը նոյն ինաստերով գործածում են նաև անզիացիները՝ cat and dog life (շուն ու կատովի կյանք), ֆրանսիացիները՝ vivre comme chien et chat, ուստերը՝ жить как кошка с собакой, կամ՝ մազից կախված լինել – ուստերեն՝ висеть (держаться) на волоске, անզիերեն՝ hang by on a thread, ֆրանսիերեն՝ ne tenir qu, a un cheveu.

Անառարկելի է, որ բարգմանարար են ամբողջ աշխարհի սեփականությունը դարձել անտիկ աշխարհի հետևյալ դարձվածներ՝ աքիլեսյան գարշապար, դանայիդյան տակառ, պրոլուստեսյան մահիծ, դամոլյան սուր, ավզյան ախտոներ, գորդյան հանգույց, պյուրոսյան հաղորանակ, Թեսիդայի կշեռք, Ռուրիկոնն անցնել, Բարոսի եր-

<sup>9</sup> В. Га к, Եսեզы о французском слове, М., 1966, стр. 249.

<sup>10</sup> А. Հազարյան, Աշվ. աշխ., էջ 41:

**Կըրպագու, քարոսյան խնջույքներ,** Մորփեոսի գիրկն ընկել, տրոյական ծի, առասության եղջյուր, սկզբիյան աշխատանք, դրակոնյան օրենքներ, Էրասի մենով խոցվել (սիրահարվել), ավետյաց երկիր, դեկիյան պատգամախոս (գուշակող), էլիսյան երկիր (անմահների երկիր), կաստելյան շուն (տաճ պահապան), եռմերոսյան ծիծաղ, քրիչ, կողոմրոսի ծու, տանտալոսյան տաճանքներ (շատ մոտիկ գտնվող նպատակին չհասնելուց առաջացած տաճանքներ), և դու Բրոտոս (մտերիմ, հարազատ նարդու դավաճանություն, պարսավաճ՝ ապերախտության դեմ) և այլն:

Թարգմանության միջոցով են լայն տարածում գտել նաև աստվածաշնչան դարձվածները՝ Աստծու զառ (Խորք), Աստծու տուն, Արամի որդի, Արամի զգեստով, Արամի և Եվայի ժամանակներից, արգելված պտուղ, քարելքներ աշտարակաշնություն, գայրակղության քար, եղենական խնձոր, քղենին պահողը կուտի նրա պտուղը, քղենու տերև, երկնային դրախտ, երկնային մանանա, իր խաչը կրել, Հուդայի համբույր, Ճեռքերը լվանալ, ճայն քարքառ հանապատի, Նոյյան տապան, նոյի աղավելի, նոյի ագռավ, Սողոմ-Գոնոր, փոս փորտող փոսը կրնկնի, քարերը հավաքելու ժամանակը, քավության նոյնագ և այլն:

Թարգմանաբար են տարածվել նաև հեղինակային ծագում ունեցող մի շարք դարձվածներ փորորկի մի քածակ ջրում (Սննդեսքյու), բոլոր ճանապարհները Հռոմ են տանում, կրակից շագանակներ հանել (Լաֆոնտեն), վերջին մոհիկան (Կուաթեր), երկու տիրոջ ծառա (Գոլդոն), լինել, թե՞ չինել, ժամանակը իր շավկից դուրս է եկել (Ծերսայիր), խավարի քազավորություն (Դորրուլուրով), արջի ծառայություն մատուցել, սայր տեղից չի շարժվում, սիրամարզի փետուրներով ագռավ (Կոլիով), կրակի վրա յուղ լցնել (Հորացիուս), պղտող ջրում ծուկ որսալ (Եզուսու), կոտրած տաշտակի առաջ կանգնել (Պուչկին) և այլն:

Դարձվածների ու արտահայտությունների մի փոքր խումբ էլ կա, որ տարրեր լեզուներում չի թարգմանվում, և չնայած օգտագործվում է լատիններենով, բայց դրանց իմաստները հասկանալի են, օրինակ՝ alma mater (մայր քու), vini, vidi, vici (եկա, տեսա, հաղթեցի), tabula rasa (մաքուր գրատախտակ), magister dixit (ուսուցչուին ասաց - ասել է), de facto, de jure (առկան և փաստացին), momento mori (այս բովենին, հենց իինա): Շնչու է, փիխառյալ ու պատճենված դարձվածները ցանկացած լեզվի դարձվածային համակարգի քաղաքրիչ մասն են կազմում, բայց ինչպես ամեն նի լեզվի, այնպես էլ հայոց լեզվի դարձվածների հարստության առաջացման հիմնական աղբյուրը հենց իմքը՝ մայր լեզուն է՝ իր զործառության բոլոր ոլորտներով՝ իր գրարարյան, միջին հայերենի, աշխարհաբարի շերտերով, ինչպես նաև քազմաքիվ նորակազմություններով, որոնցով այսօր հեղեղված է մեր զանգվածային լրատվության լեզուն: Բերենք դրանցից մի քանիսը միայն (դրանց մի մասը նոյնպես քարգմանաբար է անցել մեր լեզվին) արռող կրել, յուղոս արռո, արռող գրավել (Խոլել), ազատ արռոներ, արռոները փուլ զալ, արռող պահել, արռող կառչել, արռող պաշտել, փակուղի մտնել, փակուղուց դուրս զալ, խաղի մեջ մտնել, խաղից դուրս զալ, ճախ կոշիկը աջ ոտքը հագնել, զնացրից բոչելու ժամանակը, նավը լքել ոչ միայն խորտակվելիս, դրամի լվացում, երակ մտնել, մանկուրդ դառնալ, սատը ցնցուղ ընդունել, տանիք ունենալ, տակառ գլորել մեկի վրա, կանաչ լույս վատել (մեկի առաջ), մեր դեմ խաղ չկա, եղունգ ունես՝ լեզետիմությունը քրիփ, ոտքերը լեզետիմությանը չափով մեկնիր և այլն:

Այժմ համառոտակի նշենք այն աղբյուրներից մի քանիսը, որոնցից առաջացել են քնիկ հայկական դարձվածային միավորները:

Հասկանալի է, որ վաղնջական մարդն ի սկզբան պետք է իր կենցաղից ելնելով ստեղծել դարձվածները, ինչպես՝ անկողին ընկենել, քար քաշել, քացախի խմել, ճեռքերը ծալած նատել, չորս պատերի մեջ փակվել, օրվա հացի կարուտ մնալ, ականջին ող ամել, ջրի ճամփա դարձնել, հացի մեջ աղ չկա (մեկի), մեկի ասեղը թելել, տաճ վրա մոխիր մաղվել, ետևից կարմիր խնձոր ուղարկել, (մեկի) բուրդը քամուն տալ, ծուկը գիսից բռնել, էս խմնը շատ ջուր կվերցնի և այլն:

Սարդու կենցաղի անբաժան մասն են եղել հողագործությունն ու գյուղատնտեսությունը, հետևաբար այս բնագավառների հետ կապված դարձվածները նոյնպես գալիս են դարերի խորքից՝ կամք կալից հանել, (խոսակցության նյութը փոխել, շեղվել նյութից), կամն առնել՝ քարերն ընկենել (նոյն իմաստն ոնք), խոփը (գերանդին) քարին

**առնել,** իին դպրմանը քամուն տալ (անցած դեպքերը, խոսակցությունը անհարկի իիշել, պատմել), դպրմանի տակ ջուր, լուծին մոտ չգալ, (մեկի) կանաչ արտը հճճել, կապը քաշել, կապը կտրած, պարարտ հող ստեղծել, պատուղ ծառից հեռու ըթմկնել, նոյն սանրի կտավ, եզան համառություն, մի խուրծ խտող էշին քետի չեն ասի, սանդր ծեծողին դրխև ասել, ճիպուր կամին դմել (սկսած զործը կիսատ բողնել), մանգաղը պատից կախել (անգործ մնալ), վերին արտից ցորեն (ընտրյալ), ջուր ու ձավար կանգնեցնել (շատախոսել), կարկուտ ծեծել (անհիմն խոսել), կորկուտ ունի ծեծելու (ասելիք, պահանջ ունի), ճին չտառած՝ մտորը կապել, կարկուտը ծեծած տեղն է ծեծում և այն:

Սարդիկ բազմաթիվ դարձվածներ են ստեղծել նաև իրենց շրջապատող բնության, նրա բարի ու չար երևոյթների հետ կապված՝ զլիսին ու ամպեր են կուտակվել, քամի կուլ տալ, ջրի երես բարձրանալ, ջրի բերած, ջրի տարած, քամի անել, քամին որ կողմից է փշում, երկինքը բարձրացնել, քիրունների կյանք ունենալ, արևը (մեկի) մայր մտմել (մահանայ), արևը վաստ տեղ է մայր մտել (խոսելու կամ գործելու համար աննպատ պայմաններ ստեղծվել), արևի երես հանել (որևէ գաղտնի բան բացահայտել), արևի վրա էլ թժեր կամ (ամեն բան էլ թերություն կունենա), արծվի աշը (ամենատես, տոք հայացը), գետնի տակից բուսնել, գետնի տակն անցնել, զայլի ախորժակ ունենալ, աստղը թերվել (մեկի), աստղը խավարել (մեկի), աստղերը հաշվել (ասվում է հավարտ ու գորող, ինքնահավան մարդու մասին) և այն:

Չանի որ մարդուն ամենամոտ օրյեկտը, առարկան իր մարմինն է, իր օրգանիզմը, դրա համար էլ մարդն ամենաշատ դարձվածներ կազմել է իր մարմնի մասերի անվանումներով՝ սկսած մազերից, վերջացրած եղունգներով. մարդը հազարավոր դարձվածներ է կազմել իր մարմնի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին օրգանների անվանումներով՝ վերակմաստավորելով դրանք: Այսպես, օրինակ, մեր հաշվումներով հայոց լեզվում միայն գլուխ գերարաս անդամով 700-ից ավելի դարձվածներ կան, իսկ երես նկատենք դրանց բազմիմաստությունը, դրանց թիվը կհասնի հազարների (հայտնի է, որ դարձվածներից շատերը իրենց բուն իմաստներից բացի ունեն նաև մի քանի իմաստներ): Բերենք թեկող մեկ օրինակ. գլուխ բարձրացնել դարձվածն ունի 6 իմաստ՝ 1. ապստամբել, ոտքի ելնել, 2. հակածառել, վիճել, 3. ըմբռստանալ, չենթարկվել, 4. գոյանալ, առաջանալ, 5. սրափվել, ուշրի գալ, 6. աշխուժանալ, վերակենդանանալ:

Որ իսկապես լեզուների դարձվածային փոնի համակարգում թվային քանակով մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածային համակարգն է գերակշռողը, հաստատում է նաև մեր կատարած վիճակագրությունը: Ասվեց, որ գլուխ բաղադրիչով հայերենում կա 700-ից ավելի դարձված, աշը-ով՝ 600, սիրու-ով՝ 395, ձեռք-ով՝ 380, ոտք-ով՝ 345, թերան բառով՝ 268, լեզու-ով՝ 180, քիր բառով՝ 166, ականջ-ով՝ 145, մատ-ով՝ 78, ատամ-ով՝ 65, մազ-ով՝ 40 և այլն: Նկատել ենք, որ մեզ ծանոք լեզուներում նույնպես մարմնի մասերի անվանումներով կազմված դարձվածները մեծ թիվ են կազմում, սակայն ոչ մի լեզվում հայերենի չափ բազմաքանակ չեն. դրանցում մարմնի մասի որևէ անուն բաղադրիչով կազմված դարձվածների թիվը առավելագույնս չի անցնում 50-ի սահմանը:

Տարբեր ժողովուրդների դարձվածային համակարգում իրենց թվային քանակով ու բազմազնությամբ երկրորդ տեղում են լեռտեղացրած կենդանիների ու բոչունների (շուն, կատու, կոյ, եզ, ձի, ոչսար, այծ, նոխազ, եշ, ջորի, խոզ, խոճկոր, արադաղ, հավ, բաղ...), ինչպես նաև իր շրջապատում ապրող կենդանիների, զազանների, սողունների ու թշունների (գայլ, արջ, աղլիս, բորենի, կրիս, կիստար, եղնիկ, մուկ, մողես, օձ, արծիվ, ագռավ, ծիս, բազե...) անվանումներով վերակմաստավորված բառակապակցություններ, դրանցով ժողովուրդը կենդանիներին բնորոշ հատկանիշներով ու առարքներով բնութագրում է մարդկանց, նրանց արարքներն ու հարաբերությունները:

Ենելով դարերի փորձից, երբեմն էլ սնահակաստությունից՝ ժողովուրդը որոշակի կապ է ստեղծել գույների խորհրդանշական իմաստների ու դրանց հետ կապված առարկաների, երևոյթների ու մարդկային հարաբերությունների իմաստների միջև և կյանքի տարրեր բնագավառների վերաբերյալ ստեղծել է բազմաթիվ դարձվածներ՝ դրանց բաղադրիչներ դարձնելով գույների անունները՝ մի գոյնի հետ կապելով հաջողության ու բախտավորության, մյուսի հետ՝ անհաջողության ու դժբախտության հավատալիքներ: Այսպես, դարեր շարունակ մարդու համար ու գոյնի անվանումը խոր-

հըրդանշել է սօն, տիխորթյան, դժբախսորթյան, մահվան, անհաջողորթյան, ամոքի, խոռվորթյան նշան (արևը սևածայ, սև գիրը գրել, գլխին սև ամպեր կուտազվել, սևասիրտ լինել, սև օրի գալ, սև հազնել, սև քուն մտնել, անոնք սև քարին գրվել արանքներով սև կատու անցնել, սև շան հանդիպել...), կարմիր գունանունն օգտագործվել է սկին հականիշ իմաստներով՝ որպես ուրախորթյան, հաղթանակի, տոնահանդեսի, քարեհաջորդյան խորհրդանշ (կարմիր օր, կարմիր արև, կարմիր կապել-ամուսնանալ...): Բայց քանի որ կարմիրը նաև արյան գույնն է, դրանով կազմվել են նաև կոտորած, սպանդ, արյունահեղորթյուն, սպանորթյուն նշանակող ԴԱ-ներ: Կարմիր գունանունը լոյս գոյականի հետ արգելք է նշանակում (կարմիր լոյս վառել նեկի առաջ): Այս դարձվածին հականիշ է կանաչ լոյս դարձվածը, որը հաջորդորթյան, քարեմաղթորթյան խորհրդանշի է: Կանաչ գունանունով խորհրդանշվում է կյանքը, երիտասարդորթյունը, հաջորդորթյունը, սպիտակ գույնով նշանում է մաքրորթյուն, անհարտորթյուն, պարզություն, կապույտվ՝ երազանք, նոյնիսկ ցնորք, անհասանելիորթյուն, վարդագույն գունանունով խորհրդանշվում է ուրախ, պայծառ տրամադրորթյուն, ցանկալի ապագա, երջանիկ կյանք (վարդագույն ակնոցներով նայել), դեղին գույնը նախազգուշացման, ինչպես նաև քախճի նշան է:

Որոշ դարձվածներում միասնաբար հանդես են գալիս տարբեր գունանուններ. օրինակ՝ կարմիր-կանաչ կապել, (տղային ամուսնացնել), սև ներսն անել, սպիտակը՝ դուրս, սև սպիտակից չջոկել, կարմիր օրը սևացնել և այլն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, գունանուններով կազմված դարձվածների մի զգալի մասը նորաբանություններ են: Բոլորովին վերջերս (Իրաքի պատերազմի հետ կապված) ստեղծվել է նարնջագույն մակարդակ դարձվածը, որը նախորդում է կարմիր մակարդակին (արյուն քափելուն):

Մարդու գիտակցորթյան զարգացման ավելի քարձր մակարդակում, կապված գիտորթյան ու արվեստների զարգացման հետ, լեզվում էլ առաջ եկան բազմաթիվ դարձվածներ. այսպես՝ երգ-երաժշտորթյան հետ են կապված հին երգը երգել, առաջն ջորթակ, մեկի դրսուկի տակ պարել, մեկի դրսուկը փշել, հետո դափի ձենն անուշ է (ժող.) և այլն: Խատերական արվեստից են առաջացել կուլիսների ետևում, դիմակը պատռել, իր դերում չլինել, քատերաքնն դրսուր գալ, դիտողի դերում լինել, քատրոն սարքել (մեկի գլխին), հանդիսատես ծեռք բերել և այլն: Նկարչությունից՝ ինձներորդ այլիք, վրձնահարվածներ տայ, վառ գույներով ներկայացնել, գույները խստացնել, մեծ կտավի գործեր ստեղծել, սև (մոռայ) գույներով պատկերել. կա նաև սրա հականիշը՝ վարդագույն (վառ) գույներով պատկերել և այլն:

Գիտորթյան տարբեր բնագավառներից են առաջացել՝ փակագծերը քանալ, հավասարեցնել զրոյի, հավասարության նշան դմել, ընդիանուր հայտարի բերել, տորիչելյան դաստարկորթյուն, հակադիր ընեռներում գտնվել, մեայալ կետից հանել, հակադարձ համեմատական լինել, օգտակար գործորդորթյան գործակից (մաքենատիկա, ֆիզիկա), կույրադիր հեռացնել, պատրաստի դեղատում, երակ մտնել, սրտի զալունիքը իմանալ, կենդանության նշաններ ցոյց տալ, սև (վարդագույն) ակնոցներով նայել, իին իիվանդորթյունից ծեռք չքաշել, վանեցու արյուն ներարկել, խրոնիկական իիվանդորթյամբ տառապել (բժշկությունից): Վերջակետ դմել, մեծատառով գրել, հատուկ անուն դառնայ, Գասպարյանի շարադրորթյուն (անհիմաստ, խառնիշփոք շարադրանք), ազուակի ճամկեր (տղել ծեռազիք), այրից մինչև ֆե (լեզվաբանությունից): Թնդանորի միս, երկասյրի սուր, նիզակ ճոճել (մեկի դմել), դատարկ կրակոց, գենքերը ցած դմել, վասուդը չոր պահել, ալիններով դիմավորել, ստոր պատերազմ, ծանր հրետանի, իինգերորդ գործայուն, նեղքին քշնամի, դամդադ գործող ուսմք, բերք հեծելազոր (ռազմական կյանքին վերաբերում):

Մարզական կյանքից նոյնպես բազմաթիվ բաղադրյալ տերմիններ դարձվածային արժեք են ծեռք բերել. ահա դրանցից մի քանիսը՝ դեղին քարտ ցոյց տալ, խառնից դրսուր գալ, խաղի մեջ մտնել (մտցնել), վերջնագծին հասնել, (հասցնել), երկրորդ շնչառորթյուն ստանալ, ծիրու քայլ կատարել, ուակիրովկա անել, մաստ անել, ֆուկ անել, սուսերներ ճոճել, ճշշտ նապատակակետին (դիպուկ) կրակել և այլն:

Դարձվածների առաջացման աղբյուրներից մեկն էլ գրտների, արվեստագիտների, լրագրողների կողմից ստեղծած անհատական, հեղինակային շատ արտահայ-

տուրքուններ ու բառակապակցություններ են, որոնք վերախմատավորվում են ու անցնելով ժողովրդին, ընդունվում են նրա կողմից, դատում են համագործածական: Օրինակ, Հ. Թումանյանի հեղինակած շատ արտահայտություններ, անվանումներ վերածվել են ԴԱ-ների, ինչպես՝ Զախորդ Փանոս, Անրան Հուսի, Քաջ Նազար, Նետիք քարարաղներ, Կիկովի մահը, բայր քանկ է, աչք թերեցիք՝ քանիդ տերը չէս, անրախտ վաճառականներ, Ավ. Խսահակյանի ստեղծած՝ քարից, եռղից հաց քամել, աչք ծանվին ծով դառնալ, խելքին քշա ասել, գլուխը դնելու տեղ չգտնել, աչքերին թող փշել և այլն:

Դարձվածների անսպառ աղբյուր է ժողովրդական բանահյուսությունը, հատկապես առածներն ու ասացվածքները, ինչպես՝ Յուան Վերդոն, Զենով Օհան, Իռնոք շինելու տեղ աշքն էլ հանել, ջաղացը կորցնել՝ չախչախի հետևից ընկնել, ճիպոտը իր քույց կտրել, գելի գլխին ավետարան կարդալ, եռը փորողը եռը կորցնի, մեխի գլխին բռունցրով չեն խփի, առուն ջրուծ եռակ չեն ասի, մինչև Շուշանը զարդարվի, պատարագը կարծակվի, և այսպիսի հազարավոր օրինակներ կարելի է բերել:

Ժողովրդական լեզուն ու բարբառները նույնպես դարձվածների հարստացման անհատնում աղբյուրներ են. բերենք դրանցից մի քանիսը՝ արյունը պղտորվել, բուքը կատիկը բռչել, ձեռն ու ուորք քաշվել, քիրք բռնեն՝ եռզին կտու, գլխին օյին բերել, էշին նստելը մի այիր է, իջնելը՝ երկու, շունը շան քաք չի ծամի, էծը էծին լավ է, քան մի սուրու ոչխար, գոռող զառան գլուխը գիլի փորն է: Բարբառներից են դարձվածների արժեքներ ստացել նաև բազմաթիվ անեծքներ ու օրինանքներ, ինչպես նաև գրեթե կարածություններ:

Ինչպես տեսանք վերևում, ցանկացած լեզվի դարձվածային համակարգի հարստացման աղբյուրներ են նաև տարբեր լեզուներից կատարված թարգմանությունները և պատճենումները: Լեզուն օրեցօր հարստանում է նաև դարձվածային նորարարություններով՝ պայմանավորված հասարակական-քաղաքական լյանքում տեղի ունեցող փոփոխություններով, ինչպես նաև գիտության ու տեխնիկայի աննախադեպ զարգանքում. դրանք լայն տարածում են գտնում հատկապես զանգվածային լրատվության միջոցով:

## ИСТОЧНИКИ ПРОИСХОЖДЕНИЯ И ВОЗНИКНОВЕНИЯ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ

Резюме

Х. Баликян

Фразеологизм – более высокое языковое явление: оно связано с более высоким уровнем развития языкового мышления человека, когда человек был в состоянии австрагироваться, благодаря чему признак приписывается предмету и составляются словосочетания и предложения. Они же в более поздний период переосмысяляются и превращаются в фразеологизмы.

В статье рассматриваются источники происхождения фразеологизмов армянского языка, отличающиеся многочисленные фразеологизмы, появившиеся с помощью как собственных языковых средств, так и путем заимствований, затрагиваются также фразеологические неологизмы.

## Հովիկ ՄԵԼՔՈՆՅԱՆ

### ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՊԱԾԱՐԸ

Ոչ այնքան հետակոր անցյալում իրավացի դժգոհություն էր արտահայտվում, որ մեր գրողների, բանաստեղծների լեզուն քիչ է ուշադրության արժանացել լեզվաբանների կողմից, չենք ունեցել «քասական կամ ժամանակակից որևէ հայ հեղինակի լեզվի լուրջ և օրինակելի ուսումնասիրություն»<sup>1</sup>: Այսօր կարող ենք ասել, որ հսկայական աշխատանք է կատարված այդ ամբողյատրելի բացի վերացման ուղղությամբ. համապատասխան բավական հարուստ գրականություն կա նվիրված դասական և ժամանակակից հայ գրողների, բանաստեղծների լեզվի քննությանը: Բայց չի կարելի աշքարող անել նաև այն իրողությունը, որ գրողների լեզվի ուսումնասիրությունն առայժմ միանգանայն միակողմանի ընթացք ունի, որն անհանդուրժելի է: Հանրահայտ է, որ մեր նոր շրջանի գրողների ու բանաստեղծների մեծ մասը՝ սկսած հատկապես Մ. Նալբանդյանից մինչև մեր օրերի գրողներն ու բանաստեղծները, քողել է նաև գիտական, հրապարակախոսական բնույթի բավական հարուստ ժառանգություն: Գրողների լեզվի ուսումնասիրության անբոլյատընկեր միակողմանիությունն արտահայտվել է հատկապես նրանով, որ նրանց հրապարակախոսական բնույթի աշխատանքների լեզվի ուսումնասիրությունն ուշադրությունից դուրս է մնացել: Գրողի ողջ ստեղծագործությունն ամբողջական համակարգ է ներկայացնում, որի մասին պատկերացումը կարող է ամբողջական լինել միայն այն դեպքում, եթե անհրաժեշտ չափով ուսումնասիրված կլինեն դրա բաղադրամատրը: Գրողների գեղարվեստական բնույթի ժառանգությունից դուրս գտնվող աշխատանքների լեզվառնական ուսումնասիրությունը մեծ նպաստ կրերի ոչ միայն նրանց անհատական ոճի, այլև հատկապես գրական լեզվի այնախի կարևոր տարրերակային ձևի մասին ավելի ամբողջական պատկերացում ունենալու գործում, ինչպիսին հրապարակախոսական լեզուն է: Եվ եթե նկատի ունենանք, որ առհասարակ նամուլի, հրապարակախոսության լեզվի ուսումնասիրության ուղղությամբ հայ լեզվաբանության մեջ միայն առաջին քայլերն են կատարված, առավել ևս ակնհայտ կդառնա Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Ն. Զարյանի, Ս. Կապուտիկյանի, Պ. Շևալի և այլ գրողների բավական հարուստ հրապարակախոսական բնույթի ժառանգությունն առանձին ուսումնասիրության հյուր դարձնելու անհրաժեշտությունը:

Մեր նպատակն է սույն հոդվածում ուսումնասիրության առարկա դարձնել Ավ. Իսահակյանի գեղարվեստական հրապարակախոսական բնույթի, մասնավորապես այն ստեղծագործությունների բառապաշտը, որոնք ներկայացվում են «Ժողովրդի հետ» խոսուն խորագիր տակ: Այդ շարքը կազմող գործերից յուրաքանչյուրը նտերմիկ գրույց է հարազատ ժողովրդի հետ: «Դա մեկ ողոյին և ուղերձ է, մենք՝ որդիշական երախտիքի խոսք, մենք՝ համբերության ու հերոսացման կոչ: Եվ միշտ զգացվում է իր ժողովրդի ցավերով ապրող, նրա հաջորդություններով ուրախացող զավակի, հայրենիքի ճակատագրով մտահոգվող քաղաքացու անմնացորդ նվիրվածությունը և ապագայի նկատմամբ անխախտ հավատը:»

Ինչպես առհասարակ լեզվական երևույթների, այնպես էլ հրապարակախոսության լեզվի բառապաշտը ուսումնասիրությունը չի կարող այնքան արյունավետ լինել, եթե դրա դասակարգումը հստակ սկզբունքներով կատարված չլինի: Առանց մանրամասնությունների մեջ մտնելու նշենք, որ չեն կարող տարակարծություն չառաջացնել հրապարակախոսական-լրագրային լեզվի բառապաշտը այնախի դասակարգումները, եթե այդ բառապաշտը ներկայացվում է հասարակական-քաղաքական բառեր, գնահատողական և ոչ գնահատողական բառեր կամ 1. մասնագիտական բառեր, 2. գնահատողական բառեր, 3. լրագրային (լրագրահրապարակախոսական) բառեր<sup>2</sup> ենթաշերտերով: Նախ որ՝ այսպիսի խմբավորումները միմյանցից քիչ տարրերություններ ունեն: Ինչպես հեշտ է նկատել, երկրորդ խմբավորման մեջ պարզապես հասարակական-քաղաքականի փոխարեն ներկայացվում է մասնագիտական բառաշերտը և

<sup>1</sup> Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Եր., 1948, էջ 121:

<sup>2</sup> Ռ. Շալունյան, Մանուկյան և հրապարակախոսության լեզուն, Եր., 1987, էջ 67-68:

ավելացվում է լրագրային կոչված բառաշերտը: Վերջինիս մեջ ներկայացվում են այսպիսի հեթախմբեր՝ 1. պաշտոն, գրադմոնք և այլ հասկացություններ արտահայտող բառեր (ներկայացուցիչ, դեկավար, անդամ, պատգամավոր և այլն), 2. շարժում ցույց տվող բառեր (մեկնել, գնալ, հեռանալ, վերադառնալ և այլն), 3. ասացական բայեր (ասել, հայտարարել, պատասխանել...)<sup>3</sup> և այլն: Այդպիս էլ անհասկանալի է մնում, թե ինչու այդ և նման բառերը կոչվում են լրագրային բառեր:

Բայց մեր հիմնական առարկությունն այն բանին է վերաբերում, որ հրապարակախոսական լեզվի բառապաշտիքի նշված դասակարգումները կատարելիս նկատի առնված չեն այն իրողությունները, որոնցով պայմանավորվում է բառի ոճական բովանդակությունը, արժեքը: Այդպիսի իրողությունները են բառի ձևը (հնչյունական կազմը), իմաստը և այն, թե տվյալ լեզվական ոճում (ասենք՝ հրապարակախոսական ոճում) գործածված բառը լեզվի որ գործառական որորտին է պատկանում (գիտական, գեղարվեստական և այլն):<sup>4</sup> Դեսքը է նկատի ունենալ նաև, որ հրապարակախոսական լեզվի բառապաշտիքի ընդունելի համարվող վերը նշված դասակարգումներն այդ լեզվի ուսումնասիրությին ըստ եռյան չեն նշում խորի այնպիսի կարևոր հատկությունների հանգամանալի քննության, ինչպիսիք են ճշտությունը, բարեհնշությունը, կենդանությունը և այլն: Ոճագիտությունը, ոճականն ըստ եռյան խարսխված է լեզվական միջոցների հոմանշության վրա, իսկ հրապարակախոսական լեզվի բառապաշտիքի ընդունությունը և առհասարակ բառի իմաստով (հոմանշություն, հականշություն, բազմիմաստություն և այլն) պայմանավորված ոճական հնարավորություններն ուղղակի անտես են առնված:

Հասկանալի է, որ բառի՝ տարբեր իրողություններով պայմանավորված ոճական գործածությունները չեն կարող հավասարաշափ դրսերում ունենալ լեզվի բոլոր տարբերակային ձևերում:

Ավ. Իսահակյանի հրապարակախոսության մեջ բառի ձևով պայմանավորված ոճական գործածություններն այնքան հարուստ դրսերումներ չունեն, այլ ձևով ասած՝ ի տարբերություն նրա գեղարվեստական արձակի և հատկապես շափածոյի, գեղարվեստական հրապարակախոսության մեջ համանուն, համահունչ բառերը գրեթե բոլորովին հանդես չեն գալիս ոճական հնարավորությամբ: Սա պայմանավորված է խորի բովանդակությամբ, նպատակառողբարձությամբ:

Գործածության ոլորտով պայմանավորված արտահայտչական հնարավորությունների կրողներն են հնարանությունները, նորարանությունները, օտարարանությունները, տերմինները: Ուշագրավ է, որ Վարպետի գեղարվեստական հրապարակախոսությունն էապես տարբերվում է նրա գեղարվեստական արձակից և հատկապես ժողովրդաշունչ քննակերպությունից նրանով, որ դրանում գրեթե խաղաղ բացառված է բարբառային բառերի գործածությունը:

Ուշագրավ է Ավ. Իսահակյանի վերաբերմունքը օտարարանությունների նկատմամբ: 1926 թվականին գրած «Խորհրդային Հայաստանում» հոդվածում անհարկի օտարարանություններ գրեթե չկան, նոյնիսկ «կովլտուրա», «կոնսերվատորիա» բառերի փոխարեն գործածված են բնիկ ազգային բառերը. «Մեր հինավորց մշակույթի վերապրած արժեքների վրա բարձրանում են նոր արժեքներ»:<sup>5</sup> «Աչքերդ բերկրանքով բախտավոր նայում են՝ համալսարան, բատրոն, երաժշտանոց, բանգարան...» /ն.տ./: Իսկ երեսնական թվականներին գրված հոդվածներում օտարարանություններն ավելի աշխատյժ գործածություն ունեն: Եվ դա, բնական է, այդպես էլ պիտի լիներ, հատկապես 1935, 1937թ.թ. գրված հոդվածներում: Բայց այս կապակցությամբ ուշագրավն այն է, որ Վարպետը «համարձակություն է ունեցել» դրանց հետ՝ համատեղ գործածել նաև ազգային ձևը՝ կարծես կամենալով ասել, թե օտարարանության գործածության պատճառն այն չէ, որ մեր լեզուն չունի համապատասխան բառ: Այդ իմաստով բավական ուշագրավ են այսպիսի գործածությունները. «Կենսագործվեց մի մեծ քաղաքական

<sup>3</sup> Ո. Ծալունց, նշվ. աշխ., էջ 106-108:

<sup>4</sup> Ս. Մելքոնյան, Աղմարկներ հայոց լեզվի ոճական բառամության, Եր., 1984, էջ 43-48:

<sup>5</sup> Ավ. Իսահակյան, Երևան, հ. 4-րդ, Եր., 1959, էջ 377: Հետազա բոլոր մեջքերումները կատարվեն նոյն հասողություն, փակագծերում կնշվի միայն էզը:

հաղբանակ - սերտ եղբայրություն և շահերի ու զգացումների ներդաշնակություն հարևան ժողովուրմների աշխատավորության հետ - կովկասյան համադաշնակցությունը (ֆեղերացիան) /383/: «Եվրոպական տնտեսական կրիզիսի - ճգնաժամի շնորհիվ կապահանջուններն այնպիսի են կորցրել իրենց գլուխը...» /387/:

Այնուամենայնիվ, Վարպետի հրապարակախոսության մեջ կան օտարամուտ բառեր, որոնց գործածությունն այսօր կարող է անհարկի քվալ, բայց ժամանակին դրանք բավական հաճախ են գործածվել: Ըստնք դրանցից մի քանիսը՝ սեմասիոնգիա /465/, արմոսֆերա /ն.տ./, կոմպակտ /383/, ակտուալություն /405/, կոմպլեքս /405/, իդեոլոգիա /410/ և այլն:

Ավ. Իսահակյանի հրապարակախոսությունը, սերտորեն առնչվելով նրա գեղարվեստական ստեղծագործություններին, միաժամանակ ընդհանրության եզրեր ունի նաև գիտական գրականության հետ՝ հատկապես տերմինների գործածության իմաստով: Խոսքը վերաբերում է հատկապես այն երլյաներին, իովկաններին, որոնց մեջ գիտական բնույթի հարցեր են արծարծվում («Զրոյց գիտության նասին», «Մեր ժողովրդի պարծանքն ու հպարտությունը» և այլն): Վերջինս Իսահակյանի ողջույնի խոսքն է՝ ասված ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հիմնադրմանը: Դրանցում լրստ անհրաժեշտության գործածված են գիտության տարբեր ճյուղերի տերմինները. «Մեր գիտնականները ապացուցում են, թե ինչպես են միհզամածություններից ծնունդ առնում նոր աստղեր» /513/: «Երանք էլեկտրոնային միկրոսկոպով տեսնում են ոչ միայն մանրագույն օրգանիզմները՝ բակտերիոֆազները, այլև ուսումնասիրում են նյութի մոլեկուլների ձևը» /513/:

Ի տարբերություն գեղարվեստական արձակի, ուսումնասիրության առարկա հանդիսացող ստեղծագործություններում բավական սահմանափակ գործածություն ունեն նաև հնարանությունները, գրքային բառերը: Նոյնին այնպիսի ստեղծագործություններում, որոնք իրենց բովանդակությամբ հանդիսավորություն են ենթադրում, այդ կարգի բառերի գործածությունը խստ չափավոր է: Ամենայն հավանականությամբ դա հետևանք է այն բանի, որ հրապարակախոսության մեջ մատչելիությունն ամենակարևոր հանգամանքն է համարվել Վարպետի կողմից: Բերենք գրքային բառերի գործածության մի քանի օրինակներ՝ «Անշշանելի փառք մարտի դաշտում ընկած հերոսներին» /470/: «Ասպարեզ եկան տաղանդավոր նկարիչներ, երաժշտներ... և բանաստեղծների շողջողուն հույլը» /383/: «Արմավիրի դաշտում հասակ են նետել բարձրութեց բարդիները, որոնց սաղարթները արծարյա ծնդհանների այս հնչում են անդուլ՝ անդրշային Սասիսից և մայրական Արագածից քև առած հովերի մեջ»: «Լսեցի արյունազնագ գրույցներ, ճիվաղային հերթարներ, նղանացանական գիշերների պես՝ զարինանք բոլոր չափերից անց, հավասարի բոլոր սահմաններից վեր...» /376/:

Ինչպես ենչու է նկատել հնարանությունների, գրքային բառերի գործածությունը բնավ չի վճառում խոսքի մատչելիությանը: Դա պայմանավորված է նաև նրանով, որ դրանք հմտությամբ ենթադաշնակած են համատեքստի մյուս բառերի հետ: Այսպես՝ վերջին օրինակում այդ բառերը համադրված են ժողովրդա-խոսակցական բնույթի հարադիմների, դարձվածքների հետ («հասակ նետել», «քև առնել» և այլն), և դրանից շահել է խոսքի արտահայտչականությունը: Երկրորդական չեն նաև այն հանգամանքը, որ հիմնականում բնտրված են հեշտ բնրունի գրքային բառեր:

Իսահակյանի հրապարակախոսության մեջ արտահայտչական կարևոր նշանակություն ունեն նորաբանությունները: Լրագրահրապարակախոսական խոսքում սրանց գործածությունն անխուսափելի է, քանի որ դրանք անվանում են նոր առարկաներ, հասկացություններ: Լեզվի բառային կազմը, ինչպես գիտենք, ամենազգայունն է հասարակական-քաղաքական կյանքում կատարված փոփոխությունների նկատմամբ: Նոր հասկացությունների, երևոյթների, առարկաների երևան գալը ուղեկցվում է նոր բառերի առաջացնամբ: Հրապարակախոսության մեջ էլ, որի նյութը բազմազան է և վերաբերում է կյանքի տարբեր ոլորտների, անխուսափելի է նորաբանությունների գործածությունը: Վերջիններս, ինչպես հայտնի է, լինում են երկու տեսակ. մի խմբում դասվում են այն նորաբանությունները, որոնք հասարակական կյանքում երևան եկած առարկաների, երևոյթների անվանումներ են, մյուս խմբում դասվում են անհատական նորաբանությունները, որոնք ստեղծվում են հատկապես գրողների, բանաստեղծների

**Կողմից:** Մենք այստեղ խոսելու ենք Խսահակյանի հրապարակախոսության մեջ ետև գտած անհատական նորարանությունների մասին: Նրանց ստեղծման հարցում վճռական նշանակություն է ունեցել հասկացությունն առավել ճշտությամբ, անհրաժեշտ նորերանգներով արտահայտելը: Բերենք համապատասխան մի քանի օրինակներ՝ «Գիտությունը խանձարուրում գտնվող բոռով երեխայի պես է եղել, որ հզորացել է, հզորացել, դարձել տիեզերառությունի կարողություն...»/511/: «Տնտեսագետները, ինժիներները, տեխնիկները բող Վերակառուցեն օրինակով՝ արտաշխարհը, իսկ մենք պիտի կառուցենք սուրբեկան ներաշխարհը»/394/:

Հայտնի է, որ երեսն նախադասության մեջ եղած համապատասխան բառի ազդեցությամբ է ստեղծվում նոր բառ: Այդպես է ստեղծվել վերը բերված արտաշխարհ բառը ներաշխարհ բառի ազդեցությամբ: Այս բառի գործածությանը հանդիպում ենք նաև Խսահակյանի գեղարվեստական արձակում:

Համատեքասի դերն առանձնապես կարևոր է նաև այն դեպքում, երբ նկարագրվող երևոյթի էությունից է բխում նոր կամ գրքային բառի ստեղծումը: Հակասական ուղիներ անցած, փիլիսոփայական, կրոնական տարրեր հայացքներ ուսումնասիրած ու դավանած գրողը հայրենիքում լսում է «աշխարհաջան ճշմարտության» խոսքը:

Խոչ ու խորեն թշնամական՝

Թոփշդ չեն կասում,

Աշխարհաջան ճշմարտության

Նոր խոսքեր ես ասում /380/:

Այդպես էլ «Մեր ժողովրդի պարծաճքն ու հայարտությունը» հրապարակային խոսքում Խսահակյանը գիտության կաճառի դերն այսպես է պատկերացնում: «Նա (ակադեմիան) պիտի համախմբէ հայ միտքը և զիսավորէ այն: Արդի գիտական մերողների լուսարձակի տակ նա պիտի հումավլուն հետազոտությունները և ուսումնասիրությունները» /465/: Իսկ «զարդարելի բախումների մեջ կոտորակված» հայ ժողովրդի գոյաւում կրիվը բնորոշվում է անտեղիստալի բառով: «Հայ ժողովուրդը՝ ճակատագրի բերմամբ կանգնած լինելով արևելյան և արևմտյան աշխարհակալ պետությունների հանգույցային ճանապարհի վրա՝ գոյության անտեղիստալի կրիվ է մղել և զարդուելի բախումների մեջ կոտորակվելով և վերատին կոտորակվելով, այնուամենայնիվ, մնացել է միշտ կանգուն իր նվիրական հողերի վրա, և միշտ հոգով աննվաճ, ազատատենչ և լուսարադ» /427-428/:

Ավ. Խսահակյանի ստեղծած նոր բառերի մեջ կան և այնպիսիները, որոնք առանձնապես ընդգծված ձևով են արտահայտում նրա բացասական վերաբերմունքը անձերի, երևոյթների նկատմամբ: Այդ առումով բնորոշ են «Փիլտերիզմ», «Փերեշապետություն» բառերը, որոնցով Խսահակյանը իր ատելությունը, արհամարհանքն է արտահայտում 20-րդ դարի մեծ արյունախումք՝ Հիտլերի, նրա կողմնակիցների և նրանց գործերի նկատմամբ՝ «ասայիզմ» իդեոլոգիան արդեն թխվել՝ պատրաստ եր. եկան շարունակողներ՝ Օ. Ամոն, Հիտլերիս Ռոզենբերգը և ուրիշներ» /414/: «Կուլտուրական բարբարությունը և մոնղոլ բարբարությունը միացան ստեղծելու համար մի նոր չինգիզիան երեշապետություն Համբորգից մինչև Չինական պարհապնդերը» /431/:

Հրապարակախոսության հիմնական նպատակներից մեկը խոսի առարկայի նկատմամբ համապատասխան վերաբերմունք առաջացնելն է. չարի, թշնամու նկատմամբ՝ ատելություն, բարու, լավի նկատմամբ՝ սեր ու համակրանք: Այս գործում առանձնապես մեծ է այն բառերի դերը, որոնք կոչվում են զնահատողական (զնահատողական բառեր): Դրանք և ամբողջական հասկացություն արտահայտող համապատասխան բառակազմակցությունները հասկանչվում են զգացական վերաբերմունքի արտահայտման լայն հնարավորություններու: Այդ հնաստով էլ, կարծում ենք, ավելի ճիշտ կինի, եթե դրանք կոչենք ոչ թե զնահատողական, այլ վերաբերմունքային բառեր:

Նկատեիլ է, որ չարի, թշնամու նկատմամբ ատելություն առաջացնելու գործում վերաբերմունքային բառերի գործածությունն ավելի ցայտուն արտահայտություն ունի: Ոչ սակայ դեպքերում խոսի արտահայտչականությունը գրեթե միայն դրանցով է պայմանակարգություն: Ահա մի բնորոշ օրինակ՝ «Հիտլերը պարողողիկ մի տիպ, ֆրեյդյան, պատաճեկան օրերից շրավարարված մեզայումանիայով և շարությամբ լցված կոմպլեքսային - հիստերիկ ծիվաղ, թերու, բարոյական բոլոր նորմանեղից և զապանակ-

**Աերից զերծ, բացարձակ անմորայ, հարրած՝ շիկացած շովինիզմով, ուսանշով, ժողովութերի արյունով հակիացած, դիակներ իշտուող անհագուրդ բորեմիճ՝ փոկի՝ չ, մեսիա» /408/:**

Վերաբերմունքային բառերը սովորաբար փոխարերական նշանակությամբ են հանդիս զայս Վարպետի հրապարակախոսությունում: Նման գործածություններում դրանք հատկանշվում են որպես ժողովրդական լեզվանտածողության արտահայտություն, խոսքը դարձնում են պատկերավոր: «Վայրագ ոհմակները եկել, ծեծում են Անդրբկովկասի երկար դրները» /434/; «Կարմիր փառապանձ Բանակը... համրեց քշամու ատամները և փշրեց այդ ատամները...» /455/; «Զանգվածներն ուղղում են իրենց ողնաշարը» /377/; «Այդ օրվանից նրա ռազմական մերենան իիլսանդացավ» /450/:

Իմաստով պայմանավորված ոճական գործածությունները գերազանցապես դրսևրվում են հոմանիշ և հականիշ բառերով:

Գեղարվեստական արձակի և չափածոյի բնագավառում իր ուրույն ոճն ստեղծած Իսահակյանի հրապարակային խոսքը չէր կարող չազդեցնել այդ ոճից: Եվ ինչքան էլ խոսքի բովանդակությունը, ասելիքը էական նշանակություն ունենան համապատասխան ձև ընտրության, համազգային լեզվի հնարավորություններից օգտվելու հարցում, այնուամենայնիվ, գրողի անհատականությունը, նրա ճաշակն ու գեղագիտական հայացքները, բառագործածության նախասիրած եղանակները երկրորդական հանգամանք չեն կարող լինել: Իսահակյանն ուժեղ ու տարերային զգացմունքների արվեստագետ է ոչ միայն չափածոյում, այլև արձակում: Իսկ այս հանգամանքը չէր կարող չազդեցնել հրապարակախոս Իսահակյանի՝ խոսքի կառուցման հիմնական սկզբանին վրա: Վարպետի հրապարակային ստեղծագործությունն էլ օժտված է հուզական բովանդակությամբ, ներքին լարվածությամբ, և այս երկու գործուներն էլ անխուսափելի են դարձնում հասհակյանական խոսքում հոմանիշների համապատասխան գործածությունը: Առաջին հերթին խոսքը վերաբերում է հոմանիշների համատեղ գործածությանը: Դա ոճական կարելոր եղանակ է, որի հիմքում ընկած է հուզական պատճառաբանվածությունը: Դրանով արտահայտվում են զայրույթ, հիասթափություն և այլ ուժեղ զգացմունքներ: Բերենք համատեղ գործածված հոմանիշների մի քանի օրինակներ՝ «...Քազմաքիվ ճակատամարտերում հյուծեց, քայրայեց, մաշեց քշնամու կենդանի ուժերն ու տեխնիկան...» /469/: «Ուսացած մեր նշակույթին հորդում է և քափվում ափերից դուրս» /377/: «Մի՞թե հեռու է այն զարհութելի եպիսան, իմայերիալիստական առաջին պատերազմը, երբ «քաղաքակիրք» երկները, միջիարդ բնակչություն, զագանային բնագրներով բռնկված, տարիներ կոսորում էին իրար, անխնա ջնջում իրար, ոչնչացնում դարերի մեջ կոտակված հարստություններ...» /404/:

Ինչպես ամեն մի խոսքի, այնպես էլ հրապարակախոսության համար ոչ մի բան այնքան վտանգավոր չի կարող լինել, որքան միօրինակությունը, բառերի անհարկի կրկնությունը: Խոսակցի (ընթերցողի, լողոների) վրա ազդելու համար խոսքը պետք է լինի կենդանի, բազմազան: Վերջին ապահովվում է հոմանիշ ձևերից մեկի կամ մյուսի ընտրությամբ:

«Մեծ արվեստագետի համբավը հսկա բատրոնը ծայրե ծայր լցրել էր...» /398/: «Հները հավատում էին, թե երկրագունդը իր քավալման ընթացքում մի պահ կանգ է առնում՝ հետադարձ հայաց ձգելու անցած ուղու վրա: Երբ մենք էլ մեր անընդհատ հնոտ կյանքի մեջ մի պահ եւս ենք նայում...» /504/: «Դմ հայրենիքում տեսա աշխարհաշն կառուցումներ, որոնք կմրցեն Փարիզի հրաշակերտ շինվածքների հետ.» /520/:

Խոսքի մեծ վարպետը բառի կրկնություն չի հանդուժում ոչ միայն նույն կամ կից նախադասությունների մեջ, այլև՝ իրարից բավական հեռու գտնվող տողերում: Այդ առունու ուշագրավ է պատերազմ, կոիլ, ճակատամարտ բառերի գործածությունը հողվածներից մեկում (տես էջեր 400-401):

Խոսքի կենդանությանը, ներգործուն ուժին նպաստելու իմաստով ուշագրավ են համատեղ գործածվող այն հոմանիշները, որոնք նպաստում են հասկացությունը բազմակողմանիորեն արտահայտելուն: Այս դեպքում հոմանշային շաքը կազմող բառերն իրենց իմաստային նրբերանգներով ամբողջացնում են նկարագրվող երևույթը:

«Անքնանադասելի և սրբազն դոզմա - քարու - միք դարձրին ֆաշիստներն այս անդիտական կոնցեպցիան և կառչեցին նրան» /414/: «Մի կողմը կանգնած են ազա-

**տատենչ, դեմոկրատ, առաջադեմ ժողովուրդներ՝ Սովետական Սիոթյունը, Անգլիան, Ամերիկան և ուրիշները, իսկ հակառակ կողմը՝ խավարասեր, ուսակցիոն, ֆաշիստական Գերմանիան իր վասակներով...» /454/:**

Իսահակյանի հրապարակախոսության մեջ ոճական արժեքով գործածված հականիշները բավական շատ են, որոնք կարևոր դեր ունեն խոսքի քարմության, ինքնատիպության ապահովման գործում:

Ինչպես գեղարվեստական գրականության մեջ, այնպէս էլ հրապարակախոսությունում հականշուրյունը բավական լայն բովանդակությամբ պետք է ընդունել, այսինքն՝ հականիշները են դիտվելու նաև այնպիսիները, որոնց իմաստային հակադրությունն արտահայտվում է ոչ թե առհասարակ, այլ կոնկրետ կիրառության մեջ, ինչպես օրինակ՝ «Գիտությունը սիրում է նրանց, ովքեր սիրով են մոտենում իրեն, ովքեր դատում են և ոչ թե անզիր անում...» /514/:

Իսահակյանի գեղարվեստական հրապարակախոսության մեջ կարևոր է հականիշների դերը հակադրություն ստեղծելու գործում: Վերջինս ավելի ցայտուն է դարձնում մտքի ու զգացմունքի արտահայտումը, խոսքի արտահայտչականությունը: Այդ իմաստով խոսուն է «Նրանց մոտ և մեզ մոտ» վերնազիրը /էջ 386/: Կոնկրետ կիրառության մեջ հականշային իմաստով են օժտվել համապատասխան դերանունները՝ խորհրդանշելով հակուռնյա երկու աշխարհները: Այս ստեղծագործության արտահայտչականությունն ապահովվել է հակադրության միջոցով, որը, ինչպես գիտենք, միայն հականիշներով չէ, որ դրսևորվում է:

## СЛОВАРНЫЙ СОСТАВ ПУБЛИЦИСТИКИ АВ. ИСААКЯНА

— *Резюме* —

— *O. Melkonyan* —

Словарный состав научных, публицистических статей и выступлений Ав. Исаакяна исследуется под углом зрения выявления принципов используемых поэтом лексических единиц в публицистическом стиле.

## ՀՐԱՑՈՂ ԶԱՂՅԱՆ

### ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՍՍԱՍԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

Հայերենի զարգացման տարբեր շրջանների քերականութրը լեզվի ձևարանաշարհյուսական կարգերն ուսումնասիրելիս ըստ անհրաժեշտության խոսել են այն բառերի մասին, որոնք իրենց իմաստային կառուցվածքով ի հայտ են քերում քերականական տարարժեքություն և օժտված են բազմագործառույթ դերով։ Դեռևս Դիոնիսոս Թրակացին և նրա մեկնիւները նկատել են, որ որոշ բառեր հանդես են զայխ մեկից ավելի խոսքիմասային արժեքների համատեղումով։ Լատինաալիպ քերականությունների շրջանի աշխատություններում այս խնդիրը հիմնականում լուսաբանվել է նյութական բովանդակությունից գորկ խոսքի մասերի շրջանակներում։ Աշխարհաբարի քերականական աշխատություններում լեզվաքերականական հարցադրումները յուրովի մեկանություն են ստանում, որ պայմանավորված է մի կողմից՝ լեզվաբանական զիտուրյան զարգացման նոր շրջանով, մյուս կողմից՝ անցյալի զիտական նվաճումները քննադատաբար յուրացնելու հանգամանքով։

Դարասկզբի և խորհրդային շրջանի քերականազիտական աշխատություններում իմաստաբանական և բառաքննական հետազոտությունները նոր ծավալ են ստանում։ Այս շրջանում ձևարանական մակարդակի կառուցվածքային միավորները հաճախ բնութագրվում են իրարամերծ սահմանումներով։ Մ. Արենյանը, Հ. Աճառյանը, Գ. Սևակը, Ա. Արքահամյանը, Գ. Գարեգինյանը և այլոք ներկայացնում են այս իրողությունը յուրաքանչյուրն իրեն հետաքրքրող տեսանկյունից՝ բառույթի իմաստային-ձևարանական երկանության վերաբերյալ տարբեր նկատառումներ ունենալով։ Հ. Աճառյանը մեկից ավելի ձևարանական արժեքներ համատեղող բառերի մասին խոսելիս կարևորէ է դրանց ժամանակագրության որոշումը՝ հաշվի առնելով, որ ձևարանորեն տարարժեք բառերի առաջացումը կրում է տարածամանակյա բնույթ։ Գ. Սևակը այդ իրողությունը կապում է խոսքիմասային փոխանցումների հետ,<sup>1</sup> Մ. Արքահամյանը՝ բառիմասի նեղացման գործոնի հետ։<sup>2</sup> Մ. Ասատրյանը նման բառերի առկայությունը բացատրում է խոսքիմասային փոխանցումների գործընթացով։<sup>3</sup> Ակադեմիկոս Զահուկյանը առաջին անգամ կատարում է դրանց դասակարգումը՝ տարբերակելով եռակի և երկակի գործածություն ունեցող բառեր՝ դրանք համարելով գործառական համանուններ, իսկ քերականական երևոյթը՝ գործառական համանունություն։<sup>4</sup> Ն. Պառնասյանը բառերի և բառաձևերի քերականական երկարժեքությունը և եռարժեքությունը քննում է թե՛ ձևարանական (երբ տարարժեքությունը զիտակցվում է նաև խոսքի դուրս), թե՛ շարահյուսական առումներով (երբ տարարժեքությունը դրսւորվում է խոսքին համապատասխան միջավայրում)։<sup>5</sup> Հ. Բարսեղյանը խոսքիմասային փոխանցման երևոյթը համարում է բառերի՝ այլ խոսքի մասերի գործածությամբ հանդիս զայտ երկարատև գործընթացի հետևանքը։<sup>6</sup> Խոսքիմասային փոխանցումների և դրանց հետևանքով առաջացած տարարժեք բառերի քննությանն առանձին նենազրություն է նվիրել Լ. Խաչատրյանը՝ բառերի ձևարանական իմաստի և արժեքի տեղաշարժն ուսումնասիրելով միջխոսքային և ներխոսքային միջավայրով։ Իրողությունը հեղինակը դիտել է իրեն պատմական-իմաստափոխական գործընթաց և այն քննել է հայերենի զարգացման գլաբար, միջին հայերեն, արդի հայերեն կտրվածքներով<sup>7</sup>։

<sup>1</sup> Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 251։

<sup>2</sup> Մ. Արքահամյանը, Հայերենի դերայները և նրանց ձևարանական նշանակությունը, Եր., էջ 34։

<sup>3</sup> Մ. Ասատրյանը, Հայոց լեզվի ձևարանության հարցեր, Եր., 1970, էջ 92-97։

<sup>4</sup> Գ. Զահուկյանը, Ժամանակակից հայերենի տեսաթյան հիմունքներ, Եր., 1974, էջ 525-528։

<sup>5</sup> Ն. Պառնասյանը, Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Եր., 1971, էջ 87-102, 172-178։

<sup>6</sup> Հ. Բարսեղյանը, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Եր., 1980, էջ 474։

<sup>7</sup> Լ. Խաչատրյանը, Տեղաշարժեք բառերի ձևարանական իմաստի մեջ, Եր., 1999, էջ 25։

Այսպիսով, հայերենի պատմական զարգացման ընթացքում կատարվել է մի կառուր իմաստափոխություն և (բատիմասակի փոփոխության այլ տեսակներից բացի)՝ բառերի խորիմասային իմաստափոխությունը: Այս իրողության ուսումնաշրությունը ցույց է տալիս, որ հայերենի պատմական զարգացման ընթացքում տեղի է ունեցել անցում խորիմասային բազմիմաստությունից մենմաստության (մասնակի բացառություններով): Այս երևույթի զարգացումն ըստ եռույթան հայերենի ձևաբանական համակարգի զարգացումն է, որի՝ ժամանակի ընթացքում կանոնավորվելով ու ավելի համակարգված դառնալը հանգեցրեց խորիմասային բազմիմաստություն կոչվող իրողության կենսաւակության աստիճանական նվազմանը: Գրաբարի համեմատությամբ միշտ և արդի հայերեններում անհամենալու քիչ են մեկից ավելի խորիմասային իմաստ ունեցող բառերը: Խորիմասային այս կամ այն միջավայրում այդ երևույթը կարող է դրսևարվել, բայց արդեն չունի այն ընդհանրական բնույթը, որ ուներ իմ հայերենում: Ակներև է, որ մեկից ավելի խորիմասային նշանակություն ունեցող բառերի քերականական իմաստները պատմական զարգացման ընթացքում ենթարկվել են հստակեցման (ժամանակի ընթացքում նախապատվությունը տրվել է այս կամ այն քերականական, խորիմասային նշանակությանը):

Չնայած լեզվական այս իրողությունը առնչվել է տարբեր խորի մասերի, բայց պետք է նշել, որ խորիմասային իմաստների անցումները հիմնականում վերաբերում են առարկա և առարկայի հատկանիշ ցույց տվող բառերին, այսինքն՝ գոյականին և ածականին: Ընդ որում, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եթե լեզվի պատմական զարգացման շրջաններից մեկում բառը խորիմասային այլ նշանակությունից բացի ունեցել է նաև ածականական կիրառություն, ապա արդի հայերենի բառապաշարը է նույտ գործել միայն որպես ածական, այսինքն՝ ի տարբերություն նույն բառի ունեցած խորիմասային այլ նշանակությունների՝ հիմնականում պահպանվել է առարկայի հատկանիշ ցույց տալու նշանակությունը: Օրինակ՝ «ամուր» բառը գրաբարում գործածվել է թե՛ որպես գոյական (նշանակել է բերդ, ամրոց, ապահով և բարձր տեղ), թե՛ որպես ածական. «...տապալեալ ավերեցան ամուրը ապաստանի նոցա»/Եղ., 404/: Բուզանդի մոտ՝ «Ապա երթեալ գտաներ զնոսա յամուրս աշխարիին Տայոց...»/Եղ., 107/: Որպես ածական՝ «Բակ յորժամ պարսիկն զմերն շրջէին, նոքա ի վահանափակն Յունաց իրք յամուր քաղաք նտանէին»/Խոր., III ՀԷ/: Արդի հայերենում «ամուր» բառն ունի միայն ածականական իմաստ:

Նոյնը պետք է ասել «ձածուկ» բառի մասին, որը գրաբարում գործածվել է թե՛ որպես գոյական, թե՛ որպես ածական: **Ծածուկ** (ած) - **բազուն**-«Յառաջ խաղային ինթեանց զգէնսն ծածուկ վառեալ» /Եղ., 308/: **Ծածուկ** (գոյ)- **գաղտնիք**-«Ծածուկը անիծնալը, դիարուած քշնամեալ...»/ՀՀԱՔ, 138/:

«Բազուն» բառը գրաբարում նշանակել է ինչպես «շատ»-(ած)- «Այլ որպես ցույցը բազում անգամ զամբարիշտն, չարութին, յորդորեր և ստիպէր զօրսն...» /Եղ., 252/, այնպես էլ՝ «շատ բան» - «Բանզի բազումք յազգի ի մեծ նախարարաց էին, եւ եղբար եւ որդիք և դստերը»/ն.տ./:

Օրինակներից նկատվում է, որ այլ խորի մասերի պատկանող շատ բառեր պատմական իմաստափոխության ենթարկվելիս արդի հայերենի բառապաշար նույտ են գործել միայն որպես ածականներ: Սա, իհարկե, պայմանավորված է այն հանգանքով, որ բառը լեզվի զարգացման պատմական շրջաններից մեկում օժտված է եղել նաև հատկանիշ արտահայտելու հնարավորությամբ:

Երբ երևույթն իր պատմական զարգացման մեջ տեսնելու համար համեմատում ենք գրաբարի, միջին հայերենի և արդի հայերենի<sup>8</sup> բացատրական բառարաններում եղած բառերի խորիմասային պատկանելության նշումները, տեսնում ենք, որ գրաբարում, ինչպես նաև միջին հայերենում մակրայի, գոյականի ձևաբանական արժեք ունեցող շատ բառեր արդի հայերենում դարձել են ածականներ: Անցումը խորիմասային մի իմաստից մյուսը, իհարկե, պայմանավորված է բառագործածության խորային մի-

<sup>8</sup>Առձեռն բառարամ Հայկագեան լեզուի, Վեմետիկ, ի սուրբ Ղազար, 1865; Ո. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարամ, Եր., 1987; Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարամ, Եր., 1974:

ջավայրով, որտեղ էլ կատարվում են նման փոփոխություններն ու անցնում զրավոր լեզու:

Վերոհիշյալ իրողությունը նպատակահարմաք է ցույց տալ ստորև բերվող աղյուսակի միջոցով, որ ներկայացված են լեզվի պատմական զարգացման երեք փուլերում տարրեր խոսքիմասային պատկանելություն ունեցող մի խումբ քառեր:

Գրաբար	Միջին հայերեն	արդի հայերեն
բարկ	բարկ-բարկ	բարկ
ած- 1.խիստ, ազդու, կծու, քունդ 2. ցաւկուտ, մկ.- 3. սաստկապիս (ՆՀԲ էջ 178) կրուս	մկ.- սաստկապիս, ուժզին, բարձր	ած.- 1 քեծ, կիզիչ 2 կրակուտ 3 խիստ, ազդու, կծու, քունդ 4 սաստիկ 5 (վիլք) զայրազին
կանգուն	կանգնուկ	կանգուն
ած., մկ.- կանգնած, շիտակ, ուղիղ, անթերի (ՆՀԲ էջ 420)	մկ.- կանգնած, կանգուն-կանգուն ած.-կանգնած, կանկուն մկ.- ոսրի վրա կանգնած	ած.- 1 ոսրի վրա կանգնած 2 այնպիսին, որ գտնվում է ուղիղ դիրքում 3 շավերկած 4 հաստատուն 5 (վիլք) չնոցված, յունկճածած
զգոյշ	զգուշ	զգոյշ
ած.- 1.զգուշորեն 2. սպահով (ՆՀԲ էջ 291)	մկ.- զգոյշ, ուշադիր	ած.- 1 ուշադիր, կենտրոնացած 2 շրջահայաց 3 զգուշությամբ կատարված 4 հոգատար, նորու, քրորչ 5 զգուշացման բացականություն
անաշառ	անաշար	անաշառ
գոյ.- 1 խորություն չանող 2 անպատկան չակնածող մկ.- 3 անաշառ կերպով (ՆՀԲ էջ 41)	մկ.- անխտիք, անխնա	ած.- 1 ոչ աշառու, անկողմնակալ 2 անաշառությամբ կատարված 3 (հեց) չակնածող
դիր	դոյր	դոյր
ած.- 1. հեշտ, 2 հարթ, 3 հաճելի գոյ.- 4. հեշտություն, անդրություն 5 հարթակայր մկ.- 6. հեշտությամբ	ած.- 1. հեշտ, թերեւ, դյուրին գոյ.- 2. հարթավայր, դորդուր մկ.- 1. լավ, հաճելի ած., մկ.- 2. հեշտ, դյուրին ած.- 3 հարթ, տափարակ գոյ.- 4 հանգիստ	ած.- 1 շատ ջանք չպահանջող 2. հեշտությամբ կատարվող
անհնարին	անհնարական	անհնարին
ած.- 1 անկարելի, անհնար մկ.- 2. խիստ, սաստիկ 3. անախիկ 4 չափազանց, խիստ շատ	ած.- անհնար, անկարելի	ած.- 1 հնարավոր, անկարելի 2 անհիմադրելի 3 (վիլք) սաստիկ, ծայրահեղ

Համեմատաբար քիչ թվով քառեր խոսքիմասային իմաստափոխության ներարկվելու ձեռք են բերել զոյականի արժեք, կամ լեզվի զարգացման նախորդ շրջաններում ունեցած տարրեր նշանակություններից պահպանել են միայն գոյականականը: Բերենք մի քանի օրինակ՝ քառի խոսքիմասային իմաստափոխության՝ դեպի գոյական ուղղվածությունը ցույց տալու համար:

Գրաբար	Միջին հայերեն	արդի հայերեն
գէշ	գէշ	գէշ
գոյ.- 1. մեռած մարդ,դիակ 2 կոտրած բանի,կտոր ած.- (անկ) հորի, անխործ (ՆՀԲ էջ 215)	ած.- վատ, անպիտան մկ.- վատ, վատ կերպով	գոյ.- կենդանու դի (արևատ ած.-վատ)
անդին	անդին	անդին
մկ.-1.այնտեղ, նույն տեղը 2 շուտով, իսկույն, անմիջապիս նոյն ժամանակ 3 առաջուց (ՆՀԲ էջ 50)	գոյ.- հանդիքձյալ աշխարհը	գոյ.- 1(զվո) այնտեղ, այն կողմը 2. այն աշխարհը, հանդիքձյալ կյանքը
զազան	զազան	զազան
գոյ.- 1 զիշատիչ 2 մեծ օձ, զազանաբարու մարդ ած.- զազ. դարձած (ՆՀԲ էջ 119)	ած.- 1 ուժեղ, բարկ,քունդ 2 (վիլք) հրացայտ	գոյ.- 1 վայրի զիշատիչ 2. (վիլք) արյունուշտ մարդ

Ինչպես ցույց են տալիս նշված դեպքերը, խոսքիմասային բազմիմասություն ունեցող շատ բառեր արդի հայերենում դարձել են նենիմաստ՝ հստակորեն ընկալվելով այս կամ այն ձևաբանական արժեքով: Բայց պետք է նշել,որ կամ բառեր ել (օր՝ «քնիկ», երեց, «ասպետական», ընպետի» և այլն), որոնք իրենց ձևաբանական նշանակության կողքին (իմանականում՝ ածականական) պահպանել կամ լեզվի զարգացման ընթացքում ձեռք են բերել երկրորդ՝ գոյականական նշանակություն՝ (հազվադեպ՝ մակրայական (ըղձայի, դրույզն)) մատնացույց անելով թե՛ հատկանիշը, թե՛ հատկանիշը կրողին:

Բառերի խոսքիմասային բազմիմասության մասին խոսելիս պետք է կարևորել համանուների հարցը: Վերոհիշյալ բոլոր օրինակներում բառերը ունեն խոսքիմասային տարրեր իմաստներ նոյն բառաձևի համար, մինչեւ որոշ բվով բառեր ձևաբանական նոր արժեք են ստանում որպես համանուներ գործածվելու:

գորարար	միջին հայերեն	արդի հայերեն
բարակ-ած. փափուկ, մանր բարակ-գոյ. շուն բարակ-մկ. ուշադրությամբ	բարակ-մկ. 1.մանրամասն 2.մանր 3.քոյլ կերպով 4.աստիճանաբար	բարակ-ած. 1.նվազ հստակություն 2.փոքր տրամագիծ ունեցող 3.փոքր ծավալ ունեցող 4.մանր, մանրահատիկ, նորը 5.բարեձև, ծկուն 6.զգայուն, դյուրազգաց 7.(փլար) մեղմ, ոչ խստ 8.(փլար) ուշադրի, մանրազնին բարակ-գոյ., շամ տեսակ
բալ-գոյ. 1 կեռաս, 2. բալ-գոյ., մեզ, մշուշ ած.-մքազոյն	բալ-գոյ. 1.կեռասնու պատուղը 2. բալենու պատուղը	բալ - գոյ. 1. մեզ, մասախուզ 2. ելվանդության ժամ. լեզվի վրա սապացած փառ, բալ-գոյ. 1.բալենու պատուղը 2. (սխ) կեռասնու պատուղը բալ-գոյ. (պարահանդես)
բափոր-ած. 1.դատարկ 2.ամայի 3.ազատ,անմասն բափոր-գոյ. փայտն մատուցարան	բափոր-ած., մկ. բափոր դատարկ զորկ	բափոր-գոյ. փայտն սկսուելու բափոր ած. 1.դատարկ 2.ազատ 3.անմարդաբնակ 4.զորկ, անմասն 5.տերևները բափված 6. (փլար) ոգևորությունից զորկ
խոռ-գոյ. 1. անցր, փոս, ծերաց 2.փոս տեղ, ձորակ ած- 3. պակասավոր դարձած, թերի, 4. խոռոչ դարձած , խոռ-գոյ. խոտի տեսակ խոռ-ած. ժլատ, խոռ-խրամա- տի կողմը	խոռ-գոյ. 1. ծակ, փոս 2. խրամ 3. ած- տեսն 4. մկ.-տխոր 5. դատարկ, ազատ, բափոր, պարապ	խոռ-գոյ. 1. պատի քանրած մասը 2. այզիների պատի մեջ բաց բոլած տեսը 3. փոս, խրամ 4. փոս թնձած վայր 5. (փլար) սիրտը կոտրած 6. խեթ 7. կիսատ խոռ-գոյ. ուրց

Լեզվի անընդհատ զարգացման և փոփոխության մեջ բառիմաստի հետ փոփոխության են ենթարկվել բայիմաստները՝ զուգահեռաբար ձեռք բերելով նոր իմաստներ:

Չերականական իմաստափոխության տեսակ է նաև բայի սեռի իմաստի փոփոխությունը: Բայի սեռային պատկանելության մեջ կատարված տեղաշարժները ներկայացնող դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրաբարը շատ հարուստ է կրկնասեռ և սեռային զուգահեռություն ունեցող բայերով: Միջին հայերենում արդեն զգալիորեն պակասում են կրկնասեռ բայերը, իսկ ժամանակակից հայերենում դրանց թիվը չափազանց փոքր է: Հենց այս գործընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սեռային փոխանցումները հիմնականում կատարվել են երկու ուղղությամբ՝ 1. կրկնասեռությունից չեղող սեռ. 2. կրկնասեռությունից ներգործական սեռ:

Իհարկե, գերակշռում են կրկնասեռություն չեղող սեռ ուղղությամբ կատարված սեռային անցումների դեպքերը (26 բայից 11-ը՝ կրկ>ն., 15-ը՝ կրկ>չ) (անկանեմ II ան-

կանիմ II, ժամանեմ II ժամանիմ, հոսեմ II հոսիմ, ճամարտակեմ II ճամարտակիմ, ճողարկեմ II ճողորդիմ, հապաղեմ II հապաղիմ, հառել II հառիմ և այլն): Մեռային տեղաշարժերի ժամանակ զրաբարից արդի հայերեն ընկած երկարատև ուղին անցնելիս բայերը կամ կորցրել են զրաբարում առանձին սեռային պատկանելությամբ արտահայտող նշանակությունը (ինչպես՝ «ամբաստել» բայի «արհամարհել» նշ-ը, «անկանել» բայի «հյուսել, գործել», «ժամանել» բայի «ստանալ» նշանակությունը և այլն), կամ նշված նշանակությունն արտահայտել են նոր բառածեավ (կանգնեն (նր)- կանգնեցնել, հաջողեն (նր) -հաջողեցնել) հիմնականում բայածանցների կամ բայական հարարդությունների միջոցով: Մեծ կարևորություն ուներ նաև կրավորական իմաստի արտահայտման համար կամ ածանցի գործածությունը արդի հայերենում: Ինչպես խոսքի-մասային իմաստափոխության դեպքերը քննելիս, այնպես էլ այս պարագայում դարձյալ պետք է կարևորել լեզվի պատմական զարգացման երկրորդ՝ միջնայերենյան շրջանը, քանի որ շատ բայեր հենց միջին հայերենում են կորցրել կրկնասեռությունը և արդեն որպես միասեռ բայ՝ անցել են լեզվի զարգացման հաջորդ փուլ: Օրինակ՝ սատակել<sup>9</sup> բայը ներգործած կիրառության դեպքում զրաբարում նշանակել է 1. «ավերել», «զնջել», «կորցնել». 2. «սպանել», «կոտորել», կրավորած կիրառության դեպում՝ «սատակել», «մեռնել»:

Օր.՝ «Հրաման ետ բագաւորն սատակել զամենայն ապստամք» /Բուգ., 133/: *Սատակէ զամենայն ծնունդու Արգամայ....»* /Խոր., 144/: «Յորժամ պատահէին միմեանց՝ դարձեալ միւսանգամ զմիմեանս սատակէին» /Եղ., 238/: Արդի հայերենում «սատկել» բայը չեղոր սեռի բայ է և վերաբերում է կենդանիներին, իսկ զրաբարում օգտագործվող «մահանալ» նշանակությունը արդեն ստացել է անարգական, արիամարիական երանգ և գործածվում է միայն այն դեպքում, եթե խոսքը վերաբերվում է անարժան մարդուն: Պարզվում է սակայն, որ այս նշանակությունը բառն ուներ միջին հայերենում: Բառարանում կարդում ենք՝ սատկէ - չ.- մեռնելը (կենդանիների մասին) Զի սատկեցաւ ինքն, այն ձին:

«Հաճել» կրկնասեռ բայը զրաբարում նշանակել է՝ նր.- 1. համաձայնեցնել, հաշտեցնել 2. սիրուն առնել, հաճոյացնել 3. վճարել, չը- հավանել, ախորժել, սիրել, հաշտվել:<sup>10</sup> «Քրքը այսու կամեր հածել զմիսու բագաւորին» /Բուգ., 142/: «Հաճեցան հաւնետութեամբ ընտրել զուրութիւն Արտաշրի որույ Սասանայ» /Ազար., 15/: Արդի հայերենում չեղոր սեռի բայ է և ունի զրաբարյան չեղոր սեռի նշանակությունները Նույն նշանակություններն ու սեռու ունի միջին հայերենում՝ հածենալ - չ- հածել, հավանել, բարեհածել. «Որ պարզ երեսով երթանք առ աստուած հանց որ հաճեայ»:

Ինչպես նշեցինք, որոշ բայեր կրկնասեռությունը կորցրել են այս կամ այն բայի-մասսոր կորցնելու հետ. օրինակ՝ վախճանենք<sup>11</sup> նր.՝ «ավարտել», «մեռնել», «վերջացնել», «վախճանիմ չը՝ «մեռնել»: «Ի սաստիկ ցաման լեալ Շամիրամայ՝ ի վախճանի պատզամատրութեան և առնու զրաբնութիւն զօրաց իրոց» /Խոր., 147/: «...ի ծննդէն ևեք մոլորութեամբ լեալ մինչ նովիմը և վախճանեցաւ» /Խոր., 118/: Արդի հայերենում չեղոր սեռի բայ է և պահպանել է զրաբարյան նշանակությունը (չը-մեռնել):

«Հաջողել» բայը զրաբարում նշանակել է՝ յաջողեն- նր. 1. ընդառաջել, հաջողեցնել 2. ներգործել, ազդել յաջողիմ-չը հաջողություն գտնել, առաջ գնալ:<sup>12</sup> Արդի հայերենում չեղոր սեռի բայ է և, ինչպես արդեն նշել ենք, ներգործական իմաստի համար ունի այլ բառածն՝ հաջողեցնել:

«Կանգնել» բայը նշանակել է՝ կանգնեն - նր. 1. կանգնեցնել, շտկել չը. 2. կանգնել, կանգ առնել. «...և կանգնելը զսեղանս կործանեալս» /Բուգ., 420/: «Եւ կանգնեցան կացին ի վերայ ոսից իրոց» /ն.ա./: Այս բայն էլ այսօր չեղոր սեռի բայ է, իսկ ներգործականի համար ունի նոր ձև՝ «կանգնեցնել»:

Սեռային փոխանցումների II ուղղության (կրկնասեռությունից -ներգործական սեռ) դեպքում բայերը իրենց այս կամ այն նշանակությունը չեղոր սեռով կորցնելուց (օրինակ՝ «կրքել» բայի 1 ձգուել մի բանի, 2 ջանալ, հետամտել, 3 նեղ տեղից բռնությամբ

<sup>9</sup> ՆԲՀ, էջ 716:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 461:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 745:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 585:

անցնել), չեզոք սերի արտահայտած նշանակության համար նոր բառաձև ստանալուց («նեղել», բայի՝ չը-1 նեղություն կրել, 2 նեղվել, 3 փոքրանալ, արդի հայերենյան «նեղվել» ձևը) բացի ունեն մի առանձնահատկություն ևս՝ միասեռ բայ լինելով հանդերձ՝ միավորել են գրաբարում օգտագործելի երկու սեռերի իմաստներն էլ:

Օրինակ՝ «պնդել» բայը գրաբարում նշանակել է՝ նր.- ամրացնել, քաջալերել հաստատել, չը- համառել, օգնել, վազել. «...զամենայն ի նոյն պնդեալ ծովեաց զարարածու» /Բուգ., 130/: «Մրով գոտեաւ պնդեցին զմէջա» /ն.տ./: Արդի հայերենում «պնդել» նր. է, բայ նշանակում է նաև թե՛ հաստատել, թե՛ քաջալերել, թե՛ համառել:

Պետք է նշել, որ կրկնասեռությունը գրաբարում միշտ չէ, որ կապված է եղել ե-ի զուգահեռ լծորդությունների զոյության, իսկ սեռային տեղաշարժերն էլ՝ այդ լծորդությունների միավորման հետ: Այս երևույթը ավելի լայն ընդգրկում ունի և, կարծում ենք, կապված է մի ակնառու իրողության հետ: Լեզվի պատմական զարգացման նախորդ շրջանների համեմատ արդի հայերենը բառերի խառնմասային իմաստների և քերականական հատկանիշների տարրության հարցում ճշտում է միօրինակության և հրատակության: Քերականական իմաստափոխությունների բնույթն ենց այդ է վկայում: Այսօր հայերենի բառապաշարում քիչ են թե՛ խորիմասային բազմիմաստություն ունեցող բառերը, թե՛ կրկնասեռ բայերը, իսկ սա զուգադիպություն չի կարող լինել: Միայն ե լծորդության են պատկանել և օգտագործվել են զուգահեռաբար ներգործական և չեզոք սեռերի իմաստներով «Ժամանել», «կաքաւել», «ճամարտակել», «վճարել» բայերը: Կրկնասեռությունը որպես քերականական իրողություն դրսւորվել է նաև *Ա լծորդության պատկանող շատ բայերի մոտ* (կարդալ հոգալ և այլի):

«Ճարել» բայը գրաբարում նշանակել է. չը. նր. 1. ավարտել, 2. վերջ տալ, վրճուել, սահմանել 3. գլուխ բերել, իրագործել, կատարել 4. նր. բավարարել, հոգալ 5. վախճանվել 6. հաստոցել, հասուցում ընդունել, 7. ազատել 8. հեռանալ, բաժանվել:<sup>13</sup> Արդի հայերենում բայը կորցրել է իր բազմիմաստությունը, միայն ներգործական սեռի բայ է և ունի հետևյալ իմաստները՝ դրամով հասուցել մի բան, վարձատրել, փոխհասուցել:

«Հաստատել» երկսեռ բայը գրաբարում նշանակել է. 1. նր. 1. հաստատ դնել, տեղակրթել 2. կանգնեցնել 3. անքացնել, պնդել 4. որոշել, կարգավորել, սահմանել 5. կազմութել, ուժեղացնել 6. ստեղծել 7. հառել, սևեռ (հայացը) 1. հաստատմ-չը. 1. հենվել, կործել 2. կատարվել.<sup>14</sup> «Ժնքեամբ դարձեալ զամենայն նորոգեալ հաստատեաց» /Բուգ., 130/: «Որ մինչ յայն օր ի հաւասու ոչ հաստատեցի» /ն.տ./: Այսօր բայը ներգործական սեռի բայ է և նշանակում է «սահմանել», «կաքաւել», «ամրացնել»:

«Լառել» բայն օգտագործվել է որպես՝ նր.- վառել, այրել չը.- զինավառվել, սպառագինվել, զարդարվել, գրգռել.<sup>15</sup> «...զի առ յոյժ ցանկականի մողեգնութեան ի բանսն որ զնման որպէս ի տեսութիւն շամբշութեամբ վառեալ էր» /Խոր., 148/: «Ծանեալ Հայկ զխումբ վառելոյ ջոկատին, յորում թել առաջի ամբոխին եկեալ հասել ընտիրք և վառելովը ոնամբք» /Խոր., 48/: Այսօր գործածվում է միայն առաջին նշանակությամբ (ունի նաև վառվել ձևը):

Բազմաբիկ այլ բայեր էլ քերականական իմաստափոխության ներարկվելիս անցել են նոյն ուղին (կրկնասեռությունից ներգործական սեռ)՝ «խառնակել», «փսոնել», «կրբել», «նեղել», «վանել», «փարարել» և այլն:

Ինչպես նշեցինք, շատ քիչ բայեր են արդի հայերենում պահպանել գրաբարից ենող կրկնասեռությունը: (31կրկնասեռներից 5-ը), այն էլ՝ գրաբարում ունեցած իմաստների մասնակի փոփոխությամբ: Օրինակ՝ «հաճախել» բայը գրաբարում նշանակել է՝ նր.- բազմացնել, ավելացնել, աճեցնել չը.- բազմանալ, աճել, ավելանալ.<sup>16</sup> «...և յաճախելը շոր պատուի ամենայն եալիսկուպոսացն լճոյ ամենայն տեղին Հայոց մեծաց» /Բուգ., 122/: «....համբաւ գեղոյ նորա հաճախեալ բազմանայր և հնչեր» /ն.տ./: Այսօր էլ է կրկնասեռ բայ, բայց, ունի հետևյալ իմաստները՝ նր.- հաճախակի դարձնել, շատացնել չը.- հաճախակի գնալ, շարունակաբար այցելել:

<sup>13</sup> ՆՀԲ, էջ 765:

<sup>14</sup> Նոյն տեպում, էջ 479

<sup>15</sup> Նոյն տեպում, էջ 749:

<sup>16</sup> Նոյն տեպում, էջ 182:

Արդի հայերենում կրկնասեռությունը պահպանած «վարդալ» բայր չունի գրաբարյան «ձայներ», «աղաշել», «օգնություն կանչել», «մեծարել», «անվանել», «անուն դնել» իմաստները: Նշանակում է «ընթերցել», «արտասահնել», «վերծանել», «դասախոսել», «զեկուցել»: Ունի փոխարերական իմաստներ՝ «արտաքին նշաններից իմանալ», «երգել», «կանչել», իսկ ժողովրդական խոսքում՝ նաև «ուսանել», «սովորել»: Այս վերջին նշանակությունը, ի դեպ, զայիս է միջին հայերենից: «Կարդալ» նր, սովորել, ուսանել «Զամենն ի կարդալ կուտան՝ թէ աղջիկ է և թէ տղայ»: «Կարդել» նր. կարդալ, ընթերցել: «Ու կարդեք, յադօրս յիշեցեք»:<sup>17</sup>

Սեռային փոխանցումների մեջ նկատվում է մի հետաքրքիր իրողություն ևս. շատ փոքր բվով բայեր, որոնք գրաբարում միասեն են, արդի հայերենում դարձել են կրկնասեռ: Մինչ այժմ քննարկված բայերում կատարված իմաստափոխությունը նշվածից խիստ տարբերվում է նրանվ, որ այս բայերը այսօր արտահայտում են նիանգանայն այլ իմաստ: Ի տարբերություն գրաբարում ունեցած նշանակությամ՝ այսօր ցույց են տալիս բոլորովին այլ բնույթ ունեցող գործողություն, որը կարող է պահանջել թե՛ ուղիղ, թե՛ անուղղակի խնդիր լրացնեներ: «Խաղալ» բայր գրաբարում չեզոք սեռի բայ է և նշանակել՝ 1. շարժվել, խաղալ 2. վիստալ, 3. գնալ, ճանապարհվել, 4. ծիծաղել, 5. կատակ անել<sup>18</sup>. «յաջում թիմն նա խաղալ յառաջ» /Բուզ., 238/: «....և աղուեսք նուտ ու եկս խաղացնեն յարկս նոցին» /Ա.Ա. 176/: «Խաղաց եկն էջ յաջմն արթոռ» /Ա.Ա. 128/:

Միջին հայերենում էլ է չեզոք սեռի բայ, բայց արդեն «շարժվել» նշանակության փոխարեն ունի «մոլեխաղով զրադվել» նշանակությունը,<sup>19</sup> իսկ արդի հայերենում՝ չը. 1. որևէ կարգի խաղով զրադվել, ժամանակ անցկացնել նր. 2. որևէ խաղ վարել՝ կատարել, սպորտային խաղով մրցել իրար հետ. 3. Հերքական բայը կատարել խաղի ընթացքում 4. որևէ խաղի տիրապատճել: Եվ այսպես 22 նշանակություն, որոնց մեջ 22-րդը գրաբարյան «շարժվելն» է՝ (հիմ, բնաս) նշումնվ: «Ալլել» բայը չեզոք սեռի բայ է՝ «փրկվել», «ազատվել» նշանակությամը.<sup>20</sup> «....միայն արտորելովն ապրեսցի» /Բուզ., 140/: «....ապրեցոյց զնա ի մահուան» /Ա.Ա. 316/: Միջին հայերենի բառարանում տեղ գտած «ապրեցնել» պատճառական բայը՝ 1. կյանք տալ, 2 պահել իմաստներով,<sup>21</sup> վկայում է, որ արդեն այս շրջանում բայը ծեռք է բերել գրաբարում չունեցած և արդի հայերենում հիմնական համարվող նշանակությունը՝ չը. 1. «կյանք ունենալ», «կենդանի լինել» (+ 14 նոր իմաստներ), նր.՝ «խորապես զգալ», «համբերել», «առնել», «հանակվել» և այլն:

Բառերի նշանակության փոփոխության և մասնավորաբան քերականական իմաստափոխության դեպքերն ուսումնափրեյիս շատ կարեռ է երևույթը իր պատմական զարգացման մեջ տեսնելը՝ հաշվի առնելով լեզվի զարգացման հիմնական փուլերը, մինչեւ հարցն ուսումնափրեյի լեզվաբանները բավարարվել են բառերի՝ հիմ լեզվում ունեցած նշանակությունները նոր լեզվում ունեցած իմաստների հետ համեմատելով: Ստացվում է այնպես, որ իմաստափոխության գործում կարևոր օրակ չի համարվել միջին հայերենը: Կարծում ենք՝ բարիմաստի փոփոխության լիարժեք պատկերն ունենալու համար պետք է համասարապես կարևոր թե՛ գրաբարը, թե՛ միջին հայերենը, թե՛ արդի հայերենը: Մ. Արելյանը այս հարցին անդրադառնալով՝ գրում է. «Պիտի հավաքվեն բոլոր բառերը թե՛ գրավոր առյուրներից, թե՛ բարբառներից, ճշգրտվեն նրանց նշանակությունները ու կիրառությունները, ապա նոր առանձնապես ուսումնափրեյին, թե մեր լեզվի զանազան առումներից ո՞րը հիմնական, ընդհանուր նշանակություն է, ո՞րը պատահական, բայց սովորական դարձած, թե ո՞ր բառը կամ բառերի ո՞ր նշանակությունը գրաբարից է, միջին հայերենից կամ բարբառներից: Այսպիսի հետազոտության ժամանակ չափեած է նորացվեն նաև օտար լեզուների ազդեցությունները».<sup>22</sup> Լեզվի երեք շրջանների բառապաշարը ներկայացնող բացարարական բառարանների համեմատությունը ցույց է տալիս, որ բարիմաստի փոփոխության մեջ մեծ դեր է խաղացել միջին հայերենը, և իմաստափոխությունը ներկայացնող շատ օրինակներ, որոնք Մ.Ա.

<sup>17</sup> Ո. Ղ ա զ ա ր յ ա ն, Հ. Ա լ ե տ ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 387:

<sup>18</sup> ՆՀԲ, էջ 566:

<sup>19</sup> Ո. Ղ ա զ ա ր յ ա ն, Հ. Ա լ ե տ ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 321:

<sup>20</sup> ՆՀԲ, էջ 107:

<sup>21</sup> Ո. Ղ ա զ ա ր յ ա ն, Հ. Ա լ ե տ ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 321:

<sup>22</sup> Մ. Ա ր ե լ յ ա ն ը, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1974, էջ 133:

թեղյանի, Էդ. Աղայանի, Ս. Սուրբիասյանի և այլոց կողմից վերագրվել են արդի հայերենին, ըստ էռթյան գալիս են հենց միջին հայերենից: Մրանից հետևում է, որ արդի հայերենը ընդունել է արդեն իմաստափոխված տարրերակը: Այս լեզվական իրողությունն ուսումնասիրող լեզվարանները երևոյթը պատմական մոտեցումով բացատրելը նպատակ չեն համարել: Երևոյթը քննել են հայերենի որոշակի գոյավիճակի ներսում և ոչ թե նրան ընդհանուր պատմության համայնապատկերի վրա»: Օր. Ս. Արենյանը գրում է. «պատահում է այնպես, որ բառերի սկզբնական նշանակությունը հետ է մրցվում, և նոր նշանակությունը դառնում է սովորական»:<sup>23</sup> Օրինակների թվում նշում է՝ «ապրել» հիմն ազատվել, արձնել փորձանքից, նոր՝ կեալ, կյանք ունենալ, ապա՝ բնակվել: «Ապրանք» հիմն ազատում, նոր՝ վաճառքի իրեր: «Ապրել» բայի մասին արդեն խստել ենք: Ուշադրություն դարձնենք «ապրանք» բառի՝ միջին հայերենում ունեցած նշանակությանը, այն է՝ «աշխատանքի արդյունք», որ բաշխվում է գնման և վաճառքի միջոցով «գույք», «սեփականություն», «ունեցվածք»: Օր.՝ կու հրամայէ օրենքն, որ գրահանայի տուն և ապրանք չգնէ այլ որ»<sup>24</sup>:

Եթե Ս. Արենյանը ուղղակի ներկայացրել է երևոյթը, ապա Էդ. Աղայանը գիտակցարար իր դրույթները կառուցել է բառերի գրաբար-աշխարհաբար իմաստների հարաբերակցության որոշմանք՝ միջին հայերենին ոչ մի ուշադրություն չդարձնելով: Նա նշում է, որ իր կրողնորոշումը «հնարավորություն է տախիս առանձնացնելու բառը ոչ զրաբարյան նշանակությունները, իսկ դրանք էլ տարրերակելու ըստ վերը թվարկված ոլորտների (գրական աշխարհաբար, խոսակցական (ժողովրդախոսակցական) աշխարհաբար, բարբառներ և այլն), որոնց օգնությամբ միայն կարելի է ճիշտ որոշել զրական աշխարհաբարում տեղի ունեցած իմաստային փոփոխությունները և դրանով իսկ ճիշտ պատկերացում կազմել ժամանակակից հայերենի իմաստափոխությունների մասին»:<sup>25</sup> Եթե ուշադրություն դարձնենք Էդ. Աղայանի կրողից իր տեսակետը հիմնավորելու համար բերված օրինակներին, կմկատներ բազմաթիվ վրիհակներ, որոնց գոյությունը կապվում է հենց այն փաստի հետ, որ հեղինակն անտեսել է լեզվի պատմական զարգացման այն շրջանը, որտեղ կատարվել է իմաստափոխությունը և դրանք ներկայացնող դեպքերը վերագրել է հաջորդ շրջանին, այսինքն՝ համարել է արդիհայերենյան իմաստափոխություն: Օր.՝ ապաստուգրաբանության հիմունքով կատարված իմաստափոխության մասին խոսելիս Էդ. Աղայանը օրինակ է բերում «կծու» բառը, որը «նախապես եղել է՝ «ցալ պատճառող» հետազում ստացել է «քարկ», «փոքրող» (համի վերաբերյալ) նշանակությունը՝ «կծու» իմաստի մթագնման հետևանքով»:<sup>26</sup> Այս իմաստափոխությունը արդիհայերենյան չէ: Միջին հայերենի բառարանում կարդում նենք. «Կծուահամ կերակուրք շալակեն ի հետ իրենանց»:<sup>27</sup> Նույնը պետք է ասել «գեղձ» բառի մասին, որի ոչ թե արդի, այլ միջինհայերենյան նշանակությունն էր հեռացել զրաբարյան «գեղին, գեղնագույն», նշանակություններից և ձեռք է բերել «գեղձենու պտուղ» կամ «գեղձենի» իմաստը: «Կամ գեղձին տերեն ծեծ՝ և զօրու կարեցո»:<sup>28</sup> «Յատենի երենն յանդիմանել սկսաւ դեղձի սերկվիլ»:<sup>29</sup>

Հենց միջին հայերենում է «մարդ» բառը կորցրել իր իմաստի և ստուգաբանական իմաստի կապը՝ ստանալով այնպիսի իմաստ, որը չէ կարող բացատրվել նախկին իմաստով՝ «կնոջ ամուսին»: «Տեսեր, որ իր մարդն չէր, մարդեր ու հետ է դարձեր»:<sup>30</sup> Փաստորեն, բառը արդեն ապաստուգրաբանված փոխանցվել է արդի հայերենին: Զգայական - վերաբերմունքային հիմունքով կատարված իմաստափոխությունը իրոք հասուկ է արդի հայերենին՝ ի տարրերություն բյուրզրբունման հետևանքով կատարված իմաստափոխության շատ դեպքերի: Կամ բառեր, որոնք պատկան կերպով մեկնարանվել են նախքան արդի հայերենի բառապաշար մուտք գործելը:

<sup>23</sup> Ս. Արենյան, էջ 133:

<sup>24</sup> Ռ. Ղազարյան, էջ. Արենյան, էջ 75:

<sup>25</sup> Էդ. Արենյան, էջ 78:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 85:

<sup>27</sup> Ռ. Ղազարյան, էջ. Արենյան, էջ 400:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 172:

<sup>29</sup> Նույն:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 116:

Օր.՝ «մազապործ» բառի սխալ մեկնաբանությունը (մազ-ապոր-դարձել են մազապործ) դարձյալ կապված է միջին հայերենի հետ: «Մազապործով վախսառական եղև»:<sup>31</sup> Գնաճը ավելի հետ՝ գրաբարի բացատրական բառարանում կարդում ենք՝ մազապոր կամ մազապործ ա. մ. - վտանգից հազիվհազ ազատված:<sup>32</sup>

Ի՞նչ խոսք, բառը շատ հեռու է արդիհայերենյան իմաստափոխություն համարվելուց: Նոյնը «ճրագալույց» բառի մասին, որի «զույց», «զուցաներ», «վառել» բայի արմատը փոխարինվել է «զույս» բառով:<sup>33</sup> Գրիգոր Տարեացու մոտ կարդում ենք «ճրագալոյն բարգմանի աղօս ծագումն, որ նշանակէ զմարգարէսն»<sup>34</sup> (ԳՏԳԶ.31): Պատմական իմաստափոխության դեպքերից իմաստների ըստացման մասին խոսելիս եղ. Աղայանը բերում է «աղ», «մեղք» բառերի իմաստափոխությունը՝ որպես օրինակ ավածի համար: «Աղ» բառից գրաբարում ունենք «աղու», «քաղցր», «անուշ» (դրանից է արևմտահայերեն «աղվոր» բառը):<sup>35</sup> Սիենոյն ժամանակ «աղ» բառը նշանակում էր «արի», «քրու», «կծու» (իմանականում բարբառներում «աղու» բառը արդեն ստացել էր նաև այդ նշանակությունները): Նոյն իմաստները պահպանվել են միջին հայերենում, իսկ Վերոհիշյալ «աղվոր» բառը անկասկած միջին հայերենից է անցել արևմտահայերենիմ:

«Աղուր կանայք տղայօք գնացին գերի յաշխարհն Պարսից»<sup>36</sup> (ՍՍՊ.50):

«Աղուր» կամ «աղվոր» արմատով կազմված տասից ավելի բառեր կան միջին հայերենի բառարանում:<sup>37</sup> «Մեղք» բառի մասին խոսելիս Աղայանը նշում է, որ «աշխարհաբարում պահպանելով «հանցանք» (որից «մեղավոր», «մեղադրել» բառերը) նշանակությունը, ինչպես և «անխիճն արարք, խոճի դեմ արարք, իմաստը, մյուս կողմից՝ ստացել է «զորք», «փիղճ», «փաղմտանք», «փաղճալի» նշանակությունները (հմնտ՝ «մեղքը զալ», «մեղք է», «մեղքանալ» և այլն):<sup>38</sup> Ուսումնասիրությունը ցույց է տալիս, միջին հայերենում մեղմութ (մեղավոր, անիրավ), մեղք դնել (մեղադրել) բառային միավորների կողքին արդեն կա «մեղքն զալ» արտահայտությունը «փաղճալ» նշանակությամբ: «Աջար ես քեզի մեղքդ չեմ ի զար»<sup>39</sup>

Եղ. Աղայանը խոսում է նաև իմաստափոխության տեսակների մասին՝ ըստ իմաստի զարգացման արդյունքի, ինչպես ինքն է ասում՝ «իմաստների փոխհաջորդման» մասին<sup>40</sup> և ասվածը ցույց տալու համար բերում է օրինակներ, որոնք նշված իմաստները դարձյալ ճեռք են բերել միջին հայերենում և նոր նշանակությունն ունենարով՝ անցել են նոր լեզվին: «Մեղան» բառը արդեն միջին հայերենում չուներ «զոհարան», «քաղին» նշանակությունը «զի սեղամ կազմեմ և կոչեմ զձեզ ի խրախարան»:<sup>41</sup> «Ծախել» բառը իր «վաճառել» նշանակությունը ճեռք է բերել միջին հայերենում և ոչ թե արդի: «Դատաստանն երերում օր եսուր Անդրեյն, զի հանցէ մինչև երկուշաքքի զիւր զրաւականն, և երէ չհանիցէ, նա ծախու հանիցէ կատարել».<sup>42</sup> Նոյնը պետք է ասել «խաղալ» բայի «խաղ անել»<sup>43</sup> նշանակության, «խնդրել» բայի «աղաչել»<sup>44</sup> իմաստի մասին և այլն: Ա. Սուքիասյանը «դարման» բառի «հարդ» իմաստը վերագրում է արդի հայերենին (նշում է՝ այժմ ունի «հարդ» իմաստը):<sup>45</sup> Այն, արդի հայերենում «դարման» նշանակում է հարդ, բայց բառի այս նշանակության հնագույն վկայությունները հանդիպում են գրաբարում. օրինակ. «Քրքն ոչ գտաւ խար երիվարաց զօրուն բազմութեան

<sup>31</sup> Ո. Ղազարյան Հ. Աղետի սիստեմ և աղաջուռ, էջ 96:

<sup>32</sup> Ա. Արքահամյան, Գրաբարի ծեռնարկ, Եր., 1976, էջ 318:

<sup>33</sup> Եղ. Աղայան, Աղվածություն, էջ 89:

<sup>34</sup> Ո. Ղազարյան, Աղվածություն, էջ 94:

<sup>35</sup> Նոյնը:

<sup>36</sup> Նոյն տեղում, էջ 105:

<sup>37</sup> Նոյն տեղում, էջ 32-34:

<sup>38</sup> Եղ. Աղայան, Աղվածություն, էջ 105:

<sup>39</sup> Ո. Ղազարյան, Աղետի սիստեմ և աղաջուռ, էջ 108:

<sup>40</sup> Եղ. Աղայան, Աղվածություն, էջ 108:

<sup>41</sup> Ո. Ղազարյան, Աղետի սիստեմ և աղաջուռ, էջ 321:

<sup>42</sup> Նոյն տեղում, էջ 361:

<sup>43</sup> Նոյն տեղում, էջ 321:

<sup>44</sup> Նոյն տեղում, էջ 344:

<sup>45</sup> Ա. Սուքիասյան, Աղվածություն, էջ 139:

դարման կերակրոյ մինչև ի մէջիշեր» /Ազար. 32/: «Ի խոտոյ է դարման չորբուանեաց» /Վեցօր, 83/ «Որ զարօւմն արմոց նախ ինքեամբ ուստիմ... և զմնացեալն յինքեանց զընդ գէտինս հարեալսն զդարման... թողուին հօտին» /Նար.երգ 330/: Դարման բառի «հարր» նշանակությունը հանդիպում է նաև միջին հայերենում: «Նօսր դարման տուր, և ի խոտ մի՛ զատեր»:<sup>46</sup> «Սուրբ» բառը ոչ թե արդի,<sup>47</sup> այլ միջին հայերենում է ձեռք բերել «մաքուր, ազնիվ, առաքինի» իմաստները: Այդ են վկայում միջին հայերենի բառապաշարում տեղ գտած «արրագրե», «արրամաքուր», «արրակրոն», «արրաշեն», «արրաջին», «արրաքար», «արրիշ»<sup>48</sup> բառերը: Այս և նման բազմաթիվ օրինակներ վկայում են պատմական իմաստափոխության, ինչպես նաև քերականական իմաստափոխության զործում միջին հայերենի ունեցած դերի մասին: Եթե հարցին նայենք ավելի լայն տեսանկյունով, կնկատենք, որ պատմական իմաստափոխությունը՝ որպես լեզվական իրողություն, իմնականում կապվել է միջին հայերենի հետ, իսկ արդի հայերենում ավելի քիչ դրսւորում է ունեցել: Դրամ հակառակ՝ արդի հայերենում զարկ է տրվել բառի բազմիմասությանը, փոխարեական իմաստով գործածվելուն և, իհարկե, քերականական համակարգի հստակեցմանն ու կանոնավորմանը՝ կապված, ինչպես ցոյց տվեցինք, քերականական իմաստափոխությունների բնույթի և առանձնահատկությունների հետ:

#### Համառոտագրություններ

- Ազար.** - Ազարամգեղայ Պատմութիմ Հայոց, Թիֆլիս, 1914  
**ԳՏԳ.ՔԶ** - Գրիգոր Տարևացի, Գիրք բարօգութեամ..., Կ.Պոլս, ԱՇԼ  
**Եղ.** - Եղիշէ, Վասն Վարդանայ Եւ Հայոց պատերազմն, Երևան, 1989  
**Բուգ.** - Փաստով Թիւզանցաւոյ Պատմութիմ Հայոց, Երևան, 1987  
**Խոր.** - Սովորի Խորենացոյ Պատմութիմ Հայոց, Տիֆլիս, 1913  
**ՀՀԱԶ** - Հայ իին և միջնադարյան քնարերգություն, Երևան, 1987  
**Նար.երգ.** - Մեկնութիմ Երգոց Երգոյն Սողոմոնի,  
**ՍՍԴ** - Սնիրառայ սպառապեսի Պատմութիմ Յունաց ի Կոստանդնուպոլիս եւ Հայոց մեծաց, Սովորա, 1856  
**Վեցօր.** - Քարսկ եաց. Կնսարութեական կապարազաւոց ճառք վասն վեցօրեաց  
 արարչութեամ, Վենետիկ, 1830

## СМЫСЛОВЫЕ ГРАММАТИЧЕСКИЕ ИЗМЕНЕНИЯ В ИСТОРИЧЕСКОМ РАЗВИТИИ АРМЯНСКОГО ЯЗЫКА

\_\_\_\_\_ Резюме \_\_\_\_\_

\_\_\_\_\_ Г. Закян \_\_\_\_\_

В статье представлены изменения в грамматических значениях в процессе исторического развития армянского языка, в частности, изменения лексических значений и залоговых форм глагола.

Как показывают исследования, в процессе исторического развития армянского языка происходил переход от многозначности к однозначности, а также от двойных залоговых форм и залогового параллелизма – к однозаголовым формам.

Природа изменений грамматических значений свидетельствует о том, что грамматическая система армянского языка в процессе своего исторического значения стремилась к единобразию в вопросе, касающемся лексических значений и установления грамматических свойств, к четкости.

<sup>46</sup> Ո. Ղազարյան Ավետիքի էջութեամ, էջ 169:

<sup>47</sup> Ա. Սուրբասյան, նշան աշխատանք, էջ 139:

<sup>48</sup> Ո. Ղազարյան Ավետիքի էջութեամ, էջ 347-348:

## Զեմնա ԲԱՌՆԱՍՅԱՆ

### ԺԱՄԱՆԱԿԻ ԱՄՐԱԿԱՅԱՍԱՆ ԶԵՎԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԻ ԼԵԶՎԱՍՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կան լեզվաբանական միջօդիտակարգեր, որոնք զրադպում են մի կողմից լեզվի, մյուս կողմից՝ հարակից երևույթների առնչակցություններով: Դրանցից են էթնոլեզվաբանությունն ու հոգելեզվաբանությունը: Սեր կարծիքով, ազգամշակութային խնդիրները քննելիս անհրաժեշտ է աղբյուրագիտական արժեք վերապահել նաև բարբառներին: Ժամանականից բառերն իրենց խորքում պարունակում են բառագիտական, ծագումնաբանական, իմաստաբանական, հնչյունաբանական տեղեկություններ, որոնցով բարբառագիտական փաստերից կարող են վերաճել ազգագրության, հոգելեզվաբանության, լեզվի պատմության և այլ գիտակարգերի համար հական փաստերի:

Անտեսանելի, անշոշափելի, բայց մեր կամքից անկախ գոյություն ունեցող ժԱ-ՍԱՆ-ԱԿՀ մարդու կողմից ճանաչողության օրինակ է դարձել դեռ վարչական ժամանակներում: Այն շափելը, միանգանայն գործնական նկատառումներով նրա տարրեր հատվածներին անուններ տալը ճանաչողական հսկայական արժեք է ձեռք բերել և դարձել մեր ժողովրդի պատմերավոր լեզվամտածողության յուրատեսակ ցուցանիշ:

Բարբառային միավորների գրանցումների ընթացքում կուտակել ենք հարուստ փաստական նյութ, որի ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս ներկայացնել ժամանակն ամրակայելու ձևերն ու միջոցները ժողովրդի լեզվամտածողության մեջ: Առկա նյութի քննության մեջ առանձնացրել ենք հատկապես Կարճ բարբառի տարրեր խովածքներում առկա իրողությունները, որոնք և ներկայացնում ենք հետևյալ կարգով.

1. Ժամանակի ամրակայումը բայց պատմական դեպքերի ու դեմքերի հիշատակության ժամանակն առավել հաճախ ճանաչելի ու չափելի է դառնում ժողովրդի հիշողության մեջ անցնջելի հետք բողած նշանակալից իրադարձությունների, պատմական դեպքերի հետ կապելով: Հաճախադեպ են պատերազմների, նշանավոր ճակատամարտերի հիշատակությունները: Սեր ժողովրդի պատմական ճակատագրի բերումով ճանաչելի, հասկանալի ժամանակահատված է ճատնանշում մեծ աղետների՝ զարդերի, տեղահանությունների, զանգվածային ջարդերի հիշատակությունը: Այդ ձևով ժամանականիշի արժեք ձեռք բերեցին տրական հոլովածելով արտահայտված կողորումին, փախէ-փախին, զախտին ձևերը: Նմանատիպ բազմաթիվ ժամանականից բառաձևեր ենք գրանցել իրենց պատմական բնօրրանը կրոցքած և Ծիրակի դաշտի գյուղերում հանգրվանած բարբառախոսների հետ գրուցելու: Այդ եղանակով ժամանականից կազմելու օրինաչափ է հայերենի բոլոր բարբառների համար: Հատկանշական է, որ ժամանակի մեջ կողմնորոշվելու նպատակն ոչ միայն տարեց բարբառախոսները, այլև նրանց սերունդները իրք սանրդաձող էին օգտագործում հատկապես 20-րդ դարակարգի արյունալի անցրերը, զարդը, կոտորածը:

Պատմական իրադարձությունների հետ գուգորդվող ժամանականիշ ձևերը գործառել են մարդկանց տարիքը կամ որևէ դեպք կուպիտ մոտավորությամբ նշելու համար: Չնայած 60-ամյա վաղենությանը՝ մեր ժողովրդի համար դեռ թարմ է Երկրորդ աշխարհամարտի հուշը, որի մասին խոսելիս լրացուցիչ պարզաբանումների կարիք չկա, կարելի է ուղղակի ասել՝ պատէրազմին (առաջ, հետո) ...կամ ուղղակի՝ կրովի տարին և այլն: Այսպես՝ Պատէրազմին հերք դեպօս կաշխադեր, կրովի չըտարան (Գյումրի):

Այսպիսի բառաձևեր կիրառելիս խոսվածքը կրողները նախապես հանողված են, որ իրենց խոսքը բացատրության կարիք չունի և հասկանալի է խոսակիցներին:

Ժողովրդի հիշողության մեջ անցնջելուն որոշման 1937 թվականը ներկայիս Ծիրակի գյուղերի բնակչների խոսքում հիշատակվում է իրք բրոնքը տարի՝ այդ ինքնատիպ բառակապակցությամբ նկարագրական եղանակով բնորոշելով տվյալ ժամանակաշրջանը, նաև ժամանակի մեջ կողմնորոշվելու միջոց դարձնելով այն:

Ժամանակի հոսքի մեջ կողմնորոշվելու նպատակով կիրառվող նկարագրական արժեք ունեցող ժամանականից բառեր, բառակապակցություններ կան, որոնք առնչ-

վում են ժողովրդի կյանքում իրենց նախարեալը չունեցող իրադարձությունների հետ։ Հայաստանի խորհրդայնացումից հետո ժողովրդի բառապաշարը ներխուժած այնպիսի արտահայտություններ, ինչպես «անհատական տնտեսություն», «կոլեկտիվ տնտեսություն», «հանատարած կոլեկտիվացում», ծնեցին նաև դրանց իրականացման շրջանը մատնանշող արտահայտություններ, կապակցություններ, որոնք ընկալելի և հասկանալի էին ողջ հանրության համար նաև առանց լրացոցից պարզաբանման։ Օրինակ՝ Անհաղ ժամանագները ըլլուր պարը ջախճըքան էր։

Համատարածի տարին ...

Ժողովրդի մեջ ժամանականիշի արժեքով հիմա էլ կիրառելի են Նիգալայի վախտվա, Նիգօյի քրվի և նմանատիպ բառակապակցություններ, որոնցով արտահայտվում են հարյուրամյա վաղենություն ունեցող դեպքերի մասին, կամ երբ ուզում են նշել որևէ բանի հիմ, հնամու լինելը։

Եղ Նիգալայի (վախտվա) շրջապկե՞ն հո՞րդիծ էս ճարէ (Շիրակի Ազատան գ.):

Քնականարար, խոսքի նյութը կապվում է ոռուական վերջին կայսր Նիկոլայ II-ի անվան և ապրած ժամանակի հետ։

Կիրառելի են նաև նկարագրական ձևեր, որոնք կապվում են Արամ նախարար հետ՝ անհիշելի ժամանակները նկատի ունենալով։ Այսպես՝ Աստամի վախտրվա խօսկ է, որ կրտեն... (Մարմաշեն գ.): Աստամ էշ կորմանի (Քասենի Արմտու գ.):

Սուակել ընդունված է Նոյ նահապեսի անունը հիշատակելու միջոցով որևէ երեւլոյթի կատարման ժամանակը հիմ, անցած-գնացած ժամանակների հետ զուգորդելու։ Կարն բարբառի տարբեր խոսկածքներում Նոյ անունն ստացել է բարբառին առավել հարազատ Նըհո արտասանությունը՝ Նըհօյի տարի։ Սա հավանարար Նոյ և նահապետ ձևերի բաղարկության կոնտամինացիայի արդյունք է։

Պառվելու դավի օր կէնեն, Նըհօյի կախտրվա խօրատեքը մըտկները գուկա։

Վերջին տասնամյակում ժողովրդի խոսքում, հատկապես Արարատյան բարբառի խոսկածքներում տեղ գտած Շարժումից առաջ, Շարժումից հետո արտահայտությունները, որ կապվում են Արցախյան շարժման հետ, իսկական ժամանակներ բառակապակցության արժեք են ստացել և օգնում են կողմնորոշվելու մոտ 10-15 տարվա վաղենություն ունեցող դեպքերի, իրադարձությունների կատարման ժամանակը պարզաբանելիս։ Դրանք գործածական են նաև զյումեցիների խոսքում։ Հատկանշական է, որ բացառական հոլովի համար բարբառին հատուկ - է՛ս վերջավորությունը տվյալ արտահայտության մեջ բարբառների արևելյան խմբակցությանը հատուկ - *ից* ձևով է կազմվում, իսկ բառակապակցության երկրորդ բաղադրիչն արդեն Կարն բարբառի հնչյունական օրինաշափություններին է ենթակա՝ Շարժումից հ'առած, Շարժումից հ'եղիւ...։

2. Ժամանակի ամրակայումք՝ քստ քնական աղեստերի հիշատակության։ Բազմաթիվ տարերային աղետներ տեսած հայ ժողովրդի այս կամ այն հատկածի համար բավական երկար ժամանակ կարող է ժամանակի մեջ կողմնորոշվելու միջոց ժառայել մեծ ավելածությունների պատճառ դարձած և նարդկային մի քանի սերնդի հիշողության մեջ անջնջելի հետոք բռուած ավերիչ երկրաշարժերի հիշատակությունը։ Շիրակի գտությանից հետո հատկապես զգալի է 1988 թ. երկրաշարժի հետ ամեն երևոյթ զուգորդելու՝ ժաշկին, ժաշկից հ'առած, ժաշկէն հ'եղիւ։ Հետաքրքիր է, որ մինչ այդ ավերիչ երկրաշարժը հիշյալ տարածքում հանանան արտահայտությամբ միանգանան այլ ժամանակաշրջանի՝ 20-րդ դարի սկզբի հետ էր կապվում խոսքը։ Անցյալ դարի կեսերին գրառված բանահյուտթյան մեջ հաճախ է հանդիպում տվյալ տարածքում տեղի ունեցած երկրաշարժի տարին, ժամանակը հիշատակելու միջոցով մի այլ իրադարձության ժամանակը նշտելու սովորությունը այդ տարածքի նարդկանց խոսքում։

Բացի երկրաշարժերից, մարդկանց հիշողության մեջ կարող են ամրակայվել մահարեր այլ աղետներ, որոնց հիշատակությունը կարող է կրնկրեն թվական չիշեցնել, այլ միայն մոտավոր ճշտությամբ ժամանակահատված, ինչպես, ասենք, կարգութիւնի տարին, սեղանի տարին։ Դրանք ժամանակային որոշակիություն ունեն սահմանափակ տարածքի մարդկանց հաղորդակցության ընթացքում և հիշատակվել են մեկներկու սերնդի կողմնից։ Բերենք մեկ օրինակ Գյումրիում գրառված խաղիկներից։

Էռնակ էն տարի՝ կարգութիւնի տարի։

Примеч

Էշը ծախէծինք, Նադալին կարկինք:

Ժողովրդի հիշողության մեջ տասնամյակներ շարունակ կարող է պահպանվել նաև ժանտախտի համաճարակը և դրա հետ զուգորդման ճանապարհով հիշվել որևէ այլ իրադարձություն: Մահաբեր համաճարակների հիշատակությունն առանց տարեթիվ նշելու էլ ժամանակի մեջ կողմնորոշվելու միջոց կարող է դառնալ տասնամյակներ շարունակ, ինչպես՝ *Խոյերի տարին* սալդար գրնացի,

Զոխստագ ձակերս անհեր մընացին:

Նկարագրական եղանակով ժամանակը ճշտելուն կարող են նպաստել հիշողության մեջ անցնենա հետո բողած համբնիանուր նեղություններն ու դժվարությունները, որոնք ամրակայիլում են այսպիսի կայուն բառակապակցություններով՝ *սէկուտոքի տարի, սօվի տարի, հածի նէղ տարի...*: Այդպիսիք շատ կան ժողովրդական ասացվածքներում: Ասենք Սօվի տարին մէրը մանուգն ուրածէլ է:

Նկարագրական եղանակով ժամանակ արտահայտող բառերն ու բառակապակցությունները թեև աստիճանաբար կարող են մոռացվել, սակայն մնում են լեզվում դարձվածքների ձևով՝ այս տարի, մասի տարի և այլն: Այսպես՝

Սյի տարին իմն է՞ր, որ նայի տարին իմն երեք:

Տարերային աղետներից, անակնելա վնասարեր երևոյններից գերծ մնալու համար հայ զյուղացին բացի պարտադիր պատերից պահում էր նաև կամավոր, հնարուի պասեր, կատարում պարականուն ծեսեր: Ներքին Բասենում դրանք կոչում էին «հարամ կիրակիներ»: Այդպիսիք էին *կարկորի կիրակին, օօի կիրակին, մորեխի կիրակին*, որոնց նպատակը այդ չարիքներից նարդկանց գերծ պահելն էր: Տարեր տարածքներում Սեծ պասի առաջին շաբաթ օրը պարտադիր մի ծես էր կատարվում՝ մարդկանց աղետակի մի հիվանդությունից՝ ընկնափորությունից հետու պահելու նպատակով և հիշվում է *բալալօցի կիրակին* առունու:՝<sup>1</sup> Այդ օրերին զբաղվում էին միայն առտնին զործերու: Դրանք գործերը դադարեցվում էին:

Բնական, տարերային աղետների, համաճարակների ու նեղությունների ժամանակը հիշողության մեջ ամրակայելու և դրանց հիշատակությամբ այլ իրադարձությունների ու զործընթացների ժամանակը ճշգրտելու նպատակով կիրառվող ժամանականից բառերն ու բառակապակցությունները տվյալ տարածքի մարդկանց լեզվում կարող են զործառել մի քանի ժամանամյակ, քանի դեռ կան ականատեսները: Հետագայում դրանք կարող են մոռացվել և զրկվել զործառություն:

**3. Ժամանակի ամրակայտմը՝ ըստ երկրագործական աշխատանքների:** Ժամանակի ընթացքայնության մեջ դրոշակիություն մտցնելիս ժողովրդի լեզվամտածողության մեջ առանցքային հենակետների դեր է կատարում դաշտավարական, զյուղատնտեսական աշխատանքների պարբերականություն:

Վաղ մանկական հասակից մասնակից լինելով դաշտավարական աշխատանքներին՝ զյուղացին զիտե, թե տարվա ո՞ր ժամանակահատվածը ո՞ր աշխատանքի հետ է առնչվում: Այս ինաստով էլ բոլորին հասկանալի ժամանակ են մատնանշում «վարուցանքին», «վաստինմածին», «կալի վախտը» և նմանօրինակ ձևերը: Եվ դրանց հետ կապելով էլ ծշտել ու դրոշել են այլ իրադարձությունների կատարման ժամանակը: Մարդկանց ծնունդը, մեկնելու ժամանակը, մահը և նման այլ իրադարձությունների ժամանակը հիշվում է զյուղական աշխատանքների իրականացման ժամանակաշրջանի հետ զուգորդելով: Քերենք օրինակներ Հայոցներզս կալի վախտը և ծընկել, մէգէլլ՝ *Խոյերներներին*: Կալի գործէրի թէժ վախտը հիմնողա, գոյներ հընգա: Կալոցին հավաք հընգավ, թէ քըստերը տէրդէրին սըրանել էն: Ներքին Բասենի բանահյուսության մեջ գտել ենք դաշտավարական աշխատանքների հետ առնչվող բազմաթիվ նկարագրական ժամանականիշներ: Հացրալին խօսկ են առել՝ կալը պըրծնինք, նըշանվինք:<sup>2</sup>

Հնարավոր է, որ դաշտավարական ու անասնապահական գոտու բնակլիշներին անհայտ լինեն այգեգործական գոտու բնակլիշների լեզվին հատուկ, տերմինային արժեք ունեցող մի շաբթ բառեր, ինչպես նաև հակառակը, այգեգործականին էլ անծանոք լինեն դաշտավարական ու անասնապահական գոտու որոշ բառեր: Սակայն բնակլի-

<sup>1</sup> Գ. Հակոբյան, Ներքին Բասենի ազգագործությունը և բանահյուսությունը, Եր., 1974, էջ 246:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 46:

մայական միջավայրով պայմանավորված տարրերությունները լայն տարածական ընդգրկում չունեն: Հայերենի բոլոր բարբառներում էլ կիրառվի ու ընկալելի են վարուցանքին, հացքաղին, կալօշին և նման ձևերը:

4) Ժամանակի ամրակայտմն ըստ առօրյա կենցաղակարգի: Ամենօրյա առտընին գործերը գրեթե միշտ նոյն ժամին կատարելով՝ մարդիկ դրանց միջոցով կույիտ նոտավորությամբ կարողացել են ժամանակի մեջ կողմնորոշվել: Ժամանակի հետ ոչ մի կապ չունեցող բառերն անգամ տրական հոլովածեռվ ժամանակի պարագա են ձևավորում խորսում: Այդ եղանակով ժամանականից մակրայի արժեք են ձեռք բերել ընտանեկան իրադարձությունների հետ կապվող հարսանիքին, հարսղնտէսին, նշանադրութին, փէսարքրաշին, զրուխլզային և նման ձևերը: Ամեն առավոտ բռնիրը նոյն ժամին վառելը (Բասենի խոսվածքով՝ բընդիրը բոցելը) նկարագրական եղանակով ժամանականից մի մակրայով է արտահայտվել՝ բընդրաքօցին, որ գտել ենք Ներքին Քասենի ազգագրության ու բանահյուսությանը նվիրված զբուում:

#### Սարախստրված բընդրաքօցին

Լուս Երիխութքս օրօրօցին,

Սրբութիւն ձեռք մնաց ծօցին...<sup>3</sup>

Տվյալ դեաքում՝ բընդրաքօցին = վաղ առավոտյան՝ բընդիրը բոցելու ժամին:

Վաղնջական ժամանակներում մարդիկ օրվա ժամերը կույիտ նոտավորությամբ որոշում էին նաև կենսանիների վարքի, բույսերի առանձնահատկությունների վրա հենվելով: Հնուց ի վեր արադադի առաջին և երկրորդ կամչերը օրվա սկիզբն ազդարարող և կենցաղային, առունին աշխատանքները կարգավորող ժամանակաշափի դեր են ունեցել՝ խորհրդանշելով գիշերավարտն ու լուսարացը: Հայերենի շատ բարբառներում աքաղաղի առաջին կամչի պահը բառայնորեն դրսուրվել է հետաքրքիր ձևերով՝ աքաղաղանշին (Արարատյան խոսվածքներ), վըրցըկկանշին (Ղարաբաղ), խավխոսումին (Վան, Շատախ) խօրօվինոսումին (Սալարիա), խօրօվկանշին (Կարճն խոսվածքներ):

Այսպիսով առանձին վիճակների կրկնությամբ պայմանավորված՝ ժողովրդի լեզվամտածողության մեջ առանցքային հենակետների դեր են կատարում դաշտավարական, զյուղատնտեսական աշխատանքների պարերականությունը, առունին կենցաղակարգը, որոնք կարող են ուղենիշի դեր կատարել այլ երևույթներ ու գործընթացներ դրանց հետ զուգորդելով: Այդ ճանապարհով լայն գործառույթ ստացած բառաձևերի, բառակապակցությունների հիմնական մասը հասկանալի է ողջ հանրությանը, երբեմն էլ դրանք կարող են գործառել սահմանափակ տարածում նիայն:

Ժամանակը հաշվելի ու ճանաչելի է դառնում հասարակական-քաղաքական նշանավոր իրադարձությունների, տարերային աղետների, պատերազմների ու տեղահանությունների՝ ժողովրդի հավաքական հիշողության մեջ անջնջելորեն ամրակայվելու հետևանքով: Ժամանակային կոնկրետության հասնելու նպատակով բարբառներում լայնորեն գործառում են նկարագրական արժեք ունեցող բառեր, բառակապակցություններ, քանզի անորոշությունը խորը է ժողովրդի լեզվամտածողությանը:

## ФОРМЫ ФИКСАЦИИ ВРЕМЕНИ В НАРОДНОМ ЯЗЫКОВОМ МЫШЛЕНИИ

Резюме

Дж. Барнасян

Абстрактность чужда народному языковому мышлению. Существуют диалектные слова и словосочетания, выражающие время описательным способом. Время становится рассчитываемым, узнаваемым и посредством закрепления в памяти и сопоставления с другими процессами знаменательных общественно-политических событий, стихийных бедствий, войн и исходов. Вследствие повторения отдельных ситуаций в народном языковом мышлении роль стержневых опор выполняет периодичность полевых работ, домашний быт.

<sup>3</sup> Գ. Հակոբյան, 624 աշխ., էջ 343:

## Հուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

### ԵՐՎԱՆԴ ՎԵՐՋԻՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ

«Վրաց պատմություն» («Քարքիս ցխովրեա») վկայում է, որ Հայոց Երվանդ (Խարվանդ) թագավորը, պատերազմ սկսելով վրացիների դեմ, «գրավեց Քարքիսի սահմանները՝ քաղաք Ծունդան և Արտահանը (Արտանը) մինչև Կուրը, և բնակեցրեց Ծունդայում զազանաբարոտ մարդիկ՝ դևերին ազգակից, և կոչեց Ծունդան [նոր] անունով Քաջառուն, որ թարգմանաբար նշանակում է «Ների տուն»<sup>1</sup>:

Վրացի պատմիչը չի իմացել, որ հայերեն քաջ բառը ոչ միայն «քաջը, դև» է նշանակում, այլև «կորովի, հզոր, գորավար, ժիր», «զյուցազն» և այլն<sup>2</sup>: Բայց դա չէ էականը, այլ այն, որ Երվանդ Վերջինը (մ.թ.ա. III դարի վերջին տասնամյակներ), հյուսիսից եկող վտանգը կանխիւրու մտադրությամբ, Քաջառուն անունով ամրոց էր կառուցել Զավախիքի Ծունդա բնակավայրում՝ ներկայիս Ախալքալաքի մոտերքում<sup>3</sup>, որտեղ և տեղակայվել էր «քաջերից» բաղկացած Երվանդի լճանիր գորամասերից մեկը: Սա այն նույն Երվանդն է, որի անվան հետ է կապվում Երվանդաշատ, Երվանդակերտ, Բազար բնակավայրերի կառուցումը<sup>4</sup>:

«Վրաց պատմության» մեջ, ինչպես տեսանք, ակնարկ կար նաև Արտահանի վերաբերյալ: Կարենի է կորածել, որ հյուսիսից եկող վտանգը սպառնում էր ոչ միայն Զավախիքն, այլև հարևան Արտահան զավադին: Վրացական առյուրները ներկայիս Արտահան քաղաքի մոտերքում հիշատակում են Քաջաց քաղաք (Քաջրա-քալաքի) անունով մի բնակավայր<sup>5</sup>: Տեղանվաճ քաղաք (քալաքի) բաղադրիչն արդեն խոտմ է այս բնակավայրում ամրոցի գոյության մասին<sup>6</sup>, իսկ քաջաց բաղադրիչը վկայում է, որ Քաջառունի ննան այն ունեցել է «քաջերից» բաղկացած կայազոր:

Մեր կարծիքով, նոյն «քաջերից» պատճառով է Քաջքար (*<Քաջաքար>*) կոչվել Տայր նահանգի արևմտյան սահմանին գտնվող Պարիսար լեռնաշղթայի զազարներից մեկը: Այս լեռնամունքը ևս խոսում է Քաջքար լեռան շրջակայրում Տայրի Արսեաց Փոք զավառում, «քաջերից» գորամասի երբեմնի գոյության մասին: Ի դեպ, Քաջքարը և Կաճկաքարը տարբեր լեռնազագագաթներ են: Պարիսարի այս զազարներից առաջինն ունի 3937մ բարձրություն, իսկ երկրորդը գտնվում է նրանից հյուսիս-արևելք և ունի 3348մ բարձրություն:

Իսկ ի՞նչ վտանգ էր կախվել Հայաստանի հյուսիսային այդ շրջանների՝ Զավախիքի, Արտահանին և Տայրի վրա, որ Երվանդը անհրաժեշտ էր համարել զբաղվելու դրանց պաշտպանունակության ամրապնդման հարցով, եթե հարավում նա ուներ այնպիսի մի հզոր քշնամի, ինչպիսին Սելևյան Անտիոքոս Սեծ (մ.թ.ա. 223-187թթ.) բազավորն էր: Վրաց առյուրների հավաստմանը, մ.թ.ա. III դարի սկզբներին Փառնավագի գլխավորությամբ կազմակրկված վրացական պետությունը (Քարքի, Վիրը, Իրերիա) վայելում էր Սելևյանների հովանափորությունը և դաշինքի մեջ էր Հյուսիսային Կովկասի սարմատական ու լեռնաց ցեղերի հետ<sup>7</sup>: Նրա բազավորները բացահայտ քշնամական դիրք էին բռնել Հայաստանի նկատմամբ: Նրանց գորքերն ու դաշնակից հրոսակախմբերը պարբերաբար ասպատակությունների էին ենթարկում Հայաստանի հյուսիսային շրջանները: Երվանդ-Արտաշես հականարտության տարիներին, օգտվելով երկրում տիրող խառը վիճակից, նրանք գրավեցին վերոհիշյալ հայկական շրջան-

<sup>1</sup> L. Մելիք սեպ - Բեկի, Վրաց առյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. I, Եր., 1934, էջ 155:

<sup>2</sup> Նոր բառզիրք հայկակեան լեզուի, հ. II, Եր., 1981, էջ 981:

<sup>3</sup> Ս. Երեմյան, Հայաստանը բառ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 89:

<sup>4</sup> Սովորի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը Ս. Արենյանի և

Ս. Հարությունյանի, Եր., 1981, Բ, լր-խը:

<sup>5</sup> Ս. Երեմյան, Հայոց, էջ 89:

<sup>6</sup> Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Եր., 1979, էջ 542:

<sup>7</sup> Գ. Մելիք Մատևոսյան, Կ պատմությունները Հայոց պատմությունների մասին, Երևան, 1959, ս. 266-271.

ները: Միայն տասնամյակներ անց Արտաշես I-ին (մ.թ.ա. 189-160թթ.) հաջողվեց, ինչպես Ստրաբոնն է վկայում, գրավել «փրեմներից Պարիադրեսի լեռնալանջերը, Խորզենն և Գոգարեննեն»:<sup>8</sup> Սրանցից Գոգարեննեն «Աշխարհացոյցի» Գուգարք նահանգի արևելյան կեսն է (Զավախսը ներառյալ), Խորզեննեն՝ արևմտյան կեսն է (Արտահանը ներառյալ), «Պարիադրեսի լեռնալանջերը» գտնվում են հետագա Տայր նահանգում:<sup>9</sup>

Վերադառնալով «քաջերի» հարցին նշենք, որ նրանք Երվանդ քաջավորի հուսալի հենարաններն են եղել ոչ միայն հյուսիսային թշնամիների դեմ նրա մղած պայքարում: Երվանդի և Արտաշեսի բանակների միջև մղված վճռական ճակատամարտի ժամանակ, «երկու ճակատներն իրար խառնվելիս, Արտաշեսի դեմ են զայխ Տավրոսցի քաջ մարդիկ», որոնք մահեց աջերն առաջ՝ Երվանդին խոստացել էին, թե Արտաշեսին կսպանեն»:<sup>10</sup> Գրաբար տեքստում նրանք կոչվում են արք քաջը տավրացիք: Քացատության կարիք ունի միայն տավրացի բառը, որի ընդհանրական իմաստը, մեր կարծիքով, այս դեպքում, «Հայաստանի լեռնական» է:

Սովոր Խորենացու աղբյուրի հեղինակը, ըստ երևույթին, Ստրաբոնի կամ մեկ ուրիշ անտիկ հեղինակի հետևությամբ, Հայկական լեռնաշխարհի բոլոր լեռնաշղթաները համարել է Տավրոսի ճյուղերը, իսկ նրանց լեռնցից բնակիչներին, բնականարար, տավրացիներ (տավրոսցիներ): Օր., Ստրաբոնը, Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի նկարագրությունը այսպես է շարունակում. «Մի քանի բազուկներ, որոնք շրջապատում են Վրաստանը, լեռնաշղթայից գնում են դեպի հարավ, որ նրանց միջև է գտնվում և միանում են Հայկական և Սոսրիկյան կոչված լեռներին, ինչպես և Սլյուտիխեսին և Պարիադրեսին: Այս բոլոր լեռները մասերն են Տավրոսի, որ ձևացնում է Հայաստանի հարավային կողմը, և բաժանվերև այնտեղից դեպի հյուսիս են ճգվում և հասնում մինչև Կովկաս և մինչև Եվրոպի ափ (Ալծովյան-Լ.Պ.) ծովեզրը, որ ճգված է Կողքիսից Թեմիսլյուրա»:<sup>11</sup> Մեկ ուրիշ վկայություն. «Այստեղից (Հայաստանից-Լ.Պ.) հոսում են երկու մեծ գետ... Այս երկուսից մեծագույնն է Եփրատը, որ անցնում է Երկրի մեծ մասով՝ ոլորապույտ հոսանքով, սկիզբ առնելով Տավրոսի հյուսիսային մասում, հոսելով դեպի արևմուտք՝ Մեծ կոչված Հայաստանի միջով՝ մինչև Փոքր Հայք, աջում ունենալով այս երկիրը, իսկ ձախում... Մեծ կոչված Հայաստանի Եկեղիքը, Ծոփը, առաջանում է դեպի Ասորի և նոր պատույտ հասնում է Բարեկան և Պարսից ծոց»:<sup>12</sup>: Ինչպես տեսնում ենք, Ստրաբոնը Տավրոսի հյուսիսային ճյուղավորումներն է համարում ինչպես Արևելապոնտական (Պարիսարյան) լեռնաշղթայի մասերը, այնպես էլ Բարձր Հայքի Ծաղկավետ լեռը, որտեղ և գտնվում էին Արևմտյան Եփրատի ակունքները<sup>13</sup>:

Սովոր Խորենացու կրտսեր ժամանակակից Պրոկոպիոս Կեսարացին (մոտ 490-562թթ.) և Տավրոսի վերաբերյալ նոյնակի պատկերացում ունի: Նա գրում է. «Հայաստանից (Բյուզանդական Հայաստանից-Լ.Պ.) Պարսկաստան գնացողի աջ կողմում է գտնվում Տավրոսը, որը ճգվում է մինչև Իրերիա...»:<sup>14</sup> Երկրորդ վկայությունը. «Կիլիկիայի Տավրոս լեռը ճգվում է Կապաղովկիայի, Հայաստանի (Բյուզանդական Հայաստանի - Լ.Պ.) և Պերասրմենիայի (Պարսկական Հայաստանի - Լ.Պ.) վրայով մինչև Ալբանիա, Իրերիա և մյուս ժողովուրդների [տերիտորիան], որոնք ապրում են նշանակած երկրներում ինքնավար կամ պարսկներին հպատակ վիճակում»:<sup>15</sup>

Երվանդ Վերջին արքային նտահոգել է ոչ միայն Երկրի հյուսիսային, այլև հառավ-արևելյան և արևելյան ասհմանների անվտանգության հարցը, որովհետև նոյնակի սպառնալից վիճակ ստեղծվել էր Վերջիններում: Այս կողմերից Հայաստանին սպառնում էին Աստրապատականը և նրան ենթակա կամ դաշնակից «կասպիական» ու

<sup>8</sup> *Strab o, XI, 14, 5* (Հ. Սանանյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.I, Եր., 1944, էջ 116):

<sup>9</sup> Հ. Մանանյան, Աշխարհացոյց Համայնք, հ. I, էջ 15-117:

<sup>10</sup> Խորենական աշխարհացոյց Համայնք, հ. I, էջ 15:

<sup>11</sup> *Strab o, XI, 2, 15* (Ստրաբոն, Քաղեց և քարզմանեց Հ. Աճառյան, Եր., 1940, էջ 27):

<sup>12</sup> Նոյն տեղում, 12, 3 (էջ 43):

<sup>13</sup> Ո. Երեմյան, Աշխարհացոյց Համայնք, հ. I, էջ 56:

<sup>14</sup> Պրոկոպիոս Կեսարացի, Տավրոսի հյուսիսային ճյուղից, առաջարան և ծանոթագրություններ Հ. Բարիկլյանի, Եր., 1967, էջ 40:

<sup>15</sup> Նոյն տեղում, էջ 22:

«աղվանական» քազմաքիլ քոչվոր ցեղերը<sup>16</sup>: Թե ինչքան մեծ էր այդ վտանգը, երևում է թեկողև այն հանգամանքից, որ ավելի ուշ Արտաշես I-ը հայկական հողերի վերամիավորմանն ուղղված իր գործողություններն սկսել էր նախ Ստրպատականի մարերի և հիշյալ ցեղերից ամենաուժեղի դեմ արշավելով: Նրանց պարտության մատնելուց հետո միայն Արտաշես I-ի բանակները արշավաճրի էին եել Վիրքի և նրա դաշնակիցների, ապա և նյուտ հարկանների դեմ: Հայաստանի գլխավոր հակառակորդների դեմ Արտաշես I-ի բանակների տարած հաղթանակների արդյունքներն անվտանգած են Ստրարոնի հետևյալ տողերում. «Պատմությունը ասում է, որ Հայաստանը, նախապես փոքր, աճեց այնուհետև Արտաշեսի և Զարեհի ձեռքով, որոնք նախապես Անտիոքոս Մեծի զորավարներն էին, և նրա անկումից հետո՝ քազակորեցին, մեկը Ծոփքի... , մյուսը՝ Արտաշասի վրա: Երկուսն էլ մեծացան շրջակա ազգերից գրավելով զանազան զավառներ. Սարերից՝ Կասպիանան, Փավնիտիսը և Բատրոպեդան...»:<sup>17</sup> Թվարկվածներից Փավնիտիսը՝ Կասպուտան (Ուրմիա) լճի մոտ գտնվող ինչ-որ շրջան է, Բատրոպեդան՝ «Աշխարհացոյցի» Պարսպատունիքն է (այժմյան Սիահ-քոն // Ղարադար լեռնային շրջանը հյուսիս-արևմտյան Իրանում), իսկ Կասպիանան՝ Կասպից երկիրը, «Աշխարհացոյցի» Փայտակարան նահանգն է (Պարսպատունիքի և Կասպից ծովի միջև տարածվող շրջանը՝ ներկայիս Խայբիշը ներառյալ)<sup>18</sup>: Կասպից երկիր ցեղերի դեմ Արտաշեսի օրոք տեղի ունեցած արշավաճրի մասին ավելի նախանակ տեղեկություններ հադորում է Սովուն Խորենացին<sup>19</sup>: Քայլ դրանք տեղի են ունեցել մոտ չորս-հինգ տասնամյակ անց այն ժամանակվանից, երբ ունեցել էին իրենց նախադեպը Երվանդ Վերջինի օրոք:

Հոյն պատմի Պոլիբիոսի մի վկայությունը (Polib., V, 55) հիմք ընդունելով՝ Գ. Տիրացյանը գրում է, որ մ.թ.ա. «III դարի կեսին, հավանաբար, ել ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Ստրպատականի քաղաքական հրապարակի համար, որի ընթացքում Արևելյան Հայաստանի որոշ շրջաններում կարող էր հաստատված լինել Ստրպատականի գերիշխանությունը: Ստրպատականի մեծապետական ձգումների առաջն առավ Սելևկյան Անտիոքոս Գ-ը, որը 220 թվականին արշավեց Ստրպատական և հպատակեցրեց իրեն»<sup>20</sup>: Եթե անգամ Ստրպատականը տիրացել էր Հայաստանի արևելյան ինչ-որ շրջանների, ապա Երվանդ Վերջինը չէր կարող օգտված չինել հիշյալ նախատավոր հանգամանքից: Նա այդ ժամանակ կարող էր Աստրպատականին դուրս մղել հայկական արևելյան տարածքներից և դրանք վերամիավորել իր քազավորության մեջ: Ինչպես Սովուն Խորենացու մի վկայությունից է պարզվում, ավելի ուշ սկսված Երվանդ-Արտաշես հակամարտության սկզբին Ուտիքը՝ Հայաստանի ծայր հյուսիս-արևելյան նահանգը, արքունական տիրույթ էր: Այսուղ էր գտնվում Երվանդ Վերջինի ձմեռանոցը.<sup>21</sup>

Թե մեկ, թե մյուս դեպքում առկա էր Աստրպատականից եկող վտանգը, և Երվանդ արքան ջանք չէր խնայելու ամրապնդելու համար Աստրպատականին հարող ծայրամասային շրջանների պաշտպանունակությունը: Դրանցում ևս նա պետք է կառուցեր ամրոցներ և տեղաբաշխներ՝ «քաջերից» քաղկացած կայազորներ՝ ծիշտ այնպես, ինչպես վարվել էր իր քազակորության հյուսիսային (Վիրքին հարող) սահմաններն ամրապնդելիս: Այս տեսանկյունից ուշադրության են արժանի հարավային Սյունիքի Երվանդակերտ, Երվանդակերտ և Քաջ-քաղաքիչներով տեղանունները: Երվանդակերտը հիշատակում է Սյունիքի պատմի Ստեփանոս Օքրելյանը Սյուս Քաջը կամ Քաշումիք կոչված զավառի բնակավայրերի շարքում:<sup>22</sup> Այս Երվանդակերտը նույնաց-

<sup>16</sup> Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. I, Եր., 1971, էջ 508:

<sup>17</sup> Strab. XI, 14, 5 (Ստրարոն, էջ 57):

<sup>18</sup> U. Երեմյան, Աշխարհագործություն, «Պատմա-քանակական համարես», 1975, թիվ 2, էջ 167:

<sup>19</sup> Խորենացի աշխարհագործություն, «Հայոց պատմության» և Ստրարոնի «Աշխարհագործության» մի քանի դրվագներ՝ Հայաստանի ն.մ.թ. III-II դարերի պատմության մասին, «Քաներեր Սատենադարանի», 1962, 6, էջ 17-24:

<sup>20</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 513:

<sup>21</sup> Խորենացի աշխարհագործություն, էջ 1:

<sup>22</sup> Սեփական օրոք Երվանդ Վերջինի պատմություն, Եր., 1986, էջ 401:

նում են Այժմյան Կապանի շրջանի Երվանդաշեն գյուղատեղի<sup>23</sup> հետ, քայլ դրանց անունների «-կերտ» և «-շեն» բաղադրիչները տարբեր տիպի բնակավայրեր են նշում, որեմն, նշում են նաև տարբեր տեղադրություն ունեցող բնակավայրեր: Այնուամենայնիվ, Երվանդ-ա-կերտ և Երվանդ-ա-շեն (գրաբարյան Երուանդակերտ և Երուանդաշեն) տեղանուններն իրենց Երուանդ բաղադրիչով բացահայտում են իրենց արքունակատկան բնակավայրեր լինելու և Երուանդ անունը կրած արքայի կողմից կառուցված լինելու իրողությունները: Ուշադրություն դարձնենք, որ դրանք երկուսն էլ գտնվել են հարավային Սյունիքում և, որեմն, հսկելու էին այն ճանապարհը, որը Արաքսի ստորին հոսանքի շրջանից տանում էր միջին հոսանքի շրջանը՝ Նախիջևանի երկրամաս, ապա և՝ Արարատյան դաշտ: Այդ ճանապարհով էին Հայաստան ներխուժում Ատրպատականի դաշնակից «կասպիական» և ապա «աղվանական» հրոսակախմբերը: Այս առթիվ կարող ենք հիշել դարեր անց (մ.թ. 335թ.) տեղի ունեցած մազքութական հրոսակախմբերի ներխուժումը Հայաստան, որը տեղի ունեցավ նոյն այս ուղղությամբ<sup>24</sup>:

Մուս Քաղը կամ Քաշունիք կոչված գավառի արքունական տիրույթ լինելը կոսհվում է ոչ միայն այստեղ արքայական Երվանդ անունը կրող Երվանդակերտ և Երվանդաշեն կոչված բնակավայրերի գոյությունից, այլև Զավախյիք՝ Քաջատուն ամբոցի օրինակից: «Քարթիս ցխովերայի» վերոհիշյալ մեջքերման առթիվ Բ. Հարությունյանը նկատել է տախս, որ խոսքը այդ տարածքի «անմիջական արքունիքի վերահսկողության տակ անցնելու և այնտեղ արքունական կայազոր հաստատելու մասին է»:<sup>25</sup> Հարավային Սյունիքի դեաքում ևս գործը առանց արքունական կայազորի հաստատման ավարտված չէր լինի: Արդեն զիտենք, որ այդ կայազորի մարտիկները կոչվում էին «քաջեր»: Մնացե՞լ է նրանց հիշատակը Սյունիքում: Կարծում ենք, այս: Քաջարանց էր կոչվում Կապանի շրջանի արևմտյան մասում գտնված այն գյուղը, որն այժմ ներառված է Քաջարան քաղաքի շրջագծի մեջ:<sup>26</sup> Մի ժամանակ վերջինս նոյնապես կոչվել է Քաջարանց:<sup>27</sup> Նոյն անունով Կապանի շրջանի արևմտյան մասում կա լեռնազար (3403մ) և գետակ, որը Կապուտշին գետակի հետ միասին գոյացնում է Ողջի գետը:<sup>28</sup> Քաջարանց անունը պարզ ստուգաբանություն ունի. \*Քաջ-արանց, որտեղ երկրորդ բաղադրիչը այր «սղամարդ», «արի, քաջ, կտրիծ» բառի հոգմակի թվի սեռական հոլովածն է. հնատ. քաջ արանց և արանց քաջ (նշանակում է «քաջավոր»): Կապանի շրջանի արևմտյան մասում, Նախիջևանի երկրամասի սահմանագլխին գտնվող Քաջարանի (Կապուտշինի) լեռնանցքի հսկողությունը և պաշտպանությունը ևս դրված էր լինելու Երվանդ արքայի «քաջերի» վրա, որովհետև այս լեռնանցքով էր իրականացվում հաղորդակցությունը Քաղը-Քաշունիքի և ներկայիս Նախիջևանի երկրամասի (հին Գոդքն գավառը ներառյալ) միջև: Այստեղից հեշտ էր նաև հարձակում իրազործել Նախիջևանի երկրամաս ներխուժած քշնամու դեմ: Թե ինչքան լավ էր իր քաջավորության հարավ-արևելյան սահմանների պաշտպանությունն ապահովել Երվանդ քաջավորը, երևում է նրանից, որ սելևկյանների և Ատրպատականի մարերի օգնությամբ մ.թ. ա. 202-201թ. նրա դեմ պատերազմ վարած Արտաշեսը<sup>30</sup> իր հարձակումն սկսել էր ոչ թե Ատրպատականի կողմից Արաքսի միջին հոսանքի շրջան ներխուժելով, այլ շրջանցիկ ճանապարհով՝ Կորի աջափնյակում գտնվող Ուտիք մուտք գործելով:<sup>31</sup>

<sup>23</sup> Թ. Հ ա կ ո ր յ ա ն, Ստ. Մելիք - Ք ա խ շ յ ա ն, Հ. Ք ա ր ս ե ղ յ ա ն, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Փ, Եր., 1988, էջ 249:

<sup>24</sup> Խ ո ր ե ն ա ց ի, Գ, զ, Գ, թ, Փատուսի Բիուզանդացույղ Պատութիւն Հայոց, Եր., 1987, գ, է:

<sup>25</sup> Ք. Հ ա ր ո ր յ ո ն յ ա ն, Մեծ Հայքի Գոգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, «Քանրեր Երևանի համալսարանի Հասարակական գիտությունները», 1977, թիվ 2, էջ 182:

<sup>26</sup> Ա. Ա ս լ ա ն յ ա ն, Հ. Գ ր է ա ր յ ա ն, Հայկական ՍՍՀ աշխարհագույն անունների համառուս բառարան, Եր., 1981, էջ 199:

<sup>27</sup> Նոյն տեղում, էջ 198:

<sup>28</sup> Նոյն տեղում, էջ 199:

<sup>29</sup> Հր. Ա ճ ա ռ յ ա ն, Եղվ. աշխ., հ. I, Եր., 1971, էջ 172:

<sup>30</sup> Գ. Ա ս ր գ ս յ ա ն, Անտիոքոս Գ Սելևկյանը և հայկական պետությունները, «Քանրեր Երևանի համալսարանի», 1969, թիվ 1, էջ 50:

<sup>31</sup> Խ ո ր ե ն ա ց ի, Բ, Խե:

Ասրապատականի դեմ Երվանդը մեկ որիշ հենակետ և պետք է ունենար, որպեսզի հսկողություն սահմաներ Ասրապատականից Նախիջևանի երկրամաս և Արարատյան դաշտ բերող (և հայկական այս տարածքներից Ասրապատական տանող) ամենարանուկ ճանապարհների վրա: Դրանք անցնում էին հին հայկական Հեր (այժմ՝ Խոչաձևան Խոչաձև) քաղաքի վրայով, որն այդպիսով ներկայացնում էր այդ ճանապարհների խաչաձևան վայրը: Դրանց վերաբերյալ Հ. Սանանյանը գրել է ուշադրության արժանի հետևյալ տողերը. «Արտաշատից դեպի Պարսկաստան գոյություն են ունեցել, ինչպես հայտնի է հայկական աղբյուրների վկայություններից, երկու հին ճանապարհներ, մեկը՝ Նախիջևանի վրայով, իսկ մյուսը՝ հին Կոգովիստ գավառի միջով: Երկրորդ այս ճանապարհազիծը, որ Արտաշատից գնում էր Հեր ու Զարևանդ գավառները, ունեցել է Կոգովիստից մինչև Խոյ մի քանի ճուղեր տարբեր ուղղությամբ: Կոգովիստից կարելի էր գնալ դեպի Ասրապատական և Պարսկաստան կամ Թերկրի և Կոտորի վրայով..., կամ ուղիղ ու կարճ գծով, որն իջնում էր Խոյ հին Արտազ գավառի միջով»<sup>32</sup>: Իսկ Խոյից Ասրապատական կարելի էր հասնել «կամ այժմյան Մարանի և Թավրիզի նոտով և կամ Տավշիջի վրայով ու Ուրմիա լին արևելյան ափերի երկարությամբ»:<sup>33</sup> Քանի որ Խոյում խաչաձևակում էին Հայաստանը Ասրապատականի հետ կապող մի շարք ճանապարհներ, ուստի այն չէր կարող դուրս մնալ Երվանդի տեսադաշտից:

Խոյ քաղաքից արևայնուոք, նրա և Կոտորի(Չորուր) քաղաքի միջև, նոյնանուն գետի ճախսափնյակում կա Քաջիրի անունը կրող մի լեռ: Քանի որ Կովկասի հինգվերստանոց ոռոսական քարտեզում լեռն անունը բերված է եղել Կաջկրու ձևով, ուստի «Տեղանունների քառարանում» արտացոլված է Կաջիրի (փոխանակ՝ Քաջիրի) տեսքով:<sup>34</sup> Նոյն տեղում նշվում է նաև, որ այս լեռամ՝ իր «շրջապատի նկատմամբ բարձրությունը զգալի է»:<sup>35</sup> Քաջ-իր-ի լեռանվան մեջ Քաջ- բարդադիշից բացի ներկա են -իր- և -լի բարդադիշները, որոնցից առաջինը լինելու է հայերեն հոգնակիակերտի (<>զրաք. -եար)<sup>36</sup> հնչյունափոխված ձևը: Անվան Քաջիր հիմքին ավելացված -լի տեղանվանակերտ վերջածանցը բնորոշ է բուրբական լեզուներին և դրվագ է անգամ հայկական ծագումով տեղանունների վրա: Հնմտ. Խոսշը լճանունը Մանազկերտի շրջանում, Վարդանի տեղանունը Ծիրակում, Վարդալու տեղանունը Լոռիում, Բերքի լեռնանունը Արագածոտնում<sup>37</sup> և այլն: Անվասկած, լեռան անվան Քաջ- բարդադիշը նատեացուց է անում նրա կապը արքունական ընտիր զրամանակը կազմած «քաջերի» հետ:

Քաջիրին հսկելու էր ոչ միայն Ասրապատականից Հեր և Զարևանդ գավառներով Նախիջևանի երկրամաս և Արարատյան դաշտ տանող ճանապարհները, այլև Կոտորի հոսանքն ի վեր՝ դեպի Վասպուրական տանող ճանապարհը: Այս տեսանկյունից այս շրջանի կարևորությունը նկատվել էր դեռևս ուրարտական դարաշրջանում, հատկապես սլյուրների կողմից հետագա Ասրապատականը գրավելուց և Աշցու ցեղամիւրյունը ստեղծելուց հետո: Բայտ այլմ, պատահական չէ, որ Ռուսա II թագավորը (680-645թ. մ.թ.ա.) ամրացրել էր այն: Ներկայիս Բաստամ հնավայրը Խոյ քաղաքի մոտ (սեպազը. Ռուսախիմիին) ներկայացնում է ամրոց և նրա մոտ գտնված քաղաքը: Այս ամրոցն ավելի մնել է, քան Հայաստանի հանրապետության և Արևմտյան Հայաստանի տարածքներում հայտնաբերված նոյնատիպ ամրոցները: Այստեղ «բլրի շուրջը կառուցված պաշտպանական պարսպի բարձրությունը հասել է 5մ և կանգուն է մնացել մոտ 2700 տարի»<sup>38</sup>:

Քանի որ Խոյ քաղաքի և նրա շրջանի վրայով Հայաստանը և Ասրապատականը միմյանց կապող ճանապարհների ուսումնական կարևոր նշանակությունը գնահատվել է դեռևս Երվանդունյաց քագավորության ժամանակաշրջանում, ուրեմն

<sup>32</sup> Հ. Մ ճ ա ն դ յ ա ն, Հիմ Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, Եր., 1936, էջ 141:

<sup>33</sup> Նոյն տեղում, էջ 164:

<sup>34</sup> Թ. Հ ա կ ո ր յ ա ն, Ստ. Մելիք-Բախչան և այլն, էջ 164:

<sup>35</sup> Նոյնը:

<sup>36</sup> Գ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 235:

<sup>37</sup> Ա. Ասլան ն դ յ ա ն, էջ. Գ ր գ ե ա բ յ ա ն ա ն, էջ 43, 82, 184:

<sup>38</sup> Թ. Հ ա կ ո ր յ ա ն, Ստ. Մելիք-Բախչան և այլն, էջ 164:

Խոյի ու շրջակայքի կառավարումը բազավորի «քաջերի» հրամանատարին պետք է հանձնված լիներ հենց այդ ժամանակաշրջանում։ Նրա գրադեցրած պաշտոնը համապատասխանելու էր հետագայում հայտնի մաղլսազի պաշտոնին, որը արքունական թիկնապահ գնդի հրամանատարն էր, իսկ նրա կառավարմանն հանձնված տարածքը համապատասխանելու էր մաղլսազի «Ճեռական իշխանության» երկրին՝ *Մաղլսազան* կոչված շրջանին<sup>39</sup>։ Վերջինս ընդգրկում էր հետագայի Հեր և Զարևանդ (Զարավանդ) գավառները։ Մեր կարծիքով, Երվանդ Վերջինի օրոք այդ պաշտոնը պատկանել է իր ազգական և ապագա բազավոր Արտաշեսի հորը՝ Զարեհին։ Հայտնի է, որ արձանագրություններում Արտաշես I-ը իրեն «Զարեհի որդի» է կոչում<sup>40</sup>։ Հայտնի է նաև, որ Երվանդ Վերջին արքայից բարեկող մանուկ Արտաշեսի առաջին ապաստարանները եղել են «Հեր գավառի կողմերը, Մաղլսազանի հովվական կայանները»<sup>41</sup>։ Հայտնի է ևս մի իրողություն։ Այստեղ էր գտնվում Զարևանդ քաղաքը և համանուն գավառը<sup>42</sup>, որոնցից առաջինը այժմյան Զեյրավանդա գյուղն է Իրանում<sup>43</sup>։ Պարզ է, որ գործ ունենք ոչ պատահական զուգադիպումների հետ, որ Զարևանդը կրում է Արտաշես II-ի հոր՝ Զարեհի, անոնքը։

*Զարեհանդ* (Զարաւանդ) <\**Զարեհ-աւանդ*, որտեղ աւանդ բաղադրիչը իրանական ծագումով հայերեն համապատասխան բառն է՝ «զլխավոր քաղաք» (պարսկերենում նշանակում է «զահ, արոտ, պաշտոն»)<sup>44</sup>։ Այստեղ պետք է գտնվեր Արտաշեսի հոր՝ Զարեհի նստավայրը, բայց այն քաղաքը էր դարձել և այդ անունն ստացել հավանաբար, Արտաշես II-ի բազավորելուց հետո։ Չե՞ որ նա կառուցել էր ոչ միայն իր, այլև հոր անունով քաղաքներ։ «Արտաշեսը մեծ հոգատարություն է ցուցաբերել իր նախանձների հիշատակի հավերժացման նկատմամբ։ Իր հիմնադրած քաղաքներից հինգը նա անվանել է իր հոր՝ Զարեհի անունով (Զարեհավան կամ Զարիշատ<\*Զարեհաշատ), այստեղ ևս հետևելով հելլենիստական աշխարհի, նաևնավորապես Սելևկյանների սովորությանը», - գրում է Գ. Սարգսյանը<sup>45</sup> և բերում Սելևկու I-ի օրինակը, որի հայր Անտիոքոսը բազավոր չէր եղել, բայց որդին նրա պատվին հիմնադրել էր Անտիոք անունը կրող 16 քաղաքները<sup>46</sup>։

Վերոշարադրյալից բխում է, որ մինչև Երվանդ-Արտաշես առճակատումն սկսվելը Երվանդ Վերջինի ձեռնարկած միջոցառումները՝ իր բազավորության հյուսային (վրացա-հյուսիսկովկայան ցեղերի դեմ), արևելյան («աղվանա-կասպիական» ցեղերի դեմ) և հարավ-արևելյան (Ատրպատականի մարերի դեմ) սահմանների պաշտպանունակությունը ամրապնդելու ուղղությամբ, հասել էին իրենց նպատակին։ Կասկած լինել չի կարող, որ հակառակորդ ուժերին հաջողվել էր զավթել Երվանդի բազավորության ծայրամասերը միայն այն բանից հետո, եթե Երվանդ արքան բազավորության սիրուր՝ Այրարատը, և իր ամձը պաշտպանելու նպատակով՝ Արտաշեսի բանակին դիմադրելու համար, ստիպված է եղել ծայրամասային շրջաններից Այրարատ կանչել իր «սուպերսի քաջերին»։

## О ВОЕННОМ СТРОИТЕЛЬСТВЕ ЕРВАНДА ПОСЛЕДНЕГО

*Резюме*

*Л. Петросян*

При Ерванде Последнем (около 220-201гг. до н. э) набеги иверов и их северокавказских союзников на северные районы Армении, а атропатенских мидийцев и их каспийских вассалов-союзников на восточные районы страны заставили армянского

<sup>39</sup> Ս. Երեմյան, Աշխատական գործակագիր, էջ 64, 88; Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 832:

<sup>40</sup> Գ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Սովորությունները, Երևան, 1966, էջ 70, 185-186:

<sup>41</sup> Խորենական պատմություն, Բ, լւ:

<sup>42</sup> Ս. Երեմյան, Աշխատական գործակագիր, էջ 51-52, 108:

<sup>43</sup> Նոյն տեղում, էջ 52:

<sup>44</sup> Հ. Սահմանական գործակագիր, էջ 354:

<sup>45</sup> Գ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Սովորությունները, էջ 70:

<sup>46</sup> Նոյն տեղում, էջ 70, ծամ. 122:

царя предпринять ряд действенных мер для защиты пограничных районов Армении. На окраинах землях страны были построены ряд крепостей и военизированных поселений, в том числе *Калжатун* (в Гогарене), *Калжац-Калак* (в Хорзене), *Ерванձակերտ* и *Еրվանձառն* (в Сюнике). В этих стратегически важных объектах поставлены гарнизоном *калжи*, т.е. воины отборных царских отрядов.

Согласно “Географии” Страбона (XI, XIV,5) армянские области “Предгорье Париадра”, Хорзена и Гогарена на севере в начале правления Арташеса I (189-160 гг. до н.э.) были отняты у иверов, а Каспиана, Фавнитида и Басоропеда на юге-востоке - у атропатенских мидийцев. Так как и раньше, при предшественнике Арташеса I Ерванде Последнем, эти области (кроме Каспианы) были в составе древнеармянского царства, значит они были отторгнуты в годы войны между Ервандом и Арташесом, т.е. после отхода каджов в Айрапат.

## Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

### ԷԹՆՈ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԴԱՎԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԱԾ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ (1840 - 50-ական թթ.)

Պարսկահայատակ հայերի և, մանավանդ, արևմտահայերի գանգվածային ներզադրելը 1829-1831թթ. Փամբակ-Շորազյալի տարածք բերեցին հայ գաղթակաների հազարավոր ընտանիքներ՝ դիստանցիայի բնակչության թիվը 1824-1825թթ. գրանցված 2150 ընտանիքից հասցնելով 5171 ընտանիքի (28975 մարդու): Կտրուկ փոխվեց դիստանցիայի ազգաբնակչության կրոնադավանաբանական պատկերը: Եթե 1824-1825թթ. հայերը կազմում էին ընդհանուր բնակչության թվի 70%, իսկ այլազգիները՝ 30%, ապա ներզադրելից հետո հայերի թիվը հասավ 95%-ի, փոխարենը այլազգիների թիվը նվազեց մինչև 5%: Ընդ որում, միատարրությամբ (հայաշատությամբ) ամրող դիստանցիայում առանձնանում էին Շորազյալի գավառը և հատկապես Գյումրին, որ XIX դարի 30-ական թվականների վերջերին արդեն համարվում էր ամենահայաշատ քաղաքն ամբողջ Անդրկովկաստում.<sup>1</sup>

Շորազյալի գավառի 2516 ընտանիքից հայեր էին 2482-ը (14317 մարդ)՝ գավառի գյուղական բնակչության ընդհանուր թվի ճնշող մեծամասնությունը՝ 98.6%, մահմաներականներ էին միայն 34 ընտանիքը (128 մարդ), այսինքն բնակչության միայն 1.4%-ը: 1350 ընտանիք ունեցող Գյումրիում հայեր էին բնակչության 96%-ը, հոյներ՝ 3%-ը, իսկ մահմերականներ՝ միայն 1%-ը:<sup>2</sup> Համեմատության համար ասենք, որ Արևելյան Հայաստանի ամենամեծ քաղաքում՝ Երևանում, ունին 1829-1832թթ. բնակչության ընդհանուր թվից՝ 2751 ընտանիքից (11463 մարդ) հայեր էին 944 ընտանիքը (4132 մարդ) կամ միայն 34%-ը, իսկ մահմերականներ՝ 1807 ընտանիքը (7331 մարդ) կամ 66%-ը:<sup>3</sup> Այս ցանկում թե՛ հայ բնակչության թվով և թե՛ մահմերականների հետ նրանց ունեցած տոկոսային հարաբերությամբ երրորդն ու վերջինը Փամբակի գավառն էր, որտեղ 1832թ. կամերալ ցուցակագրման տվյալներով ապրում էր 1305 ընտանիքը (7280 մարդ), որից հայեր էին 1133 ընտանիքը (6249 մարդ)՝ 86.8%-ը, և այլազգիներ, գերազանցապես մահմերականներ էին 172 ընտանիքը (1031 մարդ) կամ 13.2%-ը:<sup>4</sup> Հայահավաքման գործընթացը Հյուսիսային Հայաստանի այս հատվածում շարունակվեց նաև հաջորդ տասնամյակի ընթացքում, երբ հարյուրավոր գաղթական ընտանիքներ, չհամակերպվելով իրենց նոր բնակավայրերում ստեղծված պայմաններին, նորից բռնեցին գաղրի ճամփան, որը նրանցից շատերին (459 ընտանիք) թերեւ Փամբակ-Շորազյալ: Արդյունքը եղավ այն, որ երկրամասում իր բնակչության միատարրությամբ առանց այն էլ աչքի ընկնալ Շորազյալի գավառի գյուղական ազգաբնակչության թիվը XIX դարի 30-ական թվականների վերջերին հասավ 2830 ընտանիքի, որից հայեր էին 98.8%-ը (2796 ընտանիք), մահմերականներ՝ 1.2%-ը (34 ընտանիք):

Երեսնական թվականների երկրորդ կեսին դիստանցիա վերագաղթած 459 ընտանիքներից Փամբակի գավառի 41 գյուղերում<sup>5</sup> տեղափոխվածները (145 ընտանիք) և քանակապես, և երես-ժողովրդագրական կազմով զգալիորեն տարրերվում էին Շորազյալի գավառում հաստատվածներից (314 ընտանիք), որոնք միայն հայեր էին: Մինչդեռ Փամբակում հաստատված նորեկներից հայեր էին միայն 117 ընտանիքը (701 մարդ), 28 ընտանիքը մահմերականներ էին (58 մարդ), ուստեղ և հոյներ (111 մարդ): Այսուհանդերձ Փամբակում ևս XIX դարի 30-ական թվականների վերջերին գրանցվեց

<sup>1</sup> Հ. Լ ի Ա Հ, Հայաստան Ուղևորություններ և ուստանասիրություններ, հ. Ա, Կ. Պոլս, 1913, էջ 61:

<sup>2</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 83, 84:

<sup>3</sup> Ս. Յ և լ և հ ս կ և ն, Գործ Էրևան, “Сборник материалов для описания местностей и племен Кавказа”, (այսուհետև՝ ՀՄՕՄՀԿ), վայ. 1, ոգլ. 1, Տիֆլիս, 1881, стр. 40-41.

<sup>4</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 82:

<sup>5</sup> Զ. Կ ո ր կ ո տ յ ա ն, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Եր., 1932., էջ XXIX-XXX:

<sup>6</sup> Նոյնին:

ազգաբանակշուրյան թվի աճ՝ մինչև 1450 ընտանիք (8150 մարդ)<sup>7</sup>: Ընդ որում, գավառում հայերի քանակը, թվապես զգալիորեն աճելով, 1829-1832 թվականների 1133 ընտանիքի փոխարեն 1830-ականների Վերջին հասալ մինչև 1250 ընտանիքի (6950 մարդու), իսկ այլազգիններին՝ միայն 200 ընտանիքի (1829-1832թթ. 172 ընտանիքի փոխարեն): Այնուամենայնիվ տողոսային հարաբերությամբ հայ ազգաբնակչության թիվը գավառում ոչ միայն չափվածավ, այլև նվազեց 0.8%-ով՝ կազմելով գավառի ընդհանուր բնակչության ընդամենը 86%-ը, այն դեպքում, երբ այլազգինների թիվը, չնայած չնշին համալրմանը (28 ընտանիք), նույն չափով ավելացավ՝ կազմելով 14%:

Այսպիսով, XIX դարի 30-ական թվականների վերջին՝ Ալեքսանդրապոլի գավառի կազմավորման նախօրեին, ապագա զավառի հիմք հանդիսացող Փամբակ-Շորագյալի դիստանցիան ուներ Երևան-Շողովրդագրական և կրոնադավանաբանական հետևյալ պատկերը: Միայն զյուղական ազգաբնակչության թիվը կազմում էր 4280 ընտանիք (24017 մարդ): Ընդ որում, իրու դիստանցիայում ճնշող մեծամասնություն, հայերը 4046 ընտանիք էին (24017 մարդ) և կազմում էին դիստանցիայի զյուղական արնակչության ընդհանուր թվի 94.5%-ը, այն դեպքում, երբ այլազգինները 234 ընտանիքով (1328 մարդ) դիստանցիայի զյուղական բնակչության մեջ բացարձակ փոքրամասնություն էին՝ միայն 5.5%:

Ցավոք, արխիվային նյութի բացակայության պատճառով չենք կարող որոշակի պատկերացում կազմել նույն այդ ժամանակահատվածում Փամբակ-Շորագյալի դիստանցիայի միակ քաղաքը հանդիսացող Ալեքսանդրապոլի Երևան-Շողովրդագրական և կրոնադավանաբանական իրավիճակի մասին: Կան մի քանի աղքատիկ տեղեկություններ. այսպես, 1834թ.-ին Ապարանի Զամգիի մահալի Սալին-քենդ զյուղից 5 ընտանիք.<sup>8</sup> իսկ Փամբակի Նարաքիլիսայից մոտ 100 ընտանիքը նախկին Երգումցիներ<sup>9</sup> են վերաբնակվել Գյումրիում, որան հակառակ՝ մոտ 77 ընտանիքներ էլ քողել են Գյումրին՝ հետանալով անհայտ ուղղությամբ:<sup>10</sup> Մնում է Ենթադրել, որ Վերոնշյալ տեղաշրջերը, որոնք երբեք էլ նշանակալի և խոշոր իրադարձություններ համարել չի կարելի քաղաքի կյանքում, ի գորու չէին 40-ական թվականների սահմանագլխին առաջ բերելու Գյումրու կրոնադավանաբանական պատկերի էական փոփոխություններ, երբ հատկապես քուրքահայերի ներգաղթի, ապա 40-ական թվականների սկզբներին տեղի ունեցած նոր ու բավկանին իրատեսական վարչատարածքային բարեփոխման հետևանքով ձևավորվեց Անդրկովկասում ազգաբնակչության կազմի տեսակետից ամենամիատարր ու հայեցի Ալեքսանդրապոլի գավառը:

Գավառի ազգաբնակչության կազմի միատարրությունը փոքր-ինչ խախտվեց միայն XIX դարի 40-ական թվականների կեսերին, երբ ցարական կառավարությունը մի քանի հետաձգումներից հետո վերջապես կյանքի կոչեց Անդրկովկասում մեծարիկ ուսու գաղթականների, գերազանցապես աղանդավորների, վերաբնակեցնելու նախօրոք մշակած ծրագիրը:<sup>11</sup> Երկրամասը Ըուսաստանի համար հուսալի Երևիկական տարրով բնակեցնելու հարցը ցարական կառավարության համար առաջնահերթ խընդիրը էր դարձել դեռևս XIX դարի 20-ական թվականներից: Ընդ որում, հուսալի տարր հասկացության տակ թիւ ցարական շինովնիկները և թիւ Կովկասի կուսակալ Պասկիչն ինքը, նկատի ունեին միայն մալորուս կազմակներին, որոնց տեղափորելով Անդրկովկասի և մասնավորապես Արևելյան Հայաստանի սահմանամերձ վայրերում, ցարական կառավարությունը նոտիֆիկ էր Ըուսաստանից հետագա պարբերաբար հանալումների հաշվին ձևավորել այսպես կոչված «Արաքսի կազմկությունը»: Այս մասին առաջին անգամ, դեռևս մինչև Խուրքմենչայի պայմանագրի կնքումը, իրենց խոսքն ասացին ուսական բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Դիրիչն ու Կովկասյան հատուկ կորպուսի հրամանատար Ի. Պասկիչը: Վերջիններս գտնում էին, որ նորա-

<sup>7</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 82:

<sup>8</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 447, էջ 32-33:

<sup>9</sup> Քաջթերությի, Նարաքիլիսա, Սեղմ Հայաստանի, Թիֆլիս, 1873, 27 հունվարի, N 3, էջ 3-4:

<sup>10</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 84, մաս Բ:

<sup>11</sup> Ուսու աղանդավորներով Անդրկովկասյան Երկրամասը վերաբնակեցնելու ցարական կառավարության վերոհիշյալ քաղաքականության մասին մանրամասն տեսն Ա. Հայրյան, Հայաստանի ուսու վերաբնակները 1830-1920թթ., Եր., 1989:

նվաճ տարածքները մարդաբնակ դարձնելու, նաև Արևելյան Հայաստանը տնտեսապես օգտագործելու խնդրի միակ լուծումը տեղում «զինվորական բնակավայրերի» ստեղծումն է, որոնցում սկզբնական շրջանում պիտի բնակեցվեին շուրջ 80000 կազակներ: <sup>12</sup> Կիրիչն ու Պասկիչը կանխատեսում էին Արևելյան Հայաստանի տարածքում «զինվորական բնակավայրերով» ապահովել պարսկական սահմանի անվտանգությունը, սանձահարել այդ տարածքում ապրող ասկանան ցեղերին, զ) ավելի ներծնալ հայերին, Ռուսաստանի խորքերից հավաքագրված զինվորներին փոխարինել տեղի կլիմային ընտելացած մարդկանցով ու այդպիսով կրծատել, իսկ հնարավորության դեպքում նաև իսպառ վերացնել զորքերի մեջ բարձր մահացությունը, մալորուս աղքատ կազակների համար նոր բնակավայրերում ստեղծել բարեկարգ վիճակ և տեղում մնացածների վիճակը բարեկավելու նպատակով Մալորուսիան ազատել ավելորդ բնակչությունից: <sup>13</sup>

80000 կազակների ընդունելու, նրանց սահմանամերձ շրջաններում բնակեցնելու, ինչպես նաև կազակային 10 օկրուգներ (յորպահնչյուր օկրուգն ունենալու էր 200000 դեսյատին հող և 8000 բնակիչ) ստեղծելու նպատակով 1827թ. կոմս Պյոտր Տուսոյի գլխավորությամբ նոյնիսկ ստեղծվեց հասուկ կոմիտե: <sup>14</sup> սակայն վերոհիշյալ ծրագրի իրագործումը մեծ ծախսեր ու երկար ժամանակ պահանջելու պատճառով այդ շրջանում իրագործելի չէր: Այդ պատճառով էլ ցարական կառավարությունը, դրա իրագործումն ապագային քողմերով, իր սահմանամերձ շրջանների գոնե մի մասը էր նիկական հուսալի տարրով շուտափույր բնակեցնելու հարցի մասնակի լուծումն առայժմ տեսնում էր Պարսկաստանից հայերի զանգվածային ներքաղը կազմակերպելու մեջ:

Արևելյան Հայաստանում 20000 ընտանիք մալորուս կազակներ վերաբնակեցնելու Պասկիչի երկրորդ ծրագիրն արքունիք ներկայացվեց 1829թ.: Սակայն վերըերյալ պատճառներով այն ևս չհաջողվեց իրագործել: Փոխարենը, ինչպես գիտենք, լճամաններ 95000n. ունկով ու 380000n. արձարով ուսական կառավարությունը կազմակերպեց 12357 ընտանիքների զաղքը Տաճկահայաստանից:

Անդրկովկասը ուսւներով վերաբնակեցնելու խնդրին Պասկիչն երրորդ ու վերջին անգամ անդրադարձավ 1830թ. սկզբներին: Ապրիլ ամսին ցարին ներկայացնելով Անդրկովկասում նոր վարչատարածքային բաժանում անցկացնելու և ուսական կառավարչած նոցնելու իր նախագիծը, նա նաև ընդգծում էր, քե «...ինքնակալական պետության անհրաժեշտ հատկությունն է...ստեղծել նաև ուսական զաղությունը, իմնելով զինվորական բնակավայրեր, ինչպես նաև ուս զյուղացների բնակավայրեր...և այլն»: <sup>15</sup> Ի հետուկ երկրամասը ուսականացնելու պավկիչյան բուռն ցանկությանն ու այս ուղղությամբ նրա թափած ջանքերին այս վերջին ծրագրին ևս վիճակված չէր իրականանալու իր բանկության ու երկարաժամկետության պատճառով:

Անդրկովկասի ուսականացմանը ցարական կառավարությունը լրջորեն ձեռնամուխ եղավ միայն XIX դարի 40-ական թվականների կետերից, երբ տարածաշրջանում իր տիրապետությունն ավելի ամրապնդելու նպատակով, առայժմ միայն Արևելյան Հայաստանում, սկսեց վերաբնակեցնել մեծ թվով ուս աղանդավորների: Այս խընդիրն առաջին անգամ կարևորել է դեռևս Պասկիչը՝ ցարին եղված 1830թ. ապրիլյան նամակում, որտեղ ի մասնակիրի ընդգծում էր, քե երկրամասում ուսական զաղությունը իմնելիս անհրաժեշտ է հասուկ ուշադրություն դարձնել Ուստաստանի ներքին նահանգներից աղանդավորների՝ որպես «անհանգիստ տարրի», այստեղ վերաբնակեցմանը: «Հասկ այս քողորն արագ ու հարմար կատարելու համար մարդիկ կարելի է ստանալ զորակոչի միջոցով»: Ի դեպ, Պասկիչն առաջարկում էր զորակոչել նաև «քողոր անդամահեղներին, ... քողոր փախատականներին ու բափառաշրջիկներին և ուղարկել Անդրկովկաս»: <sup>16</sup>

<sup>12</sup> АКАК, թ. 7, стр. 332, 339-340.

<sup>13</sup> Սաշտոյի անվան Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գործ 51, վավ. 93, էջ 1-3, վավ. 94:

<sup>14</sup> Վ. Պ ա ր ս մ յ ա ն, Գրիգորերովը և հայ-ուսական հարաբերությունները, Եր., 1947, էջ 104:

<sup>15</sup> “Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIXв.”, ч. 1, М.-Л., 1936, стр. 231-232.

<sup>16</sup> “Колониальная политика российского царизма ....”, ч. 1, стр. 231-232.

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ չնայած Անդրկովկասյան երկրամասի ոռոսականացման պավակիչյան նախագծի ընդհանուր առնամբ ճախտղմանը, այնուամենայնիվ դրա որոշ հոդվածներ մի քանի ամիս անց սկսեցին գործադրութել: Դրանցից մեկը հենց վերաբերում էր Կենտրոնական Ռուսաստանից աղանդավորականներին դեպի Անդրկովկաս հեռացնելուն ու այստեղ տեղացիների նկատմամբ նորեկների համար արտոնյալ պայմաններ ստեղծելուն: Նկատի ունենք առաջին հերթին՝ առանց տեղացիների կարծիքը հաշվի առնելու վերաբնակներին առատորեն հոդով աղահովելը, նրանց հարկային ու այլ արտոնություններ շնորհելը և այլն: Քայլեր, որոնք ցարական կառավարության հանողմամբ աղանդավորականներին հետ էին վերադարձնելու ուղղափառ հավատքին:

Պասկեիչյան նախագծում ցարի հավանության արժանացած մյուս հոդվածը վերաբերում էր Անդրկովկաս ուղարկելիք աղանդավորներին Ռուսաստանի ներքին նահանգներից զինակոչի միջոցով հայտնաբերելուն: Ի դեպի, նախագծի այդ դրույթը գործնականում կիրառվեց ցարին ներկայացվելուց ընդամենը վեց ամիս անց: Այսպես, նպատակ ունենալով արագացնելու Անդրկովկասի և մասնավորապես Արևելյան Հայաստանի ոռոսականացման գործնքացը, Նիկոլայ Ա.-ն 1830թ. հոկտեմբերի 20-ին հրապարակում է աղանդավորների նկատմամբ մինչ այդ ընդունված օրենքներից ամենախիստն ու ծանրը: Բոլոր զինապարտ աղանդավորներին, որոնք կրօնվեին և կնեղադրվեին հերձվածողության մեջ, հրամայվում էր զորակոչել և ծառայության ուղարկել Կովկասյան կորպուս: Միաժամանակ հրամայվում էր Անդրկովկաս բնակության ուղարկել նաև զինվորական ծառայության համար ոչ պիտանիներին և կանանց, իսկ տեղական (անդրկովկասյան) իշխանություններին էլ լուծել վերջիններիս ընդունման, տեղավորման և հորով ապահովման հարցերը:<sup>17</sup>

Սա, ըստ Էլոբրյան Հայաստան ոռոս աղանդավորներով վերաբնակեցնելու ցարական կառավարության քաղաքականության սկիզբը եղավ: Իսկ Ալեքսանդրապոլի գավառի ոռոսականացումը բուռն թափով սկսվեց միայն XIX դարի 40-ական թվականների կեսերից: 1844թ. Թիֆլիս-Ալեքսանդրապոլ ռազմուղու վրա՝ Լոռու Մեծ Դարաքիլիսա գյուղի օգտագործման տակ գտնվող Օրբելյանների կալվածատիրական հողերում, որ աշքի էին ընկնում առողջ կիմայով և հարմար էին անասնապահության ու հողագործության համար, իմանվեց Ալեքսանդրապոլի գավառի առաջին ոռոսական գյուղը՝ Վորոնցովկան:<sup>18</sup> Վերջինիս բնակիչները՝ մեծամասամբ Օրենքուրդի և Սարատովի նահանգներից եկած մոլոկաններ, Անդրկովկասում էին հայտնվել դեռևս 1834թ. և շուրջ մեկ տասնամյակ տևած թափառումներից հետո միայն կարողացան իմանել Վորոնցովկան: 1849թ. գյուղը ուներ արդեն 141 ընտանիք, մեկ տարի անց ավելացավ ևս 143 ընտանիք, որից 122-ը Արևելյան Հայաստան էր եկել դեռևս 1834-1836թք.<sup>19</sup> Արխիվային նյութերից հստակ երևում է, որ բնակչության թվի արիեստական աճն ի հաշիվ նոր վերաբնակների Վորոնցովկայում շարունակվել է նաև հետագա տարիներին: Այսպես, Վորոնցովկայում վերահաստատվելու նպատակով արդեն 1846թ. սկզբին գավառի Փամբակի տեղանասի պետին էին դիմել Գանձակի և Շամախու նահանգների մի շաքր գյուղերի ոռոս վերաբնակներ, որոնք շիմանալով տեղական կիմային (շոգին) և ժողովրդի ոչ բարեհամբույր վերաբերմունքին՝ բույլտվություն էին խրնդում տեղափոխվելու Ալեքսանդրապոլի գավառ: Այս մասին Կովկասի փոխարքային տեղեկացնելով՝ Ալեքսանդրապոլի գավառապետը միաժամանակ նշում էր, թե Շամախու նահանգի Թոփիչի գյուղի ողջ ոռոս բնակչությունը չնշին բացառությամբ (երկու ընտանիք Եղենովկայում և իրենց ընտանիք Նովոսարատովկայայում) իր թույլտրվությամբ վերաբնակվել են Վորոնցովկայում:<sup>20</sup> Թե ոռոսական կառավարության կողմնակալ քաղաքականությունն ինչ ազդեցություն ունեցավ այս գյուղի հետագա աճի վրա, պարզ երևում է XIX դարի երկրորդ կեսին իրար հաջորդած մարդահամարների տվյալներից: Այսպես, 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալներով Վորոնցովկայում

<sup>17</sup> Ա. Հայրյան ճշգ. աշխ., էջ 177:

<sup>18</sup> Վ. Խոջա արեկյան, Հայաստանի բնակչությունը և նրա գրաղաժամբուրյունը, Եր., 1979, էջ 48:

<sup>19</sup> Ա. Հայրյան ճշգ. աշխ., էջ 59:

<sup>20</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 133, ցուցակ 1, գործ 329, էջ 361:

ազգաբնակչության թիվը 926 մարդ էր (450-ը արական, 476-ը իզական սեռի):<sup>21</sup> ապա 15 տարի անց՝ 1867թ., հասավ 2284 մարդու (1189-ը արական, 1095-ը իզական սեռի):<sup>22</sup>

Վորոնցովկայի հիմնադրման տարրում Ալեքսանդրապոլ-Դիլիջան ճանապարհի վրա՝ Համզաշինանի մոտ, հիմնվեցին և երկու ռուսական գյուղեր՝ Նիկիտինոն և Վուլքրեսենովկան (Վուլքրեսենսկա):<sup>23</sup> Նիկիտինոն 1852թ. արդեն ուներ 56 ընտանիք կամ 388 մարդ (204-ը արական, 184-ը հգական սեռի):<sup>24</sup> Վուլքրեսենովկայուն 1852թ. դրույթամբ ապրում էր 61 ընտանիք՝ 375 մարդ (194-ը արական, 181-ը հգական սեռի):<sup>25</sup>

Արևելյան Հայաստանի ոռուականացման գործընթացի հաջորդ փուլը սկսեց իրազործվել XIX դարի 40-ական թվականների վերջերին, երբ ցարական կառավարությունը, հաշվի չառներվ Արևելյան Հայաստանի տեղացի գյուղացիության հողածարավ վիճակը, Մևսման լճի ավազանում, Ալեքսանդրապոլի գավառում, Լոռիս դաշտում հայկական գյուղական համայնքներից ընդարձակ հողակտորներ առանձնացրեց՝ ոռու աղանդավորների վերաբնակեցման համար ստեղծելով այսպիս կոչված՝ «Հասուկ ֆոն»։ Վերաբնակեցման այս նոր փուլն ամբողջությամբ իրազործվեց Երևանի գավառապետ Բալավատսկու և Վերևում արդեն հիշված Ֆադեևի ծրագրով։ Վերջինս Արևելյան Հայաստանը ոռու աղանդավորներով վերաբնակեցնելու իր ազդեսիվ ճգոտումների մեջ գերազացեց Բալավատսկուն։ 1849թ. նայիսի 13-ին Երևանի նահանգապետին ներկայացրած իր գեկույցում Ֆադեևը գրում էր, թե Ալեքսանդրապոլի գավառում գտել է երկու հարմար տեղամաս ոռու աղանդավորներով վերաբնակեցնելու համար։ Դրանցից մեկը «Ծորազյալի Էլիդար կոչված վայրն է, որը համաձայն այս տարվա չափումների կա, շուրջ 6928 դեսյատին օգտակար հողամաս, հետևաբար յուրաքանչյուր ընտանիքի համար 30 դեսյատին հող նախատեսնելով, այնտեղ կարենի է բնակեցնել մինչև 230 ընտանիք».<sup>26</sup> Գտնվելով Ալեքսանդրապոլ-Ախալցխա ճանապարհի վրա՝ տեղամասը հեռու չէր արդեն գյուղուն ունեցող ոռուական (դրիխորորների ու նորլկանների) գյուղերից, այնպէս որ Ֆադեևի համոզմանը ու գավառապետի կարծիքով՝ ոչ մի խոչընական շնորհ չէր առ ոռու վերաբնակերու գրանցնելու համար։

Առաջնային պահանջման համար նախատեսված երկրորդ տեղամասը, ըստ Ֆադեևի, հենց Վեբսանդրապոլ քաղաքն էր, որ նա առաջարկում էր բնակեցնել 20 լենտանիր միայն արեստավորների:<sup>27</sup> Նրա ծրագրի առաջնահերթ նպատակը լենդիանդապես Ալեքսանդրապոլի հարթավայրի և Աշտրյան գետի միջին հոսանքի ձախակինյա բոլոր տարածությունների վերաբնակեցումն էր ռուսներով: Նա մտքրում էր ռուսական զյուղեր հիմնել նաև Ալեքսանդրապոլ-Դիլիջան մայրուղու ամբողջ երկարությամբ՝ գտնելով, որ Ալեքսանդրապոլի գավառի հատկապես Լոռվա դաշտի բնակեցումը ռուսներով բացառիկ հշանակություն կունենա Երևանի ու Թիֆլիսի նահանգներն իրար միացնող ուղեանգույցում ուժեղ հենակետ ստեղծելու տեսակետից: Ալեքսանդրապոլի գավառը ուստի աղանդակորներով վերաբնակեցնելու Ֆադեևի ծրագրի մեջին հենց գավառի բոլոր ճանապարհները ռուսական զյուղերով շրջապատեն եր: Այդ մասին Երևանի նահանգավայտին ներկայացրած իր գեկուցագրերից նեկում նա գրում էր. «Ավելի օգտակար է 100 լենտանիր ունեցող ռուսական զյուղեր հիմնել ցարական ճանապարհի (Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Երևան-Ս.Հ.)<sup>28</sup> երկայնքով... զարնանից մինչև խոր աշուն այդ ճանապարհով անընդհատ անցնում են Կողըի աղանձնից աղ տեղափոխող փոխադրամիջոցները և քանի որ այս վայրերում ջուր կա, ապա կառապանները ճգտում են այդ կետին: Եթե այլուղ լինի ռուսական զյուղ, ապա զյուղացիները պարենային ապրանքներ վաճառելով զգայի եկամուտներ կունենան: Բացի դրանից, իրենք ևս կարող են գրադիչ Կողըի Ալեքսանդրապոլ և այստեղից է Թիֆլիս աղ փո-

<sup>21</sup> «ՊԿՊԱ, ֆոն 93, զույգակ 1, զործ 110, էջ 510-547»:

<sup>22</sup> "Кавказский календарь на 1899 год", Тифлис, 1898, отд. III, стр. 3.

<sup>23</sup> «ՊԿՊԱ Ֆրն 133. տվածկ 1. օրի 359. էջ 6:

<sup>24</sup> «ՊԿՊԱ. Ֆուն 93. գուցակ 1. գլուխ 555, էջ 6.

<sup>25</sup> *Iunius intonit* to 491-508:

<sup>26</sup> У *шахмат* си съзл. *шах* та 47:

<sup>27</sup> *l-nuisin:*

<sup>28</sup> Эвропейская газета «Кавказ» издала в 1848 году статью «Взгляд на Эриванскую дорогу», в которой говорится о том, что в 1847 году в Тифлисе состоялся конгресс представителей различных народов, живущих в Азербайджане и Армении.

**Խաղբեկով:** Նրանք փոխադրական կազ կապահպաննեն Երևանի և Ալեքսանդրապոլի միջև և հետագայում հմարավորություն կատաման փոխակայան պահելու».<sup>29</sup>

Յարական կառավարությունը Ֆադեևի վերոհիշյալ նախագծերին լրջորեն անդրադարձ արդեն 1850թ. սկզբներից, երբ Երևանի նահանգում, արխիվային տվյալների համաձայն, հաստատվեցին մոտ 500 ընտանիք ուս աղանդավորներ:<sup>30</sup> Վերաբնակեցման պաշտոնական բոլյուտությունից (1850թ. մարտի 28) հետո Արևելյան Հայաստան տեղափոխվեցին և 15080 դեսյատին 3574 սաժեն հողի վրա (այդ թվում Ալեքսանդրապոլի գավառում՝ Էլիդար տեղամասում 6928 դեսյատին 1574 սաժեն, Ալեքսանդրապոլ քաղաքի մոտ՝ 60 դեսյատին, Դարաչչագի և Ալեքսանդրապոլի միջև ընկած Միսխանա տեղամասում՝ 1906 դեսյատին) հաստատվեցին ևս 500 ընտանիք ուս աղանդավորները: Ցուրաքանչյուր նորեկ ընտանիքի կառավարության 1848թ. դեկտեմբերի 9-ի որոշմամբ տրվում էր 8-ամյա հարկային արտօնություն ու մեկ անձի համար միջինը 6-7 դեսյատին հող (այդ որոշումը կամովին Անդրկովկաս եկած և այսուղ կրկին ուղղափառ հավատքի դարձած բոլոր վերաբնակիչներին նաև 25 տարով ազատվում էր հարկերից):<sup>31</sup> Դա այն դեպքում, երբ Ասրագետի հավաստմամբ՝ մեկ անձի համար տեղաբնակ հայերը ունեին միայն 1-3 դեսյատին հող (շատ հայկական գյուղեր նոյնին յայլա և արտօտատեղեր չունեին իրենց սահմաններուն), թաքարները (քուրքերը, պարսիկները)՝ 4-5 դեսյատին, իսկ Թուրքիայից գաղթած ուղղափառ հույները՝ 5-6 դեսյատին:<sup>32</sup>

Թե 1850թ. հետո Արևելյան Հայաստանում վերաբնակեցված վերոհիշյալ 500 ընտանիք ուս աղանդավորներից քանիսը վերջնականացեն հաստատվեցին Ալեքսանդրապոլի գավառում, արխիվային նյութի բացակայության պատճառով ճշտիվ նշելն անհնար: Եվ այնուամենայնիվ, ի մի բերելով մեր ունեցած տվյալները գավառում հաստատված ուս աղանդավորների քանակի վերաբերյալ, կարելի է արձանագրել հետևյալը. XIX դարի կեսից Անդրկովկասյան երկրամասի՝ բուժն քափու սկզբան ուսականացման ցարական կառավարության քաղաքականության արդյունքում Ալեքսանդրապոլի գավառի միայն Փամբակի և Լոռվա տեղամասերում 383 ընտանիք կամ 2232 ուս վերաբնակները հիմնեցին չորս գյուղեր: Ընդ որում, եթև Փամբակի տեղամասում հիմնված Վուկրեսենովկա և Նիկիտինո գյուղերը բնակեցվեցին բացառապես ուս աղանդավորներով (117 ընտանիք), ապա Լոռվա տեղամասում հիմնված երկու գյուղերից (Պրիվոնյե և Վորոնցովկա) աղանդավորական էր միայն վերջինը, իսկ Պրիվոնյեն հիմնվեց աղանդավորների հետ միաժամանակ գավառում վերաբնակեցված 96 ընտանիք ուղղափառ ուստարի կողմից:<sup>33</sup> Ինչ վերաբերում է Ֆադեևի ծրագրով ուս աղանդավորների 20 արհետավորական ընտանիքներ Ալեքսանդրապոլում վերաբնակեցնելուն, ապա մեր ունեցած տվյալներով այս գործընթացն իր նախանական փուլում ընթանում էր համեմատարար դանդաղ. մինչև 50-ական թվականների կեսերը ցարական կառավարությանը հաջողվել էր քաղաքում տեղափորել ընդամենը 14 ուս աղանդավորի:<sup>34</sup> Եվ միայն 50-ական թվականների վերջերին այդ թիվը կտրուկ աճեց՝ Ալեքսանդրապոլի գավառապետի գեկուցագրի համաձայն քաղաքում հասնելով 124 մարդու (67-ը արական, 57-ը իգական սեռի)<sup>35</sup>:

XIX դարի ամքող 40-ական թվականների ընթացքում քաղաքային բնակչությունը անընդհատ աճում էր, ընդ որում պարբերական և համաշափ: Եթև պարսկահայերի և բուրքահայերի զանգվածային ներգաղթից հետո (1831թ.) Շորազայի գավառի Գյումրի գյուղում բնակչության թիվը հասավ 1350 ընտանիք (7250 մարդ), ապա արդեն 1848թ. Ալեքսանդրապոլն ուներ 1957 ընտանիք, այդ թվում հայեր էին 1871 ընտա-

<sup>29</sup> Ա. Հայրան և այլն, ճշգ. աշխա, էջ 48:

<sup>30</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 133, ցուցակ 1, գործ 359, էջ 10:

<sup>31</sup> Ա. Հայրան և այլն, ճշգ. աշխա, էջ 92:

<sup>32</sup> Ասրագետ, Հողատիրություններ Կովկասում, Ալեքսանդրապոլ, 1906, էջ 34:

<sup>33</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 110, էջ 563-585:

<sup>34</sup> "Կավկազի կալենդար համապատասխան 1855 թվականի դեկտեմբերի 1-ին", Տիգրան Արքա, 1855, էջ 332-333:

<sup>35</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 125, ցուցակ 1, գործ 14-I մաս, էջ 63:

նիքը՝ քաղաքի բնակչության 95.6%-ը, հոյներ էին միայն 27 լնտանիքը՝ 1.4%-ը, մահմերականներ՝ 59 լնտանիքը՝ 3%-ը.<sup>36</sup>

Քաղաքում բնակչության թվի համաշափ աճը շարունակվեց նաև հաջորդ տարիների լնրացքում: Այսպես, եթե 1849թ.՝ Ֆաղեկի կողմից Ալեքսանդրապոլի գավառը ուսու աղանդակորներով վերաբնակեցնելու նախազիծը կազմելու նախօրեին, Ալեքսանդրապոլը նորակազմ Երևանի նահանգում իր մարդաշատությանը Երևանից հետո երկրորդն էր (1962 լնտանիք կամ 10260 մարդ) և առաջինն իր բնակչության միատարրությամբ (հայեր էին 95.8%-ը, 1.3%՝ հոյներ, 2.5%-ը մահմերականներ):<sup>37</sup> ապա 1850-1851թք.՝ Վերոհիշյալ ծրագրի իրագործման պահին, քաղաքային բնակչության թիվը հասավ 11280 մարդու (6000-ը արական, 5280-ը իգական սեռի): Միևնույն ժամանակ քաղաքում Երևան եկան ցարական կառավարության Արևելյան Հայաստանը ուստիով վերաբնակեցնելու առաջին թույլ նկատումները հայ, հոյն և մահմերական բնակչութերի կողքին Ալեքսանդրապոլում հայտնվեցին առաջին ուսու վերաբնակեցներ՝ 11 մարդ (բնակչության 0.1%-ը): Քաղաքային բնակչության մնացած 99.9%-ը ըստ ազգությունների ուներ հետևյալ պատկերը. հայերն Ալեքսանդրապոլում ճնշող մեծամասնություն էին և կազմում էին քաղաքային բնակչության 94.9%-ը (10696 մարդ), մահմերականներ էին 3.6%-ը (410 մարդ), հոյներ՝ միայն 1.4%-ը (163 մարդ):<sup>38</sup>

Այժմ փորձենք ներկայացնել նաև այն փոփոխությունները, որոնք գրանցվեցին Ալեքսանդրապոլի գավառի Երկու՝ Փամբակի և Շորագյալի գավառակների (տեղանակներ) գյուղական բնակչության Երևո-Շորովրագրական և կրոնադավանարանական վիճակի մեջ XIX դարի 40-50-ական թվականներին:

XIX դարի 40-ական թվականների սկզբներից Արևելյան Հայաստանի ուսուականացման ծրագրի իրագործմանը Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի տեղամասում մենք մյուսի հետևից հիմնվեցին ուսուական Վորոնցովկա, Վուլուսեմովկա, Նիկիտին և Պրիվոնյե գյուղերը: Սակայն Փամբակում, մեր կարծիքով, ամենահետաքրքրագործ իրադարձությունները վերաբերում են 40-ական թվականների վերջերին: Այսպես, 1848թ. բողոքվին խաղաղ պայմաններում, սկսեց հայ ազգաբնակչության արտագաղթ Փամբակի տեղամասից դեպի Շորագյալի տեղամասաւ: Թեև պաշտոնական փաստաթրերում այս մասին որևէ բացատրություն չկա, այնուամենայնիվ դա ուղղակիորեն առնչվում է Ալեքսանդրապոլի գավառը ուսու աղանդավորներով վերաբնակեցնելու խնդրին: Նախ հայերի արտագաղթը կարող էր կազմակերպված լինել հենց ուսուական իշխանությունների կողմից՝ տեղում ուսու վերաբնակների համար նոր հողեր ազատելու նպատակով: Երկրորդ, այդ արտագաղթի պատճառ կարող էր լինել նաև ուսու աղանդավորների հետագա վերաբնակեցման նպատակով հողային «Հատուկ ֆոնդ» ստեղծումը՝ առանց տեղաբնակների կարծիքը հաշվի առնելու, որի պատճառով Փամբակի տեղամասի բնիկ հայերը, կորցնելով իրենց գյուղումն ապահովող առանց այն էլ փոքր հողակտորները, ստիպված էին լինում տեղափոխվել Շորագյալ: Թե այս պատճառներից որն էր իրականը կամ առաջնայինը, եական չէ: Փասոն այն է, որ 1848-1850թք. լնրացքում Փամբակից գաղրեցին և Շորագյալում հաստատվեցին մոտ 90-100 լնտանիք հայեր: Այդ թվի մոտավորության առիթով նշենք, որ նորեկների կողմից Շորագյալում հիմնված յոք գյուղերից (Բաղարիսան, Թեշիշ-Ղենտ, Սանցուխի, Սարուշի, Ախ-Ղուլի, Արդու-Ղահման և Փոքր Ղըրի) առաջին հինգը, համաձայն 1852թ. կամերալ գյուղակազման տվյալների, բնակեցվեցին միայն փամբակցիների 80 լնտանիքներով:<sup>39</sup> Մինչդեռ Արդու-Ղահման և Փոքր Ղըրի գյուղերում գաղթած փամբակցիների կողքին հայտնվեցին նաև Շորագյալի Փոքր Արդսավալի, Փոքր Ղարաքիլիսա և Թափարլակ գյուղերից ելածներ, և 1852թ. այդ երկու գյուղերն ունեին արդեն 32 լնտանիք (73 մարդ) բնակչություն, որում մեր կարծիքով, փամբակցիների ընդհանուր թիվը չէր գերազանցելու 10-20 լնտանիքը:

<sup>36</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 97:

<sup>37</sup> “Կավկազի կալենդար ու 1850 թվականի տարբերակ”, Տիֆլիս, 1849, ուժ 33-34.

<sup>38</sup> “Դокументы и материалы по истории Армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870)”, Еր., 1993, հայ. 141, ցուցակ 343-344.

<sup>39</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 109:

Ժողովրդագրական դրույթան վերոհիշյալ փոփոխություններով հանդերձ՝ Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի տեղամասի 51 զյուղերում բնակչության թիվը 1852թ. կամերայ ցուցակագրման տվյալների համաձայն հասավ 2138 ընտանիքի կամ 13567 մարդու<sup>40</sup>: Ազգարնակշուրջան թվի աճը տեղամասում այս անգամ ևս եղավ գերազանցավես ի հաշիվ այլազգիների: Սրանք 1842թ. 200 ընտանիքի կամ 14%-ի փոփոխություն 1852թ.-ին կազմեցին 548 ընտանիք կամ 3306 մարդ, որ գավառակի ընդհանուր բնակչության արդեն 25.7%-ն էր: Ընդ որում, այլազգիների մեջ գերակշռողը դարձան ոուսները՝ 383 ընտանիք, որ կազմում էր գավառակի ընդհանուր բնակչության 18%-ը: Մինչդեռ գավառակի ուր զյուղերում ամբողջուրյամբ, իսկ մեկում՝ Ղուրսալիում հայերի հետ խառը բնակվող և ընդհանուր առմամբ 165 ընտանիք կամ 1074 մարդ մահմեդականները կազմեցին բնակչության միայն 7.7%-ը: Ինչ վերաբերում է Փամբակի հայ բնակչությանը, ապա նորա թիվը 1842թ. 1250 ընտանիքների փոփոխության 1852թ. հասավ մինչև 1590 ընտանիքի (10261 մարդու): Այսուհանդերձ տոկոսային հարաբերությամբ այն նվազեց և 1842թ. 86%-ից 1852թ. իջավ մինչև 84.3%-ի: Ի դեպ, հայերը միատարր չեն դաշտանաքով. Գավառակի 33 զյուղեր ամբողջության բնակչության մեջ էին 1479 ընտանիք (9557 մարդ) կազմող հայ-լուսավորչականներով (մեկում՝ Ղուրսալիում նրանք ապրում էին նահմեդականների հետ խառը): Սա Փամբակի ամբողջ բնակչության 69%-ն էր և հայ տարրի 93%-ը: Հայ-կարողիկները՝ 111 ընտանիք (704 մարդ), բնակվում էին միայն հինգ զյուղերում՝ կազմելով գավառակի ընդհանուր բնակչության 5.3 և հայ բնակչության 7%-ը:

Նոյն ժամանակահատվածում Շորագյալի գավառակի ժողովրդագրական դրույթան մեջ ևս գրանցվեցին փոփոխություններ, որոնք XIX դարի կեսերին էլ ավելի նկատելի դարձրին զավատի երկու հատվածների՝ Փամբակի և Շորագյալի տեղանասերի Երն-Ժողովրդագրական և կրթնարավանարանական պատվերների միջև եղած տարրերությունները: Այսպես, եթե Փամբակի տեղամասի համար XIX դարի 40-ական թվականների վերջը նշանավորվեց հայ տարրի արտագաղթով ու այլազգիների ներգաղթով, ապա Շորագյալի տեղամասում, հակառակը, այլազգիների և հատկապես մահմեդականների արտագաղթով և հայերի ներգաղթով: Դրա շնորհիվ ընդամենը երեք տարվա ընթացքում մինչև 1850թ., զավառավում մեկը մյուսի հետևից հիմնվեցին 12 զյուղեր (Քաջարիսանա, Ջեշիշ-Չեմայ, Մանջուխի, Մասուլի, Արդուլ-Ռահման, Ղար-Ղուլա, Փոքր Ղորի, Սարունի, Ախ-Ղուլի, Փամպ, Փոքր Դուզբեն, Ղոզլ-Ղոչ)՝ զյուղերի թիվը 76-ից հասցնելով 88-ի: Ընդ որում, ինչպես վերևում նշեցինք, այդ 12 նորաստեղծ զյուղերից յոքը հիմնվեց փամբակցիների կողմից, մեկը՝ Մասուլին, 1849թ. Սարչապետից Շորագյալ գաղրած հայերի և եղբիների կողմից ու դարձավ խառը ազգարնակշուրջամբ (եզրիների գերակշռությամբ) միայն զյուղն ամբողջ տեղամասում: 1852թ. կամերայ ցուցակագրման տվյալներով՝ զյուղում ապրող 45 ընտանիքներից կամ 250 մարդուց եղբիներ էին 28 ընտանիքը (139 մարդ): Եվ վերջապես մյուս չորս զյուղերը՝ Շորագյալի տեղամասում 1848-1850թթ. ընթացքում հիմնվեցին բնիկ շորագյալցիները. 1848թ. Շորագյալի ճարպիլար և Դուզբենի զյուղերից ելածները հիմնվեցին Ղար-Ղուլա զյուղը, որ 1852թ. ուներ 7 ընտանիք (61 մարդ)<sup>41</sup>: Երկրորդ՝ Փամպ, բնակեցվեց միայն Փոքր Ղարաքիլիսայից ելածներով և 1852թ. ուներ 13 ընտանիք (84 մարդ)<sup>42</sup>: Հաջորդ՝ 1849թ. հիմնվեցին Փոքր Դուզբենն ու Ղար-Ղոչը: Առաջինը հիմնվեց Շորագյալի Դուզբենի զյուղից ելածների կողմից և 1852թ. ուներ 15 ընտանիք (67 մարդ): Նոյնքան ստույգ նշել, թե Շորագյալի որ զյուղից ելածները հիմնվեցին Ղար-Ղոչը, աղբյուրների սակավության պատճառով անհնար է: Հայտնի է միայն այն, որ 1852թ. կամերայ ցուցակագրման տվյալներով զյուղն ունեցել է 20 ընտանիք (113 մարդ) բնակչություն:<sup>43</sup>

<sup>40</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 110; Զ. Հովհաննիսյան, Ռ. Նահապետյան, Վիճական տեղեկություններ Լոռու գավառակի վերաբերյալ (1851-1914թթ.), ԲՀԱ, N 2, Եր., 1988, էջ 29:

<sup>41</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 110:

<sup>42</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 110:

<sup>43</sup> Նոյնը:

Ինչ վերաբերում է նոյն ժամանակահատվածում Շորագյալից մահմեղական-ների արտագառքին, ապա տվյալների բացակայության պատճառով մեզ չհաջողվեց պարզել, թե 1840-1850-ական թվականների արանքում կոնկրետ երր և ինչ ուղղություններով սրանք հեռացան զավառակից: Փաստ է միայն այն, որ եթե 1842թ. կամերալ ցուցակագրման տվյալներով Շորագյալի զավատի երեք լրիվ մահմեղական և երեք խառը հայ-մահմեղական բնակչությանը զյուղերում կային 34 ընտանիք (128 մարդ) մահմեղականներ, ապա 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալների համաձայն՝ Շորագյալում մնացել էր ընդամենը մեկ մահմեղական զյուղ՝ Թաթարական Գյուղալդարան, միայն 21 ընտանիքով (116 մարդ):

Վերոհիշյալ փոփոխությունների հետևանքով 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալներով՝ Շորագյալի զավառակի արդեն 88 զյուղերում բնակչության թիվը հասավ 3685 ընտանիքի (19947 մարդու):<sup>44</sup> Ըստ որում, ինչպես արդեն մեկ նշել ենք, ի տարբերություն հարևան Փամբակի զավառակի, այսուղև բնակչության աճը գերազանցապես եղավ ի հաշիվ հայ տարրի ավելացման, որը 1842թ. եղած 2796 ընտանիքի փոխարեն 1852թ. հասավ 3636 ընտանիքի կամ 19692 մարդու: Սակայն որքան էլ զարմանալի է, քանակապես զգալիորեն աճելով հանդեռ, հայերի թիվը տոկոսային հարաբերությամբ նոյնիսկ նվազեց՝ 1842թ. 98.8%-ից 1852թ. իշենով 98.6%-ի: Վերացավ նաև զավառակի հայ բնակչության մինչ այդ զյուղում ունեցող կրօնական միատարրությունը: 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալներով՝ Շորագյալի հայ բնակչությունն ըստ դաշտանանի արդեն բաժանվում էր երկու անհավասար խմբերի՝ հայ-լուսավորչականների և հայ-կարողիկների: Առաջինները 3502 ընտանիք էին (18993 մարդ) և կազմում էին զավառակի զյուղական բնակչության 95 ու հայ բնակչության 96%-ը: Երկրորդները՝ հայ-կարողիկները, 134 ընտանիք (699 մարդ), ապրում էին միայն Թափառլակ, Գյաֆրառի, Փալուտի և Շիշրափա զյուղերում՝ կազմելով զավառակի զյուղական բնակչության 3.6 ու հայ բնակչության 4%-ը: Ինչ վերաբերում է Շորագյալի ոչ քրիստոնյա բնակչությանը, ապա վերջինիս թիվը զավառակում անցած մեկ տասնամյակի ընթացքում փորբ-ինչ աճելով, 1.2%-ի (34 ընտանիք) դիմաց 1852թ. հասավ 49 ընտանիքի կամ 285 մարդու, որ զավառակի զյուղական բնակչության թիվը այս շնչին աճն արձանագրվեց ի հաշիվ 1849թ.-ին Սարչապետից հայերի հետ Շորագյալ զաղքած եղրիմների (ընդամենը 28 ընտանիք կամ 139 մարդ): Մրանք արդեն 1852թ. կազմում էին զավառակի զյուղական բնակչության 0.8 և ոչ քրիստոնյա բնակչության 57%-ը, այն դեպքում, եթե շորագյալի բնիկ մահմեղականները (ընդամենը 21 ընտանիք կամ 116 մարդ) կազմում էին զավառակի զյուղական բնակչության միայն 0.6 և ոչ քրիստոնյա բնակչության 43%-ը:

Փամբակի և Շորագյալի զավառակներում ժողովրդագրական վիճակի առանձնակի նկարագրությունների հիման վրա կարելի է վերականգնել ամբողջ Ալեքսանդրապոլի զավատի էրես-ժողովրդագրական և կրօնադաշտանարանական պատկերը XIX դարակեսին:

1840թ. ձևավորված Ալեքսանդրապոլի զավատն իր բնակչության ազգային կազմի տեսակետից հիրավի եղավ ամենամիատարրը աճբողջ Անդրկովկաստում: Նրա բնակչության թիվը համաշափ աճը շարունակվեց նաև հաջորդ տասնամյակի ընթացքում. 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալների համաձայն՝ Ալեքսանդրապոլի զավատն ուներ արդեն 44794 մարդ (23512-ը արական, 21282-ը իգական սեռի).<sup>45</sup> որից 11280-ը բնակվում էր Ալեքսանդրապոլ քաղաքում, որտեղ հայերը կազմում էին բնակչության ընդհանուր թիվ 94.9%-ը, մահմեղականները (410 մարդ)՝ 3.6%-ը, հույները (163 մարդ)՝ 1.4%-ը, ռուսները՝ (11 մարդ) 0.1%-ը:

5823 ընտանիք (33514 մարդ) էր ապրում Ալեքսանդրապոլի զավատի 139 զյուղերում: 124 զյուղեր ամբողջությամբ, իսկ երկուսը (Մատուղին և Ղուրսալին) մասսամբ՝

<sup>44</sup> «ՀԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 109»:

<sup>45</sup> «ՀԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 97, 109, 110, 120; “Կավկազский календарь на 1852 год”, Тифлис, 1851, отд. III, стр. 275; “Кавказский календарь на 1854 год”, Тифлис, 1853, отд. III, стр. 121, 321-330; “Кавказский календарь на 1855 год”, Тифлис, 1854, отд. III, стр. 332-347.

բնակեցված էին 5226 ընտանիք (29953 մարդ) կազմող հայերով, որ գավառի գյուղական բնակչության 90%-ն էր: Հանալվով երկրորդը՝ 383 ընտանիք (2232 մարդ) ունեցեր էին, որ ապրում էին ընդամենը 4 գյուղերում և կազմում էին գավառի գյուղական բնակչության 6.5%-ը, միայն 3% էին կազմում գավառի 9 գյուղերում ամբողջությամբ և մեկում (Դորսալի) հայերի հետ խառը ապրող 186 ընտանիք (1190 մարդ) մահմեղականները, իսկ մասուղեցի 28 ընտանիք (139 մարդ) եղիները՝ 0.5%:

Ըստ գավանանքի նոյն 139 գյուղերում ապրող 5923 ընտանիքները բաժանվում էին ուր խմբերի: Հայ-լուսավորչականներ էին Ալեքսանդրապոլի գավառի գյուղական բնակչության 85.5%-ն ու հայ բնակչության 95%-ը (4981 ընտանիք կամ 28550 մարդ): Հայ-կարողիկներ էին գյուղական բնակչության 4.5%-ը կամ հայերի 5%-ը: Ուստի աղանդավորներ էին գավառի բնակչության 4.9%-ը և ուստի ազգաբնակչության 75%-ը (287 ընտանիք կամ 1689 մարդ): Փոխարենը ուղղափառ ունեներ էին բնակչության 1.6%-ը կամ ուստիների 25%-ը (96 ընտանիք կամ 543 մարդ): Խայտարդեստ պատկեր ուներ գավառի մահմեղական ազգաբնակչությունը. շիա մահմեղականներ էին գավառի գյուղական բնակչության 2%-ը կամ մահմեղական ազգաբնակչության 63.4%-ը (118 ընտանիք կամ 740 մարդ), սումիներ էին գյուղական բնակչության 0.7%-ը կամ մահմեղականների 25.3%-ը (47 ընտանիք կամ 334 մարդ), իսկ աղանդավոր մահմեղականներ էին գյուղական բնակչության 0.3%-ը կամ մահմեղականների 11.3%-ը (21 ընտանիք կամ 116 մարդ): Վերջապես, արևապաշտ էր գավառի եղինական ազգաբնակչությունը, որ կազմում էր գավառի գյուղական բնակչության միայն 0.5%-ը: Այսպիսով, չնայած XIX դ. 40-ական թվականների կեսերից Ալեքսանդրապոլի գավառի ազգաբնակչության կազմի միատարրությունը փոքր-ինչ տեղի տվեց (1842թ. հայեր էին քաղաքաբնակների 96 և գյուղաբնակների 94.5%-ը, ապա 1852թ.՝ քաղաքաբնակների 94.9 և գյուղաբնակների 90%-ը), այնուամենայնիվ XIX դարակեսին նոյնպես գավառը շարունակում էր մնալ որպես ամենամիատարրն ու հայեցին ամբողջ Անդրկովկասում<sup>46</sup>:

## ЭТНО - ДЕМОГРАФИЧЕСКАЯ И РЕЛИГИОЗНО - КОНФЕССИОНАЛЬНАЯ СИТУАЦИЯ АЛЕКСАНДРОПОЛЬСКОГО УЕЗДА В 1840 - 50 ГГ.

Резюме

A. Արքալեյն

На основе богатого архивного материала в статье досконально анализированы особенности демографического процесса и религиозно-конфессиональной ситуации в входящих в состав Александропольского уезда дистанциях Бамбака, Шорагяла и Лори. Вопрос подробно представлен по сельским поселениям, уточнены также некоторые уже существующие представления о динамике населения Гюмри, выявлены все факторы влияющие на демографическую и религиозно-конфессиональную картину уезда, в том числе и вспышка эпидемии чумы, процесс реализации программы русификации уезда и.т.д.

<sup>46</sup> Ն ի կ ո դ ո ս յ ա ն, Վիճակագրական տեղեկություններ Ալեքսանդրապոլի գավառի հայ-լուսավորչականների մասին, «Սուրբ», N 8, օգոստոս, Թիֆլիս, 1901, էջ 239-240; Армяно-католические церкви в Закавказье и число их прихожан, “Кавказский календарь на 1885 год”, Тифлис, 1884, отл. III, стр. 69; Сборник сведений о Кавказе, т. 1, Тифлис, 1871, стр. 259.

## Հարիսա ԵԳԱՆՅԱՆ

### ՀԱՅԵԼԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԻԿ ԹԱՂՍՄՆ ԾԵՍՈՒՄ

Հայաստանի անտիկ թաղումների ուղեկցող նյութերի մեջ, թեև հազվադեպ, բայց կան նաև հայելիներ: Տարբեր ձևի, զարդանախշված կամ առանց զարդի, արծաթյա և բրոնզե հայելիներ հայտնաբերվել են Արտաշատից, Վաղարշապատից,<sup>1</sup> Գառնիից,<sup>2</sup> Բենիամինից և Անուշավանից:<sup>3</sup> Արտաշատի հայելիները (տրամ. 4, 7սմ) բրոնզի բիբելից են, շրջանաձև, առանց զարդի՝ բոլորն էլ խիստ քայլայված: Միայն ճակիճների մեջ գտնվող բլիփ վրա բացված դամբարանի գտածոն է ամբողջական և լավ պահպանված (տրամ.՝ 6,5սմ):<sup>4</sup> Արտաշատի դամբարանադաշտերում հայելիների առկայությունն ըստ ժ. Խաչատրյանի, կապվում է անդրշիրմյան պատկերացումների հետ և ունի պաշտամունքային նշանակություն:<sup>5</sup> Գառնիում հայելիները գտնվել են կանանց թաղումներից՝ այլ զարդերի հետ:

Ծրջանաձև, անպոչ հայելիներ անտիկ Հայաստանում հանդիպում են սկսած մ.թ. ա. Ա-Ի դարերից, և լայն տարածում են ստանում մ.թ. առաջին դարերում: Այս երեսոյն թղթեալի է հատկապես Գառնիում, որտեղ Ա-Ի դարերի հայելիները քիչ են, իսկ Ա-III դարերի դամբարաններում ավելի հաճախ են հանդիպում:<sup>6</sup> Արտաշատի մ.թ. ա. Ա և Ա-Բ. Ա դարերի հայելիները հիմնականում գործածվել են քաղաքային բնակչության ստորին խավերի կենցաղում:<sup>7</sup> Արտաշատի հայելիները շատ վատ են պահպանված և մեծ մասամբ հնարավոր չեն որոշել դրանց չափերը:<sup>8</sup> Բենիամինում հայելի գտնվել է ավերված դամբարանից, իսկ Անուշավանում՝ շինարարական աշխատանքների ժամանակ բացված քաղումից: Բենիամինում անհայտ է կնախը նկատմամբ հայելու ունեցած դիրքը: Անուշավանում հայելին դրված է եղել ներքեցյալի գլխի տակ: Նշված քաղումների մարդարանական տվյալներ նույնական չկամ և անհայտ է՝ հայելին կնոջ, թե տղամարդու հետ է դրվել: Բենիամինի հայելին բրոնզի քարակ բիբելից շրջան է՝ կորի համար նախատեսված երևառով: Հայելու տրամագիծը 9, 3սմ է, պոչի երկարությունը 2սմ, լայնությունը՝ 1,3սմ: Կորի մասը քարակ է՝ ծայրին փոքր անցքով: Հայելու սկավառակի եզրերը կտրտված են: Անուշավանից գտնված հայելին (տրամ.՝ 13, 7սմ) նույնական բրոնզի բիբելից է՝ եզրերը քիչ բարձր և ներս հակված: Հակառակ երեսին համակենտրոն գույզ շրջաններ են: Ակավառակի եզրերն պահպանվել են կոբճ ամբացնելու համար արված գույզ անցքեր: Եվ Բենիամինի, և Անուշավանի հայելիները քվագրվում են մ.թ. Ա-Ի:

Հայաստանում ավելի շատ հայելիներ գտնվել են Արտաշատի և Գառնիի անտիկ թաղումներից: Բենիամինում, որ պեղվել է 245 դամբարան, միայն մի հայելի է գտնվել: Այստեղ հիմնականում միջին և աղքատ թաղումներ են, և բնական է հայելու եզակի լինելը: Երբեմն նույնակ հարուստ թաղումներ ունեցող դամբարանադաշտերում հայելիները հազվադեպ են: Օրինակ, Ույգարակում հայելիները գտնվել են քացառապես միայն քրմուիկների դամբարաններից:<sup>10</sup>

Հայելիների տարածման տիրույթը շատ մեծ է: Բրոնզի և արծաթյա, փայլեցված շրջանաձև հայելիներ հայտնի են Էգեյան Հունաստանից և Մեծ Հունաստանից, իսկ միքենյան ժամանակաշրջանում Հունաստանում պատրաստվում էին նաև ձեռքի հայե-

<sup>1</sup> Ժ. Խաչատրյան, Արտաշատ 2, Եր., 1981թ, էջ 85:

<sup>2</sup> Ժ. Խաչատրյան, Գառնի V, Անտիկներ Կորոպոլ, Եր., 1976, սր. 97.

<sup>3</sup> Լ. Եղանյան և ճ. Ծիսական իրերը Բենիամինի անտիկ թաղումներում, ԸՆՀ Կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 4, Գյումրի, 2001, էջ 11:

<sup>4</sup> Ժ. Խաչատրյան, Աշուածուակ, էջ 85:

<sup>5</sup> Նույնը:

<sup>6</sup> Ժ. Խաչատրյան, Աշուածուակ, էջ 97:

<sup>7</sup> Ժ. Խաչատրյան, Աշուածուակ, էջ 85; Ժ. Խաչատրյան, Աշուածուակ, էջ 97, 119:

<sup>8</sup> Ժ. Խաչատրյան, Աշուածուակ, էջ 87:

<sup>9</sup> Ժ. Խաչատրյան, Աշուածուակ, էջ 119:

<sup>10</sup> Օ. Բիշնեւսկայա, Կուլտуրա սակսիկ պլեմեն նիզովյան Սырдарьи в VII-V вв. до н. э. Труды ХАЭЭ VIII, М., 1973, стр. 8.

լիներ: <sup>11</sup> Նախշազարդ, փորագիր տարբեր ֆիգուրներով հայելիները գործածական էին էտրուսկների մոտ, ինչ մ. թ. ա. V դ. Հռոմաստանում հայտնվում են նաև ծալրվի հայելիները: <sup>12</sup> Ծրջանաձև, տափակ հայելիները տարածված էին Հռոմաստանում հելլենիստական և վաղ հռոմեական շրջանում: <sup>13</sup> Հայելիները գտնվել են Թուփ-Խոնեից, <sup>14</sup> լայն տարածում ունեին Չինաստանում<sup>15</sup> և օգտագործվում էին քաղման ծեսում: Տափակ, հարք ու շրջանաձև հայելիները հայտնի են Կերչից և թվագրվում են մ. թ. ա. I և մ. թ. I դարերով: <sup>16</sup> Սկզբութական Նեապոլում գտնված հայելիները թվագրվում են մ. թ. ա. III - I դարերով: Նույն ժամանակաշրջանով են թվագրվում նաև Ուստ-Լարինսկում գտնվածները:<sup>17</sup> Հայելիները հայտնի են Դուրա - Եվլոպոսի՝ I - IV դր. թվագրվող դամբարաններից:<sup>18</sup>

Հետաքրքիր են Խերսոնեսից գտնված կապարե շրջանակներով հայելիները, որոնք նվիրատվական բնույթի արձանագրություններ ունեն: Դրանք դիտվել են որպես մոգության հետ կապված իրեր, արդրուարդի առարկա, խաղալիք, քայլամաններ, նաև ընծաներ, որ տիրուհու մահից հետո, որպես քանչարժեք հիշատակներ, ընդունվել են քաղման զույքի մեջ:<sup>19</sup> Հայտնի է, որ հնում մարդուն նվեր արվում էր ոչ միայն կենդանության օրոք, այլ նաև քաղման արարողակարգի ժամանակ:<sup>20</sup> Հետազոտողներն այն կարծիքն են, որ կապարե հայելիները կարող էին ծառայել որպես այն աշխարհ անցնելու բույսություն, այսինքն՝ յուրահասուկ անցարություն:

Իրանում հայտնաբերված հայելիներն այլ ձև և ծիսական իմաստ ունեն: Այստեղ Անահիտին և Սիհրին նվիրված տաճարից գտնվել են կանացի մոտավոր կերպարանքով հայելիներ: Որպես կոթ պատկերված են ոսքերը, զիսի փոխարեն ամրացված է հայերու սկավառակը: Ըստ Ռ. Գիրշման՝ հայելիները խորհրդանշում են Անահիտին և Սիհրին, քանի որ գտնվել են այդ աստվածներին նվիրված տաճարից:<sup>22</sup> Հայելին ձեռքին կանացի արձանիկները հայտնի են Սիհրին Ասիայի տարբեր հնավայրերի պեղումներից:<sup>23</sup> Հավանաբար հայելին եղել է կանացի աստվածության ատրիբուտ, քայլ եղել է կապված նաև արևի հետ: Մրա օգտին է խոսում նաև հայելուն վերագրված գերեզման լուսավորելու հավատալիքը:<sup>24</sup>

Ինչպես տեսանք, տարբեր են հայելիների հետ կապված հավատալիքները: Տարբեր են նաև հայելիները դամբարանում դնելու տվորույթի մասին կարծիքները: Ըստ Բ. Լիտվինովսկի՝ Ա. Սեծով, Կուլուտы и ритуалы Кушанской Бактрии, Պогребальныи обряд, Մ., 1984, стр 46.

<sup>11</sup> Словарь античности, М., 1989, стр 214.

<sup>12</sup> Նոյնիք:

<sup>13</sup> G. Richter and, H. A lexander, A Greek mirror. Ancient or Modern. AIA 1917. n.3.

<sup>14</sup> Б. Литвиновский, А. Седов, Культы и ритуалы Кушанской Бактрии, Погребальный обряд, М., 1984, стр 46.

<sup>15</sup> R. Salvator, Ancient Chiese bronze mirror, Peiping, 1937, p. 6.

<sup>16</sup> Ժ. Խաչատրյան, Աշխ. աշխ., Էջ, 87; Վ. Շիլով, Ռազուկի Կալինովսկого курганныго могильника, ԿСИИМК վայ. 59, 1955ր, стр.125; Տ. Արսենյեա, Մոգիլնիկ ստորև Նово-Օրոճու, ՊՄԿՊ, ՄԻԱ, համ. 155, Մ., 1970, стр. 132, 144.

<sup>17</sup> Н. А н ф и м о в, Մետо-սարմատский могильник у станицы Усть-Лабинской, МИА, համ. 23, Մ-Լ, 1951, стр 198.

<sup>18</sup> N. Toll, The Necropolis „, The excavations at Dura-Europos,, Preliminary Report of the Ninth season of work 1935-1936, New Haven, London, 1946, p.122 - 123.

<sup>19</sup> Ю. К а л а ш н и к, Սվինցով բարձրացուցանիշ մատուցվող յուրահասուկ նվերներ են հովարկավորության ծաղկեասակները՝ ժամանակների վրա արված նվիրատվական գրություններով:

<sup>20</sup> Նոյն տեղում, Էջ 122:

<sup>21</sup> В. З у բ ա ր յ, Օ свинцовых зеркалах из некрополя Херсонеса в кн. Проблемы античной культуры, М., 1986, стр. 153.

<sup>22</sup> R. Girschmann, Iran, Terrasses sacrees. Bard-e Nechandeh et Masdjidi Solaiman. Paris, 1976, p. 117.

<sup>23</sup> Б. Л и т в и н о в с к и й, Орудия труда и утварь из могильников Западной Ферганы, М., 1978, стр. 111.

<sup>24</sup> Loeffler De la chaux M., Le cercle, Gen, 1947.

Կոտրված քեկորք պահպանում էր ողջերին մեռածի հոգու հայտնվելոց: Եվ մ.թ.ա. 1-մ. թ. Ի դարերում սարմատական դամբարաններում հայելիների մեծ մասը շարունակում էին դնել կոտրված վիճակում, որոշակի մասն էլ՝ ամրողական:<sup>25</sup> Խոչ Ա-IV դարերում ուղեկցող իրերի մեջ ամբողջական հայելիների քանակն ավելանում է,<sup>26</sup> և V դարում էլ դեռևս շարունակում էին կոտրված հայելիներ դնել դամբարաններում:<sup>27</sup> Սակայն, հակառակ Բ. Լիտվինսկու ենթադրության, փաստվում է, որ մ. թ. ա. Ա-Ա-IV դարերում Պովոլժյեի և Մերձուրախ սարմատական դամբարաններում կոտրված հայելիներ էին դնում:<sup>28</sup> Սարմատական դամբարանում հայելու առկայությունը ենթադրել է տալիս, որ նրանց համար հայելին ունեցել է մոզական նշանակություն, նաև մոզական ազդեցություն: Այս պատճառով էլ հայելին կոտրում էին և նոր միայն դնում հանգույցայի հետ՝ մոզական ուժերը համապատասխանեցնելով նոր վիճակին.<sup>29</sup> Քանի որ հայելին մոզական ուժերի կրողն է և արտացոլում է մարդու պատկերը, դրանով նաև՝ մարդու ողջ և առողջ վիճակը, որեմն հայելու տիրոջ մահից հետո այն պիտի կոտրվեր՝ խորհրդանշելով մեռած մարդուն: Հայ Ա.Խազանովի՝ սարմատական քաղումներում հայելիները վնասվել են հանգույցայի հոգին ազատելու համար:<sup>30</sup> Հայելին վնասելը կամ կոտրելը կատարվում էր հանգույցայի հոգին ողջերի աշխարհ չար մտադրություններով ներխուժելուց ետ պահելու համար: Քանի որ հայելին իր մեջ կրել էր նաև հանգույցայի պատկերը, որեմն այն վնասելով, վնասում էր նաև հանգույցային և դրանով կանխում նրա վերադարձը: Ծիսակարգը պահպանել և մեզ է հասցրել մոզական գործողության հիմնական գծերը, որոնցում հայելու «մահը» հաջորդել է տիրոջ մահկանը: Ելեւով վերոհիշյալից՝ կարելի է ենթադրել, որ հայելին նապատակամղված ձևով վնասելը կապված է քաղնան ծնակ հետ և ողջերի վրա մոզական ազդեցության հետևանք է: Տիրոջ արտացոլումը կրող հայելին հավանաբար դիտվել է նաև հոգու կրող և ըստ այդ էլ վնասվել է՝ ողջերի աշխարհ ննջեցյալի վերադարձը կանխելու համար: Իրի սովորը հնարավորություն է ունեցել հետևել իր տիրոջ դեպի այն աշխարհ:<sup>31</sup> Դամբարաններում կոտրված իրեր դնելու սովորությունը լայն տարածում ունի և երեսն քացարույնը է նաև որպես դամբարանների քալանը կանխելուն միտված գործողություն:

Հայելիներ գտնվել են ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց քաղումներից: Սկյուռական դամբարանադաշտերում հայելին առավելապես բնորոշ է կանանց քաղումներին: Չարքային սկյուռների քաղումներում հայելի հազվադեպ է հանդիպում:<sup>32</sup>

Նկարագրայի սկզբանական մ. թ. IV-III դարերի դամբարանադաշտում հայելիներ գտնվել են իրերի քանակով հարուստ երեք դամբարաններում, որոնցից մեկում տղամարդու քաղում է, իսկ մյուս երկուսում՝ կանանց: Նշանակած բոլոր քաղումներում հայելիներն ամբողջական են և գտնվել են ձախ կողմում՝ ննջեցյալի կրծքին կամ զիկին:<sup>33</sup> Այս դամբարաններում հայելիները դրվել են նաև կոտրված կամ բնեկրոների ձևով:

Ամբողջական և կրտարված հայելիներ կամ հայելու կտորներ գտնվել են նաև սարմատական դամբարաններից:<sup>34</sup> Մերձուրախի սարմատական քաղումներում քրմու- իների դամբարաններում ավորական է հայելու առկայությունը:<sup>35</sup> Պավլովյանի սարմա-

<sup>25</sup> Б. Литвинский, бгц. шгю., т9108:

<sup>26</sup>Եմիլիա սեղում, էջ 105:

<sup>27</sup> А. Хазанов, Религиозно-магическое понимание зеркал у сарматов, СЭ, том. 3, 1964, стр. 94.

<sup>28</sup> В. Шилов, Очерки по истории древних племен Нижнего Поволжья, Л., 1975, стр. 121.

29 А. Хазанов

1964, CT

<sup>31</sup> S. Hartland, *Death and disposal of the dead*,- “encyclopaedia of religion and ethics” vol IV, New

<sup>32</sup> Э.Якоблев, Рядовые скифские погребения в курганах Восточного Крыма. - Сб. Древности Восточного Крыма, Киев, 1970, стр. 121 (1962, 94); Б.Граков, Скифские погребения из Никопольском курганием подле МИА, том 115, 1962, стр. 87.

<sup>33</sup> А. Мелюков, Поселение и могильник скирского времени у села Николаевка, М., 1975, стр. 135.

<sup>34</sup> Т. Кузнецова, Зеркала в погребальных обрядах сарматов, CA, N 4, 1988, стр. 52–61.

<sup>35</sup> К. Смирнов, Бронзовое зеркало из Мечегсая, - В сб. „История, археология и этнография Средней Азии, М., 1968, стр. 117.

տական առաջնորդների դամբարաններում գտնված հայելիներն ամբողջական են, գտնվել են զանգից աջ, ձախ ձեռքի դաստակի և աջ տսագլիսի մոտ: Վերջին դամբարանում հայելին, ի թիվս այլ իրերի, գտնվել է զանգի մոտ 40 x 20սմ չափերի 20սմ խորոշյամբ զարդնարանի մեջ: <sup>36</sup> Գաղտնարանի մեջ պահելու հաստատում է հայելու թանկարժեք լինելը: Միտումնավոր կոտրված հայելիներ գտնվել են Ֆերզանայի տարբեր դամբարանադաշտերից: <sup>37</sup> Այս թաղումներում թաղման գրւյրից մեծ մասամբ կոտրված են միայն հայելիները: Հայելիները կամ դրանց թեկորմները գտնվել են ոչ բոլոր դամբարաններում, որն անշուշտ տցիալական շերտավորման արդյունք է:<sup>38</sup> Հետևարար այդ բացատրությունը ճիշտ է առանձին թաղումների համար, սակայն ոչ այն թաղումների, որտեղ կոտրված են բացատապես միայն հայելիները:

Ինարկե կարելի է միայն ենթադրություններ անել, թե ինչ է խորհրդանշում դամբարանում դրված հայելու կտորը: Ըստ ամենայնի, դամբարաններում հայելիները կարող էին կատարել տարրեր ֆունկցիաներ, այս իսկ պատճառով յուրաքանչյուր կոնկրետ դեսպում պահանջվում է յուրահատուկ մոտեցում՝ եկեղեցով տվյալ ժողովրդի սովորությունը և հավատալիքներից:

Թաղման ծեսում հայելիների կամ դրանց թեկորմների օգտագործման ծիսական դերն ու իմաստը բացահայտելու համար նախ փորձենք պարզեցնելու յուրաքանչյուր կոնկրետ դեսպում պահանջվում է յուրահատուկ մոտեցում՝ եկեղեցով տվյալ ժողովրդի սովորություններից:

Ազգագրական նյութերը վկայում են, որ հայելիների թեկորմների օգտագործումը բնորոշ է բազմաթիվ ժողովուրդների: Հայելիները կոտրում էին նպատակադրված, իրար իիշելու համար՝ հասկապես ամուսնուց և հարազատներից երկար ժամանակով բաժանվելիս: <sup>40</sup> Չանի որ հայելին ունի մոգական ուժ, ապա ամրողը նասերի բաժանված, հավանաբար յուրաքանչյուր մասն իր հետ տանում էր ամբողջի մի մասնիկը, այսինքն, իրարից բաժանվող հարազատները բաժանվելիս էլ պահում էին այդ կապը: Հայելին այդ կապի կրողն էր ու պահողը: Պատերազմի դաշտում կամ օտարության մեջ գտնվող հարազատների հետ հաղորդակցվելու համար հայելին դնում էին ջրի մոտ և գուշակություն անում: <sup>41</sup> Եվ դա բնորոշ է ոչ միայն հայելին: Հայտնի է բրոնզե հայելին ջրով լի ամանի մեջ դնելով գուշակություն անելը, որի ժամանակ, ըստ հավատալիքի, տեսնում էին երկնային արքայության դրուերը: <sup>42</sup>

Հայելը հայելուն տարրեր հատկանիշներ են վերագրել: Հերիաքններում հայելու խամրելը հերոսի կյանքին սպառնացող վտանգի նշան է: Գուշակության մեջ հայելու մաքրությունը կամ պայծառությունը հաջորդության նշան են, իսկ խամրելը՝ դժբախսության: <sup>43</sup> Հայկական հավատալիքներում հայելուն իգական հատկանիշը և միաժամանակ պատղաքերության ուժ է վերագրվել: Դրանով է պայմանավորված այն հավատալիքը, որ եթե առկահատիկի ժամանակ երեխան հայելի վերցնի, ապա հաջորդ երեխան աղջիկ է ծնվելու: <sup>44</sup> Հայելին հավանաբար կապված է ավելի հին հավատալիքի հետ, ըստ որի, նրան վերագրվում էր նաև պատղաքերության ուժ: Կարծում ենք՝ վերջինիս հետ է կապված հայելական նվազարաններից պարկապուկին հայելի ամրացնելու սովորությը:

<sup>36</sup> В. Д о р н и ч е н к о, Г. Ф е о д о р о в –Д а в ы լ օ վ, *Раскопки курганов в зоне строительства Калмыцко-Астраханской и Никольской рисовых оросительных систем. в кн. Сокровища сарматских вождей и древние города Поволжья*, М., 1989, стр. 26, 58, 69.

<sup>37</sup> Ю. Б а р у զ ձ դ ի ն, *Каравулакский могильник*. Известия АН Кирг. ССР, серия общественных наук, т. III, в. 3, Фрунзе, 1961, стр. 64; Ю. Заднепровский, *Археологические памятники южных районов Ошской области (середина I тысячелетия до н.э.- середина I тысячелетия н.э.)*, Фрунзе, 1960, стр. 112-113, 112-113; М. Дьяконов, *Работы Кафирнитанского отряда*, - МИА, ном. 15, Москва-Ленинград, 1950, стр. 170.

<sup>38</sup> Б. Л и т в и н с к и й, սկզբ. 1978. стр. 105.

<sup>39</sup> Նոյն տեղում, էջ 106:

<sup>40</sup> А. М а р аկ յ ե բ, *Китайские бронзы из Басандайски*, Томск, 1947, стр. 171.

<sup>41</sup> L. Ե զ ա ն յ ա ն, դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), Աշոցք:

<sup>42</sup> J. C r o u t e, *Les fêtes annuellement célébres à Etna*. Paris, 1886, p. 389.

<sup>43</sup> L. Ե զ ա ն յ ա ն, ԴԱՆ, Գյումրի:

<sup>44</sup> Ե. Լ ա լ ա յ ա ն, *Հուղարկավորության և զերեզմանների զարգացումը Հայաստանում*, Տեղեկագիր ՀՍԽՀ Գյուղատնտեսության և արկեստի ինսուլտուսի, N 9, Եր., 1928, էջ 115:

Ծառ ժողովուրդների մոտ կա այն հավատալիքը, որ հայելու կոտրվելը նշանակում է տիրոջ մահը: Նման հավատալիք կա Իրանում, ինչպես նաև ուստի և տաջիկների մոտ:<sup>45</sup> Հայելու նոգական ուժի մասին հավատալիքներ պահպանվել են նաև հայերի մոտ: Այսպես հայելու կոտրվելը տաճ անդրամի մասի է ենթադրում: Հայտնի է նաև հանգույցյալի տաճը հայելիները ծածկելու կամ դեպի պատը շրջելու սպիրույքը: Ըստ հավատալիքի՝ հանգույցյալի եղանակ մինչև թաղվելը մնում է տաճը և կարող է իր հետ տաճել հայելու մեջ արտացոլված մարդուն:<sup>46</sup> Հանգույցյալի տաճը հայելին փակելու հայերի սպիրույքը հավանաբար կապվում է նոգական ուժի շնորհիվ մեռածի պատկերը հայելու մեջ տպապորվելու և ողջերին վնասելու հավատալիքի հետ և միտված է դժբախտությունը կանխելուն: Հավանաբար հավատալիքի գոյուրյունը բխում է մոտ մարդու մահվան ժամանակ հայելին կոտրելու սպիրույքից:<sup>47</sup>

Ասիայի և Եվրոպայի շատ ժողովուրդների մոտ ևս հայելուն վերագրվում է մոզական դեր: Արարենքի մոտ հայելին ուներ դժբախտությունից պաշտպանելու նոզական ուժ:<sup>48</sup> Իրանում, կապկած հարսանեկան հայելու հետ, կար մի սովորույթ, ըստ որի, այդ հայելու կոտրվելով նշանակում էր հարսի և փետայի մահ:<sup>49</sup> Նման հավատալիք ունեն նաև տաջիկները:<sup>50</sup> Հայելու կոտրվելու շարագուշակ են համարում նաև հայելը:<sup>51</sup>

Տարբեր ժողովուրդների մոտ կան ջրի հետ կապված տարբեր հավատալիքներ, որոնք կապվում են նաև հայելու հետ: Հին հայերն հավատում էին, որ եթե մոտ ժամանակ ջրին խփելու դեպքում ջրի ոգիները կարող են վնասել: Այդ հավատալիքից են բրիում հայոց մեջ գոյություն ունեցող մի քանի մոզարգելքներ. ջրում երևասային շափելը, երեսային լողաճառուց հետո ջրու գիշերով չքափելը և այլն:

Հին Հունաստանումև Հնդկաստանում գյուրջյուն ուներ ջրի մեջ իր արտացոլմանը շնայելու կանոնը, և եթե մարդը երազում տեսնում էր իր արտացոլանքը, հոյները դա համարում էին մահվան նախանշան։ Նրանք վախենում էին, որ ջրի ոգիները արտացոլանքը կամ հոգին կը աշնչն ջրի տակ և մարդը կմեռնի։<sup>52</sup>

Դրտի Ենքաղիկ, որ հայելուն վերագրվող տարրեր հատկանիշները զայիս են դեռևս նախնադարյան մարդու մոտ ծագած առաջին մտահաճումից, եթի ջրի մեջ նայող մարդն առաջին անգամ տեսնելով իր արտացոլանքը և չկարողանալով հասկանալ՝ կարող էր միայն վախենալ, սարսափել, այնուեւս Ենքաղկվել իր իսկ ստեղծած հավատալիքին: Հնարավոր է, այսպես է ծագել Նարկիսոսի դասական առասպելը: Ըստ հունական հայտնի առասպեկի Նարկիսոսը ջրի մեջ տեսավ իր արտացոլանքը, սիրահարվեց իր իսկ պատկերին ու մեռավ իր նկատմամբ տածած սիրոց: <sup>53</sup> Երեգերը, վերլուծելով նախնադարյից եկող հավատալիքները, գտնում է, որ նախնադարյան մարդը հաճախ իր ստվերին կամ արտացոլված պատկերին նայել է որպես հոգու կամ անձի կենսալի նասի, և հենց դրա համար էլ որոշ ժողովուրդներ հավատում են, որ իրենց հոգին ստվերի, ջրի կամ հայելու մեջ է: <sup>54</sup> Երևալը բնորոշ է նախնադարյան մոգությանը: Իսկ մոգական մտածողությունը հենվում է երկու սկզբունքի վրա: Դրանցից առաջնը հետևյալն է. նմանը ծնում է նմանին, կամ հետևանքը նման է պատճառին: Իսկ ըստ երկրորդ սկզբունքի՝ այն իրերը, որոնք մեկ անգամ շփվել են իրար հետ, անմիջական շիման դադարումից հետո էլ հեռավորության վրա շարունակում են փոխազդել:

<sup>45</sup> С. Хедо ят, Небрангистан, пер. Н. Кислякова, - Труды Института этнографии АН СССР, Новая серия, т. XXXIV. М., 1958, стр. 272, 295.

<sup>46</sup> *Новая серия, ТХХХIV М., 1955*

<sup>47</sup> Б. Литвинский, Зеркало в верованиях древних ферганцев, СЭ, N. 3, 1964, стр. 99.

<sup>48</sup> Н. Катанов, Описание одного металлического зеркала с арабскою надписью, принадлежащего Отечеству археологии, истории и этнографии при Казанском университете, Казань, 1898, стр. 4.

<sup>49</sup> Ենիս, օր. 11.

<sup>50</sup> Б. Литвинский, указ. соч., стр. 99.

<sup>51</sup> Լ. Եզանի աշխատանքը՝ գլուխ է, ու գլուխ է այս պատճենը:

<sup>52</sup> Ֆը եղել է Ռուկե ճյուղը, Երևան, 1989 թ., էջ 232:

<sup>53</sup> Мифологический словарь, М., 1990, стр. 382.

<sup>54</sup> **ঢ p b q t p, ৬২৩. wɔʃu., tɔ 231:**

Սուազին սկզբունքն ընդունված է որպես հոմեոպաթիկ, իսկ երկրորդը՝ շփածին՝ ըստ Ֆրեզերի,<sup>55</sup> կամ պարզիանալ՝ ըստ այլ հետազոտողների:<sup>56</sup>

Այսինքն քաղման ծեսում հայելիների օգտագործումը մոգական գործողություն է՝ նպատակամղված փոխազդեցության կապերը խզելուն: Իսկ հնագիտական և ազգագրական նյութերի համադրումը հանգեցնում է այն եզրակացության, որ այդ կապերի խզումը կանխում էր հանգուցյալների կողմից ողջերին հասցելիք մահացու վտանգը:

## АНТИЧНЫЕ ЗЕРКАЛА АРМЕНИИ.

*Резюме*

*Л. Еганин*

Зеркала из серебра и бронзы типичны для погребений первых веков н.э. и принадлежали к числу наиболее ценных бытовых предметов. Помимо своего бытового назначения, зеркало являлось одним из важных элементов ритуала захоронения.

На материалах раскопок античных некрополей Армении (Арташат, Гарни, Бениамин, Анушаван) рассматривается ритуальная роль зеркал в погребальном обряде. Сопоставлением археологических и этнографических материалов Армении и сопредельных стран выявлено, что роль зеркал в погребальном обряде связано с представлениями о потустороннем мире и предназначено для предохранения от злых магических сил.

<sup>55</sup> Д. Фрезер, Золотая ветвь, М., 1980, стр. 49 – 60.

<sup>56</sup> С. Токарев, Сущность и происхождение магии. Труды ИЭ, М., 1959, стр. 22.

## Հարիսա ԵԳԱՆՅԱՆ

### ԴՐՈՇՍԱԶԱՐԴ ԿԱՐԱՍՈՆԵՐ ՇԻՐԱԿԻՑ

Հայաստանում դրոշմազարդ կարասները լայն տարածում են ստանում XI-XII դարերում և առավելապես հայտնի են Աճիխ<sup>1</sup> և Դվինի<sup>2</sup> պեղումներից: Գտնվել են նաև Գառնիից<sup>3</sup> և Անդրեվոյից:<sup>4</sup>

Դրոշմազարդ կարասների հետ կապված մի շարք հարցերով գրաղվել են տարբեր գիտմականներ: Տարբեր են դրանց ծագման, արտադրության կենտրոնների, ինչպես նաև թվագրման վերաբերյալ կարծիքները:

Աճիխ գտնված դրոշմազարդ կարասներն ուսումնասիրելիս, դեռևս 1930-ական թվականներին, Գ. Չորինովը կարասների թվագրումը կատարեց ըստ զարդանախշերի՝ դրոշմների տարաբնույթ տեսարանները համարելով մահմեդական արվեստի արդյունք: Ըստ Չորինովի՝ «զարդարման բարձր տեխնիկան և նրա տարբեր եղանակները մահմեդական արվեստի հնարանը են, բնավ ո՛չ հայկական: Անիում սա բացառապես հանդես է գալիս իրեր օտար գեղարվեստական ստեղծագործության արդյունք»:<sup>5</sup> Անդրեվոյ գտնված դրոշմազարդ կարասներով գրաղվող Տ. Խոմայլովան թեև քննադատության մասնակի հնարանը են բնավ ո՛չ հայկական: Անիում սա բացառապես հանդես է գալիս իրեր օտար գեղարվեստական ստեղծագործության արդյունք»:<sup>6</sup> Ուստի գիտնականներից Բ. Շելովնիկովը գտնում է, որ դրոշմազարդ կարասները վերաբերում են XII-XIII դարերին:<sup>7</sup> Հետազյում հայ գիտնականների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այս տիպի կարասների արտադրության կենտրոնները եղել են Հայաստանում և հայկական տարր ունեցող անդրկողվասյան քաղաքներում,<sup>8</sup> իսկ Դվինի հյուրերի ուսումնասիրության արդյունքում Կ. Ղաֆարյանը հանգեց այն կարծիքին, որ դրոշմազարդ կարասները լայն կիոռություն են ունեցել Դվինում, արտադրվել են տեղում և թվագրվում են IX-XI դարերով:<sup>9</sup> Կ. Ղաֆարյանն ու Ա. Քալանթարյանը, դիտողություններ անելով խեցելենի արտադրության հավանական կենտրոնների մասին, չեն բացառում, որ Դվինի և Անիի արտադրանքով առաջին հերթին ապահովվել են Արարատյան դաշտը և Շիրակը:<sup>10</sup> Դրոշմազարդ կարասներ գտնվել են նաև Անդրեվոյ (բոլորը բեկորային): Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք արտադրվել են տեղում և թվագրվում են XII-XIII դր.<sup>11</sup> Դվինի, Անիի և Հայաստանի մյուս հնավայրերից հայտնաբերված դրոշմազարդ խեցելենի խնդիրներով, հատկապես գեղարվեստական խեցելենի զարդաձևերով, գրաղվել են նաև Ֆ. Բարայանը:<sup>12</sup>

Սույն հոդվածում քննության առարկա են Շիրակի միջնադարյան մի քանի հնավայրերի (Մարմաշեն, Կումայրի, Հայկաձոր) պեղումներից հայտնաբերված դրոշ-

<sup>1</sup> Հատկանշական ցուցակ քանզարանային ժողովածուների, պրակ, II, Աճի քաղաքի պեղումներից հայտնաբերված ատարկաները, Եր., 1982, էջ 8-24:

<sup>2</sup> Ա. Քալանթարյան, Անդրեվոյի պատմությունը, Եր., 1976, էջ 70-71; Կ. Ղաֆարյան, Ա. Քալանթարյան, Դվինի քաղաքը և նրա պեղումները 1973-1980թթ., Եր., 2002, էջ 83-84:

<sup>3</sup> Թ. Առաքելյան, Գ. Կարախչյան, Գառնիի պատմությունը, Եր., 1962, էջ 74-80:

<sup>4</sup> Ա. Հարությունյան, Անդրեվոյ, Եր., 1978, էջ 97-98:

<sup>5</sup> Գ. Կյուինօվ, Դекоративное убранство азиатских карасов, Հристианский Восток, տ. V, вып. 1, Պետ., 1916:

<sup>6</sup> Տ. Իզմայլօվա, Կерамика из раскопок в Аниверде, стр. 192.

<sup>7</sup> Բ. Ռելկովիկով, Խудожественная керамическая промышленность средневековой Армении, Տեղեկագիր, 3-4, Եր., 1942, էջ 11-14:

<sup>8</sup> Կ. Ղաֆարյան, Ա. Քալանթարյան, Հայկաձորի պատմությունը, Եր., 1981:

<sup>9</sup> Կ. Ղաֆարյան, Դվինի քաղաքը և նրա պեղումները, Եր., 1952, էջ 194-197:

<sup>10</sup> Կ. Ղաֆարյան, Ա. Քալանթարյան, Հայկաձորի պատմությունը, Եր., 1981, էջ 84:

<sup>11</sup> Ա. Հարությունյան, Անդրեվոյի պատմությունը, Եր., 1978:

<sup>12</sup> Ֆ. Բարայան, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցելենի զարդաձևերը, Եր., 1981:

\* Մարմաշենի և Կումայրիի պեղումները ղեկավարել է հնագետ Ս. Հարությունյանը:

**մազարդ կարասները:** Բոլոր գտածոները քեկորային են: Դրոշմները ներկայացնենք ըստ թեմաների.

**Երկրաշափական զարդանախշեր.** Կումայրիի պեղումներից գտնված բեկորը կարմիր ամանի եռանկյունաձև ունի է, որի վրա խաչ է դրոշմված (ԾԵԹ 3702/24):<sup>\*\*</sup> Բեկորի վրա պահպանվել են հավասարաքանիչ երեք թևերը (տախտակ I, նկ.2):

Բաց վարդագույն երեսով, մոխրագույն աստառով մանրահատիկ կավից, լավ քրծված կարասի մեկ այլ բեկորի վրա արված կերպորշմը 3,7սմ երկարություն և 3սմ լայնություն ունեցող ուղղանկյուն է: Կենտրոնից չորս անկյունները գնացող ծվածիրներով և դրանց միջև արված փոքր եռանկյուններով ստացվել է վարդյակի և հավասարաքանիչ պատկեր (ԾԵԹ 3702/27) (տախտակ I, նկ.3): Այս զարդանախշի ամենավաղ օրինակները հայտնի են վաղ քրիստոնեական ճարտարապետական կորողներից և պահպանվել են Ագարակի և Թալինի վաղ միջնադարյան քառակող կորողների պատվանդանների վրա:<sup>13</sup>

Մոխրագույն, մանրահատիկ կավից լավ քրծված կարասի մեկ այլ բեկորի վրա պահպանվել է կերպորշմի երկու պատկեր (ԾԵԹ 3702/30): Երկուսն էլ թերի են (տախտակ I, նկ.4): Դրոշմներն արվել են իրարից 3,5 սմ հետո: Իսկ պատկերն այսպիսին է. 3,5 սմ տրամագծով շրջանը բաժանված է կենտրոնից ելնող 8 ճառագայթներով: Պատկերի շրջագծով ճառագայթների միջև արված են մեկական կետեր:

**Դեղնավուն մանրահատիկ կավից, բավականին լավ քրծված, կարմիր անգորապատ մեկ այլ բեկորի վրա շրջանի մեջ առնված երկու եռանկյուններից կազմված վեցարև աստղ է՝ կենտրոնում փոքր շրջան (ԾԵԹ 3702/25): Բեկորը փոքր է, դրոշմը՝ քիչ թերի:** Դրոշմն արվել է իրար գուգահեռ երկու խորակու գծերով սահմանափակված տարածքում, որն ունի 3,5սմ լայնություն (տախտակ I, նկ. 5): Բոլոր բեկորները գտնվել են Կումայրիի կենտրոնական քաղաքական 1979թ. պետրումների XI-XII դր. թվագրվող շերտից:

**Դրոշմազարդ ամանի մի բեկոր 2003թ. գտնվել է Հայկաձորի պեղումներից (տախտակ I, նկ. 6): Մանրահատիկ կավից, վատ քրծված կարմիր կարասի փոքրիկ բեկորի վրա շրջանի մեջ երկու եռանկյուններից կազմված վեցքանի աստղ է, կենտրոնում՝ կետ: Մեծ շրջանի տրամագիծը 3,5սմ է, փոքրինը՝ 2սմ: Մեծ շրջանից ելնում են տասը փոքր, եռանկյունաձև ճառագայթներ: Նախշազարդմանը սա նման է Կումայրիի գտածոյին: Իսկ թվագրմանն օգնում է այստեղ գտնված XI դ. բյուզանդական դրամը (բնորոշումը՝ դրամագետ Ա. Զոհրաբյանի): Կարմիր ներկված կարասների այս բեկորները նանրահատիկ կավից են, մեծ մասամբ՝ վատ քրծված միջնաշերտով: Դրոշմներն արված են հարք կնիքներով, խորակու գծանախշերով սահմանափակված 4սմ լայնությամբ ժապավենի մեջ՝ իրարից 3,5սմ հեռակրությամբ:**

Ջննարկվող դրոշմները թեև իրար նման են, սակայն իրար չեն կրկնում և իրենց գուգահեռներն ունեն Անիի դրոշմազարդ կարասների զարդանախշերում: Անիի նյութերի մեջ բավական շատ են զուտ երկրաշափական մոտիվները՝ շրջանի մեջ ներառված քառակուսիններով և եռանկյուններով: Խնեն Անիի գոտեզարդ կարասների նախշազարդումը միապաղադան է, սակայն նոյն նախշը բացարձակապես չի կրկնվում:<sup>14</sup>

Սիրանադարյան խեցեղենի վրա շրջանի մեջ երկու եռանկյուններով ստացված զարդաձևը շատ է հանդիպում ջնարակապատ ամանների նախշազարդումներում և ընդունված է որպես «վեցարև աստղ»: Երբեմն ուսումնասիրողների կողմից այս զարդաձևը դիտարկվել է իրեն վեցանկյուն խաչ:<sup>15</sup> Նշված զարդով անորները գտնվել են նաև Դվինից:<sup>16</sup> Այսօրինակ նախշազարդմանը անորները թվագրվում են IX-X դարերով: Դրոշմներն իրենց գուգահեռներն ունեն ճարտարապետական հուշարձանների զարդանդակներում: Անիի պալատական եկեղեցու հյուսիսային պատի վրա պահպան-

\*\* Նյութերը պահպատ են Շիրակի երկրազարդական քանգարանում (ԾԵԹ):

<sup>13</sup> Բ. Առաք ելլա ն, Հայկական պատկերաբանութերը IV-VII դր., Եր., 1949, նկ. 20, 24:

<sup>14</sup> Ի. Օրելլի, Ինքնական տրութեր, Եր., 1963, սր. 90, բլ. 16, 17.

<sup>15</sup> Ֆ. Բարայ ան, նշվ. աշխ., էջ 30-31:

<sup>16</sup> Նոյնը:

վել է այսպիսի մի զարդանախչ:<sup>17</sup> Նմանօրինակ զարդ պահպանվել է նաև Դվինի պեղումներից գտնված զիափից հարթաքանդակի մի բեկորի վրա: Զարդի կենտրոնում շրջագիծ է՝ շորջը զույգ եռանկյուններ, այդ ամենն առնված է շրջագծի մեջ, իսկ վերջինս էլ՝ մի վեցանկյուն աստղի:<sup>18</sup> Այս զարդանախչի հիմքում ընկած եռանկյուններ, որպես երկրաչափական մոտիվ, առնչվում է նաև կենաց ծառի հետ: Իսկ ծառը զարդարական նի եռանկյունի է, որի հիմքում գտնվող անկյունները ներկայացնում են ծնող զույգին, իսկ վերևի անկյունը՝ զավակին: Եվ այս եռանկյունն է, որ հանդիպում է հայկական մանրանկարչության մեջ: Դրանք մեծ մասամբ կենաց ծառի վրա պատկերված են նոյնանակ՝ իրար մեջ ազուցված, որից ստացվել է վեցարև աստղ:<sup>19</sup>

**Այժերի պատկերներ.** Դրոշմների այս շարքում առավել տիրական են այժերի պատկերները: 1970թ. Կոմայրիից գտնված դրոշմազարդ երկու կարասների բներների վրա այժեր են (Ըեթ. 1391): Բներներից մեկը սև է: Պահպանված հատվածի վրա 1,4 ամ լայնությամբ խորակու ժապավենից հետո արված է դրոշմը (տախտակ I, նկ.7): Երկու կենդանիներ են, որոնցից ձախի զիսի և առջևի ոսքերի մի փոքր հատվածն է պահպանվել, իսկ աջ կողմին անորոշ է՝ բեկորի այս հատվածի կոտրված լինելու պատճառով: Մյուսը նոյնակա 1970թ. գտնվել է Կոմայրիից (Ըեթ. 1517), կարմիր կարասի բները է՝ 2,3 ամ լայնությամբ ժապավենի վրա ձախից աջ իրար հետևից գնացող մեծ ու փոքր այժերով (տախտակ I, նկ.1): Կարասն ավազախառն կավից է և վատ է բրծված: Ներկված է կարմրով՝ ազատ բողներով դրոշմազարդ գոտին: Ի տարրերություն նախորդի, այս դրոշմազարդն առնված չէ գծազարդով սահմանափակված տառածիքի մեջ: Դրոշմի վրա չորս այժեր են՝ մի զծով իրար հետևից հանգիստ կանգնած դիրքով: Այժերից երկորորի մեջից վերև մի կետ է արված, իսկ չորրորդ այժի մեջից վերև՝ երկու կետ:

**Որսի տեսարան.** Եթե նախորդ դրոշմների վրա միայն կենդանիների պատկերներ էին, ապա 1979թ. Մարմաշենից (քառ. Է-2, խոր.՝ 120սմ) գտնված դարչնազույն, մանրահատիկ, լավ բրծված կարասի բներորի վրա 6 ամ լայնությամբ խորակու գծանախշերով եզերված ժապավենի մեջ (Ըեթ. 3306/21) որսի տեսարան է: Երեք կենդանիներ են՝ փախչող այժյամներ և նրանց հետապնդող շուն (տախտակ 2, նկ.3): Առաջին այժյամն ունի փոքր եղջյուրներ, կարճ պոչ, զգին՝ երկու նոյն է: Երկրորդը նոյնպես այժյամն է, որն ունի փոքր զլուխ, սուր ծնոտ, կարճ ականջներ, իրար կիս երկու փոսիկով արված են աշքերը: Գլխից նետահարված կենդանին պատկերված է ցատկի պահին, առջևի ոսքերը բարձր են և ընդիուա միացած առաջին կենդանու վեր ցցված պոչին: Երրորդ կենդանին շուն է՝ նոյնպես ցատկի պահին պատկերված, ունի բարակ, երկար իրան և երկար պոչ, փոքր զլուխ, կարճ և ցցուն ականջներ: Թերանը բաց է, փոքր փոսիկով արված է աշքը: Շան պոչին կապած մեկ այլ պատկեր է եղել: Թեև այս հատվածից զարդագույն կոտրված է, բայց պահպանված փոքր մանրանախներից ենքառվում է, որ պատկերված է ձեռքերը վեր պարզած (գուցե պարող) մարդ:

**Կենդանիների կողքին պարող մարդ.** Կոմայրիից գտնված դեղնավուն, ավազախառն, մանրահատիկ կավից կարասի մեկ այլ բներորի վրա կենդանիների կողքին պարող մարդ է (Ըեթ. 1470): Կարասի իրանից դեպի վիզն ընկած հատվածում 4 ամ լայնությամբ ժապավեն է անցնում: Դրոշմը մասամբ է պահպանվել: Աջից ձախ պատկերների այսպիսի շարան է, հեծյալ, այժ, ինչ-որ պատկեր (աղճատվել է մինչ բրծելը) և պարող մարդ (տախտակ 2, նկ.1): Առաջինը հեծյալն է: Ջիու զլուխը հակված է մերքն՝ ընդիուա մոտեցած կրծքին, առջևի ոսքերն ամբողջ բափով առաջ են նետված: Գավակին մարդ է՝ աջ ձեռքը զլուխ բարձր դիրքով առաջ է պարզած, ձախը՝ գոտկատեղին: Այժի դիրքն ուղիղ է: Երկար պոչերը համարյա հավկում են մեջքին, պոչը բարձր է: Այժի զլուխ արև է, կամ աստղ: Այնուհետև թռչնի աղավաղված պատկերն է: Հատուկ երևում են ոսքերը, իրանը պոչի մասով: Արևի կամ աստղի նոյնախին մի զարդ թռչնի դիմաց է: Հաջորդը պարող մարդու պատկերն է: Մարդն ունի ուղիղ կանգնած դիրք,

<sup>17</sup> Հ. Մարք, Ան, Դարձուա ցերկով, Պամյան արմանակուն, ավազախառն, մանրահատիկ կավից կարասի մեկ այլ բներորի վրա կենդանիների կողքին պարող մարդ (Ըեթ. 1470): Կարասի իրանից դեպի վիզն ընկած հատվածում 4 ամ լայնությամբ ժապավեն է անցնում: Դրոշմը մասամբ է պահպանվել: Աջից ձախ պատկերների այսպիսի շարան է, հեծյալ, այժ, ինչ-որ պատկեր (աղճատվել է մինչ բրծելը) և պարող մարդ (տախտակ 2, նկ.1): Առաջինը հեծյալն է: Ջիու զլուխը հակված է մերքն՝ ընդիուա մոտեցած կրծքին, առջևի ոսքերն ամբողջ բափով առաջ են նետված: Գավակին մարդ է՝ աջ ձեռքը զլուխ բարձր դիրքով առաջ է պարզած, ձախը՝ գոտկատեղին: Այժի դիրքն ուղիղ է: Երկար պոչերը համարյա հավկում են մեջքին, պոչը բարձր է: Այժի զլուխ արև է, կամ աստղ: Այնուհետև թռչնի աղավաղված պատկերն է: Հատուկ երևում են ոսքերը, իրանը պոչի մասով: Արևի կամ աստղի նոյնախին մի զարդ թռչնի դիմաց է: Հաջորդը պարող մարդու պատկերն է: Մարդն ունի ուղիղ կանգնած դիրք,

<sup>18</sup> Կ. Ղաֆարյան, Աղյամ քաղաքը և նրա պեղումները, Եր., 1952, էջ 127:

<sup>19</sup> Ա. Մանացական աշխատավորական գաղտարկեատ, Եր., 1955, էջ 240, նկ. 264, 265, 267, 268:

գլուխը փոքր է, թևերն ուսից բարձր դիրքում են, լճու որում, աջը շրջան կազմելով հրպավել է թևատակին, իսկ ձախն արմամկից ազատ իշնում է ցած: Հագուստը հասնում է ծնկներին: Այժի և բռչնի աղճատված պատկերի ետին պլանում ուղղահայաց գծեր են: Կենդանիները շարժման մեջ են: Պատկերի ամենավայր օրինակները հայտնի են Ժառապատկերներից: Այժի և մարդու նոյն ոճով արված մի պատկեր հայտնի է Գեղամա լեռներից, որ այժի կողքին կանգնած է թևերը կանքած մարդ:<sup>20</sup> Այժերի պատկերով դրոշմազարդերը հանդիպում են XI-XIII դարերի կարասների վրա: Արգիշտիխնիլիի միջնադարյան շերտից գտնվել է կարմիր փայլեցված կարասի թեկոր՝ դրոշմազարդ զույգ այժերի պատկերով.<sup>21</sup> Նոյն հնավայրից գտնված մեկ այլ կարասի վրա այժերը կանգնած են կենաց ծառի մոտ:<sup>22</sup> Միջնադարյան ճարտարապետական հուշարձաններից այժերի նման պատկեր հայտնի է Աղքամարի բարձրաքանդակներից, որ քանդակված են դեմքինաց կանգնած այժեր:<sup>23</sup>

Հայաստանի միջնադարյան տարրեր հուշարձաններից հայտնաբերված կարասների թեկորների վրա (X-XII դարեր) այժերը հանդիպում են նաև բռչունների ուղեկցությամբ: Դվինից գտնված կավամանի բռնակի տակից անցնում է 2,5 սմ լայնությամբ դրոշմազարդ զույգ՝ այժի, կենաց ծառի և աղավնու պատկերով:<sup>24</sup> Այժի պատկերները, սկսած Ժայռապատկերներից, հանդիպում են բոլոր դարաշրջաններում, տիրական թեմա են հայ մշակույթում: Ուրարտական կարասի թեկորի վրա կենաց ծառի մոտ այժի և աղյուծների պատկեր հայտնի է Արգիշտիխնիլիի պեղումներից:<sup>25</sup>

Միջնադարյան տարրեր հուշարձաններից հայտնաբերված զոտեզարդ կարասների վրա թեև առավելապես կենդանական և բուսական պատկերներ են, բայց հանդիպում են նաև մարդկանց պատկերներ: Սի քանի թեկոր գտնվել է Անիից և մեկ ուրիշը՝ Դվինից: Այս դրոշմազարդերի վրա այժի հետ պատկերված է երեք պարող մարդ:<sup>26</sup>

*Սարսի տեսարաձ.* 1972թ. Մարմաշենից (ԾԵԹ 1433) գտնվել է մամրահատիկ, լավ հունցած վարդագոյն կավից կարասի մի թեկոր, որի 4,7 սմ լայնությամբ, երկու եղանակով սահմանափակված ժապավենի մեջ մարտի տեսարան է (տախտակ 2, նկ.2): Զախից առաջին հանգստ կանգնած դիրքով ձի է, երևում է գլուխը՝ սամձի մի մասով: Հաջորդը նետաձիկ է: Իրանն ուղիղ, դեմքը կլորագուն է, հոնքերը՝ կամարակապ: Գլուխին սրածայր գլխարկ է: Ազ ձեռքը արմունկից ծաված է և ճգլի է նետը: Զախս ձեռքը չի երևում: Զախս ուսից վերև երևում է միայն աղեղի մի մասը: Այստեղից իրը կոտրված է: Զիմ վիզը երկար է, գլուխը՝ բարձր, առջևի ուղքերը գետնից կտրված են, հետևի ուղքերը՝ քիչ ծաված, երկար պոչը համարյա հասնում է գետին: Հեծյալի պատկերը թեև հրստակ չէ, սակայն երևում է, որ աջ ձեռքով բարձր պահել է նետելու պատրաստ նիզակը:

Շիրակի տարրեր հնավայրերից գտնված դրոշմազարդ կարասները կարմիր են կամ դարչնագոյն, դրոշմերն արվել են ուղիղ և գլանած կնիքներով: Զարդաշարն առնված է 3-4,7 սմ լայնությամբ գոտու մեջ, որն ավելի արտահայտիչ է դարձնում դրոշմածքը: Կարմիր ներկված կարասների զարդազոտիները հիմնականում չեն ներկվել՝ հավանաբար պատկերներն ավելի ընդգծուն և դիտելի դարձնելու համար: Այդ դրոշմազարդ կարասների թեմատիկան տարաբնույթ է: Խեն գտածոները շատ քիչ են՝ ընդամենը մոտ մեկ տասնյակ թեկոր, սակայն ոչ մի պատկեր չի կրկնվում: Դրանք ոչ միայն ավանդական - ծիսական են, այլ նաև ներկայացնում են առօրյա կյանքն ու կենցաղը և նախազարդման ձևով ունեն ոճական ընդհանրություններ միջնադարյան խոշոր կենտրոնների՝ հատկապես Անիի կարասների հետ: Մարմաշենի, Կումայրիի և

<sup>20</sup> Հ. Մարտիրոսյան, Հ. Բարայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Եր., 1971, նկ. 251:

<sup>21</sup> Յ. Բարայելյան, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեների զարդածները, Եր., 1981, էջ 35:

<sup>22</sup> Նոյնը:

<sup>23</sup> Յ. Բարայելյան, Աշվալու, նկ. 30:

<sup>24</sup> Ի. Օքելի, Հայության աշխատանքները, Եր., 1963, էջ 149; Յ. Բարայելյան, Աշվալու, նկ. 26:

<sup>25</sup> Ա. Մարտիրոսյան, Արքունական պատկերների հայության արժեքները, Եր., 1974, էջ 94, բաժ. 59.


<sup>26</sup> Ի. Օքելի, Հայության աշխատանքները, Եր., 1963, էջ 90, բաժ. 16, 17; Վ. Արքահամյան, Արքունական պատկերների հայության աշխատանքները, Եր., 1956, էջ 214:

Հայկածորի դրոշմազարդ կարասները կարող էին բերվել նաև Անիից: Տեղում արտադրվելու դեպքում դրոշմազարդ կարասների քանակը թերևա չէր սահմանափակվի մի քանի օրինակով: Դրա օգտին են խոսում նաև դրոշմազարդ կարասների և տեղում արտադրված այլ կավանորների բեկորների բաղդասումը. դեղնավուն, մանրահատիկ, քիչ ավազախառն կավ, բրծման և այլ հատկանիշների ընդհանրություններ:


Այսուղից հետևում է, որ դրոշմազարդ կարասներն ընդհանրապես ավելի քիչ են արտադրվել: Եվ դա գուցե այն պատճառով, որ օգտագործվել են միայն հատուկ դեպքերում կամ տոնախանքությունների ժամանակ:

Ծիրակի դրոշմազարդ կարասների թվագրմանն օգնում են ոչ միայն նույն շերտից դուրս եկած ծցզրիտ թվագրվող նյութերը, այլ նաև զարդանախշերի համադրումը Անիի, Դվինի և Անքերդի նյութերի, ինչպես նաև մանրանկարչության և ճարտարապետական հուշարձանների վրա պահպանված զարդանախշերի հետ: Այս ամենը բույլ է տալիս Ծիրակի դրոշմազարդ կարասները թվագրել XI-XII դարերով:

### S U I S U C 1



## ՏԱԽՏԱԿ 2



## ШТАМПОВАННЫЕ КАРАСЫ ИЗ ШИРАКА

РезюмеЛ. Еганин

В статье рассматривается группа карасов, выполненных техникой штамповки, раскопанных из средневековых памятников Мармашена, Кумайри и Айкалзора. Изучение орнаментов на штампах показывает, что основная тематика - это геометрические орнаменты, изображения животных, сцены сражения и охоты. Сравнение орнаментов и рисунков с материалами из известных средневековых центров производства штампованной керамики показывает, что по стилю и выполнению они близки материалам из Ани. Рассматриваемый материал датируется X-XII вв.

## Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ Ողջա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՍՊԴԵԼՆԵՐԻ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՍՏՐԵՍԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ**  
(հետադեսյան շրջանի երազների գրառումների հիման վրա)

Հաղորդակցում ի հոգեկարգավորման գործընթացում իրականացվում է անձիքնույթին համապատասխան համակարգերով։ Անձիք գործունեության հիմքում առկա է իրականության մոդելը, միաժամանակ յուրաքանչյուր մարդ գործում է համաձայն իր մոդելի։ Հոգեբանական բարդույթները բացատրվում են անձնային մոդելի ինքնատիպությամբ։

Հաղորդակցման մողելի կառուցման և կիրառման գործընթացում զգալիորեն բարձրանալու է հարալեզվական, տեսողական և շարժագոյայական համակարգերի դեքստրացիան կազմակերպում է պահին վերածվում է վարքի նոր ձևերի մոդելավորման, որի հրականացմանը ընթացքում տեղի է ունենալ մողելի վերածնավորում և վերարովանդակավորում, այսինքն՝ ճգնաժամերի պահին փոխականացում և վերարովանդակավորում, այսինքն՝ ճգնաժամերի պահին փոխականացում է նաև հաղորդակցումը՝ իր տարաբնույթ դրսուրումներով։ Հաղորդակցման մողելի լիարժեքությունը բացատրվում է սուբյեկտի զգայության շեմով և խոսքային ասույթի կազմակերպման ունակությամբ. ինչպես է անձը կառուցման խոսքային լրատվության տեքստով, խոսքային բրոկի մեջ արդյոք գործունութեն ներգրավվո՞ւմ է իր ներաշխարհը՝ իրականության մողելին հանապատճախան, և կամ նա կարո՞ղ է անցումներ կատարել մեկ մոդալությունից մյուսին։ Յուրաքանչյուր անձի ներքատով է հաղորդակցման իր ոճը, որն ունի նրա վարքագծի բնութագրական հատկորշումները։ Հաղորդակցման ոճը պայմանավորված է տարրեր գործուներով՝ կենսական պայմաններով, միջանձնային հարաբերություններով (միմյանց հանդեպ մարդկանց դրսուրած վերաբերմունքով), ինչպես նաև տվյալ հասարակության մեջ առավել ընդունելի հաղորդակցման մողելներով։ Միաժամանակ հաղորդակցման ոճը կարող է մեծ ազդեցություն ունենալ մարդու կյանքի վրա։ Հաղորդակցման կարևոր ձևերից է ինքնահաղորդակցումը։

Ի սկզբանի, ինքնահաղորդակցումը կամ ներքին գրույցը հատկանշական է անձի համար, եթե ունալ անձը հաղորդակցում է երևակայական գուգընկերոց հետ, որին անվանում են «քվազի սուբյեկտ»։ Վերջինիս հետ անձը ստեղծում է հոգեբանական շփում, կարծես տեղի է ունենում անձի տրոհում։ Այսպիսի հաղորդակցումը ինքնահաղորդակցում է *ես-ես-ի* միջև։ Դրանով հանդերձ՝ խորանում է անձի ներսում առանց այդ ել գոյություն ունեցող արտաքին-ներքին հակառապություն։ Քանի որ անձը ինքնազիտակցություն է, ապա նա միշտ իրեն հակառապում է իրենից դուրս այն ամենին, ինչ որ ինքը չէ։

Սուրբ Եկատի և օքյեկտի այդպիսի հակառակումը, որն, ի դեպ, կախված է նրանց կոնֆիդենտալ նույթյան աստիճանից, հետազոտում, այնուամենայնիվ, հաղթահարվում է անձի մեջ: Մշակույթի պատմության մեջ քիչ չեն այն փորձերը, որով ցանկացել են պարզել մարդկային հաղորդակցման կամ շփման գործընթացը՝ այն համարելով հատուկ ընդունակություն:

Հոյզերն ու զգացմոնքները մարդկային ես-ի կարևորագույն բնութագրականներն են: Ինքնահաղորդակցումը անհրաժեշտ նախապայման է ես-ի ինքնաձևավորման համար, որն արտահայտում է անձի եզակիությունն ու ամրողականությունը՝ իր սուրբեկությունը ներքին կողմով, այսինքն՝ անձն ինչպես է տեսնում, զգում, պատկերացնում ինքն իրեն:

Այսպիսով՝ *ես-ն* ամփոփում է հետևյալ հոգեբանական բաղադրաշերտերը.

ա) պատկերացումներ սեփական անհատականության մասին

բ) հնագործությունների ու արժեքային կողմնորոշումների որոշակի միասնություն,  
գ) ինքնազնահատման և ինքնապահուման ձևավորում:

Նորասի բարդույք ունեցող մարդկանց մեջ արտաքինի և ներքինի բախումը կարող է տևել երկար ժամանակ և պայմանավորվել հետազա կյանքով: Ժաղղարդա-

գրական հարցումներից ակնհայտ է, որ իմքնահաղորդակցման առանձնահատկությունները բխում են տվյալ անձի անհատական դիրքորոշումից: Երևակայական սուրյեկտ կառուցվում է կոնկրետ չափանիշների հիման վրա՝ պայմանավորված անձի գործողությունների բնույթով: Ստրեսային իրավիճակներում անձի բարոյահոգեբանական և ֆիզիկական վիճակի փոփոխությունները (հաշմկածություն, հոգեկան ապրուների տեղաշարժ) ենթադրում են նաև սոցիալական նիշավայրի, հոգական դիրքորոշումների ու չափանիշների փոփոխություններ:

Հաղորդակցման առանձնահատկությունները բխում են նոր պայմաններում առաջացած հիմնախնդիրների բնույթից՝ արտացոլելով անձի սոցիալական հարմարման դժվարությունները ու ճնշվածությունը: Իհարկե, սա չի բացառում հիշողությամբ կամ երևակայությամբ անձին անցյալ տեղափոխելու հնարավորությունը: Հաղորդակցումն ունի կոնկրետ առարկա և ուղղված է կոնկրետ պատկերացումների, որոնց մեջ հիմնարար են անձի կրոնահավատալիքային, ծիսատվորությաին պատկերացումները, որոնք ուղղակիորեն փոխանցվում են երևակայական սուբյեկտ կառուցելիս: Այս պարագայում ազգային ստերեոտիպերը, սոցիալական դիրքորոշումները ենթակա չեն փոփոխության: Աղետը դիտելով իրեն սորենութեան գործոն՝ քննարկենք ստրես հասկացության առնչվող մի քանի տիպական պատկերացումները: Չնայած ստրեսի գոյություն ունեցող քննորշումների բազմազանությանը՝ հիմնական ելակետն այն է, որ ստրեսը ոչ թե անձի մեջ, այլ նրա հետ կատարվող գործընթաց է, որով շեշտվում է այս հասկացության հոգեբանական մակարդակի կարևորությունը: Որոշակիորեն տարբերելով ստրես և ստրեսոր (ստրես առաջացնող պատճառ) հասկացությունները՝ նպատակահարմար ենք գտնում աղետի հոգեբանական հետևանքների ընկալման մեջ մի դեպքում ընդունել ստրեսորի ուղղակի ազդեցությունը մարդու վրա, մի այլ դեպքում՝ քննել աղետ տեսած մարդու սոցիալական աստիճանական հարմարման գործընթացը:

Ստրեսային իրավիճակներում մարդկանց անհատական տարրերությունները, ասես, համահարթեցվում են այն առումով, որ անձին նյութական, հոգևոր կորսուից, ստրեսը ուղղակիորեն ազդեցություն է բռնուում յուրաքանչյուր անձի վրա: Թերևս կարելի է առանձնացնել ստրեսը քննորշող փոփոխակների խումբը. ա) աղետն իրեն ստրեսոր. բ) աղետ-ստրեսորի անհատական ընկալմումը. գ) պատասխան հակազդեցության անհատական առանձնահատկությունը. դ) տվյալ անձի կրոմից ընկալված աղետի համապատասխան դրսորումները և դրանց պատասխան հակազդումները: Ստրեսից հետո շեշտը դրվում է անձի սոցիալ-հոգեբանական հարմարման վրա. նոր պայմաններում մարդու ֆիզիկական և հոգևոր վիճակը անմիջական հարմարում է պահանջում իրեն հոգեբանական պաշտպանական մեխանիզմի դրսորնան ձև:

Աղետը, անձան տարածածավայրին ընդգրկման չափերից, չի կարող մեծ երևալ, եթե որոշակիորեն չի անցել անձի ներաշխարհով և չի խարարել այն: Վախի, հոյզի դեպքում անձի ընդհանուր վիճակին ավելանում է ֆիզիկական և հոգեկան անհերաժնակությունը, որը հաճախ չի վերբակացվում:

Անձի մարմինը (արտաքին նշանները) պարզ հորինվածք չէ, այն միշտ հոգու դսւորում է: Եթե անձն ունի խոր վիշտ, տառապանք, երևում է նրա արտաքին վարքից, դիմախաղից: Զանի որ նրա ես-ը անհնաստ է առանց նրա իմաստավորված մարմնի, հետևարար հենց այդ մարմնով էլ տեսանելի է դառնում նրա հոգին: Ստրես կրած հազարավոր մարդկանց հայացքները, պահվածքը, մաշկի գույնը, ձայնը, երանգը, վարքագծի բազմաբնույթ դրսորումները վկայում են նրանց հոգեկան վիճակի մասին: Հետադեւայան շրջանում գրառված երազները կամ տիպիկ սարսափներ են կամ սարսափելի սարսափներ: Հաստ Հարքմանի սարսափները վկայություն են տրավմանների, ընկճակածության, ներքին և արտաքին բռնությունների: Հետազոտված հազար աղետյալներից քառասունը (16 տղամարդ, 24 կին) կորցրել են արյունակիցներ և տեսնում են սարսափազու սարսափներ, շաբաթը մեկ-երկու անգամ: Փլատակների տակ մնացած անձինք այդպիսի երազներ տեսել են գրեթե ամեն օր: Խսկ աղետ կրած 21 անձ տեսել է սարսափելի երազներ ամիսը մեկ անգամ: Ուստինասիրության արդյունքներից պարզել ենք, որ կանայք երազում ավելի հաճախարեալ են սարսափներ տեսնում, և նրանց երազային տպակորությունների հաշվետվությունն ավելի մանրամասն է, քան տղա-

մարդկանց: Երազմերում, սարսափներից բացի, աղետյալներին ուղեկցում է կորստի բարդույթը՝ հետևյալ աստիճանակարգով.

1. **Մերձավորներ.** արյունակիցներ, հարազատներ, ամուսին, կին, սիրելի մարդիկ, ընկերներ.
2. **Այութական կորուստներ.** տունը փլված, դուռը կոտրված, պատերը սևացած, պատուանները փակված, սիրած իրերի և քանկարժեր զարդերի կորուստ (հատկապես ամուսնական մատանի).
3. **Քաղաքի կորուստ.** հայրենի քաղաքն ավերված, քաղաքն իրդեհի մեջ, քաղաքն անձնավորված (լաց լինող քաղաք), դիմագրկված քաղաք, երկնքից քաղաքի վրա իշխող սև քող, մարգարիտներ արցունքի նման, քաղաքի վրա քափվող սև մազուր, սև ջուր, սև ազգավճերի պտույտ քաղաքի վրա, երկնքից քաղաքի վրա ընկնող սև ցուլ, քաղաքի վրա քափվող կարմիր անձիք:

Հաճախ վերապատմումների տեքստը չի համապատասխանում իրականությանը: Ստրեսային իրավիճակում անձը լուծում է կարևորագույն հիմնախնդիր. հասկանում և ընդունում է կատարվածը, քանի որ կապը սիրելի մարդու հետ այլև խզված է: Երկրորդ խնդիրն է, ապրումներից ազատվելով, հաղթահարել այն պրոբլեմները, որոնք առաջացել են հարազատի կորաստով: Կորատի զգացման մեջ առկա են թախիծ, ուժեղ ցավ, մեղավորության զգացում, դատարկություն, սեր, մահացածի հանդեպ խղճահարություն: Հուզական առումով խիստ կարևոր է ընդունել բոլոր այդ զգացումները: Վշտի ընթացքում առաջացող զգացումներից յուրաքանչյուրը պեսոր է անպայման վեռապատմվի: Զարտահայտված ստրեսը կարող է մշտապես հիշեցնել իր մասին, ուստի ստրեսային իրավիճակում կարևորվում են հաղորդակցման անհրաժեշտությունը: Ստրեսն ու տառապանքները մշտական են միայն այն դեպքում, եթե համահաղորդում չկա: Եթե իրուրեյունը չի վերբալիզացվում, անձը անտեղյակ է մնում կրաստի տեքստին: Մարդու մեջ կարող է տեղի ունենալ իրավիճակի վերահսկման կորուստ: Հաճախ անձը հակվում է ինքն իրեն, տարվում իր ներքին ապրումներով, կարծես համահաղորդվելու անհրաժեշտ բառեր, ասես խախտվում է կյանքի ու մահվան սահմանագիծը: Անձը վերջնականապես չի պարզում ինքը ապրողների մեջ է, թե՞ զիների, երեխն էլ հոգեբանական նոյնացման զնարկ նրանց հետ: Եթե կորցրել է ցանկալի մեկին, ապա առավելապես հաղորդակցվում է անդր աշխարհի հետ, քանի որ հոյզերն ու հիմնախնդիրները հասցեազրված են նրանց: Բոլորովին այլ բնույթ է ստանում փոխհատուցողական գործառույթը, եթե ապրողները ցանկանում են առարկայացնել, նյութականացնել կորստի չափը՝ ապահովելով հանգույցայի հարազատների հետ այլ ուղղվածության հաղորդակցում: Նրանց ճնշող մեծամասնությունն այն կարծիքն է, որ հոգին կա, իրենք լսում են ճայնը, խորհրդակցում նրա հետ: Այս առումով հետաքրքիր են մասնավորակություն մայրերի երազները: Ուստամնասիրության համար ընտրվել են այն ընտանիքները, որը կորուստը չի փոխհատուցվում կամ փոխհատուցվում է մասսամբ: Գիտափորձում ընդգրկվել է շուրջ 110 անձանց երազ: 105 կանայք տեսնում են մահվան նաև երազներ, որոնցից 68%-ի երազներում մահը հաճելի է: Մեծ մասսամբ այն մայրերն են, որոնց կորուստը որդեմնությամբ չի փոխհատուցվում: 14% -ը երազում չի տեսնում իր մահը, նրանց կորուստը փոխհատուցված է (կամ երեխս են ունեցել, կամ որդեգրել են): 30%-ի համար մահը երազի, նաև սեփական կյանքի ավարտ է: Անձն իր մարմինը տեսնում է վերևույան կամ էլ ստանում է ինչ-որ երկրորդ մարմին՝ դարձնարկ սեփական կյանքի հայեցողական դիտորդը:

Երազատեսներից շատերի համար հետաքրքրական է իմանալ՝ ինչ հակագրեցություն է առաջացնում սեփական մահը ընտանիքի անդամների մեջ: Հետազոտվողների ավելի քան 50%-ը ցանկանում է գնալ մեռած հարազատների մոտ, և դա արտահայտվում է երկխոսության ձևով. «Մեծ էլ տար քեզ մոտ»: «Կտանեմ, հետո կտանեմ»: Մի որիշ դեպքում դիմում է Աստծուն՝ շոտափոյթ մահվան ակնկալիքով. «Աղջիկս հրեշտակ էր, ինձ էլ տար նրա մոտ»: Աստծոն ճայնը. «Դու դեռ սպասիր, դու դեռ օրինքած ես, դու դեռ հաց կեր»: Ըստ էության-իբր որիշի միջոցով, բայց սեփական ճայնով կանխվում է մահվան գալստյան զաղափարը: Ի վերջո որդեկորույս մայրը երազա-

յին հաղորդակցման միջոցով պարզուն է իր ապրելու նոր կերպը: Վերապատմումները քույլատրում են եզրակացնելու, թե ինչ փոխհասուցումներ է փնտրում կինը:

Սոհասարակ սահմանային իրավիճակներում երազային սյուժեն կառուցված է անցյալի պատկերների՝ նախկին ապրումների ու կողմնորոշումների հիման վրա (երազում տեսնում են ին տունը, կորցրած հարազատներին): Եվ քանի որ երազային պատկերները չեն վերահսկվուն, անձն ազատ է ինը տեսնելու մեջ: Անընդիատ անցյալի մեջ է ու անցյալի ետո, չի ազատագրվուն նախկին տպավորություններից կամ ազատագրվում է մասամբ: Նրանց երազային վերապատմումներից պարզվուն է, որ չեն կարողանում նոռանալ անցյալը: Տեղի են ունենում նախկին ստեղծության քանդում, նորի ստեղծում. փոխհատուցողական գործառույթ, որն արտահայտվում է ինը հիշեցնող, նրան նմանվող նողելի ստեղծմամբ:

Վշտի, կորստի զգացողությունները անձի մակարդակում պայմանավորված են տարիքային առանձնահատկություններով: Նկատի ունենալով աղետ տեսած երեխաների հոգեբանական առանձնահատկությունները, նրանց բարձր զգայունակությունն ու սոցիալական անպաշտպանվածությունը և հիմք ընդունելով նրանց երազային պատմումները՝ կարելի է ասել, որ սահմանային իրավիճակում երեխան չի կարող ազատ ինքնարտահայտվել, խոսել, որոշել, վճռել. նա սահմանափակվում է իր իսկ գործունեության մեջ: Բացասական ապրումները կարող են միանգամից փոխել երեխայի հոգեփիզիկական կերտվածքը: Այն երեխաները, որոնք ունեն արտահայտման, համահաղորդակցման դժվարություններ, ինտրովերտ են, դժվար վերարտադրվող. այս ընդունակության բացակայությունն ազդում է նրանց երազում ինքնաներկայացման վրա: Բնականաբար սենտրային (զգայական) գործընթացում նմանօրինակ երեխաների հոգեբանականցումը դանդաղ է ընթանում: Ուստինասիրելով աղետ տեսած երեխաների երազները՝ կարելի է ասել, որ վերջիններս նրանց իրական կյանքի և երազային կապն են: Երազները մեզ տեղեկատվություն են հաղորդում երեխաների հոգական աշխարհի նասին: Մանկական երազները դառնում են եկակետային ամբողջ կյանքի համար: Վաղ հասակում ծնող կորցրած երեխաների մեջ դրսևրվում են կորստի բարույթներ, երբեմն հոգեխնդրումներ, որոնք դժվար են փոխհատուցվում հետագա կյանքում: Այդ երեխաների հիմնախնդիրները լինում են ինտելեկտուալ և հուզական բնույթի: Ինտելեկտուալ դժվարությունների մեջ է մտնում մահվան բնույթը՝ նրա վերջնական լինելու չափականաց երեխայի անընդունակությունը: Հուզական ոյորատի դժվարությունների մեջ կարելի է առանձնացնել տարաբնույթ վախի հակազդեցությունները, քնի խախտումները ծանր երազատեսությունները: Ծնշող երազային պատկերներին հաջորդում են երեխայի ուժեղ հուզական ապրումները, այնուհետև կայուն հոգեվիճակ դարձած մենուրյան, կորստի զգացումները: Ինչպես նշում է Քոլուրին, երեխաներն ապրում են վշտի գործընթացի հետևյալ շրջանները. ա) բողոք, երբ երեխան չի հավատում իր սիրած մարդու մահացած լինելուն և ձգուում է նրան ես վերադարձնել, բ) երբ կորստյան ցավն ու մենուրյան զգացումն արտահայտվում են նրա հաղորդակցման վարքում, գ) երբ ավելի ուշ երեխան նտածում է վերակառուցել իր կյանքը՝ հուսալով, որ այն կարող է առանց սիրելի մարդու:

Երեխաների պատմումների ուսումնասիրությունը քույլ է տալիս հանգելու վշտի ապրում հաղորդակցման հետևյալ փուլերի գաղափարին.

I փուլ. Երեխան փորձում է զիտակցել սիրած մարդու չինելը:

II փուլ. Վերանում է օրյեկտին (սիրու առարկային) կապվածության զգացումը:

III փուլ. Շարունակական հիշողություններ կորցրածի մասին, որ ուղեկցվում են այն վերադարձնելու բուռն ձգումամբ:

IV փուլ. Փոխհարաբերությունների այս նոր շրջանում խորանում է ողջ մնացած ծնողի հետ կապվածության զգացումը:

Հաճախ երեխաների վիշտը իրադրական է, նրանք շուտ են կտրվում ստեղծված իրավիճակից, սակայն սոցիալական հետագա հարմարումը դժվար է ընթանում, կյանքի հետագա ընթացքում կորստի չափն ուժեղանում է, և սրվում են զգայությունները: Այնուամենայնիվ, կարևոր է պարզել թե երեխայի համար ինչ է վիշտը. ինչ-որ անորոշ բազմաթիվ անհայտներով, թե՞ որոշակի պատկեր, ի՞նչ գոյնի է այն, ինքը որտե՞ղ է այդ վշտի մեջ, իրենից դո՞ւրս է այն, իր մե՞ջ է, թե՞ իր ուսերին և այլ հարցեր:

Այսպիսով՝ ստրեսային ապրումների հոգեբանական հաղթահարումը կարող է երկարատև գործընթացի արդյունք լինել՝ նկատի ունենալով, որ արտամղման ձևերն անգիտակցորեն փոխհատուցվում կամ լրացվում են արտաեզզական միջոցներով, այսինքն՝ հույզերի ազդեցությամբ ավելի արտահայտիչ են դառնում շարժումները, խոսքը դառնում է սիմվոլիկ: Ստրեսային իրավիճակներում, քանի որ հույզերը բացասական են և ֆրուստրացիայի արդյունք, երբեմն հաղորդակցումը կարող է դառնալ ստերեոտիպային և սեռված՝ միևնույն բառերի կամ արտահայտությունների հարակրկնությամբ:

Հաղորդակցումն ունի նպատակային իմաստ, քանի որ ապրումների բնույթն ու կողմնորոշումները դառնում են ելակետային և ինքնապաշտպանական: Հոգեկարգավորման գործընթացում հաղորդակցումն առաջին պլան է մղում անձի ինքնաշխման երևոյթը, մեր ուսումնասիրության պարագայում երազային հաղորդակցումը, որն ըստ Էության ամփոփվում է գործուն ինքնազգացության՝ զայրույթի, ցավի, տառապանքի և այլ հոգական ապրումների սահմաններում:

## ОСОБЕННОСТИ МОДЕЛЕЙ КОММУНИКАЦИИ ПРИ СТРЕССОВЫХ СИТУАЦИЯХ (на основе изучения посткатастрофических снов)

Резюме

K. Saakyan, R. Oganesyan

Коммуникация в процессе психокоррекции осуществляется в соответствии с характеристикой личности. Процесс коммуникации при стрессах сводится к моделированию новых форм поведения, при осуществлении которых происходит переосмысление и переоценка моделей, т. е. в кризисных ситуациях меняется также коммуникация в своих различных проявлениях.

Особенности данной модели обусловлены порогом ощущения субъекта и способностью организации разговорной речи, а также от характера проблем, возникших в новых условиях, которые отражают степень подавленности личности, ее социальную адаптацию.

Поскольку сны в стрессовых ситуациях отрицательны и являются результатом прострации, коммуникация порой становится стереотипной и ограниченной, с бесконечным рядом одних и тех же слов или выражений.

# Հասմիկ ԱՓինձԱՆ

## ԱՇՈՒԴԴԻ ԻԳԻԹԻ ԵՐԳԵՐԸ

Խորհրդային տարիները հայ ազգային աշուղական երգարվեստի զարգացման կարևոր ժամանակահատված էին, երբ ասպարեզ եկած երգի-բանաստեղծները՝ Խայարը, Աշխույժը, Ռազմիկը, Հրկեզը, Մքրատը, Գրիգորը և ուրիշներ, իրենց երգարվեստով հող նախապատրաստեցին Հավասի, Աշոտ, Շահեն աշուղների «Եռաստ համաստեղորյան» գործունեության համար: Այս եռյակի ստեղծագործության մեջ էլ բյուրեղացան և որոշակիացան սկզբունքներ, որոնք և բնութագրական նշանակություն ունեցան այդ արվեստի հետագա զարգացման համար: Անվիճելի է, որ նոր ժամանակների երգիների ստեղծագործությունը խարսխված է Ալեքսանդրապոլի դպրոցի ավանդույթներին: Ակունքը՝ հայ ազգային ժողովրդական երգային բառապաշարն է, բայց այլ գույներով ու նոտածողորյան բոլորովին բարձ շնչով: Սա, թերևս, ժամանակի հետ առնչվող նոր մոտիվների գործածությամբ էր պայմանավորված, առավելապես ժամանակակից մարդու հուզախարիի, նրա զգագունքների բազմաբնույթ արտազորմամբ:

Ազատ ու անկախ հայրենիք, կառուցվող նոր քաղաք, հավերժական սԵր էր գովերդում նաև նոյն ժամանակների երգիչ աշուղ Իօհիթը<sup>1</sup>, որի անունը միշտ չէ, որ հիշատակվում է Խորհրդային ջրամի աշուղների շարքում: Ի տարբերություն իր սերնդակից ու գրչակից ընկերների, որոնք ,գործունեությունը սկսելով ծննդավայրում, հետագայում կենտրոնացան մայրաքաղաքում, Գեղամ Մարտիրոսյանը մնաց հայրենիք քաղաքում և մինչև կյանքի վերջն ապրեց ու հիմնականում ստեղծագործեց Լենինական - Գյումրիում:

Իշխր սփրակած և հանրաճանաչ աշուոյ է: Նրա երգերը բերանացի երգում են թե քաղաքային, թե զյուղական միջավայրերում, ենչում են ռադիոյով, հեռուստատեսությամբ: Այնչ օրս, սակայն, նրա ստեղծագործությունը խորությամբ չի ուսումնասիրվել: Նրա երգերի մեծ մասը պահպանվում է ժապավենների վկա ձայնագրված, մի մասն էլ ձեռագիր-սևագիր վիճակում է: Հրատարակված միակ գիրքը «Շիրակն իմ մուսան» ժողովածուն է՝ կոմպոզիտոր Ազատ Շիշյանի ձայնագրություններով, որում ընդգրկված է աշուոյ երգանի մի չափազանց համեստ հատվածը, ընդամենը 35 երգ.<sup>2</sup> Առանձին նմուշներ էլ հրատարակվել են մեկ - երկու այլ ժողովածուներում<sup>3</sup> իմնականում քաղված վերոհիշյալ գրքից: Հայրենիք և սեր, գովասանություն և խրատ, կարոտ ու բռնորդ: Սրանք են աշուոյի ստեղծագործության ոգեշնչման ազդակները, որոնք նա ժառանգել է ավագ ընկերներից: Ինչ էլ որ նա ասում է, անկեղծ է, հավատում է ինքը և հավա-

<sup>1</sup> Աշուու Իօհիք՝ Գեղամ Մարտիրոսի Մարտիրոսյան, ծնվ. 1908թ., Ալեքսանդրապոլում, ավանդական երաժշտամերի ընտանիքում: Առաջին տապահությունները քաղաքի ճանաչված աշուղների՝ Զրվանու, Շերամի երգերից էին, որ հայրը՝ «չաղջ» Մարտիրոսն էր երգում: Տարրական դպրոցն ավարտելուց հետո գրադիւ է ինքնակրթությամբ, տարվել բարդունով, նոյմիսկ որոշ ժամանակ փոքրիկ դերերով հանդես է նկել քաղաքի բարդունում, որտեղ և ստացել է «Ծզիք» անոնք, աչքի է ընկել հաստկապես գեղեցիկ ձայնով: «Հետազայում, բողներով բարդունք, ամբողջությամբ նվիրված է սեփական երգերի հորինմանը և կատարմանը: Երիտասարդ երաժշտամերից կազմում է սիրողական խմբեր և երութենք ունենում Հայաստանի տարրեր քաղաքներում ու զյուղերում: Խօհիք 600-ից ավելի աշտղական խասերի, այդ թվում 250 եղանակակրթված երգերի հեղինակ է: Նրա գոյին եմ պատկանում «Գուսան Շերամ» և «Զրիստոն՝ աշխարհի փրկիչ» երաժշտադրամատիկական ստեղծագործությունները: Մասնակցել է համրապետական ստուգատեսների, փառատեսների, ստացել բազմաթիվ մրցանակներ: Վախճանվել է 1998 թվականին, Գյումրիում:

<sup>2</sup> Գուսան Իգիր, Ծիրակն իմ մուսան, Երգերի ժողովածու, ճայնազրությունը Ա. Ծիշյանի, Եր., 1968:

<sup>3</sup> Հայրենասփրական երգեր (ինքնուս ստեղծագործողների, նաև աշուղների) նվիրվ. Հոկտեմբերյան Սեծ Ռևոլյուցիայի 25-ամյակին, կազմեց և խմբագրեց Ա. Մանուկյանը, ժող. ստեղծագործության առն, Եր., 1942, էջ 41; Երգարան, Եր., 1993, էջ 471-473; Հայրենական Սեծ պատերազմի հայ ժող. և գուսանական երգերում, կազմողներ Ս. Բրուսյան, Ա. Փափլանյան, Եր., 1995, էջ 31, 104:

տացնում, ունկնդրին համակում է իր հուզականությամբ, բնականությամբ:<sup>4</sup> Աշուղի մեջ մեկտեղված են երգիչն ու բանաստեղծը, առեղծագործողն ու իրապարակախոսը: Իր նշանավոր նախնիների՝ Սայաթ-Նովայի, Զիվանու հետևորդն է և նրանց օրինակով էլ երգում է որպես ժողովրդի սրտի ցավի թարգման, նրա նորերի արտահայտիչ: «Խոսքի բուրն է լեզուն սրած գուսանը», իր ազգի ծառան է և պարտավոր է «Սազը ձեռքին զիշեր-ցերեկ երգ ասել...»:<sup>5</sup> Իզիրի նոտապատկերում բարձր հասկացություններ են հայրենիքը, հայրենի քաղաքը, իր երկիրը.

Չո որդին եմ, քո երգիչը, օր ու գիշեր երգ եմ ասում,

Չո ներկայի, ապագայի արևաշող զովքն եմ ասում...<sup>7</sup>

Մտորումներում ճշմարտություն ու արդարություն է փնտորում երգիչը, տրտում կարուտից, անգամ ընդգում կյանքի անարդարությունների դեմ: Որոշ երգերում զգացվում են հոգեկան խոռովը ու ներքին երկվորյուն: Այդուհանդերձ, աշուղի քնարի հիմնական լարը սիրո մոտիվն է, և նման երգերում իշխող ներանձնային, նուերմիկ-քնարական տրամադրությունն է՝ որպես սրտից բխած ու սիրեցյալին ուղղված խոստովանություն իր նոտածողության, պատկերային համակարգի, զգացմունքների ու խոհերի արտահայտման ուրույն ձևի մեջ:

Այս գիշեր խնդարով եկար,  
Թուխ աչքերիդ լինեմ մատադ,  
Հյուսերդ շաղ տալով եկար,  
Լույս երեսիդ լինեմ մատադ.<sup>8</sup>

Աշուղը, ընդհանուր առնամբ, հավատարիմ մնալով ավանդական ձևերին, օգտվում է երգի փոխառության ընդունված տեսակներից: Այսպես՝ ժողովածուի միակ «Նորապակ հարսն ու փետեն»<sup>9</sup> ծիսական երգի տեքստը շնչին փոփոխություններով, գլեթե նոյնուրյամբ կրկնում է աշուղ Փիրղալամի «Հարս ու փետի գովեստ»-ը:<sup>10</sup> Նշենք նաև, որ Փիրղալամի երգի եղանակը ոչ մի ժողովածուում մեզ չի հանդիպել, իսկ նզիրի ներկայացրած մեղեդային տարրերակում, որ պարզորոշ դիտարկվում են ավանդական եղանակներին հասուկ կաղապարային որոշ առանձնահատկություններ, անվարան զգացվում է աշուղի հեղինակային ձեռագիրը: Կարևորենք և այն փաստը, որ ժողովածուն կազմողը՝ կոմպոզիտոր Ազատ Շիշյանը, ձայնագրությունները կատարել է անմիջապես երգի հեղինակի ձայնից: Անշուշտ, սա աշուղական երգարվեստում միակ օրինակը չէ և վկայում է աշուղական երգչական գործունեության մեջ հաճախակի կիրառվող ոչ միայն մեղեդային, այլև խոսքային կաղապարների փոխառման ու գործածության մասին:

Երբեմն ասելիքն առավել խոսուն դարձնելու նպատակով աշուղը դիմում է ուրիշ հնավանդ արտահայտչամիջոցների: «Զարքիր, անուշ կինս» երգը<sup>11</sup> դաս վառ արտահայտություններից է: Երգի յուրաքանչյուր տունն ավարտվում է «Զարքիր, անուշ կինս, զարքիր» կրկնակի դեր կատարող տողով, որի գործառույթը միայն կառուցվածքի եղանակում չէ: Ընդհակառակը, նման կրկնատողի կարելի է հանդիպել բովանդակությամբ, ժամբային պատկանելությամբ և գործառույթով միանգամայն տարրեր հորինվածքներում: Այս հատկանիշով էլ սրանք կարելի է խմբավորել միևնույն տիպի երգատեսակի մեջ և ընդհանուր առնամբ բնորոշել իրքն «արքնացումի երգի» տեսակ, հայտնի՝ հայ ժողովրդական երգավեստում ամենավաղ ժամանակներից: Իբրև օրինակ բերենք նաև Կոմիտասի «Ել, ել»-ը,<sup>12</sup> Ան. Տեր-Ղևոնյանի և Սպ. Մելիքյանի գրառած «Շիրակի ողբ»-ը,<sup>13</sup> Պաղտասար Դայիրի «Ի ննջմանեղ արքայական»-ը,<sup>14</sup>

<sup>4</sup> Գուսան Ի գիր, նշան, էջ 4:

<sup>5</sup> Նոյն տեղում, էջ 18:

<sup>6</sup> Նոյն տեղում, էջ 17:

<sup>7</sup> Նոյն տեղում, էջ 22:

<sup>8</sup> Նոյն տեղում, էջ 50:

<sup>9</sup> Նոյն տեղում, էջ 68:

<sup>10</sup> Գ. Լ. և ո ն յ ա ն, Թատրոնը իին Հայաստանում, Եր., 1941, էջ 142:

<sup>11</sup> Գուսան Ի գիր, նշան, էջ 36:

<sup>12</sup> Կոմիտասի երգ, հ. IX, Եր., 2000, էջ 230:

<sup>13</sup> Սպ. Մելիքյանի երգ, Թիֆ., 1917, էջ 31:

«Զարքիր, լառ»-ն,<sup>15</sup> «Վեր կաց»-ը<sup>16</sup> և ուրիշ շատ երգեր: Գրականագետ Հենրիկ Բախչինյանի դիպուլ բնութագրությամբ այս երգերը, սկզբնավորվելով դեռևս գեղջկական երգաստեղծության մեջ, հետագայում ներբափանցել են աշուղական երգարվեստ, ապա նաև՝ պոեզիա:<sup>17</sup>

Իգիրի բանաստեղծական լեզուն պարզ է, անմիջական ու գումարելի, գերծ աշուղական խճողված բարդություններից, պաճուծանքներից, պատկերավոր է՝ հարուստ համեմատություններով, գեղեցիկ մակդիրներով.

...Քայլվածք անգամ, ինչպես կաքավ, վարսերդ սյավ՝ մազիդ մեռնեմ,  
Հազել ես խաս, կրալլալաս, բոյդ երկնահաս, վազիդ մեռնեմ...<sup>18</sup>

Իգիրի բանաստեղծական ուղիղ խոսքն է նախընտրում.

Դու ինձ համար գեղեցիկ ես, ուրիշ սիրուն ես չեմ ուզում...

Պաղ աղբյուրի զրուալ ջուր ես, ուրիշ աղբյուր ես չեմ ուզում...<sup>19</sup>

Այդուհանդեռ, ասելիրի արտահայտման կարևոր գործունը մեղեդին է՝ եղանակը, որ երգվող բանաստեղծության մեջ խոսքին հավասարացր բաղադրիչ է: Աշուղ Իգիրի մեղեդիներ կերտելու մեծ վարպետ է: Եղանակավորված երգերից յուրաքանչյուրն իր ինքնուրույն եղանակն ունի: Մեղեդիակազմության պարզությամբ, եղանակի ծավալման արտակարգ երգայնությամբ, կառուցվածքային հստակությամբ առանձնացող հորինվածքներում պարզորդ լսվում են Ավեքսանդրապոլի քաղաքային երգերի արձագանքները: Ակունքն, անշուշտ, Շիրակի ժողովրդական երգարվեստի հարուստ ելեւջային պաշարն է: Երգեմն մեղեդիներից մեկը կարող է հիշեցնել գեղջկական հարազատ պարերգ կամ քաղաքային նվազարանային հուզառատ որևէ եղանակ: Մտածողության մեջ ազատ է, անկաշկան, զերծ աշուղական կաղապարային սխեմատիկ սահմանափակություններից: Համեմատաբար սակավ են հանդիպում պատրաստի եղանակներ՝ ավանդական մեղեդիային կաղապարներ: «Այս իմ վառ սերը», «Գանգատ ունեմ», «Քերեք զրեմ դիմումի տակ»<sup>20</sup> երգերում դրանք գործածված են ինքնատիպ մեկնարանությամբ: Ու. Արայանը այս երևոյթը մեկնարանում է հետևյալ կերպ. «... ամեն մի աշուղ այդ եղանակները կատարել է իր ձևով, և առավել շնորհական աշուղները, իմպրովիզացիա անելով, ամենայն հավանականությամբ դրանց մեջ նոցընել են նաև իրենց սեփականը: Դրանց մեջ ստեղծագործական տարր անպայման եղել է...».<sup>21</sup>

Հոդվածի սահմաններից դուրս է Իգիրի երգերի տաղաչափության հանգանակի քննությունը, այն մեծամասամբ չի ենթարկվում աշուղական ընդհանուր կանոններին և օրինաչափություններին, թեև որոշ նմուշներ, հորինված են աշուղական ավանդական կաղապարով:<sup>22</sup> Գրեթե բոլոր մեղեդիներում կարելի է նկատել առանձին հասկածների, կառուցվածքը եզրափակող ելեւջային դարձվածքների նմանություններ, որոնք սակայն, երգերում միօրինակության տպակորություն չեն ստեղծում: Ընդհակառակը, այդ դարձվածքների վարպետ կիրառումը վկայում է հեղինակի ձեռագիր յուրատիպությունը և անհատական ոճը: Վերոհիշյալ ժողովածուի բոլոր երգերը սկսվում են գործիքային նախանվազով, որը հիմնականում երգերի կրկներգերի նոտիվներով է կառուցված: Իգիրի երգերը ծավալով մեծ չեն, գողտրիկ հորինումներ են՝ բանաստեղծական խոսքի և մեղեդու կատարյալ ներդաշնակությամբ: Չարադրանքի տեսակետից այդ հորինվածքները առավել մոտ են աշուղ Շերամի երգերին. երգ-եղանակներ են, մեղեդիներ՝ բացահայտված բանաստեղծական խոսքի միջոցով: Համարյա բոլոր երգերում առաջին հայացքից պարզ քվացող ձայնակարգային կառույցը հարուստ է ու գումարելի, առատ ալտերացիաներով: Միևնույն երգի սահմաններում հիմնական և ձևավոխսված աստիճանների հանդես գալը (անշուշտ, դրանք հանդիպում են ոչ քել իրար

<sup>14</sup> Ա. Քոչարյան, Հայ գուսանական երգեր, Եր., 1976, էջ 203:

<sup>15</sup> Զիմվորագրությունը հայ ժողովրդական երգարվեստում, Եր., 2000, էջ 250:

<sup>16</sup> Նոյն տեղում, էջ 125:

<sup>17</sup> Հ. Բախչինյան, Խայ գրականությունը, Եր., 1999, էջ 213:

<sup>18</sup> Գուսան Իգիրի, նշվ. աշխ., էջ 54:

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ 57:

<sup>20</sup> Նոյն տեղում, էջ 23, 46, 63:

<sup>21</sup> Ո. Արայան, Գուսան Հավասի, Եր., 1963, էջ 86:

<sup>22</sup> Գուսան Իգիրի, նշվ. աշխ., էջ 15:

կործի, միմյանց հաջորդելով, այլ տարածության վրա) տոնայնական հետաքրքիր անցումներով են հարստացնում ճայնակարգային հեմքը՝ մեղեղուն հաղորդելով զեղեցիկ նրբերանգներ: Այս բանին մեծապես նպաստում է կշռույթի ու ելաչի սահուն և զարդուրուն ծավալումը: Իգիրի երգերը զգացնունքային են, հոգական, դրանց քնարականությանը նպաստում է փոքր ճայնածավալը, որի առավելագույն ասհմանը չի գերազանցում ուրենյակը (օկտավա): Կան երգեր, որոնցում մեղեղուն ծավալունը իմննվուն է մեկ դարձվածքի տարբերակային կրկնության վրա: Այդպես է օրինակ «Իմ Երևան» երգում:<sup>23</sup> Մեծալար հնայակի (կվինտա) սահմաններում հյուսվող եղանակը պարզ է, անպանույց: Չայնակարգային զարտուղությունը հարուստ երանցներ է հաղորդում մեղեղուն: Երաժշտարանաստեղծական առաջին սողոր ներառում է ընդամենը փոքրալար եռյակ (տերցիա), ընդհակառակը, հաջորդ՝ երկրորդ սողում տեղի է ունենում անցում դեպի յա բեմով Վերջաձայն (as): Գունեղությունը ստեղծվում է հատկապես վայրընթաց մեծացրած սեկունդայի շնորհիլ (es-d-cs-e-b-as), որն այնքան քնորշ է աշուոի երգերին և հաճախ է հանդիպում մեղեղային շարահյուսավածքում: Նոյնատիպ դարձվածքները «Հազար ու մեկ նազով», «Հետ արի, քառլանս», «Դու ինձ համար», «Տարան իմ յարը» և ուրիշ շատ օրինակներում<sup>24</sup> կարեոր դեր են կատարում, նոյնիսկ ձևականական գործառույթ ունեն: Մի քնորշ առանձնահատկություն ևս: Իգիրի երգերը միշտ հստակ և ավարտուն են՝ երբեմն կառուցված սրամիտ անհամաշափությամբ: Իգիրը միտումնավոր կիրառված անհամաշափությունների գեղեցիկ օրինակներ ունի: «Հետ արի, քառլանս»<sup>25</sup> երգը կազմված է երկու մասից՝ վեցտող տնից և քառատող կրկնակից, ընդ որում, մեղեղուն իմնական մասն ունի հավասար տևողությամբ երեք նախադասություն, յուրաքանչյուրը 4+4+4 տակտերի հարաբերակցությամբ, իսկ կրկնակը՝ երկու անհավաար 4 + 5 տակտերից: Այս անհամաշափությունը չի խախտում երգի ամրողականությունը, և հորինվածքի կառույցն իր ամրողության մեջ միանգանայն տրամաբանական ու ավարտուն է:

«Իմ պառավ յարը քանի է»<sup>26</sup> երգում մեղեղին կազմավորվում է բոլորովին այլ սկզբունքով: Երկու պարբերությունից կազմված երաժշտական կառուցվածքը՝ A+B, տրոհվում է 2 հավասար՝ 6+6 տակտամասերի՝ յուրաքանչյուր քանաստեղծական սողին համապատասխանող երաժշտական մեկական անդամով (3տ+3տ): Նոյն երգի սահմաններում խառը չափերի համադրումը ոչ թե ծանրաբեռնում է, այլ գունագեղ բազմազանություն է հաղորդում մեղեղային կտավին: Երգի դրամատիկ հանգույցը փոքրալար եռյակի (տերցիա) շրջանակում ձևավորվող մոտիվն է, որ վայընթաց շարժումով իջնում է դեպի փոյսոգիական սի (h) հենակետ: Հիշենք, որ cis-c և նմանատիպ քրոմատիկ աստիճանների մեջընդմիջվող հաջորդումը հայ ազգային երաժշտության հճնատիկ դրսերտումներից է, ինչի մասին Մ. Քրուտյանը գրում է. «Ալտերացիան ոչ միայն սովորականի նման սրում է լաղային անկայուն աստիճանների ձգողականությունը դեպի կայուն աստիճանները, այլ նաև նպաստում միևնույն լաղի սահմաններում տարբեր գույնների ստեղծմանը»:<sup>27</sup> Այդուհանդեռ երգիշին քնորշ չէ չափազանց շատ ալտերացիաներով ու քրոմատիզմով տարվելը և դրանցով մեղեղուն հնչյունային կարգը բարդացնելն ու խճողելը, մի երևույթ, որ քավական տարածված է այլ աշուուների ստեղծագործություններում: Իգիրի երգերի ճայնակարգային հիմքը, որ քնում է հայ գեղջկական երաժշտության սկզբունքներից, ընդհանուր առմամբ պարզ է ու հստակ:

Կառուցվածքային անհամաշափության հետաքրքրական այլ օրինակներ են նաև «Քարե տարեկ»-ը<sup>28</sup> և «Կողիսոփի աղջիկ»-ը:<sup>29</sup>

«Ինչի համար խռովել ես», «Այս իմ վառ սերը», «Տեսա»<sup>30</sup> և էլի մի քանի երգերի կառույցում առաջին պարբերության երկրորդ նախադասությունը կրկնվում է կառուց-

<sup>23</sup> Գ ու ս ա ն Ի գ ի թ, նշվ. աշխ., էջ 9:

<sup>24</sup> Նոյն տեղում, էջ 32, 57, 61, 66:

<sup>25</sup> Նոյն տեղում, էջ 67:

<sup>26</sup> Նոյն տեղում, էջ 34:

<sup>27</sup> Մ. Ք ր ու տ յ ա ն, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Եր, 1983, էջ 54:

<sup>28</sup> Նոյն տեղում, էջ 27:

<sup>29</sup> Նոյն տեղում, էջ 19:

<sup>30</sup> Գ ու ս ա ն Ի գ ի թ, նշվ. աշխ., էջ 56, 63, 30:

վածքի վերջում՝ իբրև եզրափակող դարձվածք, մեծամասամբ անփոփոխ, երբեմն նաև՝ տարրերակված։ Սա աշուղի կիրառած երաժշտական կառուցվածքային հնարանքներից ամենաբնորոշն է, որ դիտարկվում է նաև Ծերամի բազմաթիվ երգերում,<sup>31</sup> և հարազատ է քաղաքային երգերի երաժշտարանասեղծական կազմությանը։

Աշուղ Իգիրի երգերն ընդհանուր առմամբ քնարական պատումներ են թե՛ իրենց բանաստեղծական բովանդակությամբ և թե՛ մեղեղական շարադրանքով, ջերմ են, պարզ ու անմիջական գերծ ավելորդ հոնտորականություննեց։

## ПЕСНИ АШУГА ИГИТА.

*Резюме*

*A. Апинян*

Игит (Гегам Мартиросян) - яркий представитель армянской национальной ашугской школы советского периода. Продолжатель традиций Дживани и Шерама, современник Аваси, Ашота и Шагена, в своих песнях воспевал Родину, родной город, природу. Его герой - человек новых времен со своими чувствами и думами. Главная тема, однако,- любовная лирика. В песнях Игита редко встречаются традиционные формы ашугского стихосложения. Поэтический язык прост, но выразителен, богат эпитетами, сравнениями. Игит - создатель великолепных мелодий, отличающихся напевностью, ладоинтонационной стройностью. Поэтический текст и мелодия песен Игита тесно сплетены и дополняют друг друга. В их основе - родные напевы ширакского музыкального фольклора. Черты творчества ашуга - лаконичность, красочность и скучное использование музыкальных выразительных средств.

<sup>31</sup> Ծերամ, Երգեր, Եր., 1981, էջ 34, 46, 78:

## Հասմիկ ԱՌԵՓԱՆՅԱՆ

### ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԱԺԾԱԿԱՆ ՄԾԱԿՈՒՅԹԻ ՀԱՐՑԵՐԸ ՄՐԲ. ԼԻՍԻՑՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մեծանուն պարագետ Սրբուհի Լիսիցյանի հիմնարար հետազոտությունը յուրօհինակ հանրագիտարանային բովանդակություն ունի:<sup>1</sup> Հայ ժողովրդի հիմնավորց պարարվեստին առնչվող երևոյթներն այսուղ դիտարկվում են համարնդրկուն հարցադրումներով և աչքի են ընկալում իմբնատիփ լուծումներով: Իր վաղնջական ծագումով ժողովրդական պարը քննորդելի է որպես անտարրանջատ (սինկրետիկ) մշակութային երևոյթ և, հետևաբար, պատմատեսական ցանկացած հետազոտության մեջ կարևորվում է տարրերի համալիր քննությունը: Տունական, ծիսա-հավատալիքային, իմաստաբանական հենքի վրա, իրը վճռորոշ տարրեր այսուղ հանդեւ են զալիս երգը, նվազը (համապատասխան նվազարանային կազմով), շարժումը, բեմավիճակը և այլն:

Սրբ. Լիսիցյանի հետազոտության մեջ ժողովրդական հիմնավորց պարը, որպես անտարրանջատ արվեստի մի քաղաքիչ, ներկայացված է համալիր քննությամբ, որտեղ կարևոր տեղ է հատկացված նաև միջնադարյան գրավոր աղբյուրներում տեղ գրտած հիշատակությունների պատմաբանասիրական ուսումնասիրությանը: Ներկա աշխատանքում մենք կանգ ենք առել պատմագրական մի քանի հիշատակությունների մեջնությունների վրա, որոնք արժենորելի են նաև երաժշտականության մեջ և երևան են բերում իմ Հայատանի երաժշտական մշակույթի կարևորագույն երևոյթներ: Պատմաերաժշտական հետազոտություններում դրանք ինչ-ինչ պատճառներով տեսադաշտից դուրս են մնացել: Ելնելով դրանից՝ մենք առաջնային ենք համարել դիտարկվող նյութին վերաբերող Սրբ. Լիսիցյանի մոտեցումները արժենորել հայագիտական այլ մեկնությունների լայն համապատկերում: Դա մեզ հնարավորություն կտա առավել տեսանելի ներկայացնելու հեղինակի իմբնատիփ գիտական մոտեցումների, հնագույն մշակութային երևոյթների վերաբերյալ նրա խիստ անհատական եզրահանգումների յուրահատկությունները:

Մովսես Խորենացին ի թիվս այլոց հիշատակել է նաև հայոց հիմնավորց վիհապահնդման մի իմբնատիփ տեսակի մասին ևս: Խոսելով Նոյի և նրա որդիների մասին՝ նա գրում է. «Քայլ առաւել յաճախագոյն իմբն արամազնեայց ի նուազս փանդրան<sup>2</sup> և յերգս ցցոց և պարոց զայսոսիկ ասեն հիշատակաւ»:<sup>3</sup> Հայագիտության մեջ այս հիշատակությունն ունեցել է քազմազան մեկնություններ, որոնք կարելի է քաժանել երկու խմբի: Որոշ ուսումնասիրություններում ցցոց երգերը տարրերվում են պարոց երգերից՝ որպես առանձին երևոյթներ, մինչդեռ մեկնշների մի ստվար խոմք ցցոց և պարոց երգերը դիտում է որպես մեկ ամբողջական երևոյթի բաղկացուցիչներ: Այսպես, Խորենացու պատմության ֆրանսերեն թարգմանության հեղինակ Ֆլորիվալը, Ստ. Պալասանյանը, Մ. Աքեղյանը պարոց երգերը դիտել են որպես քննարական պարերգեր՝ «նման մեր արդի երկուողերին ու քառասողերին»:<sup>4</sup> Նոյն հեղինակները որպես համարնույթ երգեր են մեկնարանել նաև ցցոց երգերը: Ֆլորիվալը դրանք նույնացրել է ֆրանսիական քննարական բալլադների հետ:<sup>5</sup> Խոկ Ստ. Պալասանյանն ու Մ. Աքեղյանը դրանք դիտել են որպես հարսանեկան երգերի մի տեսակ՝ ելնելով Ազարանգեղոսի «Պատմության» մեջ Տրդատ քաջապարի հարսանիքի նախապատրաստության նկարագրության «ցուց քառնալ մարդկանն» արտահայտությունից: Մ. Աքեղյանը գրել է, որ ցուցը նոյն նշանակությունն է արտահայտում նաև Օղիմայիանուի IV առակում («Հարսանիք էին և ցոյցը և դամբարք առաջատաց») և Գ. Ռ. Նարեկացու «Մատյան»-ում («կաքավս կայրից եւ ցուց վազից խաղաղկան դիւաց գարշելեաց՝ ճարտար խարո-

<sup>1</sup> С. П и с ո ւ ա ն, Տարիննե պլաս և թատրաննե պրեժեւուննա արմանսկո նարու, Еր., թ.1, 1958, թ.2, 1972.

<sup>2</sup> Որոշ ձեռագրերում՝ բամբրան:

<sup>3</sup> Մովսես Խորենան և առ ա ռ ո յ Պատմություն Հայոց, Տիգրիս, 1913, էջ 27:

<sup>4</sup> Մ. Աք ե ղ յ ա ն, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1908, էջ 256:

<sup>5</sup> Մովսես Խորենան և առ ա ռ ո յ Պատմությունն է արտահայտում նաև Օղիմայիանուի IV առակում («Հարսանիք էին և ցոյցը և դամբարք առաջատաց») և Գ. Ռ. Նարեկացու «Մատյան»-ում:

դաց ծովորեամբ իմով շնորհեսցի»):<sup>6</sup> Ինչպես տեսնում ենք, Ս. Արելյանը ցուցը մեկնարանում է՝ Ելենորլ բառի համատեքստից: Մինչդեռ Նարեկացու մոտ համատեքստը բոլորովին այլ բան է հուշում:

Այժմ անդրադանանք մեզ հետաքրքրող երևոյթի այլ մեկնություններին: Դրանք հնարավոր է դիտել որպես մեկ հիմնական մեկնակերպի միմյանց լրացնող տարբերակներ, որոնց հիմքում Խորենացու վկայության լեզվաբանական վերլուծությունն է: Ինչպես նշեցինք, մեկնիշների այս ստվար խումբը *ցուց* և պարուց երգերը դիտել է իրեն մեկ միասնական երևոյթ: Տեսմենք, թե ինչ՝ ներկայացրել բանակոր արվեստի այս անտարրանջատ երևոյթի յուրաքանչյուր տարրը: Առավել տարածեք մեկնությունների առիթ է ներկայացրել *ցուց* երգ կամ *ցուցը*, թերևս այն պատճառով, որ հիշատակվել է մատենագրական սակավարիվ աղբյուներում: Ս. Էմինի «զգործս որևէ անձին ցուցանել» մեկնություններ առավել մանրամասն է ներկայացրել Խ. Ստեփանեն. «Երգը ցուց նշանակում է ... այնպիսի երգ, որն երգվում էր ցոյցերով կամ միմուռվ, մեշխարով, որ արդարք այնպիս և պիտի լիներ: Այս երգերի մեջ երգվում էին ինմ հայկական թագավորների և հսկաների քաջազործությունները: Չափ բնական է, որ երգիշներն երգում էին այդ երգերը ժողովրդի առաջ, աշխատում էին իրենց ծեռներով և շարժմունքով աւելի կենացնութիւն և կենաց տալ իրենց երգերին»:<sup>7</sup>

*Ցուց երգերը* նոյն կերպ են մեկնարանել նաև Ալ. Վեսելովսկին, Ն. Մառը, Ստ. Սալիսայանը, Գ. Լևոնյանը, Լ. Զալանքարը, Գ. Գոյանը, Հ. Հովհաննիսյանը, Ջ. Քոչնարյանը, Ն. Թահմիզյանը և ուրիշներ:

Մեկ այլ մեկնակերպ է առաջարկում Սրբ. Լիսիցյանը: «Դիտելով *ցուց երգերը* հայ ժողովրդի մշակույթի վաղագույն շրջանի երևոյթ՝ նա մատնանշել է երգ բառի վաղ-միջնադարյան իմաստային տարբերակներից մեկը՝ որն է պարերգը<sup>8</sup>, որից էլ հետևում է, որ դիցաստեղծնան գործընթացի հետ կապված այդ պարերգերը կատարվել են դիմակավորված ներկայացումների ժամանակ, որտեղ ներկայացվել են զանազան հերոսներ՝ դյուցազներ, ոգիներ, կուռքեր:<sup>9</sup> Հետևարար, *ցուց երգերը* կապված են ներկայացման, ցուցադրման հետ:

Հ. Հովհաննիսյանը, մանրամասն քննելով *ցուց* բառի բառարանային և իմաստակառուցվածքային մի շաբթ համարժեքները՝ *ցուցադրել*, *հայտնաբերել*, ապացույց, *երևումն*, *ցուցումն*, մշան և այլն, եզրակացնում է, որ այս բառը միայն իր «հեռականշանակությամբ» կարող էր օգտագործվել *յերգս ցուց* արտահայտության մեջ՝ այն է առակ մշակված, տեսիլ մշակված, այն դեպքում, երբ ցուցը նախնական լինելով, նաև ժողովրդական, խոսակցական ձևն է, որ մնացել է իր մերձական սահմաններում՝ երբեք չփոխարինելով *ցոյց* քերականական-տրամարանական նորին<sup>10</sup>:

Ցուցի՝ միջնադարյան բանակոր արվեստի երևոյթի մասին կարենի է ամբողջական պատկերացում կազմել միայն պարուց երգի հետ: Հիշենք, որ միջնադարյան պարն արտահայտել է նախ և առաջ խմբվածություն:<sup>11</sup> Խորենացու վկայած պարը Ս. Էմինը բացատրել է որպես շրջան:<sup>12</sup> որը բայց Հ. Հովհաննիսյանի՝ վերաբերել է «ոչ թե պարի ավանդման եղանակին», այլ «վկայական երգի կառուցվածքային առանձնահատկություններին», քանի հունական կիլոսով, որն էմինը բերել է որպես բառարանային համարժեք, նշանակել է պատույտ, պարբերականություն, ցիկլ: Այսինքն պարը դիտվել է որպես «ամբողջական ցիկլ»:<sup>13</sup>

Սակայն Խորենացու պատմության ոլուտերն բարգմանության մեջ պարուց երգը Ս. Էմինը բարգմանել է «պլասօվա պեսնյ»:<sup>14</sup> Անդրադանալով այս բարգմանությանը՝ Սրբ. Լիսիցյանը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել պար բառի բերի

<sup>6</sup> Գրիգոր Նարեկան Հայաստան ողբերգութեան, Եր., 1985, էջ 204:

<sup>7</sup> Սովոր և Խորենացու պատմությունները, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 27:

<sup>8</sup> Բառզիրք հայոց, 1728, էջ 127:

<sup>9</sup> Սրբ. Լիսիցյան, ճշվ. աշխ., հ. 1, էջ 66:

<sup>10</sup> Հ. Հովհաննիսյան Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Եր., 1978, էջ 124:

<sup>11</sup> Հ. Աճառյան Հայերեն արմատական բառարան, հ. Ե, Եր., 1932, էջ 953:

<sup>12</sup> Ս. Էմին, Վեսել հմոյն Հայաստանի, Սովորա, 1850, էջ 97:

<sup>13</sup> Հ. Հովհաննիսյան Հայաստանի, Երևան, 1985, էջ 110-111:

<sup>14</sup> История Армении Монсея Хоренского, М., 1858, стр. 28.

մեկնությանը և լրացնելով քարգմանել է. «Ե պեչուուրյասկախ պետական և հորություն».<sup>15</sup> Նշենք, որ իր ժամանակի համատերաստում Լիսիյանի մեկնակերպը առավել համոզիչ և ամբողջական է: Հետազայում Հ. Հովհաննիսյանի համակողմանի մեկնարանության մեջ պար բարի հունարեն, ասորերեն, երրայերեն համարժեքների բաղդատական վերլուծության արդյունքում նշվում է խմբական պարերգ, խմբերգ, շարք, շորջ-պար նշանակյալների, ինչպես նաև բատերայնացված խմբական պարերգի հիմնավուրց տեսակներից մեկի՝ անտիկ պարերգի հետ ունեցած ընդհանուր բնորոշչների առկայության մասին. «անտիկ պարերգը որպես համեմատական ընդունելով, - գրում է Հ. Հովհաննիսյանը, - տեսնում ենք, որ հայկական Վաղ միջնադարյան պարանձիկի երգը (կամ պարուց երգը) կառուցված է եղել նոյն տրամաբանությամբ՝ պարերգակների շրջանաձև, կիսաշրջան կամ ուղղագիծ շրբա և կենտրոնում կամ հանդիման մենակատարը»<sup>16</sup>: Այստեղից էլ հետևում է, որ *ցցոց երգերը*, որոնց գործառույթը, ինչպես նշվեց, ցուցադրումն է, կարող են դիմուլի հիմնականում որպես մենակատարումներ: Այսպիսվ, *ցցոց և պարուց երգերը* Վաղ միջնադարյան վիպասաններման հիմնավուրց եղանակներից են եղել, որ հայ ժողովրդի դիմաստեղծության վաղագույն շերտերում ձևավորվելով՝ զարգացած ավանդությունների շնորհիվ հասել են միջնադար:

Խորենացու «Պատմության» մեջ իրեն առբյուր հիշատակված Վիպասանքում տարակարծիք մեկնությունների տեղիք են տվել *Թուելեաց երգերը*,<sup>17</sup> հիմնականում անվան շնորհիվ: Վերջինիս վերագրել են երգերում պատմվող նյութի, հորիննան եղանակի, ավանդման եղանակի յուրահատկությունները: *Թուելեաց անվան համարելի հաշվել* նշանակությունը նկատի ունենալով՝<sup>18</sup> մի խոսք հեղինակներ եզրակացրել են, որ այս երգերում «քվել և համրել են բազավորների ու իշխանների գործերը»:<sup>19</sup> Այլ հեղինակներ այդ երգերը դիմուլ են որպես *վիպասանաց երգերի* մի հիճնուրույն տեսավոր: Բ. Գևորգյանը նշում է, որ «Խորենացու քարգմանության մեջ պետք է անփոփոխ պահել *թուելեաց երգը* բառերը՝ իրեն հասող անուն երգի տեսակի, այնպես, ինչպես մերեկի, շարական և այլն»:<sup>20</sup> Իսկ Հ. Դավթյանը ենթադրում է, որ Խորենացին հայ հնագույն երգերի այդ տեսակին *թուելեաց* անունն է տվել, որպես նշանակում է «Թուելեաց գործում» (Աստվածաշունչ) հանդիպող երգերի նմանությամբ երգեր:<sup>21</sup>

Հակառակ այս տեսակետի՝ Ստ. Պալասանյանը նշում է, որ դրանք ոչ թե Վիպասանաց երգերի մի տեսակն են, այլ նոյն Վիպասանաց երգերն են, որոնց բնորոշել են պատմվող նյութի «քուելեաց երգերում նշված առանձնահատկությունները»:<sup>22</sup> Նմանատիպ մեկնությունների հիմնական կողմնորոշչը քուել բայի միջնադարյան իմաստային «ի թիւ ասել» ձևն է, որը Նոր բառօբարքը ներկայացրել է որպես «առանց եղանակի երգոց»:<sup>23</sup>:

Ն. Մատը ենթադրել է, որ այդ բառը «ցույց է տվել ուսանակոր հորինելու կամ արտաքերելու եղանակներից մեկը, բայց պարզ չէ, արդյոք եղանակաւոր (նարասեւ) կարդալուն, իրեն ռեշիտատիվ արտասանելուն, թե առողանումին (դեկլամացիա) են վերագրվել»:<sup>24</sup> Ըստ Ս. Արենյանի «քիւ ասելն սպիրական ասելն է, առանց որևէ եղանակի, որքան կարելի է պարզ և հասկանալի, մոտիկ սպիրական կարդալու և պատմելու ձևին»:<sup>25</sup> Այսինքն, խոսքը վերաբերում է պատմելածին: Ս. Արենյանի տեսակետի վրա

<sup>15</sup> Սրբ. Լիսից անձնագիրը, հ. 1, էջ 67-68:

<sup>16</sup> Հ. Հովհաննիսյանը, Հայոց պատմություն, Հայոց պատմություն, Տիգրան Տիգրանի, 1913, էջ 116-123:

<sup>17</sup> Սրբ. Լիսից անձնագիրը, հ. 1, էջ 67-68:

<sup>18</sup> Նոր բառացիքը հայկակեան լեզուի, Վեհանիկ, հ. Ա, 1836, էջ 820:

<sup>19</sup> Ս. Պալասանյանը, Պատմություն հայոց գուականության, Տիգրան Տիգրանի, 1865, էջ 131:

<sup>20</sup> Բ. Գևորգյանը, Գուականություն հայոց գուականության, Վաղարշապատ, 1899, էջ 43:

<sup>21</sup> Հ. Դավթյանը, Պատմություն հայոց երգերի անվանման առքիվ, «Էջմիածին», 1973, 7, էջ 47:

<sup>22</sup> Ս. Պալասանյանը, Հայոց պատմություն, էջ 131:

<sup>23</sup> Նոր բառացիքը ..., հ. Ա, էջ 812:

<sup>24</sup> Ըստ Ս. Պալասանյանի՝ Հայոց պատմություն, էջ 18:

<sup>25</sup> Ս. Արենյանը, Հայոց պատմություն, էջ 163:

հենվելով՝ Գ. Լևոնյանը նշել է, որ քուելեաց երգերի կատարման ժամանակ «արտասանել են կամ ավելի ճիշտ երգել են ռեջիտատիվ»:<sup>26</sup>

Երաժշտագիտության մեջ հիշյալ երգերը հիմնականում մեկնարանվում են որպես ասերգ կամ ռեջիտատիվ, այն է՝ երգեցողության մի տեսակ, որտեղ գերակշռում է խոսքի դերը:<sup>27</sup>

Ինչպես տեսնում ենք, Խորենացու հիշատակած երգերի հանդեպ հետաքրքրությունը մեծ է հայագիտության ամենատարբեր ոլորտներում: Այժմ անդրադառնանք նաև մեկ այլ տեսակետի, որի համաձայն քուելեաց բառի հիմքում ընկած է ոչ թե քվելը, այլ՝ քովելը.<sup>28</sup> Այսինքն, այդ երգերը կարող են կապված լինել կրոնի նախնական ձևերից մեկի՝ դյուքտության հետ և ավանդաբար հասնել վաղ միջնադար: Այս դեպքում հնարավոր է քուելեաց երգերը առանձնացնել Վիպասաներից և դիտել որպես ինքնուրույն երգեր: Սակայն պետք է նկատի ունենալ, որ Վիպասաները նաև առասպելախառն վեպ է, իսկ առասպելներում կլոնը իր տարրեր ճնշերում առանձնահատուկ, որոշիչ դեր է ունեցել: Հետևաբար, քուելեաց երգերը, որպես այդպիսին կարող են ներկայացնել Վիպասանաց երգերի առանձնահատուկ կողմներից մեկը: Կարծում ենք դրա մասին մի ակնարկ կարելի է համարել Գրիգոր Մագիստրոսի քրերից մեկում մահամերձ Արտաշեան Ա-ի վերջին երգի նախին հիշատակությունը.

Ո՛տայր իհճ՝ ասէր զծուխ ծխանի

Եւ զառաօտն նաւասարդի,

Ըզվագելն եղանց

Եւ զվարզելն եղօքերուաց.

Մեք փող հարուաք

Եւ թըմքի հարկանէաք,

Որպէս օրէն է քաջաւորաց.<sup>29</sup>

Այս մասին մեր կարծիքը հիմնված է Սրբ. Լիսիցյանի ուսումնասիրության մեջ այս հիշատակության անդրադարձի վրա: Այստեղ նշվում է այն մասին, որ մահից առաջ Արտաշեան Ա-ն կատարել է դյուքտական կամ հնայական գործողություն՝ մահը վանելու նպատակով:<sup>30</sup> Հետևաբար, վիպերգում կատարված հնայախոսքը հավաստում է Վիպասաներում դրա ինչ-ինչ գործառույթի մասին: Նշանակում է, Վիպասաներում այդ երգերը հատուկ տեղ կարող են զբաղեցնել: Արժեքավոր է նաև Սրբ. Լիսիցյանի տեսակետը այս հիշատակության մեջ նշված նվազարանների՝ փողերի և թմրուկների մասնավոր գործառույթի մասին: Հայագիտության մեջ լայնորեն ընդունված է այն մեկնությունը, ըստ որի վիպերգի այս հատվածում հիշատակվել է թմրուկների ու փողերի հնչյունների ուղեկցությամբ կատարվող արքայական որսերի մասին: Սրբ. Լիսիցյանի կարծիքով, սակայն, հիշատակված հերանոսական ծիսապաշտամունքային (Ծավասարդ) տոնահանդեսներում ընդգրկվել են եղնիկների և եղջերուների տոնեմական պաշտամունքի տարրերը, որոնց թվում սրբազն գործառույթներ կարող են ունենալ նաև վողերն ու թմրուկները:<sup>31</sup> Այս դեպքում ևս գիտնականի հայեցակետը առավել խորքային է և հնարավորություն է ընձեռում «շոշափելու» մշակութային հնագույն շերտեր:

Ինքնատիպ է նաև Խորենացու Պատմության մեջ հիշատակված փանդիռն կամ բամբիռն նվազարանի վերաբերյալ Սրբ. Լիսիցյանի մեկնակերպը: Հայագիտության մեջ այս նվազարանի շորքը ևս տարբեր են վիճակարույց բանավեմերը: Անդրադառնանք դրանցից մի քանիսին: Նախ՝ անվանումի մասին Մ. Արենյանը նախնական է համարել փանդիռն անվանումը, չնայած «Նոր բառօքը»-ի հեղինակները նշում են երկու անվանումներն էլ և դրանք ներկայացնում են իրքն ինքնուրույն նվազարանները: Բամբիռնը ներկայացված է որպես ծնծղա կամ էլ բանցուր և սամցուր,<sup>32</sup> իսկ փանդիռնը՝ որպես

<sup>26</sup> Գ. Լ և ո ն յ ա ն, Աշուղական արվեստ, «Ազգագրական հանդես», Եր., 1906, հ. 13, էջ 25:

<sup>27</sup> Կարծում ենք՝ այս հարցում վճռորոշ դեր է խաղացել Կոմիտասի հասակ ձևակերպումը «Թիւ երգելու» վերաբերյալ: Տես՝ Կոմիտաս, Տեսոր երաժշտութեամ, Կոմիտասի ֆոնդ, թիւ 655, էջ 2:

<sup>28</sup> Լ. Ք ա լ ա ն ք ա բ ա բ, Արվեստի մայրուղիներում, Եր., 1963, էջ 361:

<sup>29</sup> Գ ր ի զ ո ր Ս ա գ ի ս տ ր ո ս, Թողթեր, Ակերսամդրապատ, 1910, էջ 86-87:

<sup>30</sup> Ս ր բ. Լ ի ս ի ց յ ա ն, ճշվ. աշխ., հ. Բ, էջ 74:

<sup>31</sup> Նոյնիք:

<sup>32</sup> Նոր Բառօքը, հ. Ա, էջ 430:

**լարավոր նվազարան:**<sup>33</sup> «Ծնծղաների ճայնակցությամբ», այսպես է ֆրանսերեն թարգմանել Խորենացու «ի նուազ քամբռան» արտահայտությունը ֆլորիվալը:<sup>34</sup> Ուշադրության արժանի է այն հանգանանքը, որ թարգմանության մեջ նվազարանը հիշատակվել է հոգնակի թվով՝ ծնծղաները: Մինչդեռ Խորենացու հիշատակության մեջ նվազարանը նշված է եզակի թվով: Նույնը նկատելի է Ստ. Մալխասյանցի թարգմանություններում:<sup>35</sup>

Անդադարնալով քամբիոնի ծնծղան նեկանարանությանը՝ Սրբ. Լիսիցյանը միևնույն ժամանակ, հենվելով որոշ ազգագրական տվյալների վրա ենթադրել է, որ խոսքը XX դարի սկզբում հայ ժողովրդի կենցաղում պահպանված զիշեր կոչվող նվազարանը կարող էր լինել.<sup>36</sup> Նշենք, որ այս մեկնությունը և Լիսիցյանը բխեցրել է ծիսահավատալիքային հնագոյն շերտերից եկող զորեղ ավանդականության համալիրից: Թեև երաժշտագիտության մեջ ընդունված է փանդիմնի՝ որպես լարավոր նվազարանի դիտարկումը՝ լարվածքի տրավական հատկանիշների մանրակրկիտ քննությամբ,<sup>37</sup> այդուհանդերձ Լիսիցյանի մեկնակերպը արժելորելի է իր ինքնատիպ հայեցակետի առումով:

Հարունակելով Խորենացու «Պատմության» մեջ երաժշտական մշակույթին առնչվող հիշատակությունների քննությունը՝ անդադարնանք նաև վաղմիջնադարյան ժողովրդային-մասնագիտացված արվեստի ինքնատիպ դրսուրումներից մեկի՝ վարձակմերի արվեստին առնչվող մի դրվագի: Բակուր նահապետի տանը կազմակերպված խնջույքի նկարագրության մեջ Խորենացին հիշատակել է վարձակ Նազինիկի մասին, «որ յոյժ գեղեցիկ էր և երգէր ձեռամք»:<sup>38</sup> Երգէր ձեռամք արտահայտությունը, որը ոչ միայն Խորենացու, այլև միջնադարյան հետինակների մոտ չի կրկնվում, տեղի է տվել մի շարք տարրներումների: Բառացի թարգմանությունն է՝ «երգում էր ձեռքով», ինչը մեկնարանվել է այսպես. որոշ թարգմանություններում երգէրը պարզապես անտեսվել է, և ձեռքով երգելը դիտվել է որպես ձեռքերի գեղեցկության փոխարերություն (Վիառոն Եղբայրներ, Ի. Իռանենեալ), այլ թարգմանություններում հիշյալ արտահայտությունը դիտվել է որպես «ձեռքերով նվազել» (Խ. Ստեփանե, Ստ. Մալխասյանց): Հայագիտական այլ հետազոտություններում հանդիպում է «պարում էր ձեռքերով» մեկնարանությունը (Գ. Գոյան, Հ. Հովհաննիսյան): Նշենք, որ գիտական գրականության մեջ դեռևս վիճում են արտահայտության ասույց թարգմանության և նեկանության շուրջ: Նշենք թեկուզ Գ. Արգարյանի և Բ. Ուլուրաբյանի գիտական բանավեճը, որի առիթներից մեկը Ստ. Մալխասյանցի «նվազում էր ձեռքերով» թարգմանությունն է:<sup>39</sup> Գ. Արգարյանը հիմնավորել է Ստ. Մալխասյանցի թարգմանությունը, բնագրին համարժեք այլ, երբեմն մտավոր արտահայտությունների համեմատական վերլուծության միջոցով: Այսպես, համենատերով բնագրի արտահայտության լատիներեն համարժեքը՝ Ա. Արգարյանը եղբակացրել է, որ «նվազում էր ձեռքերով» արտահայտության մեջ ենթադրվում է Նազինիկի երգչուիկ լինելը: Այսինքն նաև նվազել և միևնույն ժամանակ երգել է: Այսպիսին է նաև երաժշտագետ Հակոբ Հովհաննիսյանի մեկնակերպը, որտեղ փաստվում է, որ «հիմ հայերին վաղոց ծանոք էր հնդկական և եգիպտական խերոնոմիան՝ ձեռքի շարժումներով երգելու և նվազելու արվեստը»:<sup>40</sup>

Վերինիշյալ բանավեճում Բ. Ուլուրաբյանը նկատել է, որ ձեռքով երգելը կապված է եղել պարի հետ և, հետևաբար, իշյալ արտահայտությունը վերաբերել է «Վարձակ Նազինիկի պարին, որը Ձերքողահոր երկու ընկալիք է բանաստեղծական երանցով. վարձակն այնպես էր պարում, կարծես երգում էր»:<sup>41</sup>

<sup>33</sup> Նոր Բառզիքք, հ. Ա, էջ 430, հ. Բ, էջ 932:

<sup>34</sup> Մովսես Խորենացու հայկական պատմություն, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 29:

<sup>35</sup> Մովսես Խորենացու հայկական պատմություն, Եր., 1981, էջ 33:

<sup>36</sup> Սրբ. Լիսիցյան հայոց աշխատանք, հ. Ա, էջ 139-140:

<sup>37</sup> Ն. Թահմիջյան, Ներդաշնակության հենքի ուսմունքը միջնադարյան Հայաստանում, ՊԲՀ, հ. 1, 1966, էջ 84:

<sup>38</sup> Մովսես Խորենացու Պատմություն Հայոց, Տիգրան, 1913, էջ 141:

<sup>39</sup> Գ. Արգարյան, Բ. Ուլուրաբյան հայերի պարին. Պատասխան ընդդիմախոսի, Գրական թերթ, 1986, N 50:

<sup>40</sup> Հ. Հովհաննիսյան, Հայերի պատմություն, 1939, ձեռագիր, Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան:

<sup>41</sup> Գ. Արգարյան, Բ. Ուլուրաբյան հայերի պարին. Պատասխան ընդդիմախոսի, Գրական թերթ, 1986, N 50:

Ամբողջ հարցն այն է, որ վարձակ Նազինիկը, իրքի միջնադարյան թատրոնի ներկայացուցիչ, կարող էր հանդես գալ և որպես երգչուիի, և պարուիի, ինչպես նաև կարող էր տիրապետել նվազարանային արվեստին: Դա բնորոշ էր վարձակների արվեստին: Հետևաբար միակողմանի է թվում Նազինիկին միայն երգչուիի կամ միայն պարուիի դիտելը:

Այժմ անդրադարձնանք նույն արտահայտության Սրբ. Լիսիցյանի մեկնությանը, որի հիմքում բառագիտական բննությունն է: Նա առաջնորդվել է երգ բառի հնագույն իմաստային տարրերակներից մեկի պարզաբնումով: Ըստ Երեմիայի բառարանի, դա բառի պար նշանակությունն է:<sup>42</sup> Ըստ այդմ էլ Սրբ. Լիսիցյանը պնդել է, որ Խորենացին գրել է Ճեռնապարերի, Ճեռնախսաղերի մասին, և երգել Ճեռամբ - ը պետք է մեկնարանել որպես պարերգ:<sup>43</sup> Դարձյալ նշենք, որ տվյալ մեկնարանությունը նույնպես չի բացառում այն, որ Նազինիկը կարող էր նաև նվազել նվազարանով: Իբրև լրացուցիչ փաստարկ, բերենք մի հատված X դարի անհայտ մի հեղինակի ստեղծագործությունից, որտեղ գովերգվում է վարձակի արվեստը.

Մեղմիկ շարժելով յայս կոյս և յայն նայեր

Ծովածփելին իր մահարեր աչօքն,

Կայթել կաքաւէր թմբկահարիկ աղջիկն:<sup>44</sup>

Նշենք նաև Արտաշատի պետրումներից հայտնաբերված թրծակավե արձանիկի մասին (մ. թ. ա. Ի դ. – մ. թ. Ի դ.), որի ճեռքին պատկերված է վիճ (կամ սազատիա նվազարան<sup>45</sup>): Ենթադրվում է, որ արձանիկը պատկերում է վարձակ՝ նվազարանով:

Դիտարկված պատմագրական հիշատակությունների մեկնությունները վերըստին արժեքավորելով՝ առաջնային ենք համարում Սրբ. Լիսիցյանի կողմից երաժշտական մշակույթին առնչվող հարցերին անդրադարձ՝ պատմամշակութային երևոյթների պառակել լայն և խաղքային բննության համատեքստում: Դրանով են պայմանավորված գիտնականի դիպուկ և «հետահար» բնորոշումները, որոնք երեմն նույնիսկ իրենց հիպոթետիկ բնույթով, հետաքրքրական են և յուրովի ընդլայնում են հին Հայաստանի երաժշտական մշակույթի պատմության ուսումնափրության շրջանակները:

Սրբ. Լիսիցյանի դիտարկումները կարևոր շատ հարցերի նկատմամբ թարմ ու իրենց ինքնատիպ նոտեցումներով լավագույնս հարստացնում են հայ պատմական երաժշտագիտությունը:

## ВОПРОСЫ МУЗЫКАЛЬНОЙ КУЛЬТУРЫ ДРЕВНЕЙ АРМЕНИИ У СРБУИ ЛИСИЦИАН

Резюме

A. Степанян

В труде Срб. Лисициан “Старинные пляски и театральные представления армянского народа” (Ер., т. 1, 1958, т. 2, 1972) в широком кругу культурно-исторических вопросов рассматриваются также интереснейшие проявления музыкальной культуры древней Армении. Среди прочих, в данной статье выделены те, которые связаны с интерпретациями историографических свидетельств. Исследование показывает, что многие истолкования Лисициан уникальны не только масштабом охвата историко-культурных пластов, но и смелыми, далеко идущими выводами, которые обогащают страницы армянской музыкально-исторической науки.

<sup>42</sup> Բատղերք հայոց, Վենետիկ, 1728, էջ 127:

<sup>43</sup> Սրբ. Լիսիցյան, 62վ. աշխ. հ. Ա, էջ 66:

<sup>44</sup> Բազմավեպ, 1850, էջ 52:

<sup>45</sup> Փ. Տեր-Մարտիրոսօն, *Տերրակոտы из Арташата (находки 1970)*, «Պատմա-քանակիրական հանդես», N 4, Եր., 1978, էջ 88:

## Կարինե ԲԱԶԵՅԱՆ

### ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԺԱՆԵԿԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Ալեքսանդրապոլում տարածված կանանց բազմաթիվ արհեստների շարքում տեղ է գրավում ժամեկագործությունը:

Ժամեկագործությունը ժողովրդական կիրառական գեղագարդման արվեստի ամենանուրը և միակ ճյուղն է, որով բացառապես օքաղվել են կանայք: Ժանյակը առանց կտորի կիրքի մետաքսյա, բամբակյա, բրոյա, մետայյա և այլ թեկրով ստեղծվող ցանցկեն գործվածք է:<sup>1</sup> «Ժանյակ» բառեզր (տերմինը) առաջացել է XIX դ. վերջին և կիրարվում է բացառապես օքական լեզվում: Արվեստներին և գիտությանը նվիրված իր բառարանում Մ. Քաջունին է առաջին անգամ օգտագործել այդ բառեզր, բացատրելով. «Ժանեակ», տեղ. բանելա. Անկուած թերեւ, երևելի, ծաղկենակար, և եզերքն ժամեկատր, ասեղնեգործ և թել ի թել: Ժանեակին յորիմեալը ի թելոյ կտաւոյ յարգոյը են յոյժ, և նորին իսկ են բուն ժանեակը».<sup>2</sup> Ժողովուրդը ժանյակի համար գործածում էր ինչպես հայերեն բարբառային, այնպես էլ օտարակեզր տերմինները: Հատկանշական է, որ այս դեպքում բառեզրերը տարբերվում են ժանյակի տեխնիկային համապատասխան: Միայն մեր ժողովրդին բնորոշ ասեղնագործ ժանյակները առավելապես հայտնի էին ասեղնագործ (համահայկական), ասդե բուրծ (Բարձր Հայք) և ճոր (Վան-Վասպուական) անուններով: Արևմտյան Հայաստանում ասեղնագործ ժանյակները հայտնի էին նաև «օյա» և «փարզ» օտարածին անուններով:<sup>3</sup>

Հայ կանայք և աղջիկները տիրապետել են ժանյակ հյուսելու գրեթե բոլոր եղանակներն՝ ասեղով, կեռասեղ-հելունով, որը Ալեքսանդրապոլում կոչվում էր «չանգալ», գորենակով, մեծ և փոքր նարութերով, գուլպայի ճաղերով («միլ»): Ալեքսանդրապոլում տարածված էին ժանյակի հիշյալ բոլոր տեսակները, սակայն, ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ այստեղ առավել սիրվածն ու կիրառված ասեղնագործ ժանյակն էր: Հայ ժողովրդական արվեստի հնուա գիտակ Ս. Դավթյանը հայկական ասեղնագործ ժանյակի մի քանի կենտրոնների թվում առանձնացնում է նաև Ալեքսանդրապոլի (Բարձր Հայքի) դպրոցը:<sup>4</sup>

Ալեքսանդրապոլի քաղաքային կենցաղում ժանյակն ուներ նույն հարգարժան տեղն ու նշանակությունը ինչ ասեղնագործությունը և դա է պատճառը, որ ժողովրդի մեջ դրանք ընկալվել են որպես մեկ ընդհանուր օքաղմունք՝ ձեռագործ անվանք: XIX դ. վերջին-XX դ. սկզբին ժամեկագործական մշակույթը Ալեքսանդրապոլում լայն տարածում և բազմազան գործածություն էր ստացել, ինչը պայմանավորված էր մի շարք գործուներով: Առաջինն ու կարևորագույնը կենոց ավանդական հագուստի համալիրում ժամեկագործ թանքանա-վարդի առկայությունն է, որը լինելով Բարձր Հայքի կանանց սովորական տարազի գլխի հարդարանքի բաղկացուցիչ նաև՝ իր ձևով և կատարման տեխնիկայով բացատիկ երևույթ է (նկ. 1): Այն իրենից ներկայացնում է օղակածն ճակատական՝ քունքերի վրա երկու անվածն բարձիկներով, որոնք պատված են թավշյա կտորով: Բարձիկներն ու դրանց միջև ընկած մակերեսը զարդարվում էին ասեղնագործ ժանյակով(օյա):<sup>5</sup>

Ժանյակները հյուսվում էին բազմագույն մետաքսյա թեկրով և շատ խիստ հյուսքով, որի ժամանակ ոռմբածն օղակ-անցքերը հորիզոնական թերով կիավում էին երկու փոքր եռանկյունների և հյուսքը ստացվում էր եռանկյունածն մանր անցքերով:<sup>6</sup> Վարդը զարդարվում էր գերազանցապես ծաղկեներով, տերևներով, երբեմն նաև բռչուններով: Ծաղկեները կատարվում էին հնարավորինս ռեալիստորեն, բնական գույ-

<sup>1</sup> Հայկական սովորական հանրագիտարան, հ. 4, Եր., 1978, էջ 278:

<sup>2</sup> Սամուել վարդապետ Քաջունի, Բառագիրը արտեստից և գիտությանց, Վենետիկ, 1891, էջ 645:


<sup>3</sup> Ս. Դավթյան, Հայկական ժանյակ, Եր., 1966, էջ 10:

<sup>4</sup> С. Д а в тյան, Армянские кружева и их распространение, М., 1964, стр. 2.

<sup>5</sup> Ն. Ավագյան, Հայկական ժողովրդական տարազը, Եր., 1983, էջ 72:

<sup>6</sup> Ս. Դավթյան, 62վ. աշխ., էջ 21:

Ներով ու ձևերով: Սիրված էին հատկապես մանուշակները, շոշանները, զանգակածաղկները, վարդերը, նարզանները, որոնք անպայման ամրացվում էին կանաչ ցողուններով և տերևներով կազմված դաշտի վրա: Որպեսզի ծաղիկները ամուր կանգնեն, թերթիկները չըուլանան և գեղեցիկ բացվածքով մնան, հաճախ դրանց հիմքում անցկացնում էին բարակ մետաղալար, որը փաթարվում էր կանաչ թերթի: Ծաղիկների և տերևների եզրերում ամրացնում էին ծիու մազ, որ ժանյակը տեսքը չկորցնի: Հատաքրիքի է, որ նախշին ռելիեֆուրյուն հաղորդելու համար ծիու մազը գործածվել է նաև ֆրանսիան ժանյակում:<sup>7</sup>



Նկ. 1

Վարդի համար պատրաստվող ժանյակները աշխատանքի նրբության և բարդության աշխատատար տեխնոլոգիայի պատճառով հասու չէին ամենքին, ուստի քաղաքում առանձնացել էին թանքանա գործող հատուկ վարպետներ, որոնք հայտնի էին ոչ միայն Ալեքսանդրապոլում, այլև նրա սահմաններից դուրս: Մրանք աշխատում էին տնայնագործական եղանակով, սակայն արտադրանքը դուրս էր հանվում շուկա և մեծ պահանջարկ ուներ հատկապես Շիրակի պատմազգագրական մարզի գյուղական քնակչության մեջ, որը մինչև XX դ. առաջին քառորդը շարունակում էր կրել ավանդական հագուստը:

Նման ասեղնագործ ժանյակները XIX դ. վերջին գործածվում էին նաև որպես եզրագարդ զիսաշոր-յազմայի համար: Յազմաները դաշագարդ, գունավոր նախշերով քառանկյուն ծածկոցներ էին, որոնք լայն տարածում ունեին Արևմտյան Հայաստանում: Հատկանշական է, որ Կիլիկիայում և Փոքր Հայքում դրանց ժանյակները հյուսվում էին գերազանցապես փոքր մակույկով, մինչեւ Բարձր Հայքում և դրա մշակույթը կրող ու շարունակող Ալեքսանդրապոլում՝ միայն ասեղով, ընդ որում, ժանյակի զարդանախշերը թե՛ գոյանու, թե՛ նախշերով կրկնում էին վարդի նախշերը: Յազմայի համար նախատեսված ժանյակե ժապավենները վարպետները գործում էին տասնյակ մետրով և վաճառում յազմայագործներին:


XX դ. սկզբին ժանյակը լայնորեն գործածվում է նաև եվրոպական նորածեական հագուստի մեջ, որը կրում էին քաղաքի մեծահարուստ ընտանիքների բարձրաշխարիկ տիկնայր և օրիորդները: Երևան, Ալեքսանդրապոլ, Ախալցխա, Ախալքալաք և այլ քաղաքներում երիտասարդների տարագում մեծ տարածում ստացավ նորատիպ, վեշի մասում ծալարուրքով շապիկը՝ եզրերն ասեղնագործ կամ ժամեկագործ երիզներով: Նման եզր էր ունենում նաև երիտասարդ կնոջ վարտիքը.<sup>8</sup>

Ալեքսանդրապոլում ժանյակի լայն տարածվածությանը նպաստող մյուս գործոնը դա քաղաքային նոր կենցաղի ձևավորումն էր, նոր տիպի բնակարանների կառուցումն ու դրանց ներսույթի նորովի հարդարումը: XIX դ. վերջից քաղաք մուտք գործած նորածեական կահույքն առաջացրեց ժանյակե և ժամեկագարդ իրերի նոր տեսակների՝ վարագույնների, ծածկոցների, սփոռցների, տակողների և այլ իրերի անհրաժեշտություն և կիրառություն: Ալեքսանդրապոլի ժանյակն իր ողջ բազմազանությամբ ու ճ-


<sup>7</sup> Հ. Բ ա ր յ օ կ օ վ ա, Զալադնու ազգային պատմական թանգարանու հայոց տարագի համակարգում, «Շիրակի պատմամշակութային ժամանակություն» համապետական Վ զիսաժողովի հիմնադրույթներ, Գյումրի, 2002, էջ 34-35:

<sup>8</sup> Ս. Պ դ ո ւ յ ա ն, Ներքնազգեստը հայոց տարագի համակարգում, «Շիրակի պատմամշակութային ժամանակություն» համապետական Վ զիսաժողովի հիմնադրույթներ, Գյումրի, 2002, էջ 34-35:


խորթյամբ դրսորվում էր հենց կենցաղային նոր իրերի մեջ: Առօրյա գործածորթյան ժանյակներն արվում էին տարրեր տեխնիկաներով և գերազանցապես սպիտակ գոյնի բամբակյա թելերով: Ասեղնազործ ժանյակներն առավելապես փոքր չափի իրեր էին. տակդիրներ՝ բաժակների, նրգամանների, ծաղկամանների տակ դնելու և վրան զցելու համար, ինչպես նաև փոքր ծածկոցներ՝ զարդարեղանների, ծեռագործի, հարդարանքի, ինքնաետի սեղանների համար: Դրանք տարրեր ծներ ունեին՝ կլոր, քառակուսի, ձվածե, շեղանկյուն և այլն (նկ. 2, 3, 4): Միրված ու տարածված զարդանախչը աստղածաղիկն էր, որը լրացվում էր երկրաչափական պատկերներով (նկ. 2, 3): Ինչպես ողջ Հայատանի, այնպես էլ Ալեքսանդրապոլի ասեղնազործ ժանյակների զարդահամալիրը խիստ ինքնատիպ է և բոլորովին տարրերվում է արևմտաեվրոպական և ուսական ժանյակներից: Առանձնահատկությունը կայանում է ինչպես զարդանախչերի, այնպես էլ դրանց դասավորման կարգի մեջ: Բուսական և երկրաչափական պատկերները դասավորվում էին համայնքներոն շերտերով և ոիրմիկ շարքերով: Ինչ ձև էլ ունենար ժանյակը՝ շրջանաձև (որն առավել ընդունվածն ու տարածվածն էր), քառակուսի թև օվալածե, անպայման ունենում էր կենտրոն, որի շուրջը տարրեր չափերի իրար հաջորդող շերտերում շարվում էին զարդանախչերը: Յուրաքանչյուր զարդաշրջանակ անջատվում էր մյուսից կամքակների, սյունիկների շարքերով կամ ցանցկեն հյուսքի շերտերով: Շատ հաճախ ժանյակը կազմվում էր առանձին գործված և իրար ամրացված վարդյակների (ապլիկացիա) ոիրմիկ շարքերից:<sup>9</sup> Սեծածավալ իրեր՝ ծածկոցներ, սփոռներ, փոքր վարագույններ, գործելու համար նախ հյուսվում էր ցանց, ապա լցվում տարրեր զարդապատկերներով:



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5

Ալեքսանդրապոլի ասեղնազործ ժանյակն իր զարդանկարների առանձին նախշերով ու հորինվածքներով մեծ նմանություն ունի կիրառական-գեղազարդման արվեստի այլ ճյուղերի և հատկապես ոսկերչության հետ: Ալեքսանդրապոլի մանրադրույթ գուգաքելի տեխնիկայով պատրաստված զարդերը մետաղյա ժանյակների տպավորություն են թողնում: Մեծ ընդհանրություններ կան նաև տարազի ոսկերել ասեղնազործության հետ:

<sup>9</sup> Կ. Բա զեյ ան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), տեսք, 1985, Լեմինական:

XIX դ. վերջին- XX դ. սկզբին քաղաքում լայն տարածում ուներ հելունագործ ժամյակը: Հերունը կամ կեռասեղը (չանցյալ) ամենատարածված և ամենահիմնացրծ ժամյակը: Եթե ասեղնագործ ժամյակի ժապավենները հայտնի էին օյա անոնով, ապա հելունագործ և գորենակագործները կոչվում էին հաշյա: <sup>10</sup> Հելունագործ ժամյակի իրերը հիմնականում մեծածավալ են՝ վարագույններ, անկողնու ծածկոցներ, բարձի ծածկոցներ և այլն: Առավել պարզ ու մատչելի տեխնիկայի շնորհիվ հելունագործ իրերը XX դ. սկզբից սկսեցին դուրս մղել նույնիսկ ասեղնագործ ժամյակներին: Այդ գործիքը հարմար էր ամենատարրեր հաստության թերթի համար: Այս դեպքում ևս գերակշռող սպիտակ և փղոսկրի գույնն էր: Քայի մեծածավալ իրերից հելունով գործում էին նաև ժապավեններ, որոնք գործածվում էին որպես եղանակարդեր անկողնու սպիտակեղենի և կանանց ներքնազգեստի համար:

XIX դ. երկրորդ կեսից Ալեքսանդրապոլում երևան եկավ նաև գորենակի ժամյակը:<sup>11</sup> Գորենակն իրենից ներկայացնում է բարձիկ և փայտե կոճիններ, որոնց վրա փարաբում է թերթ: Ժամյակ հյուսելու համար բարձիկի վրա ամրացնում են զարդանախշերի նկարները, որոնց վրա անցրեր են արված: Այդ անցքերում քորոցներ են ամրացվում ու դրանց շորջը փարաբում, պատում են թելերը որոշակի ուղղությամբ: Գորենակով հյուսում են ինչպես երկար ժապավենածու, այնպես էլ տարրեր շափերի առանձին ժամյակներ, որոնք իրար միացնելով ստանում էին խոշոր շափերի առարկաներ: Ժամյակի այս տեսակը կիրառվում էր որպես ծածկոց, տակդիր, վարագույր, ինչպես նաև օճիք: Ամենատարածված գործածությունն ունեին գորենակագործ ժապավենները, որոնք ծառայում էին որպես եղանակարդ անկողնու սպիտակեղենի համար: Գորենակի ժամյակը հյուսվում էր ինչպես բամբակյա, այնպես էլ մետաքսյա և վուշն ևս ու սպիտակ թեկրով:

Ալեքսանդրապոլում տարածված ժամյակի մյուս գործիքը մեծ նակույկն է (նաքոր): Վերջինս երկմաս գործիք է, բաղկացած ձողիկից՝ քրից, որի վրա հյուսվում էր ժամյակը և որի հաստությունով պայմանավորված էր ժամյակի անցրերի մեծությունը, ինչպես նաև երկու ծայրերում երկնի՝ եղանանման ձողից, որի վրա փարաբում է գործող թերթ: Այս գործիքը մարդկությանը հայտնի ամենահիմն գործիքն է, բանի որ սրանով հյուսվում է նաև ձկնորսական ցանցը: Մեծ նակույկի ժամյակը Ալեքսանդրապոլում հայտնի էր ֆիլե անոնով:<sup>12</sup> Մեծ նակույկով գործում էին խոշոր շափերի ժամյակ-ծածկոցներ՝ սեղանի, անկողնու, բարձերի, ինչպես նաև վարագույրների համար (նկ. 5): Գործածական էին նաև փոքր շափերի ժամյակները, որոնք ամրացվում էին գործվածքների վրա որպես զարդ: Այս տեսակի ժամյակը ևս հյուսվում էր առավելապես սպիտակ բամբակյա թեկրով: Ալեքսանդրապոլում հայտնի էին վարպետներ, որոնք գործում էին միայն ժամյակի ցանցը՝ պատվերով, որոնք առանձին անհատներ գնում էին և զարդանախշում ըստ իրենց ճաշակի:

Համեմատարար թիջ տարածում ուներ փոքր մակույկը (նաքոր): Այն քաղաք է մուտք գործել XX դ. սկզբից, ինչը կապված է արևմտահայերի և կիլիկիահայերի նասնավոր ներգաղործ դեպի քաղաք:

Ալեքսանդրապոլում ժամեկագործության զարգացմանը նպաստող գործոններից էր նաև օժիտի ինստիտուտը:<sup>13</sup> Ինչպես ողջ հայ ժողովրդի, այնպես էլ ալեքպողիների կենցաղում օժիտին մեծ կարևորություն էր տրվում: Յուրաքանչյուր ընտանիքի համար պատվի գործ էր հափոր պատշաճի և առավելագույն բազմազան օժիտի պատրաստումը: Օժիտը պատրաստում էին նախապես՝ մինչև անուսնանալը և աղջկա ձեռքով կարված, հյուսված ու ասեղնագործված իրերի առկայությունը պարտադիր էր, քանի որ վկայում էր նրա շնորհը, ճաշակը, վարպետությունը և այլն, որ հատկանիշները խիստ կարևորվում էին հարսնացու ընտրելիս:

<sup>10</sup> Կ. Բագեյան, ԴԱՆ, տեսորեր 1982, 1985, 1986, Ախալքալաք, Լենինական, Ախալցխա:

<sup>11</sup> Ս. Դավթյան, նշվ. աշխա, էջ 16:

<sup>12</sup> Կ. Բագեյան, ԴԱՆ, 1985:

<sup>13</sup> Է. Կարապետյան, Օժիտը հայոց մեջ, Եր., 1978:

Ալեքսանդրապոլում օժիտը ցուցադրվում էր ոչ միայն հարսանիքից հետո՝ փեսայի տաճը, այլև առաջ՝ հարսացողի տաճը և այս սովորույթը պահպանվել է մինչև օրս:<sup>14</sup> Օժիտի յուրաքանչյուր իրի ցուցադրությունն արվում էր մերձավոր կին ազգականների ներկայությամբ: Հյուրերը գովարանում էին հարսի և նրա մոր վարպետությունը՝ «տասը մատի տասը հոմարը», «տակի ծետները» և այլն, որն էլ հայ կնոջ և հայ աղջկա գերազոյն նախառակներից էր կյանքում: Թերևս օժիտի ցուցադրությունը, ստացած գովարանքներն ու օրինաճներն էին այն հիմնական պատճառը, որ հայ կանայք մեծ տեղ են տվել ծեռարվեստին և աղջկան դաստիարակել նույն ոգով: Դրանով կարելի է բացատրել քաղաքում գործող իգական դարպոներում և գիմնազիաներում ծեռարվեստի պարտադիր դասավանդումը: Կանանց արհեստների՝ այդ թվում ասեղնագործության և ժամեկագործության վարպետների պահանջարկն էր պատճառը, որ քաղաքում բացվեց արհեստագործական ուսումնարանը՝ առանձին մասնագիտությունների գծով վարպետներ և ենթավարպետներ պատրաստերի նախառակով.<sup>15</sup> Անհրաժեշտ է փաստել, որ Մեծ Եղեռնից հետո Ալեքսանդրապոլում բացված որբանոցներում ևս ձեռագործի դասականդմանը մեծ կարևորություն էր արվում: Շիրակի և Արագածոտնի մարզերում ասեղնագործ ժամյակի վարպետ-քանասացներից շատերը իրենց հմտությունը ձեռք էին բերել հետո որբանոցում:<sup>16</sup>

Ինչպես ասեղնագործության, այնպես էլ ժամեկագործության գործընթացում առաջացել էին մի շարք սովորույթներ, արարողություններ, որոնց մի մասն ուղղակի արտահայտում է ժողովրդի վերաբերմունքը ծեռագործի նկատմամբ: Ըստ իմ հայաբած դաշտային ազգագրական նյութերի, առանձնացվում են աշխատանքի սկզբի և ավարտի հետ կապված՝ ծիսական բնույթը ունեցող բարեմարթանքները, աշխատանքի ընթացքում արվող և ծեռագործի հաջող ընթացքը ապահովող գործողությունները, ասեղնագործության և ժամյակի նկատմամբ կիրառվող արգելանքները և ծեռագործը նկեղեցուն նվիրաբերելու սովորույթը:

Սովորաբար ամեն աշխատանք սկսելուց առաջ, վարպետն աղոքը էր անում՝ ուղղված ամենատարբեր սրբերին և Աստծուն: Սակայն այն առավելագոյնն էր դրսեվորում օժիտի համար արվող ժամյակների հյուսքի ընթացքում: Զետագործող աղջկան մադրում էին: «քարով ջխտվեա», «ջուստ մնաս» և այլն: Աշխատանքի ավարտից հետո ասում էին: «Աստված շնորհավոր անի», «Քարով բանեցնես, քող որախություն լինի» և այլն:<sup>17</sup>

Հայոց մեջ օժիտն ասեղնագործում էր ինքը՝ հարսացուն: Հաճախ ծեռագործն արվում էր խմբովի, այսինքն՝ հավաքվում էին հասակակից աղջկներն իրենց բանվածքներով և միասին գործում: Դա միաժամանակ մրցակցություն էր առաջացնում նրանց միջև, քեզ ով է ամենալավ գործողը: Գործմերացն ուղեկցվում էր երգերով, կատակներով և զրոյցներով: Որոշակի սովորույթներ և արարողություններ էին պահպանվել՝ կապված ծեռագործի հաջող ընթացքի հետ: Սրանք և ունեն ծիսական բնույթ: Առաջին հերթին դա կապված էր «չար աչքի» հետ: Նման համբավ ունեցող մարդկանց հանդիպելիս կամ նրանց տուն մտնելիս ձգուում էին աշխատանքը բարցնել, որ «աչքով չտա»: Նրանց զնալուց հետո, երբ գործն առաջ չէր զնում, անիծում էին «չար աչքի» տիրոջը, ապա ետևից աղ էին լցնում կրակի մեջ, ձախ ուսի վրայով երեք անգամ բրում ետ, իրենց կամբում, կամ վերջապես, աղոքել էին տալիս թե՛ իրենց և թե՛ ծեռագործը:<sup>18</sup>

Ինչպես հայտնի է, ասեղը, ասեղ-թեղը և ասեղով ծակելը ինքնին ունեն շարիսափան նշանակություն, շատ ժողովուրդների առասպելաստեղծ պատկերացումներում

<sup>14</sup> Կ. Բագեյան, Դաստիարակությունը և ժամեկագործությունը, 1985:

<sup>15</sup> Այդ մասին մանրամասն տես Կ. Բագեյան, Ասեղնագործությունը և ժամեկագործությունը Ալեքսանդրապոլի արհեստների համակարգում, Գյուղական աշխատություններ հ. 1, Գյումրի, 1998, էջ 111-118:

<sup>16</sup> Կ. Բագեյան, Ասեղնագործությունը, 1985:

<sup>17</sup> Նոյեմբեր:

<sup>18</sup> Կ. Բագեյան, Դաստիարակությունը և ժամեկագործությունը, 1986:

մեծ դեր խաղալով տիեզերական դևերին ոչնչացնելու գործում (սա կապվում էր մետա-դի՝ որպես շարիսափան միջոցի, պաշտամունքի հետ):<sup>19</sup>

Ժողովրդի մեջ հատկապես ընդունված էր եկեղեցուն և սրբատեղիներին շուշ-փա նվիրելը: Եկեղեցական անձեռոցիկ-դաստառուկը, ըստ Մաղաքիա Օրմանյանի, այն սպասքն էր, որը եկեղեցուն նվիրում էին հատկապես նոր ձեռագործի վարժվող օրիորդներն ու բարեպաշտուիիները՝ ակնկալելով ձեռագործի հաջողությունը:<sup>20</sup>

Այսպիսով, ժամեկակը Ալեքսանդրապոլի քաղաքային կենցաղում կատարում էր առօրյա-կիրառական, գեղազարդման-գեղագիտական, տոնական-հարգարժան, ծիսական, էթնիկական գործառույթներ, որոնցով էլ կարևորվում էր որպես ուրույն երևույթ ողջ մշակութային համալիրի մեջ:

## КУЛЬТУРА КРУЖЕВОПЛЕТЕНИЯ АЛЕКСАНДРОПОЛИЯ

*Резюме*

*K. Базеян*

Кружевоплетение -одно из самых любимых и распространенных женских занятий Александрополя. Это обусловлено некоторыми факторами. В первую очередь, кружево являлось частью женского национального праздничного костюма, налобная часть головного убора которого расшита разноцветными кружевными цветочками. Второй, немаловажный фактор - городской быт с его разнообразием и обилием мебели, для украшения которого изготавливались многочисленные кружевные изделия. Широкому распространению кружев способствовал также институт приданого, имевшего особое празднично-бытовое значение и считавшегося престижным культурно-бытовым явлением. На развитие кружевного дела в Александрополе большое влияние оказало открытие женских школ и училищ.

Женщины Александрополя владели разными способами изготовления кружев, но самым излюбленным являлись кружева из катушечных и шелковых нитей.

В бытовой культуре Александрополя кружевоплетение и кружевые изделия имели повседневно-бытовую, ритуальную, праздничную, престижную, эстетическую и этническую функции.

<sup>19</sup> Ա. Մ ա ե փ ա ն յ ա ն, Հայ ժողովրդական տարագի զարդանախշերի խորհրդինաստը,

թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 1996, էջ 12:

<sup>20</sup> Մ. Օ ր մ ա ն յ ա ն, Ծիսական բաժարան, Եր., 1992, էջ 71:

## Լեմս ՆԵՐՍԻՄԱՅԻՆ

### ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ՓԻԼԻՄՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսիական իմպերիալիզմի հետ պողիստիվիզմի փիլիսոփիայության փոխադարձ կապի հարցը շոշափում է բարդ և մինչև վերջ չուծված ընդհանուր խնդիր՝ հոգևոր և գեղարվեստական մշակույթի փոխադարձ շփման, դրանց փոխազդեցույթան ուղիների և միջոցների մասին:

Համաձայնենք, որ փիլիստիվիայությունը և արվեստը ներկայացնում են միասնական հոգևոր մշակույթի երկու գուգական շերտ: Այս ուղղությամբ վերլուծենք պողիստիվիզմի փիլիստիվիայության և իմպերիալիզմի արվեստի միջև եղած կապը, շփումը:

Այս երկու երկույթները, որ առաջացել են 19-րդ դարում, Ֆրանսիայում, անպայմանորեն դետերմինացվել են միասնական սոցիոմշակութային իրադրությամբ, որը մեզ հուշում է դիմել այդ ժամանակաշրջանի մշակութառորդի համարությունը:

Քանական, կտառքելագործված աշխարհակարգի լավատեսական կատարյալ ինարավորության, անձնավորության ազատ զարգացման հավատիմ փոխարինելու է զայխ այդպիսի նշանակության հասնելու անհնարինության գիտակցումը: Կարևորագոյն հոգևոր իմնախնդիր է դառնում ոչ թե արտաքին աշխարհի յուրացումը, այլ ընթացումն ու նրա նկատմամբ մարդու ցուցաբերած վերաբերմունքը: Հոգևոր ինքնազիտակցության առաջատար ձևեր են դառնում բարոյականությունը, արվեստը և փիլիստիվիայությունը:

Փիլիստիվական պողիստիվիզմն առավելագույնս է արտացոլում իրեն ժամանակակից զանգվածային գիտակցության մակարդակը: 18-րդ դարում միամիտ ռացիոնալիզմի վրա հիմնված գիտական պատկերացումների հեղարեկումը, անդրդեկի մնացած փիլիստիվայական դպրոցների տեսակետից բացատրության կարիք չունեցող նոր փաստերի և փոխադարձ շփումների հայտնաբերումներն անվտանություն ծնեցին ընդհանուր օրենքների վրա հիմնված կառուցվածքների նկատմամբ: Հասարակական տրամարանությունը, որն ավելի էր սուվոր սուրբեկտիվ փորձի ոլորտի մեջ, ստիպված էր լուծում գտնել այդ փորձի բացարձականացման մեջ:

Պարխողոզիզմի հիմնա վրա, որը 19-րդ դարի փիլիստիվիայության համար ստացել էր մեթոդաբանական նշանակություն, արվեստը դարձել էր հոգեբանական փորձի պողիստիվական կոնկրետությանը մոտիկ արտահայտության ձև: Արվեստի և փիլիստիվիայության այս փոխադարձ ասիմիլյացիան (ձուլումը) հանգեցրեց արվեստը նույնիսկ ինքնարտահայտնան համարժեք ձև ընդունելու տեսակետի: Այդ ժամանակաշրջանին է վերաբերում աստղիատիկ (զուգորդական) հոգեբանության ձևակորումը, որը հոգեբանական բարդ գործընթացները հանգեցնում էր պարզագույն տարրերի մեխանիկական զուգակցության և փորձարարական գեղագիտության, ենթադրում էր փորձարարական ուղղակի հետազոտությունների օգնությամբ գեղագիտական ընկալման օրինաչափություններն ի հայտ բերելու և դասակարգելու հնարավորությանը: Ենեկով այս տեսական նախադրյալներից՝ շատ հեղինակներ իմպերիալիստների տեխնիկական և գեղագիտական որոնումները բացատրում էին որպես պրակտիկ ծաղկագիտության բնագավառի գիտափորձ:

Դեռևս 1876 թվականին Դյուրանտին պնդում էր, որ իմպերիալիստները հայտնագործել են լուսի պատկերային տարրալուծումը և այդ գիտական հայտնագործություններն օգտագործել են իրենց գեղանկարչական տեխնիկայում, իսկ ավելի ուշ Գետշին Պիսարոյին հայտարարեց «գոյանի վերլուծող, որը բնությունը տեսնում է ինչոր այլիզմայի լուսի ներքո»: Համանման է հեջում իմպերիալիզմի այն սահմանումը, որ տվել է Սարգիս Շոմելենը Լարտիս բառարանում: Կատարվում են արվեստի ստեղծման փորձեր գիտական հիմնքներով: Ականավոր նկարիչների ստեղծագործական գյուտներն այդպես հանգում էին բավականին տարրական օպտիկական (տեսագիտական) փորձարարության: Այդպիսի դասողությունները ցույց էին տալիս, թե պողիստիվիզմն այն ժամանակ որքան լրջորեն էր իշխում հասարակական գիտակցության վրա՝ նվաճելով նաև գեղարվեստական շրջանակները:

Եթե լրջորեն համանմանություն որոնենք պողիստիկիզմի փիլիսոփայության և իմ-այլեսիտնիզմի գեղագիտության մեջ, ապա առաջին ընդհանրությունը հանդես կգա փաստի նկատմամբ սկզբունքորեն ընդգծված վստահության, գիտնականի կամ նկարչի անձնական ընկալմամբ ստացված իրականության հանդեպ վստահության միջև։ Իհարկե, իրականության գիտական և գեղարվեստական արտացոլման տարրերությունը շատ մեծ է, վերջինիս մեջ սուբյեկտիվ գործոնը միշտ բավական մեծ դեր է կատարել, մինչդեռ գիտության մեջ գործում էին, թվում էր, միայն օրյեկտիվ օրինաչափությունները։

Բայց գիտության մեջ պողիստիկիզմը և արվեստի մեջ իմպրեսիոնիզմն ըստ էության լուծում էին մեկ հասարակական հակասություն՝ Լուսավորության դարաշրջանի ռացիոնալիզմի և նրա ժամանակակից աշխարհի իրականության միջև։ Գիտության վերաբերյալ այդ հակասությունն արտահայտվեց քչերին պատկանող, ընդմիշտ օրենքով ասհմանված, աշխարհի ռացիոնալ կառուցվածքի նկատմամբ հավասի և օրենքների խախտման բազմաթիվ փաստերի ընդհանրման մեջ։ Հասարակական գիտակցության մեջ անլուծելի հակասություններ առաջացան բանական, արդարացի կառուցվածքի հնարավորության նկատմամբ հավաստի և կապիտալիստական աշխարհի ռեալությունների միջև։ Երկու դեպքում էլ հակասությունը լուծվում էր դարաշրջանի ոգով՝ ընդհանուրի նկատմամբ մասնավորի, կրթեկտիվայինի նկատմամբ անհատականի, օրինաչափության նկատմամբ փաստի առաջնության հիմն վրա։

Իմպրեսիոնիզմի արվեստում մարդը ներկայանում է, որպես հոգեբանական սուբյեկտ, որն աշխարհի հետ բարոյական պայքարի մեջ չի մտնում, ներդաշնակության ճգոյող շվիմամբ նրա հետ մտնում է զգայական հաղորդակցման մեջ։ Իմպրեսիոնիզմն այդ հաղորդակցումն իրականացնում է՝ հաղորդելով կյանքին դինամիկ լիցք, գեղեցիկը գոտնելով յուրաքանչյուր լուսե հանդիպող առօրյայում։ Կարելի է ասել, որ իմպրեսիոնիստների ցանկացած ստեղծագործության կենտրոնում ոչ թե օրյեկտն է, այլ սուբյեկտը, որպիսին հանդիսանում է ինքը՝ նկարիչը, հանդիսատեսին հաղորդելով ոչ այնքան առարկայի պատկերը, որքան իր հոգեկանի վրա այդ առարկայի բողած ազդեցությունը։

Պողիստիկիզմը փիլիսոփայությունից վտարեց բնությանը և հասարակությանը ներհատուկ դարավոր, մնայուն և անփոփոխ օրենքների մասին պատկերացումները։

Իմպրեսիոնիզմն արվեստում կործանիչ հարված հասցրեց գեղեցկության և ներդաշնակության «հավերժական և անփոփոխ» օրենքների մասին պատկերացումներին։ Այդիստեղ, փիլիսոփայական պողիստիկությունը, ինչպես և իմպրեսիոնիզմն արվեստի բոլոր դրսուրումներում, արտացոլում էին 19-րդ դարի վերջերին բնորոշ ստվրական սիմենտների և պահանջների շղթայից անձնավորության ազատագրման ոգին, անհատական ձեռներեցության և պայմանականություններից կախված ազատության ոգին։

Իմպրեսիոնիստների ստեղծագործությունները՝ ինչպես գեղանկարչության, այնպէս էլ երաժշտության գծով հաճախ հանդիմանության էին արժանանում հստակ կոմպոզիցիայի բացակայության, պատկերվող օրյեկտի պատահական ընտրության համար։ Այդ մեղադրանքներն ինչ-որ չափով հերքվում էին հետինակների և նրանց ժամանակակիցների ելույթներում, որոնք ցույց էին տալիս, որ կեղծ «պատահականությունը» հաճախ երկարատև աշխատանքի և մանրազնին բնարության արդյունք է։ Այնուամենայնիվ, ճույնիսկ ամենամակերեսային համեմատությունը, ասենք՝ Կորոյի և Սոնեի բնանկարների, երևան է հանում ապշեցուիչ տարրերություն պատկերվածի վերաբերյալ։ Կորոյի արծարափայլ լանդշաֆտները՝ իրենց մոխրականաշ կամ դարչնագրույն երանգներով, դեռ իինա էլ երազում են իին վարպետների հոգեկանի մասին, մինչդեռ իմպրեսիոնիստները նվաճում են ֆիզիկական մերկ տարածությունը որպես փաստ։ Ավելի պարզ ասած, ուսախատական բնանկարում պատկերված ճույնիսկ միանգամայն կրնկրեալ վայր հետամուտ է ստեղծողի մոտարությանը՝ այդ կրնկրետության մեջ փնտրելով ինչ-որ ընդհանրացնող գաղափար։ Իսկ իմպրեսիոնիստի համար խոտի բարդոցը (դեզը) պարզապես խոտի դեզ է, ոչ թե խոտի գաղափար։ Ավելին, դա դեզ է որոշակի վայրում, տարվա կամ օրվա կրնկրեալ պահին։ Ընդհանրացումը ստեղծվում է ոչ թե օրյեկտի «ամփականացմամբ», այլ միևնույն սյուժետի բազմապա-

տիկ կրկնությամբ (որն այնքան բնորոշ է հատկապես իմպրեսիոնիստներին՝ տարբեր լուսավորման, մթնոլորտի վիճակի, տարվա տարբեր եղանակների պայմաններում...).

Հետամուտ լինելով պատկերված օրյեկտի նկատմամբ վերաբերմունքի դիալեկտիկային, դժվար չէ նկատել, որ այն լիովին համապատասխանում է հասարակական գիտակցության դիալեկտիկային, մասնավորապես, գիտական մեթոդաբանությանը։ Այդ իմաստով 18-րդ դարի ակադեմիականությունը լիովին համապատասխանում է դեկարտյան մտածողության ֆիզիկական դետերմինիզմին։ Ինչպես 18-րդ հարյուրամյակի գիտնականի համար ցանկացած երևոյթ ենթարկվում է խիստ պատճառահետևանքային կային, որն արմատավորված է կյանքի հավերժական և անփոփոխ օլոնքներում, այնպես էլ այդ դարաշրջանի ցանկացած նկարչի համար ուզած պատկեր որոշ ընդհանուր գաղափարի արտացոլում էր միայն։ Այդ պատճառով էլ ակադեմիական գեղանկարչության մեջ իշխում էին «սուրբ աղբյուրներ՝ լողացող հավերժահարսներով», իսկ ակադեմիան ավարտողները կտակի վրա նկարում էին տրված սյուժեները։ Ավելին, բուն կյանքը, նրա ընթացքի նորմաները թելադրվում էին նույնալիսի անհայտ օրենքներով ու կանոններով։

Ծփորվում են դերերը, վկայում են դեկորացիաները։ Հավերժական անսասան կարգի նկատմամբ հավատը ենթարկվում է շարունակական հարվածների ինչպես հասարակական կյանքում, այնպես էլ գիտության մեջ։ Վերջինս նոր հենարան է գտնում փոխադարձարար միմյանց լրացնող երկու կոնցեպցիաներում (ըմբռնումներում)։ Առաջինը հիմնված է մարավելյան վիճակագրական սկզբունքի վրա։ Եթե անկարելի է կանխագուշակել առանձին մասնիկի վարքը (ընթացքը), հարկավոր է անցնել դրա զանգվածի վարքի ուսումնափրությանը, որտեղ անհետանում են պատահական տարրերությունները։ Այս մոտեցումը փայլուն արյունքներ տվեց մոլեկուլյար ֆիզիկայում և թերմոդինամիկայում, բայց չէր կարող բացատրել օպտիկայի և (հետագայում) միջուկային ֆիզիկայի շատ երևոյթներ։ Եվ միայն քվանտային սկզբունքը, որը մասնիկների մեծ խմբերի վիճակագրությունը զուգակցում է զանգվածի՝ «մեկ, եզակի» մասնիկի վարքի ենթրօքայի վերլուծության հետ, հնարավորություն տվեց տեսությունը հաշտեցնել փորձի հետ։ Այդ իմաստով իմպրեսիոնիզմն ասեն կանխատեսեց հեղափոխությունը ֆիզիկայում, նախապատրաստեց մտքերն ու զգացումներն առանձին օրյեկտի՝ նրա բոլոր դրսորումների բազմազանությունն ուսումնասիրելու անհրաժեշտության նկատմամբ, մինչդեռ դասական իրատեսությունը կանգ առավ վիճակագրական նակարդակում՝ անհատականը հանգեցնելով տիպականի արտահայտման։

Եվ «դասակարգային» սկզբունքի վրա հիմնված համակարգերի խորտակումը հարկադիր դիմել անհատականությանը, առանձին մարդում՝ նրա հայացքների, ձրգոտումների, սպիրուլյների, փորձի միջոցով, մի խոսքով, այն ամենով, ինչը միավորվում է «մենտալիտետ» (մտածելակերպ) հասկացությամբ, ըմբռնելու մարդկային ընկերակցությունների իմաստը և նպատակները։

## ОБЩНОСТЬ ИСКУССТВА И ФИЛОСОФИИ

— Резюме —

— Л. Нерсисян —

Философия и искусство представляют собой два параллельных пласта единой духовной культуры. В статье анализируется взаимосвязь между позитивистской философией и искусством импрессионизма.

Ова эти явления, возникшие во Франции в 19-ом веке, безусловно были детерминированными единой социокультурной ситуацией, что обращает нас к краткой характеристике культуросферы этого периода.

## Հայրական ԱթԱՆԵՍԱՆ

## XIX ԴԱՐԱՎԵՐՋԻ ԵՎ XX ԴԱՐԱՍԿՂԲԻ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐՆ ՈՒ ՌՈՒՄ ՊԵՐԵԴՎԻԺՆԻԿՆԵՐԸ

XIX դ. Կերպարվեստը դատնում է ազգի կազմավորման գործընթաց ապրող հայ ժողովոյի ինքնազիտակցության արտահայտություններից մեկը: Կերպարվեստի հայկան դպրոցի ձևավորումը նախևառաջ կապված էր բնանկարի ժանրի հետևողական զարգացման և առաջին պատմական թեմաներով կոնվոլցիաների երևան զարության հետ: Այն պայմանավորված էր նաև դիմանենկարի պվանությունների վերափոխմանը և նրանում բոլորվիմ նոր որակների դրսարձմանը: Չպետք է նորանալ, որ մինչև XIX դ. առաջին կեսը հայկական կերպարվեստը չուներ հայրենի բնությունը պատկերող բնանկարային նկարչություն: Մինչև 60-ական թթ. բնանկարը կապված էր գերազանցապես կենցաղային նկարչության, սուժետային պատկերների ու դիմանենկարչության հետ:

Հայ նկարչության համար, որն անցել էր պատմական զարգացման հսկայական ճանապարհ, բնանկարը դարձավ ոչ միայն բնույթյան գեղագիտական բացահայտման, նրա՝ որպես գեղեցիկի հաստատման միջոց, այլև հայրենասիրության, հայրենի երկրի ու ժողովրդի հանդեպ սիրո դրսերման ծև: Բնույթյան ընկալումը, որպես հայրենիքի մարմնավորում, ձևավորեց հայկական բնանկարի կարևոր հատկանիշներից մնկը՝ այն ավելի մեծ պլանով, մասշտարային, նույնականացնելով տեսնելու գծումը: Իհարկե, որան նպաստում էր նաև հայկական բնաշխարհն իր անկրկնելի գեղեցկությամբ. իր վեհանքստ լուսներով, անդամախոր ծորերով, ալպիկական մարգագետնիներով ու արագահոս գետերով: Այստեղից էլ՝ հայկական բնանկարի ժանրի ծգուստը դեպի կոմպոզիցիոն պատկերային ձևերը, որոնք նկատելի են նույնիսկ պարզ էտյուդների մեջ: Հայկական բնանկարը իր զարգացումը սկսում է որպես էպիկական բնանկար և իր այս հատկանիշով էլ դառնում է ոչ միայն իր ժողովրդի հայրենասիրական զգացմունքների, իր հայրենիքի նկատմամբ ունեցած վեհ պատկերացումների, այլև դարերի խորքից եկող ազգային բարձր գեղարվեստական ավանդների կրողը:

Եր կայացման ճանապարհին հայկական բնանկարը անխուսափելիորեն պետք է ազդվեր բնանկարի այլ դպրոցներից, հատկապես ռուսականից: IX դ. հայ նկարիչների գերակշիռ մասը իր մասնագիտական կրթությունը ստանում էր Սովորակայում և Պետքրուրում: Այդ ժամանակաշրջանը համբնված էր ռուսական մշակույթում գեղարվեստական հոսանքներից մեկի՝ Պերեդվիժնիկուրյան գործունեության հետ, որը մեծ ավանդ ունի դեմոկրատ ստեղծագործական ուժերի զարգացման և ազգային շատ գեղարվեստական դպրոցների ստեղծման գործում: Զնավորվելով որպես Սովորակայի ու Պետքրուրովի մշակութային առաջավոր մտքի դարրենոց՝ Պերեդվիժնիկուրյան ընկերությունը կարծ ժամանակում վերածվում է համառուսաստանյան կազմակերպության, որի գործունեությունը պատմության մեջ առաջին անգամ նպատակառդրված էր ոչ միայն ռուս, այլ նաև Ռուսաստանի մյուս ժողովուրդների գեղագիտական զարգացմանը:

Պերեդվիժնիկների համար զլիսարք և միակ թեման ժողովրդի կյանքառական գործարքացաւը։ Պերեդվիժնիկների համար զլիսարք և միակ թեման ժողովրդի կյանքն էր՝ իր հասարակական պատմական ու բարյագեղական բազմապիշի կողմներով։ Անգամասիտի է նրանց գործունեությունը ժողովրդական կրթության ասպարեզում։ Պերեդվիժնիկների մանկավարժական հայացքները, որոնցով դաստիարակվել է նկարիչների ոչ մեկ սերունդ, արտահայտում էին նրանց գեղագիտական ծրագրերի եռթյունը և դրա անբաժանելի մասն էին կազմում ձևավորվելով և ամրանալով սալունային ակադեմիզմի դեմ պայքարում։ «Նույնիսկ Ակադեմիայի հետ բացահայտ բնուհարումներով»։<sup>1</sup>

Երիտասարդ Ակարիչներին քննադատական ռեալիզմի ոգով դաստիարակելը պերեղվիծնիկների ծրագրի անկյունաքարբ էր: Դա իր ձևակերպումն է ստացել քնության ռեալիստական վերաբարդման ուսուցման մերողների Ծխայակովի տեսական մշակումների մեջ, ինչը, ըստ Ռեակին՝ «քարձը և հաստատուն դարոց էր»:<sup>2</sup> Պերեղվիծների համար այս պահանջման մեջ առաջ է գալիք այս գործառությունը:

<sup>1</sup> Н. Е з е р с к а я, *Передвижники и национальные художественные школы народов России. М., 1987, стр 9.*

<sup>2</sup> И. Репин, Далекое и близкое. М., 1953, стр 421.

նիկները բնությունը համարում էին ոչ թե զուտ ուսուցողական մոդել, այլ գտնում էին, որ այն կյանքն է՝ իր բազմակողմանիությամբ, իր դրսևորման առանձնահատկություններով ու հակասություններով։ Սակայն կողմնորոշումը դեպի կյանքի կոնկրետ, իրական դիտարկումները չեր նշանակում չոր փաստագրում, տեսածի ճշգրիտ վերարտադրում, որը սպասում էր աշակերտին դարձնել տեսածի ստրուկը, այլ որպես առաջնակարգ պահանջ առաջադրվում էր նյութի գիտակցական, ստեղծագործական իրացումը, նրանում համեմատաբար տիպականի, սեփական ընկալման բացահայտումը։ Վերջինս ապահովում էր ուսանողի ինքնուրույն գեղարվեստական մտածողության զարգացումը, ճևավորում էր վերաբերմունք շրջապատող իրականության նկատմամբ։ Այս ամենը պետք է նայաստեր ունախստ, դեմոկրատ նկարչի դաստիարակմանը։ Այս հայացքներից էին ենում առաջին մանկակարծ ավերելվիժներները, որոնք 1870-1890-ական թթ. դասավանդում էին Մոսկվայում ու Պետերբուրգում, որտեղ էլ իրենց նկարչական մկրտությունն են ստացել հայ անվանի նկարիչներից շատերը՝ Ե. Թագլուսյանը, Վ. Սուրենյանը, Դ. Օքրոյանը, Հ. Արծարքանյանը, Ս. Առաքելյանը և այլոր։

Հայ կերպարվեստում բնանկարի ազգային դպրոցի ստեղծման գործում իր անգնահատելի ներդրումն ունի Գևորգ Բաշինջառյանը։ Նրան էր վիճակված հարթել այն ուղին, որով հետազոտում անցնելու էր հայ բնանկարիչների մի ամբողջ սերունդ։ Բաշինջառյանը հայրենի երկրի բնանկարը իր համար դարձրեց ոչ թե սովորական տեսա, այլ գեղագիտական խնդիր։ Հայ կերպարվեստում մինչև անցյալ դարի վերջին տասնամյակը բնանկարը զոյտքյուն ուներ որպես ուղեկցող դեկորատիվ մոտիվ սյուժետային պատկերներում և դիմանկարներում։ Բաշինջառյանը վերջ տվեց այդ պայմանականությանը՝ հայկական նկարչության մեջ նորարար դառնալով իր բնանկարչության «քովանդակությամբ» ու ոճական առանձնահատկություններով։<sup>3</sup>

Բաշինջառյան նկարչի ստեղծագործական ուղրու ձևավորման վրա նշանակահց է եղել Պետերբուրգի ակադեմիայում նախ ավերելվիժների Կ. Կորոտի, ապա Ա. Կուինջի ազդեցությունը։ Վերջինին հետ է կապվում նրա գործերում լուսնյակ գիշերների մոտիվների ի հայու զալը։ Հազիկ թե նկարիչը տեսած չիներ Կուինջիի «Լուսնյակ գիշերը՝ Դնեպրի վրա» բնանկարը։ Բաշինջառյանի «Սևանը գիշերին», «Արովյանի տունը», «Գիշեր Օքրածալայում»-ը արված են Կուինջիի աշխատանքների անմիջական տպավորության տակ։ Հայրենի բնությունը նկարելու նրա անհագորդ ծարավը ստիպում էր հայրենիքից հեռու ապրող նկարչին աշխատելու հիշողությամբ, որը մի կողմից կարծես հետացնում էր հայրենի բնաշխարհի պատկերման հնարավորությունը, մյուս կողմից՝ զգալիորեն սահմանափակում էր նրա ստեղծագործական թեմատիկան՝ հիմնականում Մևանով ու Արարատով։ Առաջինը հենց նրա արվեստում են երկգագար Արարատն ու կապրուտայշա Մևանը դառնում կորցրած ու վերագուած հայրենի երկրի խորհրդանշները և նրա ստեղծագործություններում («Արարատը մշուշապատ օրը», «Արարատը և Արաքսը», «Արարատը և Հրազդանի ճորը» և այլ) հայտնվում բազմաթիվ տարբերակներով՝ թեև դրանք ստեղծելիս նկարչին հաճախ նժկվար է եղել պահպանը գեղարվեստական անհրաժեշտ որակը։ Բաշինջառյանը առաջին հայ նկարիչներից էր, որը բնանկարը դիմեց ոչ որպես սովոր ինտիմ, անձնական տրամադրությունների, զուտ բնության մի անկյունի լոկալ արտահայտություն, այլ բնության որպես կենսական երևոլիք, գեղարվեստական բնականան ու արտահայտման հնարավորություն։

Գ. Բաշինջառյանի գեղարվեստական հայացքների շարունակողն ու զարգացնող եղավ Եղիշե Թաղլուսյանը։ Իր գործերի գեղարվեստական նպատակապացությամբ և գունանեկան որոնումներով Թաղլուսյանը հարում էր ավերելվիժների «Երիտասարդ նկարիչների խմբին»։<sup>4</sup> Եվ դա օրինաչափ էր. այս տարիներին, երբ նա սովորում էր Մոսկվայի Գեղարվեստի ուսումնարանում, տեղի դասախոսական կազմում առավելապես պերելվիժների էին՝ Պոլենով, Մակովսկի, Պոյանիշնիկով<sup>5</sup> և որիշներ։

Թաղլուսյանի ստեղծագործական ուղրու հետազա ձևավորման վրա լրաց ազդեցություն ունեցավ Վ. Պոլենովը։ «Պոլենովը եղել է նրա ուղեցույցը դեռ աշակերտական

<sup>3</sup> Հ. Բարինդջառյան, Գ. Բաշինջառյան նշանակած գործությունները, Մ., 1986, ս. 5.

<sup>4</sup> Ո. Դրամբյան, Եղիշե Թաղլուսյան, Եր., 1955, էջ 25:

<sup>5</sup> Հ. Լմիւրեա, Մոսկովսկու պատմությունների էին՝ Պոլենով, Մակովսկի, Պոյանիշնիկով<sup>5</sup> և որիշներ։

վաղ տարիներին, նրա ազդեցությունն է կրել նաև ստեղծագործական առաջին տարիներին՝ մինչև իր կյանքի վերջը համարելով նրան իր իդեալը».<sup>6</sup> Բարեկամությունը Վ. Պոլենովի հետ, նպաստեց նկարչի ոչ միայն նաև նախադասական, ստեղծագործական անհատականության, այլև կյանքի նկատմամբ նրա հայացքների, նրա արվեստի ձևավորման, նրանում հայրենիքի, իր հարազատ ժողովրդի հանդեպ սիրո զգացմունքի դաստիարակման գործում: «Պոլենովը շատ քան տվեց իր կրտսեր քարեկամին, տվեց թերևս ամենազիշավորը՝ աշխատասիրություն, աներերություն, սաստիկ հետաքրքրասիրություն ոչ միայն աշխատանքի, այլ այն հոգիչ երևոյթի նկատմամբ, որ կյանք է կոչվում» - գրում է Ռ. Դրամբյանը:<sup>7</sup>

Հայրենիքն անսահման սիրող նկարչին չեր կարող չհուզել 1890-ական թթ. Թուրքիայի հայահալած քաղաքականությունը: Նրա «Դեպի պանդստություն» նկարը դրա լսկագույն ապացույցն էր: Հեղինակը ստեղծել է դրամատիզմով լի մի պատկեր՝ հայր և որդի օտարություն մեկնելուց առաջ եկել են հրաժեշտ տարր հարազատ շիրիմներին: Նրանց տաճում է ոչ միայն հարազատ շիրիմներին այցելելու հնարավորությունից զրկվելու, այլև հայրենիքից ընդմիշտ հետանալու ցավալի փաստը: Այս աշխատանքը իր բովանդակությամբ ու արձարձած խնդիրներով՝ լիովին համահունչ էր Ընկերության առաջարքած գաղափարներին: Պոլենովի հետ հաղորդակցվելը դրական ազդեցություն ունեցավ նաև Թաղլուսյանի՝ որպես բնանկարչի կազմակորման գործում: Նրա էտյուդներն ու բնանկարները դարձան ավելի հյուրեղ, ոգեշնչված, լույսով ու գույնով հազեցած, հարուստ գունաշարով («Արագածը Էջմիածնից», «Արարատը հունիսին» և այլն):



Ե. Թաղլուսյան, «Դեպի պանդստություն»

Եթե Մովսեսյան տարիները արգասարեր էին նկարչի համար և նպաստում էին նրա գեղարվեստական ակտիվ գործունեությանը, ապա Թիֆլիսում նրա նկարելամկը «անհանդուրժելի նորույթ էր»:<sup>8</sup> Նկարիչը բախվեց տգիսության պատճեշին, շուրջը ստեղծված հեղձուցիչ միջավայրը խնդրում էր նրա: «Հանճարն ու ամրոխը» նկարում պատկերված է այդ անտանելի միջավայրից փախուստ տվող հանճարը, որին հետապնդում է ամրոխը: Կոմպոզիցիայի հիմքում նկարիչը դրել է անհատի (հանճար) և շրջապատի (ամրոխ) ողբերգական հակամարտությունը, որից միակ փրկությունը հանճարի հուսահատ փախուստն է: «Հանճարն ու ամրոխը» հոգեբանական խորը դրամատիզմով հագեցած սյուստային պատկեր է: Ռուսական առաջադեմ մտավորականության հետ Թաղլուսյանի հաղորդակցվելն ու արտասահմանում հաճախ շրջագայելը, պետք է նպաստեին նրա արվեստում ինպրեսիոնիստական ու սիմվոլիստական գեղարվեստական միջոցների ի հայտ գալուն. «Սոնետ», «Զանգյուրիում» աշխատանքները այդ տեսակետից դարձան նրա ամձնական ապրումների արտահայտությունները:

<sup>6</sup> Ե. Մարտիկյան, Հայկական կերպարվեստի պատմություն, հ. Գ, Եր., 1983, էջ 22:

<sup>7</sup> Ռ. Դրամբյան, Զշու, աշխ., էջ 31:

<sup>8</sup> Նոյն տեղում, էջ 111:

Չնայած տրամադրության վայրէջքներին ու վերելքներին՝ նկարիչը մի բանում մնաց անսասան. նա անսահման սիրում էր իր հայրենիքը, երազում էր ստեղծագործել իր հայրենի երկրում և հավատում էր, որ հայրենի արվեստի հնադարյան սերմերը կծլարձակեն և նոր ծաղիկներ կտան: Եվ չէր սխալվում, որովհետև նրա գեղարվեստական ավանդները պետք է շարունակեին նրա հետևորդները՝ գեղանկարիչներ Կայֆաշանը, Օքրոյանը, Սարյանը, որոնք, շարունակելով մեծերից ծառանձած պատգամները, իրենց նոր խոսքն էին ասելու և նոր որակ էին բերելու հայ կերպարվեստում:

Խոսել XXդ. առաջին կեսի հայ նկարիչների մասին և չանդրադառնալ Հ. Արծարանյանին, նշանակում է անտեսել մի շատ կարևոր փաստ՝ հայկական դիմանկարի ժամբում ունեցած ձեռքբերումները: Արծարքանյանի ուսանողական տարիները համընկան Սոսկվայի Գեղարվեստի ուսումնարանում Վ. Սերովի դասավանդման շրջանի հետ: Այնային տաղանդավոր նկարիչ, ինչպիսին Սերովն էր, չէր կարող իր ազդեցությունը չըռնել Արծարքանյանի ստեղծագործական ուրու ճևավորման վրա, նամանականը, որ Արծարքանյանը նախընտրել էր դիմանկարի ժամբը: Սերովի ստեղծագործությունների անմիջական տպավորությամբ են արված նրա լավագույն «Մ. Սարյանի դիմանկարը», «Աղջկը դաշնամուրի նոտ», «Երիտասարդ աղջկա դիմանկարը» կտավները: Չնայած սրանցում ակնհայտ է ոճական նմանությունն ուսուցչին, այնուամենայնիվ նրան հաջողվել է պահպանել իր անհատականությունը թե կոմպոզիցիայի և թե գունային կոլորիտի կառուցման հարցում օժտելով դրանք ազգային հատկանիշներով:

Արծարքանյանը իր աշխատանքներում շարունակում է կյանքի արտացոլման պերեդվիժների ավանդույթները: Կասկած չի հարուցում այն փաստը, որ Արծարքանյանի «Կնոջ դիմանկարը պարտեզում» աշխատանքը մտահղացված է Սերովի «Արևով լուսավորված աղջկիվ» նկարի նմանությամբ և համարյա հետապնդում է նույն նպատակը: Նկարիչը վրձնել է այգում նատած, արևի շողերով ողորված մի կերպար: Նկարչի նպատակը հավանաբար, ոչ թե պարզապես կանացի դիմանկար ստեղծելն է, այլ բացօրյա պայմաններում լույսի ու սովերի, լույսի ու գոյների խաղը: Լույսի ու գոյնի, կոլորիտի որոնումները նկարչին ուղեկցեցին նրա ողջ ստեղծագործական լյանքում: Նակատագիր քմահաճույքով ստեղծագործելով հայրենիքից հետո՝ իր ստեղծագործություններում («Հրդեհ հայկական գյուղում», «Հիվանդի նոտ», «Արցունի հովիտ», «Ավերակների մեջ», «Օրորոցի նոտ») կարողացել է վերարտադրել տառապած ու հայածված, սոցիալական ծանր պայմաններում իր գոյությունը մի կերպ պահպանող բազմազարշար հայ ժողովրդի կյանքը: Արծարքանյանը ստեղծագործել է շատ քիչ՝ ընդամենը երկու տասնամյակ, այնուամենայնիվ մեզ ժամանգործյուն հասած նրա նկարներից կարելի է եզրակացնել, որ նրա արվեստը նոր էջ էր հայ կերպարվեստում իր նկարելաձևով, գեղանկարչական մտածելակերպով ու ոճարտահայտչամիջոցներով:

XIX դ. երկրորդ կեսի հայ կերպարվեստում երևույթ եղավ Վ. Սուրենյանցի գեղարվեստը, «խոշորագույն գրաֆիկ ու գեղանկարիչ, որը մեր կերպարվեստը հարստացրեց ոչ միայն նոր ժամաներով, ձևերով ու հնարավորություններով, այև ավելի շատ քան իր ժամանակակից հայ նկարիչներից որևէ մենքը, ընդգրկեց հայ ժողովրդի ներկայի ու անցյալի թեմաները, մենքնարաններով դրանք մեծ ու նորարար արվեստագետին վայել խորությամբ ու ստեղծագործական վարպետությամբ».<sup>9</sup> Նա առաջինն էր Անդրկովկասում, որ դարձավ (1910թ.) Ընկերության ամերամ:<sup>10</sup> Սուրենյանցը անընդհատ հաղորդակցում էր պերեդվիժների հետ, ներքաշված էր նրանց որոնումների ու գիտափորձերի մեջ: Բայց այս բոլորը ամեննեկին չէին խանգարում, որ նկարիչը իր ստեղծագործական որոնումների թեմա դարձներ ազգայինը, իր ժողովրդի պատությունը, նրա հոգսելը ու խնհերը: Սուրենյանցը պարբերաբար մասնակցում էր Ընկերության ցուցահանդեսներին և ներկայացնում էր այնպիսի գործեր, որոնք իրենց բոլանդակությամբ, առաջ քաշած խնդիրներով ներդաշնակ էին նրանց զաղափարներին: Ընկերութան կազմակերպած 22-րդ ցուցահանդեսում Սուրենյանցը մասնակցում է «Լքվածը» գործով: Այն անմիջապես գրավում է հանրության ուշադրությունը և արժանանում մամուլի

<sup>9</sup> Վ. Հարությունյան, Վարդեն Սուրենյանց, Եր., 1960, էջ 49:

<sup>10</sup> Հ. Ե զ ե ր ս կ ա յ, Պերեվիժնիկ և նացիոնալի հայության հայության պատությունների մասին, Մ., 1987, ստ 239.

դրվագանքին: «Լքվածը» պատկերում Սուրենյանցը կարողացել է դնել այնպիսի խոր ու անմիջական մարդկային կարեկցամբ, այնքան սեր ու սիրու, որ չի կարելի այն դիտել ու չխուզվել, չպարուրվել նկարչին համակած վշտագին զգացնունքներով: Եկեղեցու փակ դռան առաջ, ուստի կրծքին հակած՝ նստած լայն է մի փոքրիկ աղջիկ: Ուրքերի մոտ ընկած է գլխաշորի մեջ փաքաքված նրա ամբողջ հոլոյթ: Սա այն հայ որբուիին է, որն անցել է տափի ու կրակի միջով ու չի գտել մի կարեկից սիրու: Անգամ եկեղեցու դռու գոյն է նրա առաջ: Որբուին կերպարում խոտացված է հայ ժողովրդի դառը ճակատագիրը: Ժամանակակիցներից մեկը «Լքվածը» աշխատանքի համար գրում է. «Նկարելու ձևի մանրակրկիտորյունն ու յորօրինակությունը այս նկարչի մոտ վկայում են գեղանկարի մեծ վարպետին»:<sup>11</sup>

Ընկերության 23-րդ ցուցահանդեսի ուշագրավ գործերից մեկը դարձավ «Ոտնահարված սրբություն» նկարը: Սուրենյանցի այս գործը ներգործման խոշոր ուժով օժտված մի վավերագիր է հայ ժողովրդի ութեազուրյան մասին: Թուրք ջարդարարները մտել են հնամենի վանքը, կողոպտել ու ավերել, սպանել վանականին ու հետացել՝ վանքում բռնելով իրենց սուսկալի ոճրագործության հետքերը: Նկարիչը հանդիսատեսի ուշադրությունը հրավիրում է ոչ թե սպանված վանականի, կողոպտված եղեկեցու, այլ

կոմպոզիցիայի կենտրոնում բավկած գրքերի ու մազաղաբների՝ դարերի ընթացքում հայ ժողովրդի ստեղծած մտավոր հարստության խորհրդանշների վրա: «Ոտնահարված սրբություն» նկարում Սուրենյանցի նպատակը սուլթանական Թուրքիայի կողմից հայ ժողովրդի մշակութային ժառանգության ոչնչացման փաստի արձանագրումն է: Երբ աերեղվիժների 24-րդ ցուցահանդեսում երևաց «Պատաճի Հաֆիզը» գործը, Ուեպինը գրեց. «Տարօրինակության հասնող օրիգինալություն, չորության հասնող զապկածություն, կրքու սեր հազիվ նշնարելի դետալների նրբության հանդեպ, որոնք նկարը դարձնում են առաջացող նոր դպրոցի տիպար»:<sup>12</sup>

Վ. Սուրենյանցի «Չամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ» մեծային պատմական կոմպոզիցիան ցուցարվեց Ընկերության 27-րդ ցուցահանդեսում և մեծ աղմուկ հանեց արվեստաբների միջավայրում:

Արա Գեղեցիկի և Չամիրամի առասպելը նկարչին անհրաժեշտ է եղել պատկերելու

հայ ժողովրդի նկատմամբ օտար բռնակալների վարած ջարդահալած քաղաքականությունը, որի հետևանքը 1890-ական թվականների աղետալի չափերի հասած կոտորածներն էին: Նկարը հագեցած է խորը դրամատիզմով: Չամիրամը նստած է Արայի դիակի մոտ: Հատկապես հաջողված է Չամիրամի բարդ ու հակասական կերպարը: Նրա հայացքը, կեցվածքը, ջղաձիգ մի շարժումով մերկացած ուսն ու կործքը և, վերջապես, ետ ընկած ձախ ձեռքը մատնում են զգացնունքների մի ամբողջ փունջ՝ հարության հոլոյ, ափսոսամբ, անգրություն, անհոյս սեր, կորցրած երջանկություն և վերջապես՝ քաղաքական-նվաճողական ծրագրերի խափանում...: Զնայած ջարդերի անմիջական ազդեցության տակ ստացած իրենց անվանումներին «Ոտնահարված սրբություն», «Անարգվածը», «Զարդ», «Լքվածը» կոսավները դիտվում են որպես պատմական ժանրի գործեր. այդ ստեղծագործություններում Սուրենյանցը կարողացել է հասնել խորը


<sup>11</sup> В. Михеев, Двадцать вторая передвижная выставка товарищества передвижных выставок, «Артист», N 37, M., 1894.

<sup>12</sup> И. Репин, Нужна ли школа искусств в Тифлисе, «Кавказ», N 78, 1897.



լնդիանրացումների, կոնկրետ փաստերի տակ տեսնելով հայ ժողովրդի պատմական դրամատիզմը: Սուրենյանցի ստեղծագործական նկարագրքը աճապարտ կմնա, եթե շանդրադառնանք նրա լավագույն պատմական «Հռիփսիմեի եկեղեցին» բնանկարին: Մա հայ կերպարվեստում առաջին պատմական բնանկարն է (ռուսական կերպարվեստում արդեն կար Լիստանի «Վաղիմիրկա գյուղի մայրուղին» նկարը): Նկարիչը փորձել է տալ հնագույն հուշարձանի և ժողովրդի պատմական ճակատագրերի միջև եղած կապը: Կտավի համարյա կենտրոնում վեր է խոյանում հայկական ճարտարապետության ինքնատիպ կառույցներից մեկը՝ Հռիփսիմեի եկեղեցին: Չատ փորձությունների է ենթարկվել հայ ժողովուրդը, շատ կորողներ են ավերվել, բայց Հռիփսիմեի եկեղեցին իր ժողովրդի նման անսասան դիմակայել է բոլոր արհավիրքներին և իր ժողովրդի տառապանքներին ու տանջանքներին ականատես, հպարտ ու անկոտրություն կանգնած հայրենի հողին՝ վկայում է ժողովրդի ու նրա նշակույթի հավերժությունն ու հարատևությունը: «Սուրենյանցի «Հռիփսիմեի վանքը» մի խառաշունչ էակական ասք է...մեր հարուստ ու բազմաբնույթ արվեստում»:<sup>13</sup>

Սուրենյանցի պատմական գործերի և լնդիանրապետ նրա արվեստի ինքնատիպությունը նրանում է, որ նկարիչը ժողովրդի պատմությունը ընկալում է ոչ այնքան փաստերի ու իրողություններն, որքան նրա արվեստի, մշակույթի բարձր գեղարվեստական արժեքների ավանդույթների միջոցով: Այսուղից էլ՝ ճարտարապետական դեկորի, հուշարձանների, զարդանախշների առաստությունը նրա գործերում, որոնք նա վրձնում է հանճարեղ վարպետությամբ:



Վ. Սուրենյանց, «Հռիփսիմեի վանքը»

## АРМЯНСКИЕ ХУДОЖНИКИ КОНЦА XIX - НАЧАЛА XX вв. И РУССКИЕ ПЕРЕДВИЖНИКИ.

*Резюме*

*Л. Атанесян*

На формирование армянской школы изобразительного искусства XIX века велико было влияние русских передовых художников-передвижников, в среде которых, в Москве и Петербурге, свое художественное крещение получила значительная часть армянских художников XIX-XX веков - Башинджагян, Тадевосян, Окроян, Суренянц, Аракелян, Арцатбанян и другие.

<sup>13</sup> Վ. Հարությունյան, Եղիշ. աշխ., էջ 53:

## Վարդեսան ԳՐԻԳՈՐՅԱՆ

### ՍԱՐԴՈՒ ԵՎ ԱԾԽԱՐՀԻ ԳԻՏԱԾԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՀՄՐՈՆՈՒՄՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մեծահամբավ հայ գիտնական Անանիա Շիրակացին (VII դար), որ քնական գիտությունների հիմնադիրն է միջնադարյան Հայաստանում, դեռևս վաղ միջնադարում հետազոտողներին աշխարհի փորձնական ճանաչման կոչ էր անում:

Ուշագրավ է Անանիա Շիրակացու գիտական ժառանգության Հ. Դեպմանի քննությունը՝ «Ըստ մաթեմատիկական կուլտուրայի հնության, Խորհրդային Սրբության ժողովուրդների մեջ առաջին տեղն են հայերը: Հայերի մոտ VII դարում հանդես է եկել հիանալի գիտնական Անանիա Շիրակացին, որի աշխատանքների մեծ մասը հասել են մեր ժամանակները: Անանիա Շիրակացին եղել է մաթեմատիկոս, աստղագետ, օդերեւութարան, պատմաբան և աշխարհագրագետ»: Նա իր աշխատություններում, բացի զուտ մաթեմատիկական խնդիրներից արծարծում է նաև այլ հարցեր՝ երկրի գնդածության, լուսնի և արեգակի խավարումների, մարենատիկայում զրոյի օգտագործման, բազմանդամ թվերի, օրացուցային ժամացույցների և այլնի մասին: Եվ նա այդ ամենն ասել է այն դարաշրջանում, երբ եւրոպական ժողովուրդներից ոչ մեկը այդ հարցերի ուսումնասիրությամբ չէր գրադաւում»:<sup>1</sup>

Աշխարհի փորձնական ճանաչողության ընթացքում հաստատվեցին Անանիա Շիրակացու գիտական շատ եզրակացությունները, մասնավորապես, երկրի գնդածությունը, երկիր մոլորակի՝ բնական ճանապարհով առաջացմանը, լույսի երկարության երկրորդայնության մասին նրա պնդումները և մի շաբթ այլ գիտական վարկածները: Ուսումնասիրվող երևույթների նկատմամբ Անանիա Շիրակացու անաշառ ու քննախույզ վերաբերմունքը, նրա գիտական հետաքրքրությունների ծավալայնությունը նըպաստեցին աշխարհաճանաչման դոգմատիկ շրջանակներից դուրս գալուն: Հենց այդպիսի վերաբերմունքի դրսնորումներից մեկն էլ եղավ բնության փորձնական ճանաչողության Անանիա Շիրակացու, արդեն հիշատակված կողմնորոշումը: Ինչ վերաբերում է աշխարհի ճանաչելիությանը, ապա Շիրակացու կարծիքով՝ «մարդիկ դա սպիրում են փորձով»<sup>2</sup> և այդ բանն անում են երեք ձևով՝ ճանապարհորդելով, դիտելով ու լսելով, չցանկանալով գոյություն ունեցածի մասին լիովին անտեղյակ մնալ: Ուշագրավ է այն, որ վաղ միջնադարում հայ գիտնականը իմաստասիրում է ընկալման դիտողական զգայարանների միասնության մասին, որը գիտության ժամանակակից տվյալներով գիտելիքի ճեղքբերման շուրջ 65 տոկոսն է:

Աշխարհի փորձնական եղանակով ճանաչելու գաղափարն ակտիվորեն պաշտպանում էր նաև միջնադարյան հայտնի նշանավոր պետական, քաղաքական, ռազմական, մշակութային գործիչ Գրիգոր Մագիստրոսը (մոտ 990-1058թ.թ.), որը շատ բարձր կարծիքի էր Անանիա Շիրակացու և նրա բնագիտական աշխատությունների մասին: Մագիստրոսի կարծիքով, քանի որ աշխարհը մեր իմացության օրինեկուն է, հետևաբար այն պետք է ուսումնասիրել անհիջականորեն: Հակառակելով միջնադարի կարծը ավանդությներին՝ գիտնականը իր ժամանակակիցներին ուսուցանում էր, որ մարդկային մարմինն ուսումնասիրելու համար պետք է դիմել ոչ քեւ աստծուն, այլ հարկավոր է զբաղվել անատոնիայով, մարդակազմություն իմանալ, հիվանդանալու դեպքում ուսումնասիրել մեծ բժշկապետեր, գիտական բժշկության հիմնադիրներ Հիպոկրատի և Գալենի աշխատությունները:

Գրիգոր Մագիստրոսը իր ժամանակի բազմակողմանիորեն կրթված մտածողներից էր, որը շարունակում էր զարգացնել Անանիա Շիրակացու գիտական ավանդությները՝ գիտության տվյալները օգտագործելով բնության երևույթների պարզաբանման համար: Գրիգոր Մագիստրոսը մեծ տեղ և դեր էր տալիս աշխարհիկ գիտություններին:

<sup>1</sup> Հայ մշակույթի նշանավոր գործիչները (V-XVII դար), Եր., 1976, էջ 111-115:

<sup>2</sup> Անտոլոգիա միրօն ֆիլոսոփիա. Տ. 1, գ. 2, Մ., 1969, стр. 643.

Նրա կողմից թարգմանվում են գիտության տարբեր բնագավառներին վերաբերող մեծարժեք աշխատություններ, այդ թվում նաև՝ Էվլիլիդեսի երկրաշափությունը:<sup>3</sup>

Գրիգոր Մագիստրոսը կոչ էր անում գիտությամբ լուսավորել, խորամուխ լինել գիտությունների մեջ և աստծուն մերձենալու լավագույն միջոց էր համարում անձի լուսավորյալ լինելը. «Եւ ոչ է հնար մերձենալ Աստուծոյն, եթէ ոչ գիտութեամբ լուսաւորել զանձն»:<sup>4</sup>

Անանիա Շիրակացու գիտաճանաշողական և ուսուցողական գաղափարներն իրենց հաստատումն ու զարգացումն են ստացել մեծավաստակ գիտնական և մանկավարժ Հովհաննես Սարկավագի (1045-1129) բնագիտական աշխատություններում: Հովհաննես Իմաստասեր Սարկավագը բացեիրաց հոչակեց մտածողի՝ ճշմարտության որոնման ազատ, այլ հեղինակությունների կողմից չահմանափակվող իրավունքը:

«Վայելչագրությունն անկարող է բացահայտել ակնհայտ ճշմարտությունը, ինչպես և նկարված ու ստեղծված պատկերը չի կարող վերարտաքրել շարժման մեջ գտնվող կենդանի էակին, որովհետև մերձենում է առասպելապատում խոսքի և սուս վկայության...: Հարկավոր են ջանք ու տքնություն խոսքերի և իրերի համապատասխանությունը ճանաչելու համար, որովհետև ոչ թե խոսքն է հաստատում իրի ստուգությունը, այլ իրը՝ խոսքի, և սրանից ենթերկ պետք է փնտրել ճշմարտություն... և այսպիսի եղանակով, ըստ մեր սովորության, մենք բազում իրեր հետազոտեցինք»:<sup>5</sup>

Գիտնականի քննախույզ միտքը հակված է երևոյթների և իրերի մասին ճշմարտացի և հավաստի գիտելիք ձեռք բերելուն, ճանաչողության փորձնական եղանակին. «Ես այն դյուրահավատ մարդկանցից չեմ, որ առանց քննության հավատամ ամեն մի խոսքի և խարվեմ, որովհետև առանց քննելու և փորձելու, չի կարելի ընդունել որևէ պնդում»:<sup>6</sup>

Ծարունակելով Անանիա Շիրակացու գիծը, Հովհաննես Սարկավագը հանդիս եկավ որպես քննությունը փորձնական եղանակով ճանաչելու գաղափարի՝ ճշմարտությանը հասնելու միակ վստահելի ուղու վճռական պաշտպան. «Սուանց փորձի կարծիքը չի կարող ճշմարիտ համարվել, և փորձն է հաստատում և աներեկայ»:<sup>7</sup> Սարկավագի համոզմունքով՝ փորձով չհաստատված կարծիքը չի կարող ճշմարտացի լինել: Միայն փորձն է արժանահավատ ու անառարկելի: Դրա համար էլ մտածողի կարծիքով, պետք է գիտենալ ոչ թե իին գրքերը, այլ փորձը ինքնուրույն ձեռք բերել՝ քննության մասին գիտելիքների հիման վրա:

Հովհաննես Սարկավագը ոչ միայն հայտարարում, այլև իր գիտական գործունեության ընթացքում գործնականորեն կիրառում էր աշխարհը փորձնական եղանակով ճանաչելու սկզբունքը: Նա ենթադրում էր, որ տիեզերքի հիմքը կազմում է տիեզերական իրեն երլրագունդը («անշափելի ու անսահման նատերիան»): Սարկավագը հիմնավորում է աշխարհի բնական ճանապարհով առաջցումը, որա առաջացնան հիմքը համարելով «արփին զանքաւ նիւթն»:<sup>8</sup> Ըստ Հովհաննես Սարկավագի՝ շրջապատող նյութական աշխարհը ստեղծվել է ոչ թե ոչնչից, այլ սկզբնապես գոյություն ունեցող «անձև», «անորոշ» նյութից, որը հետազույն բնական ճանապարհով փոխարկվել է կրակի, օդի (հողմերի) և հողի:<sup>9</sup>

Ուշագրավ է նաև Հովհաննես Իմաստասերի պնդումը երկրի գնդաձևության և տիեզերական տարածության մեջ դրա ազատ դասավորության մասին: Հետաքրքիր են նրա նմթառությունները Երկիր մոլորակի ծավալի մասին: Ըստ Սարկավագի՝ Երկիրը փոքրածավալ է Երկնային լուսատուների և այլ մոլորակների համեմատությամբ :

<sup>3</sup> Գ. Պ ե տ ր ո ս ա ն, Սարենմատիկան Հայաստանում իին և միջին դարերում, Եր., 1959, էջ 94-131:

<sup>4</sup> Գրիգոր Մագիստրոսի թղթերը (Երատարակիչ և խմբագիր Կարսապետ Կոստանյան) Ակերսանդրապոյ, 1910, էջ 97:

<sup>5</sup> Հայ Ժողովրդի պատմություն, հ. 3, Եր., 1976, էջ 340-341:

<sup>6</sup> Նոյեմբեր:

<sup>7</sup> Նոյեմբեր:

<sup>8</sup> Կ. Միքայել Մատոսյան, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Եր., 1984, 63 էջ:

<sup>9</sup> Նոյեմբեր:

Փորձի միջոցով աշխարհի ու բնույթյան երևոյթների ճանաչման սկզբունքն էր դպավանում նաև մասնագիտությամբ բժիշկ, իր ժամանակի խոշորագույն բնագես, մեծահամբավ բժշկապետ և ուսուցիչ Սիփրար Հերացին (XII դար), որին ժամանակակիցներն անվանում էին «Մեծ Սիփրար»։ Այդպես է մեծարվել Հերացին թե՛ հայ միջնադարյան մտածողների, թե՛ օտարազգիների կողմից։ Սիփրար Հերացու մասին մեծարման և երախտագիտության խոր զգացումով է արտահայտվել XII դարի արար բժշկապետ Արու-Սայիդը, որը Հերացուն համարում է իր ուսուցիչը և խորին ակնածանքով խոսում հայ բժշկապետի և գիտնականի մասին։

Սիփրար Հերացին հիվանդությունները բացատրում էր բնագիտական տեսանկյունից։ Նա խիստ անհրաժեշտ ու կարևոր էր համարում յուրաքանչյուր կոնկրետ հիվանդության օրյեկտիվ պատճառների ամենամանրամասն ուսումնասիրությունը, որ նրան և նրա հետևորդներին հաջողություն էր ապահովում բժշկական գործունեության ընթացքում։

1184թ. Հերացին գրում է, «Ձերմաց միսիքարություն» դասական աշխատությունը, որը նվիրված է միջնադարում լայն տարածում գտած մալարիայի, տիֆային հիվանդությունների, ժանտախտի, բնական ծաղկի, թոքային տուրերկուլյոզի, կարմիր քամու, իինձ ու Վեօրյա նոպայաճն տենդերի և այլ սուր վարակիչ հիվանդությունների պատճառագիտության, ախտածնության, կլինիկական պատկերը բնորոշող ախտանշանների և դրանց բուժման ու հիվանդի խնամքի հարցերի նկարագրությանը։<sup>10</sup> Ըստ արժանվույն գնահատվելով՝ հայ բժշկապետի և մեծ ուսուցիչ գիտական աշխատահրությունը բարգանելեց աշխարհի տարբեր լեզուներով՝ ուսումնասիրողների կողմից արժանանալով բարձր գնահատականի։

«Երբ մենք առանց կանչակալ կարծիքի համեմատում ենք իրար «Ձերմաց միսիքարություն»-ից ընկածնենք մի քանի տասնյակ տարի առաջ գրված՝ Հերեգարդի բնագիտությունը հայ վարպետի գործի հետ, ապա տեսնում ենք, որ միանշանակ վերջինիս պետք է հանձնենք առաջնության դափնեպակը՝ բնության ավելի արմատական ինացության, ավելի հետևողական և առավել ինքնուրույն մտածողության, ինչպես նաև սխոլաստիկական նախապաշարնունքից լիովին գերծ լինելու համար», - գրել է գերմանացի բժիշկ Էռնեստ Գեյլելը երբ 1908թ. բարգանելում էր Սիփրար Հերացու երկը գերմաներեն։<sup>11</sup>

Բժշկության վերաբերյալ իր աշխատություններում (մասնավորապես, արդեն հիշատակված «Ձերմաց միսիքարություն»-ում) Սիփրար Հերացին լայնորեն հեմվում էր հիվանդների բուժման ոչ միայն իր, այլև ուրիշ բժիշկների կուտակած փորձի վրա։

Սիփրար Հերացու զաղափարներն իրենց հետագա զարգացումն ստացան XIII դարի մյուս նշանավոր բժիշկ-մանկավարժների՝ մասնավորապես «Զննութիւն բնութեան նարդոյ և նորին ցաւուց»-ի՝ իր ժամանակի համար խոր ու հիանալի գիտական շարադրանքի հեղինակ Գրիգորիսի ստեղծագործության մեջ, որն իր տրամադրության տակ ունեցել է նաև անտիկ բժշկագիտության պարձանք Հիպոկրատի (460-377թթ. մ. թ. ա.) աշխատությունները և մի շարք այլ հումարեն բժշկագիտական գրքեր։<sup>12</sup> Գրիգորիսի տրակտատում տրված են մարդու օրգանիզմի բնույթի և նրա կողմից հիվանդության հարցահարման բնագիտական բացատրությունները։ Հեղինակը ակնառու կերպով ցուցաբերում էր մարդու և նրա հիվանդությունների նկատմամբ գիտական մոտեցման առավելությունը, որը հնարավորություն էր տախու ամրապնդելու գիտածանաշղական դիրքերը հայ միջնադարի բնագիտական մտքի մեջ։

Բնությունը, որպես մարդկային կեցության հիմք, իմացության օրյեկտ և իմաստում ուսուցիչ, բարձր էր դաստիմ նաև նշանավոր մանկավարժ Գրիգոր Տարևացին (1346 - 1409թթ.): Իր «Հարցմանց գրքում» նա գրել է, - «Երկիրը մեր մայրն է։ Նա ծնում է մեզ բոլորին։ Նա էլ հանդիսանում է այն ճոխ սեղանը, որից սնվում ենք մենք բոլոր։ Նա է դաստիարակն ու կերտողը։ Նա է արվեստներ, առաքինություններ և իմաստություն ստվորելու հիմքը»։

<sup>10</sup> Հայ մշակույթի նշանավոր գործիչները, Եր., 1987, էջ 256-257։

<sup>11</sup> Ա. Կ ծ ո յ ա ն, Բժշկագիտությունը Հայաստանում XI- XIV դարերում, Եր., 1968, էջ 48։

<sup>12</sup> Նոյն տեղում, էջ 54։

Բնության՝ որպես մարդկային իմացության աղբյուրի մասին այդ նույն միտքը կարմիր թերի պես անցնում է նաև Գրիգոր Տարևացու «Թարոզության գլուխ» որտեղ, մասնավորապես, ապօռ է. «Քանական իմացությունը հետևում է իրերի էությանը, և բնությունից վեր այն ոչինչ չի ուսումնասիրում, որովհետև այն, ինչը մատչելի չէ բնությանը, մատչելի չէ նաև մտածողությանը»: Տարևացու լմբորումով՝ նախ բնությունը գոյություն ունի, հետո՝ «մեր իմացությունը»:

Ժամանակի բնագիտական միտքը նպատակառությելով դեպի բնության անմիջական, անկանխակալ և բազմակողմանի ուսումնասիրման անհրաժեշտությունը՝ միջնադարյան հայ առաջադիմ մտածողները դրանում էին տեսնում գիտության առաջնացի և գիտելիքների կատարելագործման ու հարստացման բանալին:

## НАУЧНО - ПОЗНАВАТЕЛЬНЫЕ ВОСПРИЯТИЯ ЧЕЛОВЕКА И МИРА В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ.

*Резюме*

*В. Григорян*

Воззрения известных средневековых армянских мыслителей А. Ширакаци, О. Саркавага, Г. Магистроса, М. Гераци и других о восприятии человека и мира имеют важное значение, особенно в осуществлении педагогически-воспитательных и национально-патриотических задач и в наше время.

Изложенный в статье материал свидетельствует, что представители прошлой армянской научной мысли, с этой точки зрения, были носителями прогрессивных воззрений и взглядов своего времени.

## Հույնե ԱՎԵՏԻՄԱՅԱՆ

### ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ներպետական (ազգային) և միջազգային իրավունքի հարաբերակցության հիմնախնդիրները կաղուց են գրավել պետության և իրավունքի ընդհանուր տեսության, սահմանադրական և միջազգային իրավունքի բնագավառի մասնագետների ուշադրությունը.<sup>1</sup> Դա պայմանագրպահ է պետությունների միջազգային համագործակցության զարգացման օրյեկտիվ գործընթացներով և յուրաքանչյուր պետության, այդ բվում և Հայաստանի Հանրապետության ներսում տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային հարաբերությունների վրա միջազգային իրավունքի ներգործության ուժեղացմամբ:

Հայունի է, որ ներպետական (ներքին, ազգային) իրավունքը<sup>2</sup> և միջազգային իրավունքը իրենցից ներկայացնում են երկու՝ հարաբերականորեն ինքնուրույն համակարգեր, որոնք ունեն իրենց ծագման պատմությունն ու բնույթը, ընդհանուր հատկանիշներն ու առանձնահատկությունները: Պետությունների ազգային իրավունքն ի սկզբանե ձևավորվել է որպես իր տարածքի սահմաններում երկրի ներքին հարաբերությունների կարգավորիչ: Հայաստանի Հանրապետության ներքին իրավունքի ձևավորման օրինաչափություններն ու ուղիները, չնայած այս հարցի շուրջ զանազան տեսակետների գոյության, բավականաչափ ուսումնասիրված չեն:

Միջազգային իրավունքը ձևավորվել է որպես յուրահատուկ իրավական համակարգ, որտեղ արտացոլված են ողջ մարդկային քաղաքակրթության զարգացման օրինաշակություններն ու պատմական ուղիները: Այդ պատճառով էլ ժամանակակից միջազգային իրավունքը հանդիսանում է պետությունների և ժողովուրդների ինչպես պայքարի, այնպես էլ համագործակցության արդյունք: Այն իրենից ներկայացնում է նորմերի և սկզբունքների ամրողություն, որոնք կարգավորում են պետությունների և միջազգային իրավունքի այլ սույնեկտների միջև հարաբերությունները:

Բնութագրելով միջազգային իրավունքի բովանդակությունը և հետևելով Ս. Վ. Չերնիշենկոյին՝ կարելի է ասել, որ միջազգային իրավունքը «մի կողմից հանդիսանում է իրավունքի մաս ընդհանրապես»:<sup>3</sup> Դա նշանակում է, որ այս կամ այն պետության ներքին իրավունքին և միջազգային իրավունքին հատուկ են այնպիսի գծեր, առանձնահատկություններ և տարրեր, որոնք իրենց արտացոլումն են գտնում ունալ իրականությունում, մասնավորապես՝ իրավունքում:

XX դարի երկրորդ կեսը պայմանագրված է մարդու իրավունքները պաշտպանելու համար միջազգային իրավունքում անձանց և կազմակերպությունների երևան գալով: Սրա արդյունքում միջազգային իրավունքը թափանցեց մի ոլորտ, որը միշտ համարվում էր պետության ներքին գործը: Մարդու իրավունքների հարգումն ու պահպանումը դարձավ ոչ միայն միջազգային, այլև ազգային իրավունքի կարևորագույն սկզբունքներից մեկը, իսկ մարդու իրավունքներին նվիրված միջազգային իրավունքի համընդիանուր ճանաչում գտնած սկզբունքներն ու նորմերը ներառվեցին բազմաթիվ պետությունների, այդ բվում և Հայաստանի Հանրապետության սահմանադրություններում, որոնք հոչակվել են որպես ուղղակի ներգործության նորմեր:

Նշված միտումների իրացմանը նպաստել է նաև միջազգային իրավունքի ավանդական բաժանումը երկու ենթաճյուղերի՝ հանրային և մասնավոր: Ընդ որում, եթե միջազգային հանրային իրավունքը կարգավորում է պետությունների միջև հարաբերությունների մասին հոմանիշներ:

<sup>1</sup> Stev. 'Овощая теория государства и права: Акад. курс в 2-х т. / Под ред. М. Марченко, М., 1998. т. 2, стр. 247-249; 'Проблемы теории государства и права/ Под ред. М. Марченко, М., 1999, стр. 417- 433; И. Лукашук, 'Международное право. Овощая часть, М., 1996. стр. 219-245.

<sup>2</sup> «Ներպետական», «ներքին», «ազգային» իրավունք սերմինները հողածում օգտագործվում են որպես հոմանիշներ:

<sup>3</sup> С. Ч е р н ի շ ե ն կ օ, 'Международное право: современные теоретические проблемы, М., 1993, стр. 11.

ուորյունները և ըստ էության հանդիսանում է միջազնուական, ապա միջազգային մասնավոր իրավունքը համարվում է միջազգային միայն պայմանականորեն, քանի որ կարգավորում է քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, քաղաքացիա-դատավարական հարաբերություններ, որոնք ընդգրկում են «օտարերկրյա տարրեր» և դուրս են գալիս մեկ պետության սահմաններից:<sup>4</sup> Այդ պատճառով էլ միջազգային հանդիսական և մասնավոր իրավունքները շոշափում են իրավունքի տարրեր ոլորտներ, որոնք ունեն և ընդիանություն (միջազգային) գծեր, և առանձնահատկություններ:

Այսպէս՝ միջազգային հանդաւային իրավունքի գարգացումը բնորոշվում է կիրառման ոլորտների էական ընդարձակմանը (մասնավորապես, միջազգային ատոմային, օդային, տիեզերական, էկոլոգիական, քենական և իրավունքի այլ ենթաճյուղերի առաջացմանը): Միջազգային հանդաւային իրավունքը միջազգային մասնավոր և ներպետական իրավունքներից տարրերում է նորմերի ծագման պայմաններով, իրավունքի աղբյուրներով, կարգավորման օրյեկտներով, իրավահարաբերությունների սուբյեկտներով և երաշխիքներով: Մասնավորապես միջազգային իրավունքի նորմերի առաջացումը բնութագրվում է նրանով, որ այսուեղ չկան պետություններից վեր կանգնած մարմիններ և հաստատություններ, որոնք սահմաննեն վարդագծի համապարտադիր կանոններ: Այսուեղ գերիշխում է տարրեր պետությունների փոխադարձ կամքի՝ կոնվորմիսի ներողը: Այդ իսկ պատճառով էլ միջազգային իրավունքի աղբյուրներից շարքում կարևորություն տեղը պատկանում է միջազգային պայմանագրին:

Մի շաբթ պետությունների Սահմանադրություններ (ԱՍՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Շվայցարիա, Ռուսաստան, Հայաստան և այլն) ամրագրում են միջազգային պայմանագրերի առաջնայնությունը ներպետական հարաբերությունների կարգավորման մեջ: Այսպէս, ԱՍՆ-ի Սահմանադրության 6-րդ հոդվածը (1787թ.) սահմանում է. «Միացյալ Նահանգների ներկա Սահմանադրությունը և օրենքները, ինչպես նաև մյուս բոլոր պայմանագրերը, որոնք կնքվել են և կարող են կնքվել Միացյալ Նահանգների կողմից, հանդիսանում են երկրի քարձրագոյն օրենքներ, և յուրաքանչյոր նահանգի դատավոր պարտավոր է դրանց կատարման համար (թեև Սահմանադրության և առանձին նահանգների օրենքներում հանդիպում են նաև հակասող որոշումներ- Լ.Ա.):»<sup>5</sup> Համանման դրույթ է սահմանված նաև ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասում, համաձայն որի՝ «ՀՀ անունից կնքված միջազգային պայմանագրերը կիրավում են միայն վավերացվելուց հետո: Վավերացված միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի քաղկեցուցիչ մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրավում են պայմանագրի նորմները»:

Սահմանադրական այս դրույթից քացի, Հայաստանի Հանրապետության բոլոր օրենքները պարունակում են դրույթ, համաձայն որի՝ տվյալ օրենքի և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի նորմերի միջև հակասության դեպքում կիրավում են միջազգային պայմանագրի նորմերը: Օրինակ, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածում ուղղակիորեն նշված է, որ գործերը քննելիս դատարանը կիրառում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի նորմերը վերջինիս և Հայաստանի Հանրապետության օրենքների նորմերի հակասության դեպքում: Նման դրույթ ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության դրեսկան դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածում:

Փաստորեն Հայաստանի Հանրապետությունը պայմանագրերը վավերացնելու փաստով ոչ միայն ճանաչում է պայմանագրերի պարտադիր բնույթը, այլև ընդունում է, որ դրանք գերակայում են իր օրենքների նկատմամբ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածում նշված է, որ Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերը կիրավում են միայն վավերացվելուց հետո: Մինչև վավերացվելը միջազգային պայմանագրերը պարտադիր քննվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի կողմից՝ նրանցում ամրագրված պարտավորությունների սահմանադրականությունը պարզելու նպատա-

<sup>4</sup> *Международное частное право / Овт. ред. О. Н. Садиков/, М., 1984. стр. 5.*

<sup>5</sup> *Современные зарубежные конституции, М., 1992, стр. 23.*

կով: Ըստ որում Սահմանադրական դատարանի որոշումը վերջնական է և փոփոխման ենթակա չէ: Այս հանգանակն ինարկե, մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության թերությունն է, քանի որ արտաքակտ վերահսկողության միջոցով դժվար է վերհանել այն հակասությունները, որոնք կարող են ի հայտ գալ պայմանագրի՝ կոնկրետ դեպքերում կիրառման ընթացքում: Այնուամենայնիվ, պայմանագրի սահմանադրականության որոշման իրավասություն ունի նրան Սահմանադրական դատարանը: Հետևապես, Հայաստանի Հանրապետության դատարանները պարտավոր են կիրառել միջազգային պայմանագրերի նորմները, նույնիսկ դրանց սահմանադրականության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում:

ՀՀ Սահմանադրությամբ և «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության 16. 08. 2000թ. օրենքով կարգավորված չէ երկու միջազգային պայմանագրերի միջև հնարավոր հակասության (կոնֆլիկտի) լուծման հարցը: Նման խնդրի լուծման համար անհրաժեշտ է կմբել նոր պայմանագրեր, որոնք, մինչև ստորագրելը պետք է ենթարկել լուրջ փորձարնեության՝ նարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային պայմանագրերին հակասող դրույթների ամրագրումը բացառելու համար:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովը վավերացնում և չեղալ է հայտարարում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը: Ըստ որում ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացման են ենթակա մարդու իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ՀՀ միջազգային պայմանագրերը: ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվելուց հետո միջազգային պայմանագրերը կազմում են Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: Սակայն, եթե միջազգային պայմանագրերը հակասում է ՀՀ Սահմանադրությամբ, ապա այն կարող է վավերացվել նրան Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո, որը բավկային բարդ գործընթաց է:

«Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության» կոնվենցիայի 1-ին հոդվածին համապետի դրույթ ամրագրված է ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածում, համաձայն որի պետությունը ազատովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան: Փաստորեն պետությունը երաշխավորում է բոլորի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ ամրագրելով դրանք անմիջական գործողություն ունեցող սահմանադրական նորմերում և զարգացնելով դրանք օրենքներում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլուխ ամրագրված են մարդու և քաղաքացի իրավունքները և ազատությունները: Պետությունը երաշխավորում է բոլորի իրավունքները և ազատությունները, բացառությամբ այն իրավունքների, որոնք երաշխավորված են նրան Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ օտարերկրյա քաղաքացիները գրկված են որոշակի իրավունքներից, դրանք են. կոսակցություն ստեղծելու կամ դրանց անդամագրելու իրավունք (Հոդված 25), ընտրելու և ընտրվելու իրավունք (Հոդված 27), հողի նկատմամբ սեփականության իրավունք (Հոդված 28), աշխատանքի ազատ ընտրության իրավունք (Հոդված 29) և այլն: Սրանց մի մասը օտարերկրյա քաղաքացիների քաղաքական իրավունքներ են և սահմանափակվում են:

Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեն մի շարք լորջ հիմնախնդրներ, որոնք դժվարացնում են Հայաստանի Հանրապետության կողմից վերը նշված կոնվենցիայի պահանջների կատարումը, մասնակորագլուխ ամրողացածիրականին անցնան ժամանակաշրջանի՝ ժողովրդավարական արժեքների արնատավորման դժվարությունները, նուածելակերպը, բընակչության և հաճախ նույնիսկ պետական պաշտոնաների ցածր իրավական կուլտուրան, տնտեսական ծանր դրությամբ և կենցաղային հիմնախնդիրներով պայմանագրված՝ մարդկանց անտարբերությունը իրենց տարրական իրավունքների ուսնահրումների նկատմամբ և այլն: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում կատարել սահմանադրական փոփոխություններ՝ սահմանադրական մակարդակով

հստակ և միանշանակ լուծելու Սահմանադրության և միջազգային պայմանագրերի միջև վավերացումից հետո առաջացած հնարավոր կոմֆիլկտների հիմնախնդիրը, օրենսդրական փոխություններ կատարելու միջոցով լուծելու միջազգային պայմանագրերի միջև հակասության հարցը (նաևնավորապես մարդու իրավունքներին վերաբերող) «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքում:

Սակայն միջազգային իրավունքի առաջնայնության ճանաչումը, նրա ժամանակակից դերի աճը չի նշանակում, որ ներպետական իրավական համակարգը փոխադիմում է համաշխարհային իրավական համակարգով, որ միջազգային իրավունքը դառնում է պետությունից վեր կանգնած մի ունիվերսալ իրավունք: Առաջնայնություն՝ չի նշանակում մի համակարգի կանոնը մյուսով. նրանք, ինչպես նախկինում, պահպանվում և գործում են հարաբերականորեն ինքնուրույն և փոխակապակցված: Փոփոխում է այս համակարգերի միայն փոխհարաբերությունների բնույթը: Այսպիսին է միջազգային և ներպետական իրավունքի փոխհարաբերակցության այժմյան միտումը:

Սրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ այս հարցի շուրջ կան նաև այլ կարծիքներ: Այսպես՝ Ս. Չերնիչենկոն գտնում է, որ միջազգային և ներքին իրավունքները իրավական տարրեր համակարգեր են, որոնցից ոչ մեկը մյուսի հանդեպ չունի առաջնայնություն, գործում են տարրեր բնագավառներում և տարրեր իրավական հարթություններում:<sup>6</sup> Այն հաստատվում է նաև ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածում. «ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Սահմանդրությանը հակասող ճանաչված օրենքները, ինչպես նաև Սահմանադրությանը և օրենքներին հակասող ճանաչված այլ իրավական ակտերը, իրավաբանական ուժ չունեն»:

Վերը նշված սահմանման մեկնարանումը հիմք է տալիս ենթադրել, որ միջազգային իրավունքի առաջնայնությունը ներքին՝ ՀՀ օրենսդրության նկատմամբ չի տարածվում երկրի Հիմնական Օրենքի (Սահմանադրության) վրա: Եվ նույնիսկ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասն այն մասին, որ հանրապետության Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն, ինք չեն տալիս ենթադրելու սահմանադրական դրույթի և միջազգային նորմերի իրավաբանական ուժի համահավասարության մասին: Օրենսդիրը ուղղակիորեն ընդունում է, որ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները հանդիսանում են անօտարելի և անմիջականորեն ներգրածող, ճանաչվում և երաշխավորվում են ՀՀ Սահմանադրությամբ:

Պատահական չեն միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության հիմնախնդիրների լուծման շուրջ տարրեր նոտեցումները: Դրանք արտահայտում են ոչ միայն տարրեր հետինականների գիտական տեսակետները, այլ նաև տարրեր քաղաքական ուժերի, ինչպես նաև այս կամ այն պետությունների որոշակի շահեր:

Այսպես՝ Գ. Տունկինի<sup>7</sup> և Ս. Սարչենկոյի<sup>8</sup> կարծիքով կարելի է խսել այն ընդհանուր միտումի մասին, ըստ որի միջազգային իրավունքի առաջնայնության դերի կողմնակիցները, որպես կանոն, այն դիտում էին ուժեղ և հզոր տերությունների շահերի ոլորտ, որոնք բավական երկար ժամանակ (20-րդ դարի ընթացքում) էական ազդեցություն են գործել միջազգային իրավունքի զարգացման վրա, հանդիսացել են նրա հիմնական «օրենսդիրները» (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա):

Այդ պատճառով էլ Խորհրդային Սիոնթյան փլուզումից հետո համաշխարհային տնտեսության զլորակիցացիայի դրկարինայի ազդեցության տակ միջազգային իրավունքի էության փոփոխությունների շուրջ վիճարանություններն աշխուժացած: Ակտիվ կերպով զարգացում ապրեց այն զարգափառը, որ միջազգային իրավունքը սահմանձին պետությունների (պետությունների խմբի) փոխադարձ կանքի և հետաքրքրությունների արտահայտումից բացի, ինչպիսին այն իրականում դրսուրկում է, վեր է ածվում համամարդկային արժեքների և շահերի արտահայտչի: Վերջին հաշվով այս բոլոր է

<sup>6</sup> С. Ч е р н и ч е н к о, *Международное право: современные теоретические проблемы*, М., 1993, стр. 11.

<sup>7</sup> *Международное право / Отв. ред. Г. Тункин/*, М., 1994, стр. 128-129; *Проблемы теории государства и права*, стр. 1.

տախս կյանքում կիրառել ներքին իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի առաջնայնության սահմանան անհրաժեշտության գաղափարը։ Միջազգային հարաբերություններում և քաղաքականության մեջ տվյալ հայեցակարգի իրականացման ընթացքում հաճախ ծագում են կոլլիզիաներ և այսպիս կոչված, «երկակի ստանդարտներ»։ Նման նույնացման օրինակներ են աշխարհի խոշոր պետությունների դիրքորոշումը՝ Հարավսլավիայի (Կոստոն), Ռուսաստանի (Չեչնիա), Հայաստանի (Լեռնային Ղարաբաղ) իրադարձությունների նկատմամբ։

Սրա հետ կապված՝ ժամանակակից մի շարք պետություններ խուսափում են ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցության հստակ ամրագրումից՝ չարձանագրելով իրենց Սահմանադրություններում մեկի առաջնայնությունը մյուսի նկատմամբ։ Սակայն սա չի վերաբերում հետխորհրդային պետությունների Սահմանադրություններին (Հայաստան, Ռուսաստան, Վրաստան, Ղազախստան, Սուվարչական և այլն), որոնք ենում են միջազգային իրավունքի առաջնայնության սկզբունքից։ Ենթադրվում է, որ սա անցումային շրջանի սահմանադրության անխուսափելի առանձնահատկությունն է։

## СОСТОЯНИЕ И ПЕРСПЕКТИВЫ ВЗАИМОДЕЙСТВИЯ МЕЖДУНАРОДНОГО И ВНУТРИГОСУДАРСТВЕННОГО ПРАВА

*Резюме*

*Л. Аветисян*

В статье акцентируется внимание на проблеме соотношения основных норм международного и внутригосударственного права. Подчеркивая то, что вся юридическая система страны базируется на Конституции Республики Армения 1995г., констатируется, что и нормы Конституции РА, и нормы международных договоров РА находятся в интегральной зависимости от норм международного права. Более того, международные договоры, заключенные РА, имеют верховенство над нормами внутригосударственного права.

Համազասպ ԽԱԶԱՏՐՅԱՆ  
Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

ԱՆԻԻ ՆՈՐԱՀԱՅՑ ԱՐՎԱՐՁԱՆԻ 2003 թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

2000-2001 թվականների ընթացքում Շիրակի երկրագիտական թանգարանի և ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի համատեղ հնագիտական արշավախմբի կողմից Հայկածոր գյուղի վարչական տարածքում հայտնաբերվեցին տարբեր ժամանակաշրջանների (քարի դարից-ուշ միջնադար) հնագիտական հուշարձաններ՝ բնակավայրեր և դամբարանադաշտեր (նկ. 2):

Սրանցից ամենաուշագրավը Հոռոմոսի վանքի (նկ. 1) դիմաց գտնվող քարանձավային բնակավայրն է, որը մեր համոզմամբ Անի մայրաքաղաքի արվարձանն է: Սր. Ղազարի Հայկական Ակադեմիայի անդամ, Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի Հայոց Կարողիկե Եկեղեցու առաջնորդ, Գերաշնորհ Հ. Ներսես արքեպիսկոպոս Տեր-Ներսեսյանի նյութական օժանդակությամբ շորջ երկու տարվա հետախուզական աշխատանքների ընթացքում տարբեր տեղամասերից հավաքվեցին և նշակվեցին վերգետնյա և ավերված հնագիտական շերտերից դուրս եկած նյութերը: Հետախուզական աշխատանքների արդյունքները հիմք հանդիսացան Անիի նորահայտ արվարձանն ուսումնափորձյան խնդիրը՝ որպես ինքնուրույն գիտական թեմա, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման առաջարկելու համար: Անցնելով համապատասխան փորձաքննություն՝ այն հաստատվեց և սկսեց իրականացվել: Սակայն հատկացված պետական միջոցները խիստ անբավարար էին հնագիտական պեղումներ ծավալելու համար:

2003թ. Հայկածորի նորահայտ հուշարձանախմբի տարբեր հաստվածներում ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, ՀՀ ՄՆ Պատմության




Նկ. 1

կին՝ Պետրոս և Սանիկ Թերզյանների հատկացրած միջոցներով և իրականացվեցին հովիս-սեպտեմբեր ամիսներին: Պեղման համար տեղամասերի ընտրությունը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով և գիտական նպատակահարմարությամբ: Պեղումները ձեռնարկվեցին երեք տեղամասերում՝ Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու տառածքում (նկ. 2, տեղամաս 6), անտիկ բնակավայրում և դամբարանադաշտում (նկ. 2, տեղամաս 3), ամրոցում (նկ. 2, տեղամաս 2) և միջնադարյան բնակատեղիում, քանի որ թիվ 6 և թիվ 3 տեղամասերում մշակութային շերտերը բացված էին և հավաքվել եր բավականին հնագիտական նյութ, որը հստակորեն բվագրում է տվյալ հնավայրերը: Ամրոցի տարածքում (նկ. 2, տեղամաս 2) անցյալ դարի կեսերին իրականացվել են հողաբարեկավման աշխատանքներ, որի արդյունքում ամբողջովին ավերվել են վերին

շերտը, ինչպես նաև կառույցների մնացորդները: Թիվ 4 տեղամասը, որպես Հռոռոմոսի վանքի համալիրի մեջ գտնվող բնակատեղի, գլխական տեսանկյունից նոյնպես հեռանկարային էր: Պահպանության առումով էլ այն գտնվում է առավել բարենպաստ պայմաններում: Բացի այն, որ Հայաստանում միջնադարյան այսպիսի փոքր բնակավայրերը բավականին լավ ուսումնասիրված են, նաև նպատակահարմար չեր պեղումների համար հստակցված գումարը ծախսել բոլոր տեղամասերում զուգահեռ աշխատանքներ իրականացնելու վրա: Նման պարագայում յուրաքանչյուր տեղամասում պիտի իրականացվեր փոքր ժավախ աշխատանք, որը բնականաբար չեր կարող ակնկալվող արդյունք տալ:

### ՀԱՅԿԱԶՈՐԻ ՆՈՐԱՐԱՅԾ ՀՈՒՇԱՐՁԱՍԱԽՄԲԵՐ



նկ.2

1. Քարանձավային միջնադարյան բնակավայր
2. Սիցնադարյան ամրոցի մնացորդներ
3. Անտիկ բնակավայր և դամբարանադաշտ
4. Սիցնադարյան բնակավայր
5. Հեղեճատական բնակավայր և դամբարանադաշտ
6. Արքան Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի /985թ./, վարժիջնադարյան բնակավայր և դամբարանադաշտ, 10-13դդ. բնակավայր

Աշխատանքներն ընթացան երկու տեղամասերում՝ Հայկածոր գյուղի մեջ (նկ. 2, տեղամաս 5) և Ախուրյանի կիրճում՝ Հռոռոմոսի վանքի դիմացի քարանձավներում (նկ. 3):

Հինգերորդ տեղամասում որպես պեղավայր ընտրվեց գյուղի հարավային նասի՝ արևմտադիր և հարավի հեղեղատով եզերված դարավանդը, որի ամբողջ նակերտը ծածկված էր անտիկ ժամանակաշրջանին բնորոշ խեցեղենի բնկորներով:

Ըստ գյուղաշիների, այստեղ մինչև առաջին տների կառուցումը (1950-ական թվականներ), դեռևս կանգուն էին ինչոք կառույցների պատճեր: Այստեղ պեղվեցին հետախուզական երկու փոստրակներ: Մշակութային շերտի հզորությունը պայմանավորված է տեղանքի բնական թեքությամբ և տատանվում է 05մ -1,2մ միջև: Շերտագրրական դիտարկման համաձայն՝ հուշարձանի այս հատվածը բաղկացած է չտարանցատված երկու շերտերից և շինարարական երկու հորիզոններից: Ըստ հայտնաբերված նյութերի՝ դրանք վերաբերում են մ. թ. Ա. Ա. և մ. թ. Ա. Ի դարերին: Հետազայում՝


մ. թ. I-II դարերում, բնակավայրի տարածքը վեր է ածվում դամբարանադաշտի: Առաջին քառակուսու ստորին շերտում բացվեց կավածենի տափանված հատակ, ինչպես նաև դրան հարող պատաշարի մի հատվածը: Երկրորդ քառակուսու երկրորդ շերտում բացվեց 5,5 մ երկարությամբ և 3,8 մ լայնությամբ մի կառույց, որին արևմտյան կողմից հարում են 2,25 մ և 1,9 մ տրամագծով, քառաշար պատերով երկու կրոնեխներ: Թաղումը կատարվել է նստած դիրքով: Ականոնիք քայլայումից հետո կմախքը եւ է թեքվել և ընկել նստած դիրքի ամրապնելելու նպատակով շարված քարերի վրա (նկ. 4):

Հիմքերորդ տեղամասից հայտնաբերված նյութերի մեջ կան քարից, երկարից աշխատանքային գործիքներ, տափաշշերի, կարմիր երկարով, կիսազնդաձև, նախշազարդ քատերի, օջախների, խոհանոցային խեցեղենի բեկորներ, կավից պատրաստված, քաղիկի նմանվող բռչուների երկու փոքրիկ արձանիկներ: Նյութերի մեջ առանձնահատուկ ուշադրության է արժանի 2-րդ քառակուսուց հայտնաբերված արտաշխայան կորողի ներքնասալը (նկ. 5): Վերջինս, լինելով Հայաստանում նմանատիպ երկրորդ գտածոն, (առաջինը հայտնաբերվել է Բենիամինի անտիկ դաստակերտից), մեկ անգամ ևս հաստատում է Ս. Խորենացու վկայությունը արտաշխայան սահմանաքարերի ձևի նաև նիաժամանակ հնարավորություն է տալիս սուոյց թվագրել հուշարձանը: Իսկ անտիկ դամբարանների պեղումները, ընդարձակերպ Հայաստանի անտիկ քաղումների քարտեզը, ի հայտ են բերում նաև Վերոհիշյալ Ժամանակաշրջանի քաղման նոր ձև և արարողակարգ:

Այս տեղամասում աշխատանքներն ավարտելուց հետո իրականացվեցին պահպանական որոշ խնդիրներ ևս: Պեղված քառակուսիներն ամրողավովին ծածկվեցին պոլիէթիլենի քարակ շերտով, այնուհետև՝ նախապես քարերից մաքրված հողով: Կատարված աշխատանքները նպատակ ունեն հաջորդ տարի պեղումները սկսելիս հեշտությամբ հասնել արդեն պեղված շերտին: Երկրորդ տեղամասում իրականացված պեղումների հիմնական նպատակը քարանձավային բնակավայրի կառուցապատճան սկզբունքի, բնական և ձեռակերտ քարանձավների հաղորդակցության, գործառական բնույթի և ժամանակագրական հաջորդականության բացահայտումն էր: Աշխատանքները նախ ծավալվեցին ձեռակերտ քարանձավներից մեկում՝ ներառելով նաև դրա տակ գտնվող բնական քարանձավն ու դիմացի հարթակը (նկ. 5): Քարանձավը փորված է տուֆի շերտի մեջ, ունի մոտ 13 մ. լայնությամբ և մոտ 6,5 մ. խորությամբ անկանոն ուղղանկյան ձև: Առաստաղի քարձրությունը մոտ 3 մ. է: Պատերի վրա պահպանել են աշխատող գործիքի բերանի շափով արված տաշվածքները: Յուրաքանչյուր



Նկ. 3



Նկ. 4

պատի վրա մի քանի խորշեր կան՝ մեծ և փոքր, տարբեր խորության: Անկասկած, այս խորշերն օգտագործվել են տնտեսական նպատակներով: Դիմացի պատի ներքին մասում փորված է կամարաձև բուխարի: Պատերի մեջ պահպանվել են նաև փոքր, միշտնշիկ փորվածքներ, որոնք օգտագործել են ինչ-որ իրեր (խնոցի և այլն) կախելու համար:



Նկ. 5

Եթե, որոնցից վերջինն արդեն հատակին է: Պեղումներով հայտնաբերվեց երկու քարանձավների (վերին և ստորին), հաղորդակցության ուղին (նկ. 7): Հենց մուտքի մոտ փորված է 70 սմ տրամագծով անցը, որն աստիճանաբար լայնանալով, ծախ կողմում քիչ անկանոն շրջանի ձև է ստանում և թեքությամբ բացվում առաջին հարկի առաստաղին, այսինքն քարանձավի առաջին հարկի առաստաղն ու երկրորդ հարկի հատակը միշտնշիկ անցքով հաղորդակցից են: Քարանձավը փակվել է քարե դռնով, որի կրնկի խոռոչները պահպանվել են մուտքի երկու կողմերում:

Եթե ձեռակերտ քարանձավում մշակութային շերտի հզրությունը չի գերազանցում 0,5 մետրը, ապա սրա առաջին հարկում այն հասնում է 2,3 մետրի: Պեղումների արդյունքում առաջին հարկում և նրան հարող արտաքին հարթակում (մոտ 75 քառ.մ) հայտնաբերվեցին 6 շինարարական հորիզոններ, որոնք վերաբերում են IX-XVII դ.: Հայտնաբերվեցին քարից և երկարից պատրաստված աշխատանքային գործիքներ, թոնիրներ (նկ. 8): Առաջին հարկի թոնիրներից մեկի մեջ գտնվեց կավից նի իր, որն ամրացված էր ակին: Իրը կավակերտ է կրացած և թները ներքև կախած կնոջ մոտակոր պատկերով, և հավանաբար ունեցել է ծիսական գործառույթ: Խնեղենի մեջ կան կարմրափայլ և ջնարակված քազմաքիլ բներքներ, անհայկան գոտեզարդ կարասի դրոշմազարդ մասեր: Թոնիրներից մեկում գտնվեցին բյուզանդական պղնձյա դրամ (անանուն ֆոլիս 11-րդ դար, բնորոշումը դրամագետ Ա.Չոնքարյանի) և բրոնզյա զարդեր:

Պեղվեց նաև առաջին քարանձավի հարևանությամբ գտնվող, մոտ 2,5 մ տրամագծով կոմաճան ձեռակերտ քարանձավը, որն իրենից ներկայացնում է զմբերաբ: Հնարավոր է, որ այն դեռևս վաղ միշտնադրում որպես մատուռ կամ եկեղեցի է ծառայել և նախորդել է Հռոմոնսի վանքին: Դրա մասին են վկայում ոչ միայն պատերը գոտեզարդ կամարների աղեղները, այլ նաև կամարի գոտու վրա պահպանված փորագիր հավասարաքանիչ խաչերը: Պատկերված հավասարաքանիչ խաչերը բնորոշ էն IV-V դարերին, ինչը բույլ է տալիս ենթադրել մա-

տութիւնուն ժամանակաշրջանին պատկանելու: Բայց ավելի ստույգ բվազրման համար կարենք է նաև մատուռի առաստաղին փորագրված պարույրի մեջ տառերի



Նկ. 6

նմանվող տարբեր նշանների վերծանումը (նկ. 9): Քարանձավ-մատուի հատակի մեջ քացվեց քոնիր: Տուֆի մեջ արված զլանածն փորվածքում դրված է եղել հաստ պատեռով մեծ քոնիր, հետագայում դրվել է փոքր մեկ որիշը՝ կողքերն ամրացված նախորդ՝ մեծ քոնիրից մնացած թեկորներով (տախտակ 4, նկ.21):

Երրորդ քարանձավի պեղվեց քիչ ավելի հեռու առաջին և երկրորդ քարանձավներից, միաժամանակ շուրջ դրվեց քարանձավի դիմաց (տախտակ 5, նկ.22): Քարանձավի մուտքի մոտ պահպանվել է քոնիր:



1մ հեռու է: Այս քարանձավի մեջ դեպի դուրս՝ արևելք դրված շուրջադարձ հողաշերտ է՝ հագեցած իրար հաջորդող մոխրաշերտով: Շուրջի աղեղը՝ 1,5մ քարձորթյամբ: Քարանձավի արևելյան պատի փլուզումից հետո քոնիրը հայտնվել է դրսում: Թոնիրը պահպանվել է կիսով չափ. տրամագիծը՝ 55 սմ, քարձորթյունը՝ 45 սմ, անճան ձգվածություն ունի արևելք-արևմուտք: Կիսաշրջանածն ակն արևմտյան կողմում է (իմբի տրամ՝ 20 սմ, քարձը՝ 15 սմ): Թոնիրը լավ նատեցնելու համար կողքերն ամրացրել են մեկ այլ քոնիր թեկորներով: Ակն վրա շարել են քարեր, դրանց մեջ գտնվեց նաև քոնիրի շրթի մոտ ամոր նատած ձվածիր մի վաճակատ: Թոնիրը քարանձավի պատից զարգացնելու հետո ամրացրել են մեկ փոքրիկ թեկոր՝ մասունակագույնի և կանաչի երանգներով և խոհանոցային խեցեղենի մի քանի թեկորներ: Նոյն պատկերը դիտարկվեց նաև տեղի այլ քարանձավային համալիրներում: Բացահայտվեց ձեռակերտ և բնական քարանձավների միմյանց հետ հաղորդակցած միասնական հանակարգ:


Բացի նշված քարանձավից, հետախուզական փոտրակներ պեղվեցին քարանձավներից վերև գտնվող դարավանդի վրա, որով ծավալեցին նախկինում հայտնաբերված հելլենիստական բնակավայրի և անտիկ դամբարանադաշտի հյուսիարևմտյան սահմանները: Հնավայրի այս հատվածում հողը հագեցած է հարուստ վերգետնյա նյութով, որը հիմնականում վերաբերում է անտիկ ժամանակաշրջանին և վաղ միջնադարին:

Ախուրյանի ափամերձ հատվածի հետախուզության արդյունքում հայտնաբերվեցին նաև բնակավայրը Հռոմուսի վանքի հետ կապող կամրջի մնացորդները: Զա-



բանձավների առաջին հարկի և դիմացի հարթակների պեղումների ժամանակ բոլոր մշակութային շերտերից հայտնաբերվեցին վաճակատից և դացիսից գործիքներ, նուկլեուսներ և ցլեպներ, որոնցով վերահաստատվեց այստեղ քարեղարյան մշակույթի առկայությունը (տախտակ 9):


Հուշարձանախումբը մանրամասն նկարագրվել է, կատարվել են լուսանկարչական և չափագրական աշխատանքներ: Հայտնաբերված նյութերը ենթարկվել են կամերալ մշակման, կրնանբացվել կամ վերականգնվել են, պատրաստվել են գրքանկարները: Հայտնաբերված նյութերը հանձնվել են Շիրակի երկրագիտական թանգարան:




Նկ. 9

Բանձների հետ: Կապեր են ստեղծվել թուրքական կողմում Ամին պեղող ֆրանսիական արշավախմբի հետ:

Արշավախմբի աշխատանքները բազմից լուսաբանվել են տեղական ու հանրապետական մամուլով և հեռուստատեսությամբ:



**1-ԻՆ ՔԱՐԱԶԱՎԿԻ ԿՏՐՎԱԾՔ****РАСКОПКИ НОВОНАЙДЕННОГО ПРИГОРОДА АНИ 2003г.***Резюме**A. Хачатрян, Л. Еганян*

Совместная экспедиция Ширакского центра арменоведческих исследований НАН РА, краеведческого музея Ширака и Агентства охраны памятников истории и культуры РА в 2003 г. провела раскопки в разных участках села Айкалзор Ширакской области. Основные работы были проведены на территории села Айкалзор и ущелья реки Ахурян, около средневекового монастырского комплекса Оромос. На территории села в результате раскопок были обнаружены античное поселение и некрополь, которые датируются II в.-д.н.э.-I в. н.э. Были раскопаны одно сооружение II-I вв. д.н.э., в кладке стены которого был найден плинт Арташесской стеллы и захоронение в круглой погребальной камере I в. нашей эры. В ущелье реки Ахурян была раскопана одна рукодельная пещера и прилегающая к ней терраса. Была установлена система коммуникации рукотворных и естественных пещер, часть которых являются нижними этажами для первых. По обнаруженным материалам рукотворное пещерное городище относится IX-XVII вв. нашей эры, входит в систему средневековой столицы Армении Ани и является органической частью Оромосского монастырского комплекса.

## Հրաշյա ՍՄՐՅԱՆ

### ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ՏԻՊԻ ԶԵՆՔԸ

Անդրկովկասը սկյութական նյութական մշակույթի տարրերի կրողն է: Ակյութական ազդեցությունից զերծ չի մնացել նաև խնդրո առարկա տարածաշրջանը:<sup>1</sup> Այս մասին պատմագիտական տվյալներին գալիս է լրացնելու Շիրակից ու Լոռուց հայտնաբերված հնագիտական նյութը՝ հիմնականում հարձակողական սպառագինության նմուշներ՝ ակինակ, նետասլաքներ և կացին:

**Ակինակ.** Մորգանի կողմից Մուսիերիից հայտնաբերված երկարե դաշույնը միակն է (աղ. 1, նկ. 1): Այն ունի հորիզոնական ձողաձև վերնամաս, ուղիղ՝ կենտրոնում երկու հորիզոնական ակոսներով բռնակ, ուղղանկյունաձև խաչարդ և եռանկյունաձև շեղք: Դաշույնը խփառ քայլաված է, չկա ծայրը: Պահպանված մասի երկարությունը 20 սմ է, բռնակինը՝ 8 սմ: Նման կառուցվածքը ունեցող դաշույններն ու սրերը, որոնցից հայտնաբերվել են Հայկական լեռնաշխարհի (Կարմիր - բլուր, Թեյշերայինի, Գեղին-վիտ, Ստեփանակերտ և այլ), Կովկասի (Սամբալը, Սուխումի, Բրիլի, Թիլ և այլ), Հարավորսական տափաստանների (Մին. Վոլի, Ստեպոնյ), ՈՒկրաինայի (Պոլտավա, Դեպրովետրովսկ, Ստարշայա Սոգիլա), Ուրալի (Բիկովո, Ախմիլովո) համաժամանակյա հնագիտական հուշարձաններում և կրում են սկյութական զինագործության առանձնահատկությունները, մասնագիտական գրականության մեջ հայտնի են «ակինակ» անվանք:

Մուսիերիի գոտածոյին շատ նման են Թղիի դամբարանադաշտից հայտնաբերված ակինակները, որոնք ևս ունեն եռանկյունաձև շեղք և քվագրվում են մ. թ. ա. VII-VI դարերով:<sup>2</sup> Ինչ վերաբերում է Մուսիերիի գոտածոյի թվագրմանը, ապա Ս. Եսայանը և Մ. Պոզդերովն զտում են, որ այսօրինակ ակինակներն Անդրկովկասում հանդես են գալիս մ. թ. ա. VI դարից ոչ ուշ:<sup>3</sup>

**Նետասլաքներ.** Մեզ հետաքրքրող տարածաշրջանում բավականին մեծ քանակություն են կազմում սկյութական տիպի պոշուկավոր և խողովակակորած բրոնզե նետասլաքները: Հայտնաբերվել են Շիրակում՝ Պեմզաշենից, Շիրակավանից, Անի-Պեմզայից, իսկ Լոռիում՝ Ղաչաղանից, Մակարաշենից, Ակմերից (Որմակ), Մուսիերիից:

Երկը խողովակակորած նետասլաքներն Անդրկովկասում շատ քիչ են հանդիպում: Ընդհանրապես այս տիպի նետասլաքներն ունեն կամ տերևաձև, կամ շեղանկյունաձև, կամ էլ օվալաձև գլխիկներ: Մեր տարածաշրջանից հայտնաբերվել են Պեմզաշենում՝ 1 և Մուսիերիում՝ 2 (աղ. 1, նկ. 2, 3): Սրանք շեղանկյունաձև գլխիկներով են: Ընդ որում, Պեմզաշենի գոտածոները S. Խաչատրյանը թվագրում է ուշ բրոնզի և վաղ երկարի դարաշրջաններով:<sup>4</sup> Մուսիերիի օրինակի թերի վրա կամ սկյութական նետասլաքներին բնորոշ ակոսներ: Սրանցից մեկը կորածի վրա բերիկ ունի: Ակյութների մոտ այս նետասլաքները հիմնականում հանդես են գալիս մ. թ. ա. VII-VI դարերում:<sup>5</sup> Ա. Մելյուկովան նշում է, որ երկը խողովակակորած նետասլաքներն արխանիկ են և Եվրաֆիայում երևան են եկել դեռևս մինչև լուրական ժամանակաշրջանում:<sup>6</sup>

<sup>1</sup> Յ. Մահանդյան, *О некоторых проблемах истории древней Армении и Закавказья*, Еր., 1944, стр. 45, 54; Ա. Երևանյան, Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի և Սատրևանի պայքարը քոչվորների դեմ, *Պատմա-քանակական հանդես* (այտուետն ՊԲՀ), 1968, 2, էջ 93-94:

<sup>2</sup> Բ. Թ է օ վ, *Скифы и центральный Кавказ в VII-VI вв. до н. э.*, М., 1980, рис. 4, 3, 20.

<sup>3</sup> Ս. Ե ս ա յ ա ն, Մ. Պ օ ր ը բ օ վ ա, *Скифские памятники Закавказья*, М., 1985, стр. 48.

<sup>4</sup> Տ. Խ ա չ ա ր տ ր յ ա ն, *Древняя культура Ширака*, Еր., 1975, стр. 20.

<sup>5</sup> Կ. Ս մ ի ր ն օ վ, *Вооружение сарматов* (МИА. N 101), М., 1961, стр. 41.

<sup>6</sup> Ա. Մ ե լ յ ո կ օ վ ա, *Вооружение скифов*, САИ, вып. I-4, М., 1964, стр. 18.

Նմանատիպ նետասլաքներ հայտնաբերվել են Հայկաբերդում, Կարմիր բլուսում, Նորաշենում, Կուլանուրիսկինյան դամբարանաղաշտում, Մինգեչառում, Հարավային Օսերիայում, Աշորում, Բարելոնում և այլ հնավայրերում:

Եռաք խողովակակորաս նետասլաքներ ավելի շատ են հայտնաբերվել: Ս. Եսայանը և Ս. Պողոբերովան Անդրկովսկասից հայտնաբերված նմանօրինակ նետասլաքներն ըստ իրենց կառուցվածքային առանձնահատկությունների բաժանել են երեք տիպի:<sup>7</sup> Նոյն սկզբունքով կմերկայացնենք մեզ հետաքրքրող տարածաշրջանից հայտնաբերված գտածոները:

*Առաջին տիպը* կազմում են օվալաձև գլխիկով, երկար կամ կարճ կորառով նետասլաքները: Սրանց մեջ կան նաև այնպիսիք, որոնք կորառի վրա բութակ ունեն: Ի դեպ, այս տիպի նետասլաքները սկյուռների մոտ հանդես են զալիս երկրև նետասլաքների հետ միաժամանակ: Մեզ հետաքրքրող տարածաշրջանից նմանատիպ նետասլաքներ հայտնաբերվել են Պենզաշենից (աղ. 1, նկ. 5-10), Շիրակավանից և Սուսինից (աղ. 1, նկ. 4): Պենզաշենից հայտնաբերված բվով վեց նետասլաքների երկարությունը տատանվում է 3-4 ամ միջնության: Սրանցից չորսի կորառները կարճ են (աղ. 1, նկ. 5-8), իսկ երկուսին՝ երկար (աղ. 1, նկ. 9, 10): Ընդ որում երկար կորառվածներից մեկի կորառն կա նաև բութակ:

Շիրակավանից հայտնաբերվել է երկու նետասլաք,\* որոնցից մեկը խիստ քայլաված է և փշրված: Երկուսն էլ ունեն կարճ կորառներ: Պահպանված մի նետասլաքի երկարությունը 2,5 ամ է:

Ինչ վերաբերում է սրանց բվագրմանը, ապա Պենզաշենի գտածոները Տ. Խաչատրյանը բվագրում է ուշ բրոնզի և վաղ երկարի ժամանակաշրջանով,<sup>9</sup> իսկ Շիրակավանի գտածոները Ֆ. Տեր-Սարտիրոսովը բվագրում է մ. թ. ա. V-IV դարերով: Սուսինիինի նետասլաքը բվագրվում է մ. թ. ա. VII-VI դր.:<sup>10</sup> Վ. Իլյինսկայան, Բ. Սոգոնյանկայան և Ա. Կերենտիկինը գտնում են, որ սկյուռա - սարմատական հուշարձաններում օվալաձև գլխիկով նետասլաքները հանդես են զալիս երկրև նետասլաքների հետ միաժամանակ և գոյատևում են մ. թ. ա. VII-VI դարերի ընթացքում, իսկ Կ. Սմիրնովը նշում է, որ մ. թ. ա. V դ. սկզբներին այս տիպի նետասլաքները դուրս են զալիս կիրառությունից, չնայած հանդիպում են ավելի ուշ ժամանակի հուշարձաններում:<sup>11</sup> Նմանատիպ նետասլաքներ հայտնաբերվել են Հայկաբերդից, Արին-բերդից, Ֆրանկանոցից, Նիգվիշից, Դվանի, Սամտավրոյի դամբարանաղաշտերից, Աշորից և այլ հնավայրերից:<sup>12</sup>

Երկրորդ տիպը կազմում են բրոնզե այն նետասլաքները, որոնց գլխիկներն ունեն ոչ ցայտուն արտահայտված շեղանկյունաձև կամ եռանկյունաձև գլխիկներ: Ընդ որում դրանք կորավուն եզրագծերով են: Նմանատիպ նետասլաքներ բավականին մեծ քանակությամբ հայտնաբերվել են Պենզաշենում՝ 13: Սրանց երկարությունը 4սմ է, մի երեսույթ, որը ինչպես նկատում են Ս. Եսայանը և Ս. Պողոբերովան, նմանօրինակ նետասլաքների մեջ չափերի առումով եզակի են:<sup>13</sup> Այս նետասլաքներից մեկն ունի բութակ (աղ. 1, նկ. 11): Իսկ մյուսների մեջ կան և երկար կորառով, և կարճ կորառով օրինակներ: Նմանատիպ նետասլաքներ հայտնաբերվել են Կարմիր-բլուսում, Արին-բերդից, Ֆրանկանոցից, Ներքին Հորաբաղյանցից, Մինգեչառուից, Հարավային Օսերիայից, Ախալցխայից և այլ հնավայրերից: Ա. Սելյուկովան այս տիպի նետասլաքները

<sup>7</sup> Բ. Պ օ ր օ ւ ս կ ի յ, Իստորիա և կուլտуրա Ուրարտ, Եր., 1944, տալ. 53, 93; Ս. Եսայան, Մ.

Պողրեզովա, Սկիֆական պատմական արժեքներ, տալ. II; Մ. Տրափ, Տրափ, Տ. I, Սահման, 1970, տալ. V, 12, 13; Գ. Իոնե, Մինեչաւրսկայա բազա հայտնաբերվել է 13: Սրանց երկարությունը 4սմ է, մի երեսույթ, որը ինչպես նկատում են Ս. Եսայանը և Ս. Պողոբերովան, նմանօրինակ նետասլաքների մեջ չափերի առումով եզակի են:<sup>13</sup> Այս նետասլաքներից մեկն ունի բութակ (աղ. 1, նկ. 11): Իսկ մյուսների մեջ կան և երկար կորառով, և կարճ կորառով օրինակներ: Նմանատիպ նետասլաքներ հայտնաբերվել են Կարմիր-բլուսում, Արին-բերդից, Ֆրանկանոցից, Ներքին Հորաբաղյանցից, Մինգեչառուից, Հարավային Օսերիայից, Ախալցխայից և այլ հնավայրերից: Ա. Սելյուկովան այս տիպի նետասլաքները

\* Պահպանված են ՏԵՇ-ի ֆոնդերում:

<sup>9</sup> Տ. Խ ա չ ա ր յ ա ն, Դրենայա կուլտուրա Ռիրակա, Եր., 1975, стр. 20.

<sup>10</sup> Ա. Մ ա ր տ ի ր օ ս չ ա ն, Արմենիա և զնունակ բարձրագույն արժեքներ, Եր., 1964, стр. 10.

<sup>11</sup> Վ. Ի լ լ յ ի ն ս կ ա յ, Բ. Մ օ զ օ լ ե վ ս կ ի յ, Ա. Թ ե ր ե ն օ յ շ ի ն, Կորցանք VI վ. դօ. հ. չ. ս.


Մատոսով, Սկիֆական պատմական արժեքներ, տալ. II; Կ. Սմիրնով, Վարչական արդյունաբանություն, ՄԻԱ. N 101, Մ., 1961, стр. 41.

<sup>12</sup> Բ. Պ օ ր օ ւ ս կ ի յ, Իստորիա և կուլտуրա Ուրարտ, Եր., 1944, տալ. 53 ա, բ, գ, տալ. 93 բ, ե; Ս. Եսայան, Մ.

Պողրեզովա, Սկիֆական պատմական արժեքներ, տալ. VII, 17,

<sup>13</sup> Ս. Եսայան, Մ. Պ օ ր օ ւ ս կ ի յ, Նշանական արժեքներ, Եր., 1975, տալ. 65:

թվագրում է մ. թ. ա. VII-VI դարերով:<sup>14</sup> Բ. Պիոտրովսկին խոսելով Արին-բերդից հայտնաբերված համանման նետալաքների մասին, նշում է, որ դրանք վերաբերում են մ. թ. ա. VI-V դարերին, և որ դրանք Էրեբունու միջնաբերդու գրավող թշնամու գենքն են եղել: Սակայն այլ է Ս. Խորայելյանի կարծիքը այս տիպի նետալաքների վերաբերյալ: Դրանք նա թվագրում է մ. թ. ա. VI-IV դդ. և գտնում է, որ նետալաքները պատկանել են Վանի թագավորության անկումից հետո Էրեբունիում ապրած բնակչությանը:<sup>15</sup>



**Երրորդ տիպի** նետալաքներն ունեն ցայտուն արտահայտված անկյուններով շեղանկյունաձև գլխիկներ: Այդպիսից հայտնաբերվել են Պեմզաշենից (աղ.1, նկ.12) և Մակարաշենից (աղ.1, նկ.13)՝ մեկական օրինակներով: Մակարաշենի գտածոյի թվագրումը համընկանում է այս տիպի նետալաքների ընդհանուր թվագրմանը՝ մ. թ. ա. VII-VI դարեր:<sup>16</sup> Նմանատիպ նետալաքները քիչ են: Դրանք հայտնաբերվել են Կախեթիայից, Սինգաշատուրի դամբարանադաշտից, Հարավային Օսերիայից, Իրանից:<sup>17</sup>

**Չորրորդ տիպի** նետալաքներն ունեն եռանկյունաձև գլխիկներ և ուղիղ հորիզոնական կամ դեսպանական կիսող տուր թևիկներ: Սրանց կորածները փոքր են ու կարճ: Մեզ հետաքրքրող տարածաշրջանում նմանօրինակ նետալաքներ հայտնաբերվել են Ակներից (աղ.1, նկ.14,15): Նետալաքներից մեկը (նկ.14) դեսպանական կիսող տուր

<sup>14</sup> А. Мелюкова, Вооружение скифов, стр. 68.

<sup>15</sup> Б. Пиоторовский, Ванское царство, М., 1959, стр. 241; Ս. Խորայելյան, Էրեբունի քաղաք - ամրոցի պատմությունը, Եր., 1971, էջ 132-133:

<sup>16</sup> А. Мартirosyan, Арmenia в эпоху бронзы и раннего железа, стр. 286 - 288.

<sup>17</sup> С. Есаян, М. Погребова, նշվ. աշխ., էջ 69:

թկիկներով է և ունի 2,5 սմ. երկարություն, խսկ մյուսի (նկ.15) թկիկներն ուղիղ հորիզոնական են, երկարությունը 2 սմ. է: Նետապալքները թվագրվում են մ. թ. ա. V-IV դր.<sup>18</sup>

Պոչուկավոր եռարք նետապալքներ մեզ հետաքրքրող տարածաշրջանում հայտնաբերվել են միայն Շիրակի մարզի Սարատակ գյուղի քարարկղային դամբարանից.\* Թվով երեք այս նետապալքներն ունեն եռանկյունաձև գլխիկներ և հատվածքում կոր սրածայր պահպան: Սրանք ունեն 2-2,5 սմ երկարություն: Լ. Եգանյանը դամբարանը նախապես թվագրել է մ. թ. ա. VIII-VI դարերով:<sup>19</sup> Սակայն դամբարանի ուղեկցող նյութը, այդ թվում մյուս յոթ նետապալքները բնորոշ են մ. թ. ա. XII-XI դարերով թվագրվող համալիրներից հայտնաբերված գտածոներին:

Նմանատիպ, սակայն երկար նետապալքներ Հայաստանում հայտնաբերվել են Թեյշերայինից և թվագրվում են վաղ հայկական ժամանակաշրջանով:<sup>20</sup> Արևելյան Ղրիմում Կիրովի հնագույն բնակավայրում հայտնաբերվել են նմանատիպ ոսկրե նետապալքներ, որոնք թվագրվում են մ. թ. ա. XV-XII դարերով:<sup>21</sup> Ընդ որում նույն հնավայրից հայտնաբերվել են նաև նույն ժամանակով թվագրվող ոսկրից պատրաստված խողովակակործար նետապալքներ:

Ընդհանրապես դժվար է պատասխանել այն հարցին, թե սկյութական տիպի նետապալքները, որոնք հայտնաբերվել են Անդրկովկաստում և Հայաստանում, որտեղ են արտադրվել՝ տեղո՞ւմ, թե՞ բերվել են դրասից: Այս հարցի շուրջ տարբեր են նաև գիտնականների կարծիքները: Այսպես, օրինակ՝ Գ. Իննեն և Բ. Գրակովը գտնում են, որ Անդրկովկաստում ոչ միայն պատրաստվել են սկյութական տիպի նետապալքները, այլև օգտագործվել է դրանց պատրաստման տեխնոլոգիան:<sup>22</sup> Այլ է Կ. Պիցիսելապորիի կարծիքը: Նա գտնում է, որ սրանք բացարձակ մոտ չեն տեղական գիտագործների արտադրանքին, դրանք ներմուծվել են Անդրկովկաս դրասից՝ թշնամու կողմից:<sup>23</sup> Առավել դժվար է պոչուկավոր նետապալքների հարցը, քանի որ դրանք թվապես քիչ են: Բացի այդ շատ հետաքրքրի է այն, որ վերը նշված մինչայլութական Կիրովի բնակավայրից հայտնաբերվել են ոսկորից պատրաստված թե՛ պոչուկավոր և թե՛ խողովակակործար երկրներ և եռարք նետապալքներ: Սա մի հանգամանք է, որը հնարավորություն է տալիս ենթադրելու, թե երկրն և եռարք նետապալքները պատրաստվել են դեռ շատ վաղուց (սկսած մ. թ. ա. XVI-XIV դր.) և պարտադիր չեն, որ դրանք պատրաստված լինեն սկյութների կողմից: Հավանաբար այդպիսին են նաև Սարատակի մ.թ.ա. XII-XI դարերով թվագրվող նետապալքները:

**Երկարյա կացիններ.** Մեզ հետաքրքրող տարածաշրջանից Սուսիերիում՝ Յ (աղ.1, նկ.16-18) և Կուրտանում՝ 1 (աղ.1, նկ.19) հայտնաբերվել են թվով չորս երկարյա կացիններ: Դրանք երկար, նեղ և փոքր-ինչ գոգավոր, քիչ լայնացող աշխատաբերանով, ուղիղ կամ քիչ հաստացված վերջավիրություն ունեցող հանքարիչով (օցանուկ) զենքեր են: Հանքարիչը հարթ է և ունի կարծես կլորավուն նակերես: Փաստորեն սրանք կացին-մուրճեր են: Սուսիերիից հայտնաբերվածների երկարությունը 10-15 սմ է, աշխատաբերանների լայնությունը՝ 2-2,5 սմ: Իսկ մեկի աշխատաբերանը խիստ քայլաված է ու բերի: Վերջինիս մուրճի հատվածը կտրվածքում բազմանկյունու կտրվածքով է, իսկ հաջորդ երկուսինը՝ քառանկյունու:

<sup>18</sup> А. М а р т и р о с յան, Армения в эпоху..., стр. 10; Б. Пиогровский, История и культура Урарту, стр. 308-310.

\*Պահպում են ԾԵԹ-ի ֆոնդերում

<sup>19</sup> Л. Ե գ ա ն յ ա ն, Սարատակի դամբարանը, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը հանրապետական գիտաժողովի գեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 2002, էջ 4-5:

<sup>20</sup> А. М а р т и р о с յան, Город Тейшевани, Еր., 1961, стр. 137, рис. 61.

<sup>21</sup> Древности Восточного Крыма /предскифский период и скифы/, Академия наук УССР, институт археологии, Киев, 1970, стр. 35, 45.

<sup>22</sup> Г. И о ն ե, Мингечаурская разновидность наконечников ..., стр. 81 – 82; Б. Граков, Скифы, М., 1971.

<sup>23</sup> К. П и լ լ ե լ ա ս ս ր ի, Восточная Грузия в конце бронзового века, Тб., 1979, стр. 16.

Կուրտանի օրինակի երկարությունը 20 ամ է, աշխատաքերանի լայնությունը՝ 3,5 ամ: Սա ևս շատ քայլայված է: Հ. Մարտիրոսյանը ողջ դամբարանը թվագրել է մ. թ. VI-V դարերով<sup>24</sup>:

Կացին-մուրճեր հայտնաբերվել են Խրտանոցից, Սամտավրոյից, Դվինի, Թղիի և Բրիլի դամբարանաղաշտերից:<sup>25</sup> Փաստորեն զենքի այս տեսակը Անդրկովկասում լայն տարածում է գտել մ. թ. ա. VII-VI դարերում: Տարբեր են կարծիքներն այս զինաւեսակի հետ կապված: Հ. Մարտիրոսյանը գտնում է, որ սրանց ձևը Անդրկովկաս է բերվել սկյութների կողմից, իսկ Ա. Մելքոնյանը և Մ. Պոգրեբովսկան պնդում են հակառակը, որ սկյութներն են ընդօրինակել Անդրկովկասից<sup>26</sup>:

Ընդհանրացնելով նշեմք, որ մեզ հետաքրքրող տարածաշրջանից հայտնաբերված սկյութական տիպի նյութն անբողոքությամբ ներկայանում է զենքի տեսակներով, որոնք հայտնաբերվել են դամբարաններից: Ω'չ Շիրակը, ո՞չ էլ Լոռին չունեն սկյութական որևէ հուշարձան, որ վկայեր այսուղ նրանց երկարատև բնակության փաստի նախն: Վերը ներկայացված սկյութական տիպի զենքի մեջ կան նմուշներ, որոնք պատրաստված են տեղի վարպետների կողմից, բայց դրանք չեն դարձել հայկական զինագործության օրգանական տարր:

## ОРУЖИЕ СКИФСКОГО ТИПА, НАЙДЕННОЕ В СЕВЕРО-ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Resюме

Г. Мсрян

Набор вещей скифского типа и характер содержавших их погребений, а также само число таких погревений свидетельствуют, что этот компонент составляли преимущественно воины, пришедшие сюда и в значительной степени усвоившие местную культуру, но сохранившие самобытность воинского снаряжения. Нельзя не отметить, что как Ширак, так и Лори не содержат памятников, свидетельствующих о длительном обитании здесь скифов. Среди вещей скифского типа имеются экземпляры, изготовленные местными мастерами. Но подобные формы так и не стали органичным элементом армянского оружейного дела.

<sup>24</sup> A. Martirosyan, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 289 – 291:

<sup>25</sup> C. Esaian, M. Pogrebova, Նշանակած էջ 80:

<sup>26</sup> A. Martirosyan, Армения в эпоху..., стр. 290; A. Melikova, Вооружение скифов, стр. 67.

## Վարդեսան ԳՐԻԳՈՐՅԱՆ

### ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԾԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԸՄՐՈՆՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Այն, որ դաստիարակության գիտա-ճանաչողական և սոցիալ-իրավական գաղափարները հայ իրականության մեջ արդեն XI դարում զգալիորեն հեռացել էին հասարակական կյանքի ավատափրական (ֆեոդալական) պատկերացումների սահմաններից, հատկապես նկատելի է Ներսես Շնորհալու (XI-XII դարեր) և Սխիքար Գոշի (XII դար) ստեղծագործությունների մեջ:

Քննարկելով մարդու իմանախնդիրը՝ Ներսես Շնորհալին փորձում էր բացահայտել մարդկանց բարի ու չար արարդների առբյուրը: Այդպիսի առբյուր էր նա համարում մարդու ազատ կամքը, այն, որը դրսից, «աստծո նախախնամությամբ» չի պարտադրված անհատին, այլ մարդու հոգու մեջ առաջացել է միանգամայն հակառիք սկզբունքների (բարի ու չար) պայքարից: Այդ պայքարը Ներսես Շնորհալին բնութագույն է որպես տաճանք, որը վիճում է մարդկանց կյանքը: Ընդ որում, այն փոփոխվում է ոչ թե «երկնային ուժերի» ներգործությամբ, այլ սեփական ընտրությամբ, ինչպես մարդիկ ցանկանում են:

Նման հարցադրումը, անկասկած, հակասում էր ավատափրական դոգմատիկ ուսմունքին, որն իր էությամբ ճակատագրապահատական էր, որովհետև մարդու վարքագիծը ամբողջությամբ և բոլոր մանրամասնություններով հայտարարում էր պատճառավորված «տիրոջ նախախնամությամբ»: Հենց այդ դետերմինացումն էլ կասկածի տակ էր դրվում մարդուն օրգանապես յուրահատուկ կամքի բացարձակ ազատության մասին Ներսես Շնորհալու եզրակացության շնորհիվ: Կամքի ազատության օրյեկտիվորեն ընդունման վերաբերյալ եպիսկոպոսի, իսկ 1166 թվականից՝ կարողիկուսի այսպիսի մեկնարանությունը հնչում էր որպես ազատամտություն, հուշում էր սոցիալական իմմանախնդիրների ոչ ավանդական լուծում:

Այդպիսի լուծումների վատ օրինակներ ենք գտնում Ներսես Շնորհալու ստեղծագործություններում, մասնավորապես «Թուլք ընդհանրականում», որտեղ «եկեղեցու առաջնորդն ու մտածողը կրնֆիլիստի և հակասության բախսման և հանգուցալու ման մտորումների մեջ են»:<sup>1</sup> Շնորհալին խոր վրդրվմունք է հայտնում աշխարհիկ և կրոնական գործիչների ընչափրության, հարստություն կուտակելու անզուսայ հակումների առքիվ: Նա գրում է. «աստացուածովք և ոչ միայն հարկաւոր պիտոյիցն եղեն անկարօւտ, այլև աւելքորդն լցան և յաշխարիկ հոգուվք և մտօք տաժանեալը, և աստ անհօգութեամբ և հեշտուրեամբ սոռուարացեալը»:<sup>2</sup>

Սոցիալական իմմանախնդիրների ոչ ավանդական լուծումների ուշագրավ գաղափարներ ենք գտնում նաև Սխիքար Գոշի ստեղծագործության մեջ, որը ոչ միայն իր ժամանակի նշանավոր առակագիրն էր, այլև կարևոր իրավական փաստաթղթի՝ «Դատաստանագրքի» (1184թ.) կազմողը: Նման փաստաթղթի անհրաժեշտությունը, որը կոչված էր կարգավորելու միջնադարյան Հայաստանի բոլոր սոցիալական դասերի ու խավերի, պետության, հասարակության և անձի կյանքը, պայմանավորված էր ժամանակի հանգամանքներով: Ֆեոդալական հարաբերությունների զարգացումը պահանջում էր համապատասխան իրավական ձևակերպում: Անհրաժեշտ էին հաստատված և միասնականացված օրենսդրություններ, որոնք կարգավորեին դասերի ու առանձին անձանց փղոսկիրարերությունները, որոշեին դրանցից յուրաքանչյուրի իրավական վիճակը, կանոնավորեին դատավարությունը և դրանով սահմանափակելին աշխարհիկ ու եկեղեցական իշխանությունների դատական կամայականությունը, որ խատորթն ըննադատվում է Գոշի կողմից «Դատաստանագրքի» ստեղծման պատճառներն ու նպատակները իմմանալունիս: «Ժեսամեմք այժմ, զի բազումք յեպիսկոպոսաց եւ ի վարդապետաց եւ ի քահանայից եւ ի զիսաւոր աշխարհականաց աշառանալք և կաշառաւք

<sup>1</sup> Տե՛ս մամրամասն Հ. Գարրիելյան, Հայ վիրիտսիայության պատմություն, Եր., 1976, էջ 161-169:

<sup>2</sup> Ն ե ր ս ե ս Ս ն ո ր հ ա լ ի, Թուլք ընդհանրական, էջ 28:

բազում անգամ եւ տղիսութեամբ թիւր են զուլիդ դատաստան: Սակա որոյ յուղութիւն եւ յանձնանութիւն սակատը այնուհետ զիրս դրոշմեցաք դատաստանի».<sup>3</sup>

Կանգ առնենք իրավագիտական այդ աշխատության այն հիմնական դրույթների վրա, որոնցում որոշակիորեն նկատվում են ազատախոհության՝ մեզ համար հետաքրքրություն ներկայացնող դրսուրումները:

Ի սկզբանն ասենք, որ արդեն իսկ ազատախոհության դրսուրում էր զուտ աշխարհիկ բնույթի փաստարդի ստեղծումը, որը սահմանափակում էր Աստվածաշնչից և կրոնական այլ աղբյուրներից վերցրած օրենքներով դեկտեցական տերերի դատավարական իրավունքները: Դրանով ոչ միայն խոշընդոտներ էին ստեղծվում հոգևորականության դատավարական կամայականությունների համար, այլև օրենսդրության վրայից պոկվում էր միաժիկական քողը, օրենքն ընկալվում որպես մարդկային ճեղքի ստեղծագործություն, որը կյանքի է կոչված ոչ միայն երկնայինի կամքով, այլ դարաշրջանի մարդկանց երկրային իրական պահանջմունքներով:

Հայ միջնադարի ավատատիրական ավանդական պատկերացումների շրջանակներում բացահայտութեն չէր տեղափորվում նաև «Դատաստանագրքի» հիմքում Սիսիար Գոշի դրած աշխարհայացքային գլխավոր սկզբունքը՝ մարդու մոտ կամքի ազատության առկայության ընդունումը: Ինչպես արդեն նշվել է, այդ ըմբռնումը հակասում էր մարդկային բոլոր խոհերի ու արարքների վերուստ նախասահմանված լինելու մասին միջնադարի դոգմատիկական ուսմունքին և մասնավորապես ճակատագրապաշտությանը:

Սիսիար Գոշը կողմնակից էր հայոց կենտրոնացված պետականության ամեն կերպ ամրապնդմանը, որն իր գործունեության ընթացքում հենվեր օրենքների վրա ու հակառակութեր տեղական ֆեոդալների (ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր) անջատողականությանը և օտարերկրյա զավթիչների մերձնայություններին: Իր մշակած և նատուցած օրենքները նա բխեցրել է միջնադարյան Հայաստանի ֆեոդալական հասարակության իրական կյանքի հանգանակներից, ընդ որում, ընդգծելով, որ ժամանակի ընթացքում օրենքները պիտի փոխվեն հակառակ կրոնական տեսակետի, որ պահանջում էր, որպեսզի դրանք ընդունվեն իրեն «աստվածասահմանված», այսինքն՝ որպես բացարձակ, մեկրնդմիշտ տրված և անփոփոխ: Սակայն կյանքը աստվածաշնչական ժամանակների համեմատությամբ զգալիորեն փոխվել էր, և Սիսիար Գոշը միանգանյան բույլատրելի էր համարում աստվածաշնչական օրենքները լրացնել մարդկանց ու կյանքի փոփոխված պայմաններին համապատասխանող նոր իրավական նորմերով: Մովսիսական օրենքը, մարգարենների խոսքը և Ավետարանը մեկ անգամ արդեն տըրպած լինելով, այդպես էլ մենացել են անշարժ, քարացած, մինչդեռ մարդկանց վարքն ու բարքը տարբեր է և փոփոխվում է ժամանակի մեջ: Աստվածաշնչական իրահանգներն ու եկեղեցական կանոնները նոր, տցիալական և կենցադային փոփոխված պայմաններն արտացոլող իրավական նորմերով լրացնելու բույլատրեկիության այդպիսի ընդունումն արդեն, իր մեջ կրում էր ազատականության և առաջադիմության լիցը:

Սիսիար Գոշը, աշկայն, դրանով չահմանափակվեց, այլ ավելի հեռուն գնաց: Հայ օրենսգիրը աստվածաշնչական օրենքների ժողովածուն համապատասխանեցրեց հասարակության և մարդկանց կյանքի նոր պայմաններին, անհրաժեշտ համարեց ուղղումներ մտցնել նոր իրավական շատ նորմերի մեջ՝ ձևափոխելով դրանք, կամ տայռ նոր մեկնարանություններ: Ընդ որում, «Դատաստանագրքի» հեղինակը, որ դեկտավարվում էր իրական կյանքի պահանջներով, գոտավ միանգանայն մարդասիրական լրություններ: Որպես կանոն, Սիսիար Գոշը մեղմացրեց աստվածաշնչական օրենքների ու եկեղեցական կանոնների խառնությունները: Նա մասնավորապես մահապատիժը հաճախ փոխարինում էր թել բավական խիստ, բայց կյանքը պահպանող պատժով: Մի շաբաթ դեպքերում մահապատիժը փոխարինվում է դրամական տուգանքով, կամ էլ՝ եկեղեցական ապաշխարանքով:

<sup>3</sup> Սիսիար Գոշ, Գիրք դատաստանի (աշխատասիրությամբ Խորրով Թորոսյանի), Եր., 1975, էջ իր:

Մխիթար Գոշի բարեփոխականությունը դրսորվում է նաև օրենսդրության, որպես կյանքի պահանջներից ծնված իրավական նորմերի հավաքածուի ստեղծման գործընթացի զուտ աշխարհիկ մեկնաբանման մեջ:

Այսպես օրինակ, «Դատաստանագրում» սոցիալական անհավասարությանը տրված է զուտ աշխարհիկ բացատրություն, որը սկզբունքորեն տարրերվում էր տվյալ հասարակական երևույթի վերաբերյալ գոյություն ունեցող պաշտոնական տեսակետից: Մխիթար Գոշը սոցիալական անհավասարության առաջացումը կապում էր դասակարգային հասարակության կյանքի իրական պայմանների, հողի ու ջրի նկատմամբ մասնավոր սեփականության առկայության հետ: Գոշը մեկն է այն առաջիններից ու եզակիներից, որ անազատության հիմքը փնտրել է հասարակության ներքին կյանքում ու գտել սոցիալ-տնտեսական պատճառների մեջ: Անազատության, որիշներին ծառայելու պատճառը հողն ու ջուրն է, եթե հարաբերությունները մարդկանց միջև այնպես են դասավորվում, որ դրանցից ունաճը գրկվում են, իսկ մյուսները՝ իրենց ձեռքը կենտրոնացնում այն»<sup>4</sup>: Գոշը գրի «Յաղագս դատաստանաց շինականաց» հորվածում գրել է. «Ազատ յԱրարչն եղել մարդկային բնութիւն, այլ ծառայել տէրանց յադաց պիտոյից եղել եղող և ջրոյ»<sup>5</sup>: Այդ դրույթից օրգանապես բխում են խիստ արմատական սոցիալական և աշխատանքային եզրակացնութեր, որոնք «Դատաստանագրի» հեղինակն ինքը չէր կարող անել, սակայն բոլոր նախադրյալներն ստեղծեց:

Տերերից կախվածությունն առաջացել է վերջիններին կորմից հողի ու ջրի զավթման պատճառով, որեմն դրանք ուժով խելը ընչազուրկներին բվում էր որպես աղաղակող անարդարության վերացնան գործողություն: Նման եզրակացության ուղղվածությունը ակնհայտութեն առաջադիմական է:

Այն ժամանակների սոցիալ-իրավական տրամադրությունների արձագանքները կամ «Դատաստանագրի» օրենսդրական մի պահանջում: Մխիթար Գոշի համոզմամբ՝ պետական իշխանությունը պետք է լինի քաղաքացիական գործերում հոգևորականության միջամտությունը բացառող զուտ աշխարհիկ իշխանություն: Եկեղեցական դասը հոգևոր գործերով պիտի գրադաւի, ծառայի աստծոն և ոչ մամոնային, չպետք է տրվի աշխարհիկ հոգևորին: նա պիտի գրադաւի եկեղեցական գործերով, հակառակ դեպքում պիտի գրկվի հոգևոր աստիճանից համաձայն աստծու խոսքի, թե «աշ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել»: Այդ պահանջը առաջադիմական էր ոչ միայն հայկական միջնադարի, այլև ավելի ուշ ժամանակների համար: Այդ պատճառով էլ կարելի է հիմացնունք հայտնել այն խիզախության համար, որով Մխիթար Գոշը ձևակերպեց ու պաշտպանեց բացահայտ առաջադիմական բնույթի իր օրենսդրական սկզբունքները, ընդ որում, այդ բանն արեց անձնական պատասխանատվությանը ու համարձակորեն, առանց կենտրոնացված ուժեղ պետական իշխանության հենարանի, որը նրա օրոք չկար Հայաստանում և որի մասին այդ նշանավոր օրենսգիրը միայն երազում էր:

Միջնադարյան Հայաստանի առաջադիմ մտածողների աշխատություններում ազատամտությունը և առաջադիմականությունը գիտական և հասարակական- քաղաքական մտքի բնորոշ դրսորումներից են:

## СОЦИАЛЬНО- ПРАВОВЫЕ И ПОЗНАВАТЕЛЬНЫЕ ВОСПРИЯТИЯ ВОСПИТАНИЯ В АРМЯНСКОМ СРЕДНЕВЕКОВОИИ

Резюме

B. Григорян

В ценнейших трудах прогрессивных мыслителей средневековой Армении Н. Шнорали и М. Гоша в качестве характерных проявлений выступают просветительско-реформирующие мысли и взгляды, которые способствовали развитию научно-педагогических и воспитательных идей в учебных заведениях того времени.

<sup>4</sup> Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ իու:  
<sup>5</sup> Նոյն տեղում, էջ ժու:

## Վարդուի ԱՏԵՓԱՆՅԱՆ

### ՎԱՀԵ ՔԱՉԱՅԻ «ԱՐԱՐՉԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐԸ» ԱՏԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսահայ անվանի արձակագիր, լրագրող Վահե Քաչան (Վահե Խաչատրյանը) մուտք է գործել գրական ասպարեզ 1953 թվականին՝ 25 տարեկան հասակում, երբ Փարիզի նշանավոր «Գալլիմար» հրատարակչությունը լույս ընծայեց երիտասարդ արձակագիր առաջին վեպը՝ «Կիրակի օրվանից մնացած ծխուկներ» («Les me'gots du dimanche») վերնագրով և Վահե Քաչան ստորագրությամբ։ Առաջին իսկ վեպը նրան անմիջապես դարձնում է քննադատների և հրատարակիչների սենուուն ուշադրության առարկան։ Հոչակավոր հրատարակչության անունն էր պատճառը, հեղինակի ինքնատիպ տաղա՞նդը, ինքը՝ ստեղծագործությու՞նը, թե՞ այս բոլոր հանգամանքները միասին, որ նորահայտ գրողին բերեցին մեծ ճանաչում։ Դա հազվադեպ երևույթ է, նաև ավանդ երբ խոսքը օտարազգի գրողի մասին է։ Ինչպէս, պետք է հաշվի առնել, որ Քաչանի հաջողությանը նպաստեց նաև ֆրանսիական գրականության 50-ական թվականների մթնոլորտը, երբ «գրական ինդուստրիայի» տնօրենները և ընթերցասեր հասարակությունը կարիք ունեին նոր անունների։

1955 թվականին գրված Վահե Քաչանի «Ակն ընդ ական» («Oeil pour oeil») (հայերեն առաջին անգամ քարգմանվել և հրատարակվել է 1956 թվականին), գրողին ավելի մեծ հաջողություն բերեց։ 1957 թվականին այս վեպով հեղինակն արժանացավ կոմս Ռիվարոլի անվան պատվավոր գրական մրցանակին, որ ֆրանսիան լեզվով արտահայտվող օտարազգի գրողների համար սահմանված մրցանակ էր։ Որոշ ժամանակ անց նշանավոր ռեժիսոր Անդրե Կայասը, որի աշակերտն է եղել Վ. Քաչան, ֆիլմ է նկարահանում «Ակն ընդ ական» վեպի հիման վրա։ Սա Վահե Քաչանի շոնդակից մուտքն էր ֆրանսիական կինոյի աշխարհի։

Հետագա տարիներին Վ. Քաչան հրապարակեց ավելի քան 25 վեպեր, 15 ֆիլմի սցենար և երկու դրամատիկական գործեր («Կարք», «Սեղմած բռունքներ», «Արարչի ութերորդ օրը», «Գիշատիչների խնջույքը», «Գավազան», «Մի սևամորք Լինկոլնի արձանի վրա», «Թողեր մեռնեն») էսեն, «Մի դաշույն այս պարտեզի մեջ» և այլն)։

Հայազգի ընթերցողի համար հատկապես հետաքրքիր է «Մի դաշույն այս պարտեզի մեջ» վեպը (1981թ.)՝ էպիկական լայն շեշտ ծավալուն մի ստեղծագործություն, որը ներկայացնում է Արևմտյան Հայաստանի իրականությունը, պղևահայության կյանքը, տպորությունները, վարքն ու բարքը համբյան արիավիրքից մինչև Սեղելունը։ Այս և այլ ստեղծագործությունները հեղինակի համար հաստատուն տեղ ստեղծեցին արդի գրականության մեջ՝ դարձնելով նրան ամենից շատ ընթերցվող հեղինակներից մեկը։

Վահե Քաչան, գրական գործունեությանը զուգահեռ, համագործակցել է ֆրանսիական ճանաչված կինոդերասանների հետ, որոնցից են Ժան-Լուի Տրինտինյանը, Բրիջիտ Բորդոն և այլք։ Մշտապես համագործակցել է նաև հայազգի հոչակավոր ռեժիսոր Անրի Վերնոյի հետ, և նրանց երկարամյա համագործակցության արդյունքն է «Մայրիկ» ֆիլմը, որի սցենարի հեղինակը Վահե Քաչան է։ Նրա սցենարների կամ վեպերի հիման վրա նկարահանվել են «Արարչի ութերորդ օրը», «Գալիա», «Ուզածիղ չափ», «Հրեայի մահը», «Մի մարդ ընկալ փողոցում», «Գիշատիչների խնջույքը», «Լողի ուսուցիչը» ֆիլմերը։ Հայաստանաբնակ կինոհանդիսատեսին ծանոթ է քրիստոնեական «Գիշատիչների խնջույքը» ֆիլմը։

Գրական գործունեության հետ միաժամանակ նա շարունակել է նաև գրադպել լրագրությամբ։ 1962թ. ստացել է մամուլի «Պելման» մրցանակը՝ «Խղճահարություն չկա կույրերի համեմեպ» և «Քաղցկեղավորները» ռեպորտաժների համար։

Վ. Քաչան մուտք է գործել գրականություն 50-60-ական թվականներին, երբ ֆրանսիական մտավորականության մտքի տիրակալներն էին Ժակ Պրեվերը և Ժան-Պոլ Սարտրն իրենց վիլյամիայական աշխատություններով, վեպերով, պատմվածքներով, այնամերով։ Ֆրանսիայում 50-ական թվականներին ամենատարածված գրքերից

մեկը Սարտրի «Լինելիորյուն և անէորյուն» փիլիսոփայական ծավալուն երկն եր՝ Եկղիստենցիալիզմի բարձրագույն արտահայտություններից մեկը:

Եկղիստենցիալիզմ՝ որպես գոյության փիլիսոփայության գլխավոր թեման մարդու անհատական կեցությունն է, նրա կյանքի իմաստն ու ճակատագիրը: Եկղիստենցիալիստներն իրենց առջև դնում էին այնպիսի հարցեր, որոնք հեշտությամբ արձագանք էին գտնում շատ մարդկանց հոգիներուն և ընդունվուն նրանց կողմից. դրանք էին՝ կյանքի իմաստը, մարդու ճակատագիրը, ըստության, անձնական պատասխանատվության և այլ հարցերը:

Եկղիստենցիալիզմն իր արտահայտությունն է գտել արվեստի, գրականության, թատրոնի, կինոյի մեջ: Եկղիստենցիալիզմի տարածվածությունը բացատրվում է նրանով, որ այն ճգոտում էր դուրս գալ փիլիսոփայական կամ գեղագիտական կուր համակարգի սահմաններից, դատում էր աշխարհազգացողություն, երբեմն բավական առօրեական և զգացմունքային, մատչելի ոչ միայն բարձրաճաշակ մտավորականներին, այլև ցանկացած քաղաքացու: Եկղիստենցիալիզմը փորձում է դուրս գալ ստանդարտների, հաստատված օրենքների, կուր հայացքների, կաղապարված հերոսների այդ առանձնահատուկ գերությունից: Ընդհամրապես Եկղիստենցիալիստական ստեղծագործությունները գրականության և փիլիսոփայության զուգակցումն են: Եկղիստենցիալիստ գրողներից շատերի՝ Սարտրի, Կամյուի, Սինոնի դր Բովուարի համար գրականությունը փիլիսոփայական հայացքների, զաղափարների, մտածելակերպի, հետաքրքրությունների բարզմանությունն ու արտահայտությունն է: Եկղիստենցիալիստ գրողները գրականության միջոցով արտահայտում են իրենց փիլիսոփայական հայացքները և տալիս դանց բացատրությունները:

Վահե Զաշան չէր կարող չխամակվել Մալրոյի, Ժրենեյի, Կամյույի ու Սարտրի գրական-փիլիսոփայական վեպերով: Նրա գեղարվեստական մեքողի ճևավորման լեռացրում նկատվում է տարբեր փիլիսոփայական և գրական ուղղությունների ազդեցությունը: Այնուամենայնիվ այդ բուժն գրական բախումների մթնոլորտում Զաշային հաջողվեց ստեղծել իր ինքնատիպ ոճը, իր ինքնուրույն ստեղծագործական մեքողը:

Դրա ապացույցն է 1958 թ. գրված «Արարջի ութերորդ օրը» վիպակը: Վիպակը մեծ ժողովրդականություն է բերում հետինակին, նրա հիմնան վրա ֆիլմ է նկարահանվում, իսկ հայ հանդիսատեսը գործին ծանոթանում է հեռուստաքանարկությամբ:

Վիպակի գործողությունները ծավալվում են Փարիզում: Ընդամենը երկու գլխավոր հերոսների՝ Իրեն Դյումանի և Անդրե Չերլյանի առկայությունը ստեղծագործությանը հաղորդում է հոգեբանական սուր լարվածություն: Անդրե Չերլյանը մասնագիտությամբ բժիշկ է: Շանապարհերով կնոջը Նիցցա, նա վերադառնում է կինիկա, ուր բերում են ավտովրարի ենթարկված, 30-ին մոտ մի տղամարդու: Մինչ բժիշկը նախապարատվում է վիրահատության, մարդը մահանում է: Բժիշկ Չերլյանը իր կինիկայում վախճանվածի կնոջից՝ Իրեն Դյումանից քարցնում է դատը ճշմարտությունը:

Տղեկանարկը, որ իր ամուսնը ենթարկվել է ավտովրարի, Իրեն Դյումանը հայտնվում է «սահմանային իրադրության ծովակում» (սա Եկղիստենցիալիստական փիլիսոփայության հասկացություններից է): Իրենը գտնվում է ճգնաժամային իրավիճակում, սա շրջադարձային անսպասելի երևոյթ է նրա կյանքում: Նա մենամենակ, անօգնական կանգնած է մահվան տագմապի առօք: Կյանքի հանգիստ ընթացքը հանկարծ խախտվել է. անցյալը՝ իմաստագրկվել, ներկան՝ հազիվ է նշմարվում, աշխարհը սարսափելի, անհմաստ ու անըմքնելի է բվում, նա բոլորովին մենակ է՝ չունի ծնողներ, այլև կենդանի չէ սիրելի անձնավորությունը: Կյանքը «անարդար» գոյություն է դատնում Իրենի համար: Նրա համար մեռնում են ին ծրագրերը և միակ «ելքը», որը նա արագորեն գտնում է, ինքնասպանությունն է: Բարեքախտարար ինքնասպանության փորձը ժամանակին կանխվում է:

Մահը անձանոթ խորհուրդ է բժիշկ Չերլյանի համար: Բժիշկ լինելով հանդերձ, նա անպատճառ է ընդունելու մահվան գոյությունը, անկարող է հաշտվել դրա հետ: Բժիշկ Չերլյանը հանկարծակի է գալիս այլքան ծանոթ, բազմաթիվ անգամ տեսած, մասնագիտական առունող արդեն սպիրական դարձած մահից: Նա նույնպես հայտնվում է «սահմանային իրադրություն»՝ բախվելով իրեն ծանոթ ու անձանոթ,

խորք ու դաժան սարսափելի իրավիճակին: Բայց չէ որ դա բնական երևոյք է, բնության օրենք և մահը պետք չէ ընթանել որպես անհարմանիք մի բան...

«Սահմանային իրադրության» արդյունքում մարդը գործում է բոլորովին անսպասելիորեն: Ըստ Սարտրի, «սահմանային իրադրությունը» վկայում է մարդկային անկատարության, անբավարարության մասին: Իր «Գիշատիչների խնջույքը» գրքի առաջարանում Զաշան գրում է. «Մահը առաջին տագնապն է: Իմ բոլոր գրքերը կատուցված են այս թեմայի շորք: Լինի դա պատերազմի, սիրո, պայքարի տագնապն»:<sup>1</sup> Սահվան հարցը ներկա է նրա գրեքն բոլոր ստեղծագործություններում: Մոտ 20 վեպում և կինոնկարում, Զաշան սևեռուն ուշադրությամբ զննում է կյանքի այդ առեղծվածը:

Բժիշկ Շերլյանը փորձում է «օր-օրի վրա հույսի մի բեկոր խվելով նրանից՝ Իրենին հաշտեցնել մահվան մտքին»: Մահվան լուրը պակաս ցավալի, ավելի փիլիսոփայորեն ընկալելի դարձնելու համար բժիշկը նախապատրաստում է Իրենին՝ նրան տանելով այն վայրերը, որտեղ կյանքը և մահը գտնվում են «սահմանային իրադրության» մեջ: Բժիշկը փորձում է վերակառուցել երիտասարդ, «վիշրուն» կնոջ կյանքը, նրա համար հենարան ստեղծելով հասարակության մեջ: «Կյանքի հաճույքները և հույսի արմատները կազմվում են հազար ու մի արտասովոր մանրություններից: արևի մի ճառագայթ, մի կրկներգ, մի սովորույթ»:<sup>2</sup>

Նրանք շրջում են իրենց ծանոր փողոցներով՝ Շամպ-Էլիզե, հասնում են Կոնկորդ իրավարակ, գնում են կինոթատրոն, լուսավազան, այցելում են այն բոլոր վայրերը, որ Իրենը եղել է Մարկի հետ: Հայտնվելով «սահմանային իրադրությունում», Իրենը կարծես զրկվում է հիշողությունից: Իր ողջ կյանքի ընթացքում նա հիշում է միայն Մարկին: Եվ բժշկի հարցին. «Դ՞նչ էիք անում նախքան Մարկի հետ ծանրանալլ», Իրենը զարմանքով պատասխանում է. «Մարկից առաջ՝ Ոչինչ»:<sup>3</sup> Մարկի հետ ծանրանալլ առաջ նա «չկար», իրեն չի հիշում. Մարկից հետո էլ չի ուզում շարունակել իր կյանքն այս աշխարհում: Իրենը գոյությունը պայմանավորված է Մարկի գոյությամբ: Կորցնելով Մարկին և հայտվելով տագնապալի իրավիճակում՝ Իրենն այնքան անպահպան է դատնում, որ կորցնում է իր էկզիստենցիան, իր գոյության գիտակցումն ու իմաստը:

Ըստ Հայրեգերի, Ժամանակը սահմանափակվում է մարդու գոյությամբ: «Մինչև այն ժամանակը, քանի դեռ տևում է մարդկային գոյությունը, կա նաև աշխարհը... Եթե չկա ոչ մի գոյություն, ապա առկա չէ և աշխարհը»:

Իրենն իր կյանքը պատվերացնում է այս մեկնաբանությամբ, նրա համար կյանքը կանգ է առել, անեն ինչ անշարժացել է, գիտակցության ու հիշողության մեջ կենդանի է միայն Մարկ Դյումանը: Իրենը գիտակցում է, որ գոյություն ունի, սակայն այդ գոյությունը նրան քվում է «ամեներ», «արսուր» և նա տագնապն զգում է, որ հասցեազրված է անտությանը:

Բժիշկ Շերլյանը շարունակում է իր ջանքերը. կանչում է Իրենին մեկ որիշ կինիկա, ցոյց տալիս անհուսակի վիճակում գտնվող հիվանդների, հետո տանում է ծննդացուուն՝ ցոյց տալիս կյանքի և մահվան միջև եղած կապը: Լուծվելով անդեմ ամբոխի մեջ՝ բժիշկը միսիքարում է Իրենին, քացարում, որ մարդկի ընդհանրապես մահանում են. «Մահն ինչո՞ւ պիտի խնայեր Մարկին: Ինչո՞ւ, ինչո՞ւ»: Մարկն էլ մսից ու արյունից էր: Բացառիկ ի՞նչ ուներ»:<sup>5</sup>

Սկզբում քվում էր, թե բժիշկ Շերլյանի ջանքերն իզուր են անցնում: Իրենին հարկավոր էր մեկ այլ ճգնաժամային իրավիճակ, մեկ այլ ցնցում, որ նա վերգունի իր էկզիստենցիան, իր գոյության իմաստը: Բժիշկը Իրենին տանում է իր ծովափնյա հյուղը և որոշում է Մարկի մահվան լուրը հայտնել Իրենին նավակում՝ ծովի մեջտերում, բնության տարերի ներքո: Իրենը կորցնում է հույսի վերջին նշույլը: Բողոքում է անարդարության դեմ, լացից ցնցում, ասիս է ջրի մեջ՝ ձեռքերով բնազդարար կառչած շարժիչին:

<sup>1</sup> Վ. Քաջազ, Գիշատիչների խնջույքը, 1976, էջ 3:

<sup>2</sup> Նոյնը:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 43:

<sup>4</sup> M. Heidegger. Sein und Zeit, erste Hälfte, S. 365.

<sup>5</sup> Վ. Քաջազ, ճշգլ. աշխ., էջ 53:

Վեպի վիլխոտիկայական միտքն ամփոփված է Քերյանի հետևյալ խորիմասս բառերում. «Մի նոր օր է սկսվում Մարլի համար: Ո՞չ երկուշաբթի, ո՞չ երեքշաբթի, ո՞չ կիրակի: Դա շաբարված ութերորդ օրն է: Եվ այս օրը պատկանում է արարչին: Դա մեզ համար պահված անակնկալ է: Եվ որքան էլ մեծ լինի այդ օրն իմանալու մեր անհամբերությունը, մենք իրավունք չունենք դեպի այնտեղ տանող թեր կտրելու»:<sup>6</sup>

Չխորանալով կրոնական ուսմունքի դրույթների մեջ՝ բժիշկ Քերյանը սակայն համոզված է, որ կյանքը ի վերտաստ է տրված. «Դուք իրավունք չունեք ձեր քմահաճույքով մեռնելու, քանի որ կյանքն իրավունքներ ունի ձեր վրա»:<sup>7</sup> Եվ միայն մահվան սարսափին է, որ ստիպում է Իրենին նոր վիճակի մեջ վերգտնելու ու զգալու իր գոյությունը և ձեռքերս արյունոտելով, նավակը հասցնում է դեպի ափ: Իրենին հոգում արքնացած կյանքի մեջ իր գոյության ցանկությունը բժշկի մեծ հարթանակն է, մի շաբարից նրա լարված դեմքին բացվում է առաջին ժամանք: Նրա մեջ արքնանում է ուտելու, խմելու, զավակ ունենալու ցանկությունը: «Սահմանային իրադրության» մեջ է արժեքավորվում լյանքի իմաստը:

Հումանիստ Քաշան ընդգծում է, որ կյանքի ամեն մի ապրած պահը երջանկություն է, և այն կարելի է գտնել «զիտական մի սկզբունքի վերլուծման, աստղաբաշխության կամ մի պարտեզի մեջ: Երկրի շուրջը պտտվող արհեստական արքանյակի կամ ավելի շուրջ՝ մի սերմի զննությամբ, որը կարող է ծառ դառնալ»:<sup>8</sup>

Փաստորեն վիպակի վերջում միայն հասկանալի է դառնում անվանման խորհրդանշական իմաստը՝ «Արարչի ութերորդ օրը»: Ակնհայտ է, որ Քաշան համաձայն է Սարտրի այն մտքին, որ չկա ավելի լավատեսական ուսմունք, քան էկզիստենցիալիզմը. «Էկզիստենցիալիզմը նարդասիրություն է, քանի որ մարդու ճակատագիրն իր հսկ ձեռքերում է, և նարդը մարդու ապագան է»:<sup>9</sup>

Այդպիսի ապագա է դառնում Իրենի համար բժիշկ Քերյանը, որը չհասցնելով փրկել ամուսնու կյանքը, փրկեց և երկրորդ անգամ կյանք պարզեց կնոջը: Նա ազնվունեն, անսպառ նվիրվեց Իրենին և մինչև վերջ պայքարեց, որ Իրենը վերգտնի իր էկզիստենցիան և վերակառուցի իր կյանքը:

## ВАГЕ КАЧА И ЕГО ПОВЕСТЬ "ВОСЬМОЙ ДЕНЬ ТВОРЦА"

### Резюме

### B. Степанян

В 50-60-ых годах в атмосфере бурных столкновений литературных течений В. Каче удалось выявить свой самовытный стиль, создать особый художественный метод, в котором заметно явное воздействие философской струи экзистенциализма. Об этом свидетельствует психологическая повесть “Восьмой день Творца” (1958г.), в которой автор рассуждает о философских положениях экзистенциализма - о проблеме жизни и смерти, тревоге и страхе, бытие и не бытие, и, проводя параллели между жизнью и смертью, четко высказывает свою позицию: “существование ради жизни”.

<sup>6</sup> Վ. Քաշան, նշվ. աշխ., էջ 55:

<sup>7</sup> Նոյնիք:

<sup>8</sup> Նոյն տեղում, էջ 31-32:

<sup>9</sup> Jean-Paul Sartre, *L'existentialisme est un humanisme*, Editions Gallimard, 1996, p. 40.

## Հուսին ՍՍՆԱՍԱՅԱՆ

### ՀԱԿՈԲ ՕՉԱԿԱՆԻ ԳՐԱՔՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՓԱՆԻԾՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆ

Հակոբ Օշականը (1883-1948) հայ գրականության նշանավոր դեմքերից է, բայց Հայաստանի ընթերցողին առայսօր քիչ ծանոթ: Նա մեր գրականության ամենաբեղուն գրողներից է և վիրխարի գրական ժառանգություն է բողել (Վեպեր, վիպակներ, պատմվածքներ, քատերգություններ, գրապատմական ու քննադատական աշխատություններ): Ինչպես կենդանության օրոր, այնպես էլ այսօր ուսումնասիրողների ուշադրությունն առաջին հերթին գրավում է Հ. Օշականի քննադատական վաստակը, որ արժանացել և արժանանում է իրարամերժ գնահատականների: Աչքի առաջ ունենալով նրա կյանքն ու ստեղծագործողի կերպարը, նրա գրապատմական ու քննադատական աշխատությունները, ինչպես և նրա նասին գրված ուսումնասիրությունները՝ հոդվածում փորձել ենք բացահայտել Օշականի գրաքննադատության չափանիշներն ու մերողը:

Հ. Օշականի քննադատական չափանիշներից առաջինը գրականության շահն է: «Գրականութիւնն զուրս ուրիշ ոչ մեկ հուզում: Բոլոր ճամփաները միայն Հռոմ չեն տանիր: Կը տանին նաև գրականութեան»:<sup>1</sup>

Ցանկացած գրական ձեռնարկ արժեորեիս նա ենում էր գրականության շահից՝ առաջարթելով այն հարցը, թե տվյալ ստեղծագործությունը նպաստե՞լ է արդյոք գրականության հարստացմանը: Եթե տվյալ ստեղծագործությունը չի ծառայում գրականության հարստացմանը, զարգացմանը, և առանց դրա գրականությունը ոչինչ չի կորցնում, նման ստեղծագործությունը չի կարող մեծ արժեք ունենալ քննադատ Օշականի աշքում: Հայ գրականությունն այսօր անհնար է պատկերացնել առանց Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի, Արովյանի «Վերը Հայաստանի» վեպի, Դուրյանի ու Տերյանի պոեզիայի, մինչդեռ դրանց կողքին եղել են ստեղծագործություններ, որոնք այսօր անհայտ են կամ հետաքրքրում են միայն գրականության պատմարաններին: Անզամ նոյն հեղինակի ոչ բոլոր գործերն են շահեկան գրականության համար: Ահա Շիրվանզադեի վեպերը Օշականը բարձր է գնահատել՝ ի տարբերություն քատերգությունների,<sup>2</sup> իսկ Թեքեյանի «Հրաշալի հարություն» ժողովածուն հայ գրականության նվաճում է համարում, մինչդեռ նոյն հեղինակի վերջին՝ «Տաղարան» ժողովածուն անվաճում է «քեռ»՝ ծանրացած թե՛ հեղինակի, թե՛ հայ գրականության ուսերին:<sup>3</sup>

Գրականության շահի այս սկզբունքը Օշականը կիրառում է նաև քննադատության համար: Քննադատական յուրաքանչյուր գործ արժեքավոր է, եթե իր նպաստն է բերում գրականությանը: Այս առումով նա անհանդուրժելի է գտնում արևելահայ գրականության մեջ շատ տարածված գրաքննադատության եղանակը: Ընթերցողին մնում է մշտիքարվել մեջքերումներով, երբ վերուժելու փոխարեն քննադատները վերապատմում են ստեղծագործությունը, իսկ քննադատի ստեղծագործական մորի արդյունքը կամ, ինչպես Օշականն է ասում, «քննադատին անձնական բաժինը» բացակայում է:<sup>4</sup>

«Ալ ի՞ նչ հարկ, հասարակության համար, անձնական ճիզը՝ գոնէ կարդալու պարտքը, աչքի ու ժամանակի զրոյություն՝ երբ պատրաստ է արևելահայ մերող՝ գործերը անփոխելու»<sup>5</sup>, -գրում է Օշականը: Հասկանալի է, որ այսպիսի քննադատական ստեղծագործությունները չեն հարստացնում հայ գրականությունը: Արևմտահայ գրականության մեջ սկիզբ առած և սիյուռքում իր քննադատն շարունակությունն ունեցած քննադատությունը բնութագրելու համար Հ. Օշականը «Գրականության համար» հոդվածում օգտագործում է Պարոնյանի «Գրաքանզադեի ընկերություն» արտահայտությունը:<sup>6</sup> Ժամանակի քննադատների մի մասը պատրաստ է գովարանել անխտիր

<sup>1</sup>Հ. Օ շ կ ա ն, Համապատկեր արևմտահայ գրականության, հ.10, Անթիլիս, 1982թ., էջ 82:

<sup>2</sup>Նոյն տեղում, էջ 309:

<sup>3</sup>Հ. Օ շ կ ա ն, «Սիյուռքը և իրավ քննադատությունը», Երուսաղեմ, 1945թ., էջ 69-70:

<sup>4</sup>Հ. Օ շ կ ա ն, Գրականության համար, էջ 10-11:

<sup>5</sup>Հ. Օ շ կ ա ն, Համապատկեր ..., էջ 369:

<sup>6</sup>Հ. Օ շ կ ա ն, Զվարքնեց, Փարիզ, 1929թ., № 6-7, էջ 284:

բոլոր ստեղծագործությունները: Իրենց մտքի նեղության պատճառով նրանք հետևում են արդեն ընդունված կարծիքին: Այսպես ծնվում են «կուտքեր», որոնց իրական, վավերական փառքը հաճախ խիստ կասկածելի է: «Ժրարագովական» գրախոսականներով ու հոդվածներով հեղեղված էր ժամանակի մամուլը, իսկ արդյունքում քննադատությունը վերածվում էր հրապարակախոսության:

Հ. Օշականի երկրորդ չափանիշը կյանքն է, այսինքն՝ կյանքի այն բաժինը, որ ամփոփված ու ներկայացված է ստեղծագործության մեջ: Օշականն ուշադրություն է դարձնում այն բանին, թե որքան խորությամբ ու խորությամբ է կյանքը սևեռված որևէ գորոյի ստեղծագործության մեջ, ինչպես նաև այդ կյանքի տեսակարար կշիռն ու համապատասխանությունը ժամանակին, ազգայինին ու մարդկայինին: Օշականի մտապատկերում գրականությունն ու կյանքը ոչ միայն անբաժան են, այլև նույնական:

«Գրականությինը գիտութիւն չէ, զայն չներ տրվիր: Չայն կ'ապրինք»<sup>7</sup>: Օշականի համար «ապրել» բառը լայն նշանակություն ունի: Կյանքը նրա լճնկալմամբ ապումների համանվագ է, իսկ գրական-գեղարվեստական յուրաքանչյուր ստեղծագործություն եննված է ապրումի, զգայության բազմաթիվ ծավալումների վրա: «Ապրել» գրականությունը, գրական ստեղծագործությունը նշանակում է վերապետ այն հոլովերն ու կրքերը, որ զգացել է հեղինակը, այսինքն՝ ճանաչել տվյալ ստեղծագործությանը ծնունդ լյանքը: Այդ առումնվ բարձր է գնահատում Սունդուկյանի ստեղծագործությունը, քանի որ որա միջոցով կարելի է ճանաչել ժամանակի թիֆլիսահայ կյանքը, կենցաղը, մարդկային հարաբերություններն ու մարդկանց հոգերանությունը: Իսկ օրինակ պատմահայր Խորենացու «Հայոց պատմությունը» հնարավորություն չի տալիս պատկերացնել այն դարի կյանքն ու կենցաղը:

«Ի՞ն կախարդական բանաձևը կյանքն է»<sup>8</sup>, կրկնում էր Օշականը: Անդրադանալով Մխիթարյան միաբանության գիտնականների՝ մեր անցյալի գրական ժառանգությունը քննելու և արժեքավորելու եղանակին և բարձր գնահատելով նրանց վաստակը իին և միջնադարյան գրականության ձեռագրերի վերծանման ու հրատարակման գործում՝ Օշականը միևնույն ժամանակ ցավով է նշում, որ ի տարբերություն այլազգի հետազոտողների՝ նրանք իրենց առաջ նայատակ չեն դրել ճանաչել նաև իր ժամանակի մարդու հոգին և ներկայացնել այն արդի ընթերցողին: «Կյանքին զգայարանքը, այսինքն՝ գիրքի մը հոգելին աշխարհը չէ հետաքրքրած վիեննացիները»<sup>9</sup>:

Հայ Հ. Օշականի՝ այս ուսումնասիրողները բանասիրական շերտից, բառերի սոուզարանությունից այն կողմ չեն անցել, մինչդեռ եթե նոյն լրջությամբ ու խոնդրութանքով փորձենի բառի «արտաքին կեղելը ծեղծել» ու բափանցել նրա խորքը, փնտրել ու վեր հանել այդ բառով արտահայտված հոգեկան ապրումները, կվերականգնենին մի ողջ քաղաքակրթություն: Համաձայնենք Օշականի հետ, որ Եղիշեի ծննդյան կոնկրետ տարերիվ ճշտելոց ավելի, որին ի դեպ ուսումնասիրողը տրամադրել է ուր հարյուր էջ, հետաքրքրի է այն, թե ինչ քաղաքակրթության ու հոգերանության ծնունդ է նրա մատյանը: Հետաքրքրի է, թե որտեղից է Եղիշեն սովորել իր խոսքի «մուգ, ճոխ, բայց զուապ գեղեցկությունը, չափին զգացումը, ներդաշնակության անուսանելի հրայրքը», որոնք նրա ոճը դարձնում են իրավ ու գրական, արդյո՞ք կար այդ դարում գրական ըմբռնողություն: «Բնչո՞վ էին խանդական ինք և նմանները իրենց խուցերուն մռայլ խորհուրդին մեջ, առանց սեղանի, փետուրը թարխած ատեննին խեցիի թանաքին... Սիահ հնձի համար Եղիշեն»<sup>10</sup>, ասում է Օշականը:

Եթե միայն բառերով գրավվելու փոխարեն ուսումնասիրողները մի քիչ էլ տարվեին էջի ոգեղեն բռվանդակությամբ, կվարողանային «մտքի աշքերով ու հոգու ջղուռով» վերակազմել հայոց պատմության մի ողջ շրջան, այդ շրջանի կյանքն ու հայ մարդու հոգեկան աշխարհը. «Ար մի անգամ ընդմիշտ կը մերժենք հավաքողը, առաքողը, թիվերով սպառնացողը, լեզվաբանական բաջապահներին ասպետները, քերականները,

<sup>7</sup> Հ. Օ շ ա կ ա ն, Երկեր, Եր., 1979, էջ 381-382:

<sup>8</sup> Հ. Օ շ ա կ ա ն, Համապատկեր..., էջ 335:

<sup>9</sup> Նոյն տեղում, էջ 297-298:

<sup>10</sup> Նոյն տեղում, էջ 302:

դասախոսները, որքան ատեն որ այդ մարդերուն ետին կը պակսի խելքը, մեծ քառով մը՝ իմացությունը, այսինքն՝ նախահայութը վերաստեղծելու կարողությունը»:<sup>11</sup>

Օշականի համոզմանք՝ քննադատներն իրենց առաջ նպատակ պիտի դնեն «գտնել շրջանը, մտայնությունը, հոգին, տաղանդին տեսակարար կշիռը. «Այս գրադաւուն է, որ պիտի դառնա առաջին վլանի փառասիրություն և ոչ թե ցարդ եղածին պես կենսագործյուն, գիրքի ամփոփում, անուններու ցանկ»:<sup>12</sup>

Հ. Օշականի հայ գրականության համար առաջադրվող երրորդ չափանիշը հայ հոգու պաշտամունքի և արտահայտության պահանջն էր: Առանց հայ հոգու չկա հայ գրականություն և արվեստ: Ամեն ծշմարիտ արվեստագետն իր ցեղի հոգու արտահայտիչն է: Պարզել իրենց և մյուսների համար հայ հոգին՝ էական պարտականությունն է ամեն հայ արվեստագետնի: Ամեն ծշմարիտ արվեստագետն արտացոլում է կյանքը, մասնավորապես իր ժողովրդի կյանքը, որ ավել կամ պակաս չափով արձագանք է գտնում յուրաքանչյուր գրողի, ստեղծագործողի հոգու խորանում: Այսուել ակներև է Օշականի կրած ազդեցությունը XIX դարի ֆրանսիացի գեղագիտ-քննադատ Հիալպուտ Տենից: Քննարկելով այն հարցը, թե արվեստի որ երկերն են ավելի կատարյալ, նշանակալի և հավերժական, Տենիր եզրակացրել է, որ այդ հասկություններն ունեն առաջին հերթին այն երկերը, որոնց մեջ արտահայտված է «ազգային անորոշվելի և անսասանելի իմքը» կամ «ցեղային բնակությունը», որ չկարողացան ջնջել «ո՛չ գաղըր, ո՛չ արյան խառնութը, ո՛չ խառնվածքի վերափոխությունը»:<sup>13</sup> Այս սկզբունքի հիմնավորության մեջ կարելի է համոզվել, եթե մտարերենք մեր ժողովրդական էպոսը, Արովյանի «Վերք»-ը, Թումանյանի ստեղծագործությունը, Թերեյանի պոեզիան: Օշականը Լևոն Չանքի «Հին աստվածներ» դրամայի գլխավոր թերությունն է համարում անհարիրությունը հայ հոգուն, հայի հոգերանությանը:

Հ. Օշականի չորրորդ չափանիշը արվեստն է: Նա կտրականապես դեմ էր «մերինները մեր ակնոցով» դատելու սկզբունքին, քանի որ մենք՝ հայերս, մարդկության մի մասն ենք և չենք կարող գոյություն ունենալ կղզիացած:<sup>14</sup> Ուրեմն մեր արվեստն էլ պիտի համաշխարհային արվեստի մաս կազմի և քննվի ու արժելովի համաշխարհային չափանիշներով՝ իհարկե շանտեսելով ազգային առանձնահատկությունները: Համաշխարհային արվեստի չափանիշների առաջ ամենակին չեն նսեմանում մեր արժեքները, այլ մերկանում են միջակությունները: Ոչ թե արվեստի չափանիշը պիտի հարմարեցնել մեր գրականությանը, այլ մեր գրականությունը պիտի զարգացնել համաշխարհային արվեստի չափանիշներին համապատասխանեցնելու համար: Ըստ Հ. Օշականի՝ արվեստը միակ միջոցն է, որով ազգը կարող է բարձրանալ, ապրելու իրավունք նվաճել ու իր տեղն ունենալ տևականության մեջ: Այս հարցում Օշականի հետ համամիտ էր նաև Կ. Զարյանը, որ «Մեյյան»-ում գրել է. «Կը նուածեմք՝ թէ ժամանակը հասած է այլևս գրականութեան հետ չխաղալու, սիրողի եւ տիկերանքի հոգերանութիւնը թօքափելու եւ մուտենալու Արուեստին ոչ թէ փողոցային Տօն-Ժուանի լրութեամբ, ազնի սիրով»:<sup>15</sup>

Հ. Օշականը պահանջում էր գրականությունը չփորեկ հայրենասիրության հետ. «Գրականութիւնը հայրենասիրութիւն չէ, որպեսզի խնդր ու պատառ կտորներ այդ զգացումին գինով արտօնվիք արժեքի բարձրացնելու: Այդպես կազմակերպված արժեքներու դիմաց է որ կես դարեւ ի վեր կը պայքարիմ»:<sup>16</sup> Այս առումով քննադատ Օշականը դաժանորեն իրատես է և չի դավաճանում իր սկզբունքներին՝ կարծիք հայտնելով, թե Ալիշանի ստեղծագործությունը, Սիրիկի պոեզիան, Դմիրդյանի «Վարդանանք» պատմավեպը և շատ այլ գրվաբանված գործեր քննություն չեն բռնում արվեստի չափանիշի առաջ:

Ինչպես վերը նշվեց, այս չափանիշները հավասարապես վերաբերում են թէ գրական երկին, թէ քննադատական գրվածքին, քանի որ Օշականի համար քննադատությունը ստեղծագործելու եղանակ է: Նա քննադատությունը մուտեցնում է գրականու-

<sup>11</sup> Հ. Օ շ ա կ ա ն, Համապատկեր..., էջ 301:

<sup>12</sup> Նոյն տեղում, էջ 303:

<sup>13</sup> Հ. Տեմ, Գեղարվեստի փիլիսոփայությունը, Եր., 1936, էջ IX:

<sup>14</sup> Հ. Օ շ ա կ ա ն, Մայրիմերու շուրին տակ, Բեյրութ, 1983, էջ 29:

<sup>15</sup> Հ. Օ շ ա կ ա ն, Մեյյան, Կ. Պոլիս, 1914, թիվ 7, էջ 98:

<sup>16</sup> Հ. Օ շ ա կ ա ն, Սիրուառը և իրավ բանաստեղծությունը, Երուսաղեմ, 1945, էջ 69:

թյանը, փնտրում ու գտնում այս երկուսի հնարավոր ընդհանուր եզրը: Զննադատելիս նա ստեղծագործում է՝ հետևելով Օսկար Ուայլին, որի կարծիքով քննադատությունը ստեղծագործություն է այլ ստեղծագործության առիթով: Օշականի մոտ քննադատության ու գրականության տարրերն այնպիս վարպետորեն են միայնու ավագանակած, որ դրանց սահմանը անհնար է հստակեցնել: Իր քննադատական ստեղծագործություններն «ապրումներ» են և պատկանում են իր գրականությանը, որ ամեն դեպքում այլ բան չէ, քան կյանքի, հայ հոգու, գրականության և արվեստի պաշտամունք, « իր վեպը քննադատության նր շափ հորդ է գաղափարներով և իր քննադատությունը ապրումներու համեմ մըն է, մտքի երևույթ ըլլալ խորչող մենագարությամբ մը».<sup>17</sup>

Ենթով քննադատության համար սահմանած իր չափանիշներից՝ Օշականը ստեղծել է իր իմքնատիպ քննադատական մեթոդը, որ հաջողությամբ կիրառել է ինչպես հին ու միջնադարյան, այնպես էլ ժամանակակից գրականության ստեղծագործությունները վերլուծելիս: Այս մեթոդը ապացուցում է նրա չափանիշների հիմնավորությունը: Օշականը գործի մասին դատելիս իմքնվում է իր ստացած տպավորությունների վրա: Սակայն տպավորությունները բազմազան են լինում: Զննադատի մեծագույն արժանիքն է հենց նրանում է, որ տպավորությունների քառուից կարողանա զատել էականը, զիսավորը, կարևորը, ավելի ցայտուն դարձնի այն հոգեբանական իրողությունները, որ շատ հաճախ աննկատ են մնում: Հենքեցողին ևս նա կրու էր անում վստահել միայն ու միայն սեփական տպավորություններին և «ոչխարամտությամբ» չինտել ընդունված կարծիքին:

Այս մեթոդը նախատեսում է քննել ստեղծագործության հեղինակին, այն կյանքը, որ արտացոլված է գործում, հեղինակի ոճը և տվյալ դարաշրջանն իր համակրծմանի նկարագրով, որի օգնությամբ և որի մեջ պիտի փնտրել տվյալ հեղինակի ու նրա ստեղծագործության տերն ու դերը: Քննադատ Օշականը գտնում է, որ հեղինակին պիտի ճանաչել ոչ թե կենսագրական թվերով ու տեղանուններով, այլ թեկուզ անշշան, բայց նրա մարդկային նկարագրի և ստեղծագործողի եռյան ձևավորման մեջ դեր խաղացած դեպքերով: Օրինակ՝ Պ.Դուրյանի «Լճակ» բանաստեղծության գուսակ, բայց միաժամանակ խորոնկ ողբերգականության անդրոշական ընկալման համար պիտի իմանալ նրա անպատճախան սիրո պատմությունը: Հեղինակին ճանաչելուց հետո Հ. Օշականը փորձում էր պարզել, թե որքանո՞վ է հաջողվել հեղինակին իր ստեղծագործության մեջ տալ կյանքի, իրականության ճշմարիտ պատկերը. «Այսինքն՝ ո՞քան ի-ուավ մարդ, ո՞քան իրավ կեսանք, ո՞քան իրավ յատկանշական սևեռումներ բարքեր, մտայնություններէ»:<sup>18</sup> «Համապատկերում» անդրադառնարով այս հարցին քննադատը գտնում է, որ գրականության ու արվեստի տեսակետից Պոռշյանի ոչ բարձրարժեք վեպերը լուսարանում են ժամանակի բարքերը և առավելագույնս բնուրագրում կյանքն ու հայ ժողովրդին՝ իր ցեղային ընդհանուր հատկանիշներով:<sup>19</sup> Նոյն կերպ զնահատելի է վիպասան Շրվանզադեի վաստակը, որ համակրծմանի պատկերացում է տախու XIX դ. Վերջի և XX դ. սկզբի կովկասահայ զյուղի և քաղաքի կյանքի ու բարքերի մասին:<sup>20</sup> Հակառակ դրան՝ կյանքը սեւուելու հարցում, ինչպես գտնում է Օշականը, թերացել են ոչ միայն շատ գրողներ, ստեղծագործողներ, այլև մեր մեծանուն պատմիչները, որոնք ժողովրդի կյանքն ու բարքերը, դրանով իսկ ազգային հոգեբանությունն ու արժեքները պատկերելու փոխարեւն արձանագրել են միայն բազավորների, կարողիկուսների, սրբերի ու նահատակների անուններ: Արդունքում՝ անշափ դժվար, եթե շատենք անհնար է ճիշտ պատկերացում կազմել այդ դարքերի հայ մարդու նկարագրի մասին:<sup>21</sup>

Ապա քննադատ Օշականն ուշադրության է արժանացնում գրողի ոճը նրա լեզուն, չափը, կյոռուրը, երևակայության բաժինը, կիրառած պատկերավորման համակարգը: Ինչպես միշտ, նա հակված է այստեղ ստեղծագործողին լիակատար պատություն տալ, այսինքն՝ չպարտադրելու ոչ մի կանոն, ոչ մի օրենք: Բայց որպես քննադատ, որպես ընթերցող՝ հեղինակից պահանջում է անկեղծություն ձևի մեջ:

<sup>17</sup> Հ. Օ շ ա կ ա ն, Համապատկեր..., էջ 4:

<sup>18</sup> Նոյն տեղում, էջ 340:

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ 149:

<sup>20</sup> Նոյն տեղում, էջ 309:

<sup>21</sup> Նոյն տեղում, էջ 150:

«Իմ փույքն է եղած արտահայտության պարզագույն ձևը պարտադրել ամեն մարդու»<sup>22</sup>: Այդ նպատակով շատ վարակուորեն վերլուծում ու հակառակում է Դուրյանի «Լրճակ» և Սիահի «Լուսին» քերթվածները՝ ընդգծելով առաջնի անպահույթ ու կատարյալ արտահայտչականությունը և երկրորդի փրուն ու անկյանք ոճը.<sup>23</sup>

Ցանկացած բառի գործածություն, ոստ Օշականի, պիտի պայմանավորված լինի նրա բովանդակության ու ձևի ներդաշնակ անհրաժեշտությամբ ու անփոխարինելիությամբ տվյալ խոսքային միջավայրում, տվյալ նախադասության մեջ: Գրողը պիտի մտահոգվի օգտագործելու ոչ թե գեղեցիկ բառեր, այլ այնպիսի բառեր, որ ոչ միայն հարազատորեն արտացոլեն իրականությունը, այլև ստեղծեն մի որույն իրականություն: Այսինքն՝ նա առաջ է քաշում ոճի ինքնուրույնության հարցը: Փաստ է, որ գրական ստեղծագործություններն իրարից տարբերվում են ոչ այնքան ասելիքով՝ թեմայով, որքան ասելու ձևով՝ ոճով: «Ինքնուրույնություն և անձնականություն ձևի մեջ» պահանջում էին «Մեկյան»-ի հիմնադրմերը՝ համոզված, որ առանց դրանց չեն լինի ստեղծագործական նորանոր նվաճումները:<sup>24</sup>

«Ամեն բռպէ քննադատը հարկին տակն է իր սեղանին վրա սպասող գործը հաշտեցնելու անշուշտ նախ՝ հեղինակին, բայց մանավանդ շրջանին, անոր վրայեն ցեղային միջինին ու անկէ մարդկայինին »<sup>25</sup>, - գրում է Օշականը: Այս խոսքերից հետևում է, որ ստեղծագործության ամբողջական քննության համար քննադատ Օշականը հաշվի է նստում ժամանակաշրջանի, տիրող գրական մքնուրութիւնը: Վերջիններս, նրա համոզմամբ, պարտադիր ազդեցություն են ունենում արվեստագետի և նրա ստեղծագործության վրա: Ստեղծագործության հիմնավոր ընկալումն ու վերուժությունն անհնար է առանց ժամանակաշրջանի գրական ճաշակը նկատի առնելու: Ահա XX դարասկզբի արևմտահայ գրականությունը, հետևելով համաշխարհային գրականության զարգացման միտումներին, տուրք տվեց հասլկապես խորհրդապաշտությանը: Բոլոր ստեղծագործումներն ել հետևեցին ժամանակի պահանջին, սակայն քչերը կարողացան իրենց տաղանդի զորությամբ ճեղքել ժամանակի երկար գոտին և առաջ անցնելով ժամանակից՝ ստեղծել արվեստի արժեքներ, ինչպիսիք են Մ. Մեծարենցի, Դ. Վարուժանի, Վ. Թեքեյանի պոեզիան: Օշականի վկայությամբ՝ մոտ կես դար Հովհաննես Սեբյան, Սկրտիչ Աճեմյան, Թովմաս Թերզյան, Սիահիլ անունները արևմտահայ գրականության մեջ «քանաստեղծության խորհրդանշաններ» են, մինչդեռ Մեծարենցը շրջապատված էր անհանդուրժողականությամբ, իսկ Թեքեյանը՝ լուր անտարբերությամբ.<sup>26</sup> Այսուղ է, որ խիստ կարևորվում է քննադատի վարպետությունը, պայծառատեսությունը, իրավ արժեքները սին փառքերից զատելու կարողությունը: Հ. Օշականը այն քչերից մեկն էր, որ չենալու ընդունված կարծիքին և ժամանակին ու ըստ արժանվույն գնահատեց թե՛ Մ. Մեծարենցի, թե՛ Վ. Թեքեյանի արվեստը՝ մշտապես հավատարիմ մնալով իր չափանիշներին ու արվեստագետի կոչմանը:

## КРИТЕРИИ И МЕТОД ЛИТЕРАТУРНОЙ КРИТИКИ АКОПА ОШАКАНА

Резюме

Л. Манасян

Акоп Ошакан – один из известных армянских критиков первой половины XX века, по распространенному мнению – самый строгий и привередливый критик. Своеобразный метод его литературной критики основывается на следующих принципах: а) каждое литературное произведение, даже критика, должна обогащать литературу, б) насколько отражена жизнь в произведении, в) преданность народному духу.

<sup>22</sup> Հ. Օ շ ա կ ա ն, Համապատկեր..., էջ 355:

<sup>23</sup> Նոյն տեղում, էջ 359-363:

<sup>24</sup> Հ. Օ շ ա կ ա ն, Մեկյան, Կ. Պոյիս, 1914, թիվ 1, էջ 1:

<sup>25</sup> Հ. Օ շ ա կ ա ն, Համապատկեր..., էջ 367:

<sup>26</sup> Նոյն տեղում, էջ 366; Հ. Օշական, Սվյուտքը և իրավ բանաստեղծությունը, էջ 41: